



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4545

Thomomys pallidus T.

9 km East of
Chimayque, Chaco, Argentina,
July 1907, 1908.
1907

16
Ch - 70

14 JUL 2008

280-171(xii)7



14 FEB 2013

16+1640751

Հ-70 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՐԱԴՐԱՅ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

ԿԿ

29282

16 Հունվար
 16-70 Հունվար աշուն
 Կոմ Մայիսական հայոց
 Խորհրդական և քաղաքաց.
 245-586 12/1 ՏԸ

16 79 1/1/80/6
 16 14 8294 ՏԸ
 16 8294 731/1 ՏԸ

ՊԿ թ. 392. ր. 3.000.000

1906 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՖԻԿԻ
 ԳՐԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ

ՏԵՐՐԱԿՈՆ


ՏՐԵՄԵՐԵՆՈՒԹԵԱՆ, ՀԱԴԵԲԸՆՈՒԹԵԱՆ ԵԿ
ԲՈՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏԱ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԵՍԵՐԻ

Կ Ա Զ Մ Ե Ց
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Բ Զ
 Տպարտն „Էպօխա“ || Տիպոգրաֆія „Эпоха“
 Гановская № 3.

1907



4545

ԱՐՄԵՆԻԱՆ ՀԱՅՈՎԱՐ ՎԱՐԱՐԱՐԱՐԱՐ

ԲՈԱԺՈՋ

Խ. ՀԱՅՈՎԱՐ ՎԱՐԱՐԱՐԱՐ
Ա. ՎԱՐԱՐԱՐԱՐ

Տ. Հ. Յ. Վ. Վ. Վ. Վ. Վ. Վ. Վ. Վ. Վ.

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Տ. Ա. Բ. Բ. Կ. Ա. Ն.

ՏՐԱՄԱՅԱՆՈՒԹԻՒՆ և ՀԱԳԵՑԱՆՈՒԹԻՒՆ

P. M. Ruzvetsone

Ա Թ Ա Զ Ա Բ Ա Կ

Այս ձեռնարկը հրատարակվում է հանգուցեալ վաղաթառամ տիկին Թ. Մ. Գ. ՈՒ. Հ. Խ. (դուսար Գ. Թ. որոսեանի) Ա. Ի. Ե. Տ. Ե. Ա. Ն. Ի. — Թ. Է. Հ. Ր. Ա. Ն. «Թագուշ-հեան» դպրոցի հիմնադրուհու — Յիշատակին, արդեամբ և ծախքով Արմաւիրցի Գարրիէլ Թորոսեանի:

Մենք շատ անգամ առիթ ենք ունեցել նկատելու, թէ Թուսաստանում և թէ Պարսկաստանում, որ հայոց դպրոցներից դուրս եկած պատանիները, ըստ մեծի մասին, անկարող են հանդիսանում մի կանոնաւոր շարադրութիւն գրել և շատ թոյլ գաղափար ունեն բանահիւսութեան ու հայկական դպրութեան մասին։ Մեր կարծիքով այդ երեսյթի պատճառն այն է, որ մեր դպրոցներում չեն աւանդվում սիստեմատիկական տարրական տեղեկութիւններ տրամաբանութեան և հոգեբանութեան մասին, ինչպէս և չեն անցնում բանահիւսութեան տեսութիւնը։ Պարսկահայ դպրոցներում այդ պահանջը անիրազործելի է մանաւանդ այն պատճառով, որ չը կան ձեռնարկներ։

Այդ թերութիւնը մասսամբ լրացնելու նպատակով, մենք կազմեցինք ներկայ ձեռնարկը։ Կազմելիս օժանդակ ենք ունեցել. 1) Բանահիւսութեան տեսութիւնը, Սմիլնօվսկու. 2) Բանահիւսութեան դասագիրք, Անդրէ Ֆիլօնօվի. 3) Համառօտ Փիլիսոփայութիւն, Ա. Մ. Վ. Գարագաշեան, Պոլիս. 4) Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, և. Արաէն Այտընեանի։ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱԾԱՅ ԱՅ Ե

առքունոյ լրդեւն զի Ավան նորմա առ զանձ
պահ գր Առևտասունից չկ և Կամառուն առ Ձ
ինեւ ուս շըրամբութիւնը հայեւ սուր Շիմանցըր
զուստանալ չի և Կոմանչքան ու բազարան օժան
մաս բաժարան Խն ուս և յայը մշտիառցրազաց
մինան մակնեցըր մարտիքան ու մասնառաժամաց
զին դո և մ մուստութիւնիկ թան խոցինցար ու Ա
մայութիւնունակ Վարդառան ու Կողմանցըր
և մայութիւնունակ դիմութիւնունուն մարտիքան
ու Կոմանչք ու և արքայ մահուն մասնառաջար
ամուսնուր լայնացամ աղծէն ուսնա մակնեցւահամ
մի մասաւն և զավարացին պիւնաւորուց
ու զավարացին աղծէն ուսնա մակնեցւահամ

7021
առքայ

սամաց ուն և բազար ավարայ սկսաւահամնիւր և
ամբունուր բար բանին անգանուուր մեզ
ու ունանուուր նուր անմանաց ու անխուր ու
անուն ու անուն ու անուն զանձ զանձ պահ
անուն ու անուն ու անուն ու անուն ու անուն ու անուն

ՅԿ ԶԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ըստ ւարդարան ամ ամսեն ամ մասնայ մահան
ՀՀ մասնայ ամ ամսնայ մահան և
և մասնայ ամ ամսնայ պահ ամ ամսնայ
ամ ամսնայ պահ ամ ամսնայ զանձ պահ

Տըրամաքանութեան կամ Լօգիկայի տարերքը:

I

§ 1. Այն ամենը ինչ որ կայ, գոյութիւն
ունի առանձին, որի մասին կարող ենք մտածել
և խօսել, կոչվում է առարկայ (objectus)—տուն,
մարդ, քար, ցուրտ, խոնաւութիւն:

§ 2. Այն ամենը առարկայի մէջ, որով
մենք որոշում ենք նրան բոլոր միւս առարկանեւ-
րից, այսինքն զանազանում ենք կամ ջոկում
նրան բոլոր միւսերից, կոչվում է նշան (nota)—
ոհ, սպիտակ տուն, սենեակը լուսաւոր է,
հոնցը վառ վում է:

§ 3. Առարկան և նշանը (յատկութիւնը)
անբաժան են միմեանցից. կամ չը կայ առար-
կայ առանց նշանի և ոչ ևս նշան, որ մի որոշ
առարկայի վերաբերելի չը լինի:

II

Առարկաների տեսակը ըստ իրենանց էութեան

§ 4. Օրոշ տեղ բռնող, ծանրութիւն (կշիռ)

և անթափանցողութիւն ունեցող և մեր արտաքին զգայարաններին ենթակայ եղող առարկաները կոչվում են մարմիններ կամ նիւթական առարկաներ, որովհետև բաղկացած են նիւթից: Ուրեմն պարզ է, որ ամեն առարկայ մարմին չէ, որովհետև բոլոր առարկաները նիւթից չեն բաղկացած, օրինակ, ստուերը առարկայ է, բայց ոչ մարմին, որովհետև նա տարածութիւն չէ բռնում, այլ միայն լոյսի բացակայութիւնն է. բայց մենք կարող ենք մտածել և խօսել նրա մասին կամ մեր դատողութեան առարկայ շինել: Ուստի, բացի նիւթական կամ նիւթեղին առարկաներից (մարմիններից) կան և այնպիսի առարկաներ, որոնք մեր արտաքին զգայարաններին ենթակայ չեն, բայց միայն մեր խելքով են ըմբռնվում. այդ տեսակ առարկաները կոչվում են մտաւոր կամ վերացական, ինչպէս համբերութիւն, ցաւ, երջանկութիւն:

§ 5. Սակայն պէտք է որսշել մտաւոր առարկաները հոգեւոր առարկաներից: Մտաւոր առարկաները մարմին չունեն և ինքն ըստ ինքեան գոյութիւն չունեն, մինչդեռ հոգեոր առարկաները, օրինակ Աստուած, հրեշտակ, հոգի՝ թէե մարմին չունեն, բայց գոյութիւն ունեն, այն է կենդանի են, ներգործող են:

§ 6. Նիւթեղին առարկաները կամ հողեղին մարմինները բաժանվում են երկու խմբի. ոմանք ապրում են, այն է ծնում են, աճում և մեռնում, ուստի և կոչվում են

կենդանի կամ օրգանական մարմիններ. ոմանք չեն ապրում, այն է չեն ծնում, չեն աճում և չեն մեռնում, ուստի և կոչվում են անկենդան կամ անօրգանական: Բոլոր առաջիններին տալիս են էակ, իսկ երկրորդներին՝ իր կոչումն: Ուրեմն թէ էակը և թէ իրը առարկաներ են:

III

Առարկաների զանազանութիւնը կեանքի զարգացման աստիճանի համեմատ:

§ 7. Այն առարկաները, որոնք ընդունակութիւն ունեն ինքնակամ շարժուելու և իրանց տեղը փոխելու, ինչպէս բոլոր կենդանիները և մարդը, կոչվում են շնչաւոր, իսկ որոնք չունեն այդ ընդունակութիւնը, օրինակ բոյցը, հանքը և այլն, կոչվում են անշնչաւոր:

§ 8. Առարկայ կարող են լինել և երկնային մարմինները:

§ 9. Ամեն երեւոյթ նոյնպէս կարող է լինել առարկայ, բայց ոչ մարմին, օրինակ ժանդար:

IV

§ 10. Ուրեմն այն ամենը, որի մասին կարող ենք մտածել կամ որին կարող ենք մի նշան յատկացնել, գոյութիւն ունենայ նա իրողապէս թէ մտաւորապէս, կոչվում է առարկայ:

V

Համեմատ թիւն

§ 11. Համեմատել մի առարկայ միւսի հետ

կը նշանակէց ցոյց տալ թէ առարկաները ինչով
միմեանց նման են կամ նման չեն: Ուրեմն՝ հա-
մեմատութեան միջոցով մենք գտնում ենք ա-
ռարկաների մէջ եղած նմանութիւնը կամ զանա-
զանութիւնը:

§ 12. Զանազանել մի առարկան միւսից
կը նշանակէ որոնել նրանց որոշիչ նշանները:

Ուրեմն զանազանութիւնը կարելի է գտնել,
քաղելով որոշիչ կամ բացայացիչ նշանները
ընդհանուր նշաններից:

VI

Զանազան նշաններ—տեսակական, էական
եւ պատահական

§ 13. Մենք ասում ենք «շուն» և այդ ա-
սելով հասկանում ենք որ այդ անուան վերաբե-
րում են աշխարհի մէջ գտնուած բոլոր շները:
Բայց ասելով «գամփռ», «թազի», «որոկան»
և այն, մենք գիտենք, որ դրանք միևնոյն շան
ցեղի մի քանի տեսակներն են: Ուրեմն ցեղ
հասկացողութիւնը կամ անունը աւելի ընդար-
ձակ է իր ծաւալով քան տեսակ անունը: Օրի-
նակ՝ ծառ—ցեղական անուն է, իսկ տանձենին
—տեսակական. բայց այդ միևնոյն ծառը վե-
րաբերմամբ բոյսին—դառնում է տեսակական:
Դիշատիչ զազանները—ցեղական անուն է, բայց
կաթնասունների վերաբերմամբ — տեսակա-
կան է:

Ուրեմն՝ մենք ունենք ցեղական (genus)

և անսակական (specificus) նշաններ (nota):
Ցեղական նշանները նրանք են, որոնցով առար-
կան վերաբերում են առարկաների մի որոշ ազ-
գին. տեսակական նշաններն—որոնցով մի առար-
կայ ջոկովում է նոյն ցեղին պատկանող միւս ա-
ռարկաներից, օրինակ «կեսդանին» օձ հասկա-
ցողութեան ցեղական նշանն է, որովհետեւ այդ
նշանի միջոցով օձը վերաբերում է խլէզների,
չորքստանիների, թոչունների, ձկների, միջատ-
ների դասակարգին, որոնք ամենքը «կենդանին»
են: «Գիւռութիւն» հասկացողութիւնը ֆի-
զիոլոգիայի ցեղական նշանն է, որովհետեւ այդ
նշանի շնորհիւ նա վերաբերում է այն դասին,
որին պատկանում են «քիմիան», «ֆիզիկան»,
«մատէմատիկան» և այլն: Իսկ ֆիզիոլոգիայի
տեսակական գանազանութիւնը (differentia
specifica) կայանում է նրանում, որ նա ուսու-
ցանում է օրգանական կեանքի երկոյթների
մասին:

§ 14. Կան եւ էական, անէական կառ
պատահական, ընդհանուր եւ որոշիչ, կամ անհա-
տական, դրական եւ բացասական նշանները:

ա) Ետական (essentiales) կոչվում է այն
նշանը, առանց որի առարկան աներեսակայելի է
կամ որից կախուած են նրա ուրիշ շատ նշան-
ները, այլապէս նա կոչվում է և հիմնական:

Ծնթ. Այն նշանները, որոնք բղխում են էական-
ներից, կոչվում են ածանցեալ:

բ) Անէտական նշանները բաժանվում են

երկուսի. 1) յատկութիւն կամ յատկական (attributum)՝ այնպիսի նշաններ, որոնք պատկանում են առարկային, մի որեւէ էական նշանից կախեալ լինելով. 2) պատահական (accidentalis)՝ այնպիսի նշան, առանց որի առարկայն երևակայելի է. օրինակ քարեւախտակի ու գոյնը, Սոկրատն ադրիանագործի զաւակ էր, մեռաւ թոյնից և այն. դրանք Սոկրատի պատահական նշաններն են, ու գոյնը քարեւախտակի պատահական նշանն է և այլն:

գ) Ընդհանուր կոչվում են այն նշանները, որոնցով շատ առարկաներ միատեսակ զանազանվում են ուրիշ շատ առարկաններից. օրինակ սպիտակութիւնը բոլոր սպիտակ իրերի ընդհանուր նշանն է. շնչաւորութիւնը՝ մարդի և կենդանիների ընդհանուր նշանն է:

դ) Որոշիչ կամ անհատական կոչվում են այն նշանները, որոնցով մի առարկայ ջոկվում է միւսերից. օրինակ՝ մարդն ջոկվում է անասունից իր խելացութեամբ, ուրեմն իւելացութիւնն մարդի որոշիչ նշանն է:

Ծնթ. Պէտք է նկատել որ միևնոյն նշանը հեշտութեամբ կարող է լինել և ընդհանուր և որոշիչ, նայելով թէ ինչ ուրիշ առարկաների հետ ենք համեմատում մեր առարկան. օրինակ, շնչաւորութիւնը ընդհանուր նշանն է, եթէ համեմատենք մարդը անասունի հետ, իսկ որոշիչ է երբ համեմատենք մարդը անշնչաւոր առարկաների հետ:

Ե) Որովհետև նշանների միջոցով մենք իմանում ենք թէ ինչ է առարկան և ինչով է նազանազանվում ուրիշներից, ուստի իւրաքանչիւր նշան երկու կողմն ունի դրական և բացառական. 1) դրական այն նշանն է, երբ մենք ցոյց ենք տալիս առարկայի մէջ ինչ որ կայ. 2) բացառական՝ մէջ դրական նշանի ներկայութիւնը. օրինակ՝ ձագաւա, տգեղ, կոյր, համը և հայն:

VII

Երեւոյթ, պատճառ, հետեւանք:

§ 15. Առարկայի նշանների փոխխութիւնը կոչվում է երեսոյթ. ջուրը փոխարկվում է սառուցի, շոգու. մոմն այրվում է և այն. այս բոլորն՝ երեսոյթ է:

§ 16. Այն, ինչ որ ներգործում է առարկայի վրայ և ստիպում է նրան իր նշանները փոխել, կոչվում է պատճառ. Ջուրը սառչում է. պատճառն է—ցուրտը:

§ 17. Այն, ինչ որ ծագում է այս կամ այն պատճառից, կոչվում է հետեւանք:

Ուրեմն՝ հետեւանքը ծագում է պատճառից, պատճառն՝ երեսոյթից:

VIII

Տեմպերամենուն երը

§ 18. Մեր հոգու ընդհանուր տրամադրութիւնը կոչվում է տեմպերամենու (temperamentum). Տեմպերամենուն երը լինում են—

Քլէ գմատիկական (մաղասոտ, flegmatique) սանդղինական (արինաշատ, sanguin), մելանքոլիկական (սևամաղձոտ, melancolique) և խօլերական (մաղձայոյզ, cholérique):

Քլէ գմատիկական բնաւորութեան որոշիչ նշանն է—անդորրութիւն, անտարբերութիւն և պաղաքիւնութիւն:

Սանդղինականինը — թեթևամտութիւն, անմտածողութիւն, անհոգութիւն:

Մելանքոլիկանինը — մտահոգութիւն, մտահոգութիւն, վիշտ, մշտական տըրատմութիւն և առանձասիրութիւն:

Խօլերիկանինը — գոռողութիւն, անձնապաստանութիւն, քմհաճութիւն, գրգռողականութիւն, ցասկոտութիւն:

ԼԹԳԻԿԱՅ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Տրամարանութիւնը կամ Լօգիկան—մտածութեան կանոնաւոր ձեփ գիտութիւնն է:

Հոգեբանութիւնը—մտածողութեան բնական օրէնքները հետազօտող գիտութիւնն է (հոգու մասին գիտութիւն):

Լօգիկայ ծագում է յունական Լօգօս (բան, միտք) խօսքից: Հին ժամանակ այդ գիտութիւնը կոչվում էր դիալէկտիկա (խօսակցել, խորհել): Տրամարանութեան հայրը համարվում է յոյն իմաստասէր Արլիստուէլլ (+ 322 թ. ծ. առաջ): Յետնագոյն գիտնականների շարքումնշանաւոր են այդ գիտութեան մէջ միջին դարում՝ սքոլաստիկները և գերմանական փիլիսոփաներից—Լէյբնից, Կանտ, Հէրբարտ, իսկ անգլիական գիտնականներից՝ Բէկոն, Ջոն Ստուարտ Միլ, Նորագոյն ժամանակում—Բէն:

Ա.

Տ պ ա ւ ո ր ու թիւն

§ 1. Արտաքին աշխարհի առարկաների ա-

բած ներգործութիւնը մեր արտաքին զգայարան-
ների վրայ կոչվում է տպաւորութիւն:

§ 2. Արտաքին զգայարանները —
հոգու այն զօրութիւններն են, որոնք ընդու-
նում են տպաւորութիւններ շըջապատող աշ-
խարհից: Դրանց թիւը 5 է, աեսողութիւն,
լողութիւն, ճաշակ, հոտառութիւն, շո-
շափողութիւն. այդ պատճառով և 5 օրգան-
ներ—տեսողութեան օրգանը—աչք, լողութեան—
ականջ, ճաշակի—լեզու, հոտառութեան—
քիթ, շօշափողութեան—կաշին:

§ 3. Տեսնելու, լսելու, հոտ քաշելու, ճա-
շակելու և շօշափելու համար անհրաժեշտ են
մի քանի պայմաններ. 1) որ արտաքին զգա-
յարանների բոլոր օրգանները կանոնաւոր վիճա-
կի մէջ լինեն. 2) որ զլիմի ուղեղը ընդունակ
լինի ըմբռնելու տպաւորութիւնները (զիտակ-
ցութեան ընդունակ լինի), 3) որ ջիղերի ծայ-
րերի վրայ ներգործեն համապատասխան գըր-
գսիչներ (լոյս, ձայն, տաքութիւն, հոտ և համ
ունեցող մարմիններ):

Բ.

Մեր հոգու ըմբռնողական գործունէութիւնը

§ 4. Մենք գիտենք, որ արտաքին զգայա-
րանները հայթալում են զլիմի ուղեղին տպա-
ւորութիւններ, որոնք ծանօթացնում են մեզ
այն բոլորի հետ, ինչ որ անցնում է մեզանից
դուրս: Այդ միջոցին այդ տպաւորութիւնները,


ներգործելով գլխի ուղեղի վրա, գրգռում են
նրան գէպի այսպէս կոչուած հոգեկան գործու-
նէութիւնը և զարգացնում են նրա մէջ աստի-
ճանաբար խելքը (հոգին):

Եւ որովհետեւ ըմբռնել՝ նշանակում է մի
բան որոշել մի ուրիշից, ուստի և մեր հոգու
ըմբռնողական զօրութիւնն երկու առարկաների
միմեանց հետ համեմատելու մէջն է կայտնում.
իբրև արգիւնք այդ համեմատութեան յայտն-
վում են նմանութիւնը և զանազանութիւնը: Օ-
րինակ՝ տաքութիւնը մենք ըմբռնում ենք,
որոշելով նրան ցրտից. լոյսը—խաւարից. ա-
ղաղակը—հանդարտութիւնից և այն: Մինչև
անդամ այնպիսի առարկաները, ինչպէս տուն,
ծով, սար, և այնպիսի յատկութիւնները, ինչ-
ովէս կարմը ութիւն, ոպիտակութիւն,
մենք ըմբռնում ենք միայն այն ժամանակ, երբ
որոշում ենք իբրանց հետ նմանութիւն ունեցող
առարկաներից և որակութիւններից: Մեզանի
մասին հասկացողութիւն ենք կազմում, որոշելով
նրան աթոռից. թթու բանը իմանում ենք, ո-
րոշելով քաղցրից, գտոնից և այն: Որտեղ
որոշելու ոչինչ չը կայ, այնտեղ և ըմբռնելու
ոչինչ չը կայ:

Գ.

Զգացողութիւն, զգայական ընդունողութիւն, հո-
գեկան հետքեր - հանդարտ եւ թափառուն, հա-
սարակ հետքեր, զգայական հայեցուածք:

§ 5. Որովհետեւ մեր առջապատող աշխար-



հի առարկաները յայտնիներգործութիւն են առում մեր արտաքին զգայարանների վրա, ուստի մենք ստանում ենք տպաւորութիւն, բայց ստանալով նրան, մենք դեռ չենք տեսնում, չենք ճանաչում այն առարկան, որից մենք ստացել ենք տպաւորութիւն։ Առարկայի ճանաչողութիւնը (գիտակցութիւնը) ծագում է մեր մէջ միայն այն ժամանակ, երբ տպաւորութիւնները հասցնվում են կենդրոնական օրգանին (ուղեղին) և ըմբռնվում են նրանից. այդ ժամանակից միայն մենք տեսնում ենք, լսում ենք և այլն, այսինքն մենք ստանում ենք զգացողութիւն (զգում ենք, ըմբռնում ենք):

Տպաւորութիւնը միշտ միացած չէ զգացողութեան հետ, զգացողութեան համար անհրաժեշտ է, որ ինքը հոգին ձգտէ տպաւորութեան ետևից և ըմբռնէ նրան։ Բայց եթէ հոգին ի ներքուստ զբաղված է և նրա ձգտումն ուղղված է դէպի մի որ և իցէ միտք, այն ժամանակ արտաքին տպաւորութիւնը մնում է առանց ըմբռնողութեան։ Շատ անգամ պատահում է, որ խորին մտածողութեան մէջ ընկղմած մարդը չէ լսում ինչ որ իր շուրջը խօսվում է։ Ուրեմն զգացողութիւնը տպաւորութեան անհրաժեշտ հետևանքն է։

Եյսպէս՝ զգացողութիւնն այն տպաւորութիւնն է, որ աւանդվում է ուղեղին զգ այարանների միջոցով և ըմբռնվում է նրանից։

§ 6. Զգացողութիւնները վայրկենապէս

չեն անհետանում, այլ մնում են մեր հոգու մէջ և կոչվում են հոգեկան (հոգեբանական) հետքեր։ Հոգեկան հետքերը լինում են հանդարտ և թափառուն։ Հանգարտ կոչվում են նրանք, որոնք իրանց տեղն չեն փոխում և յայտնվում են միայն ըստ մեր ցանկութեան, իսկ թափառողները—որոնք միշտ շարժվում են և յայտընվում են ոչ ըստ մեր ցանկութեան։

Ծնթ. Հասարակ հետքը կոչվում է առարկայի կնիքը, տիպը։

§ 7. Հոգեկան հետքերը պահպանվում են մեր հոգու մէջ յիշողութեան շնորհիւ։ Յիշողութիւնը հոգու ընդունակութիւնն է՝ իր մէջ հոգեկան հետքերը պահելու։

§ 8. Երբ արտաքին աշխարհի առարկաները մեր զգայարանական օրգանների վրա տպաւորութիւն են գործում ոչ ըստ մեր ցանկութեան, այսինքն երբ առարկաները իրանք ստիպում են մեզ իրանց վրա ուշադրութիւն դարձնել, այդ տեսակ տպաւորութիւնը կոչվում է զգայական ընդունողութիւն։ Օրինակ՝ ես նստած եմ սենեակում և կարգում եմ. յանկարծ իմ ականջին հասնում են դաշնամուրի հնչիւնները և ես ակամայ լսում եմ։

Ընդհակառակը, երբ մենք ինքներս, հետպաքրքրվելով առարկայով, նրա վրայ ուշադրութիւն ենք դարձնում ըստ մեր ցանկութեան կամ ուսումնասիրում ենք նրան, այն ժամանակ այդ կոչվում է զգայակուն հայեցուածք

կամ նկատողութիւն։ Այդ գիպուածում մենք չենք գտնվում; ինչպէս առաջին գիպուածում, կրաւորական վիճակի մէջ, այլ ընդհակառակն ներգործական վիճակի մէջ, որովհետև մենք ինքներս ներգործում ենք առարկայի վրա։

Դ.

Գաղափար, գաղափարների կապակցութիւնը.

§ 9. Մի անգամ մեր գիտակցութեան մէջ զանազան տպաւորութիւնների միջոցով մտած ընդունողութիւնը, նպաստաւոր պայմանների ժամանակ կարելի է վերականգնել նրա մէջ իբրև նախական գործողութեան պատճեն։ Այդ վեկանգնումը կամ ընդունված առարկայի ցոլացումն մեր գիտակցութեան մէջ կոչվում է գաղափար (repraesentatio) կամ առաջադրութիւն։ Երբ ես մտածում եմ իմ բացակայ բարեկամիս մասին, ես ներկայացնում, առաջադրում եմ նրան կամ նրա գաղափարն եմ աչքիս առաջ բերում։ Սակայն գաղափարները միշտ իրական առարկաներին չեն համապատասխանում. նրանք համապատասխանում են առարկաներին այն չափով, որ չափով տպաւորվում են մեր հոգու մէջ։

§ 10. Երբ առարկայի վերականգնումը կատարվում է առանց մեր ցանկութեան, այդ նշանակում է «յիշել» առարկան, իսկ երբ մեր ցանկութեամբ—«մտաբերել»։

§ 11. Գաղափարները լինում են անհա-

տական և ընդհանուր։ Անհատական կոչվում են նրանք, որոնք առանձին առարկաներին են համապատասխանում. ընդհանուր կոչվում են այն գաղափարները, որոնք համապատասխանում են շատ համանման առարկաների։ Պարզ է, որ ընդհանուր գաղափարները կազմվում են անհատականներից և ամենից առաջ անհատական գաղափարներն են մտնում մեր գիտակցութեան մէջ, որովհետև ընութեան մէջ գոյութիւն ունեն միայն անհատական գաղափարները և ընդհանուր գաղափարներ չը կան։

§ 12. Գաղափարների կապակցութիւնը՝ մեր երևակայութեան մէջ վճրանորոգված զանազան գաղափարների համախմբման մէջ է կայանում։ Կապակցութիւնը միացնում է մի քանի պարզ գաղափարները մի բաղադրեալ գաղափարի մէջ։

Ե.

Մոտածողութիւն

§ 13. Գաղափարների կապակցութիւնը գեռչէ կարող գիտակցութիւն առաջ բերել։ Երբ գաղափարները ծագում են մեր մտքի մէջ, պարզ գաղափարները միանալով խմբեր են կազմում, բարդ գաղափարները վերածվում են տարրականի, համանման գաղափարները ձուլվում են մի ընդհանուրի մէջ, բայց այդ ամենը լինում է առանց մեր գիտակցութեան։ Գաղափարների միացումը, բաժանումը և ձուլումը ծագում է

անհաշիւ: Այդ տեսակ կապակցութիւնը կոչվում է մեքենական: Բայց երբ գաղափարների միացման, բաժանման և ձուլման հետ միասին ընկերացած է լինում և զիտակցութիւնը, այն ժամանակ մտքի այդ տեսակ գործունեութիւնը կոչվում է մտածողութիւն: (cogitatio): Մի օրինակով բացատրենք այս բոլորը:

Մանուկը նկատում է մի իր, որ բաղկացած է հորիզոնական քառակուսի տախտակից և չորս ոտ ունի և լուսմ է որ այդ իրի անունը «սեղան» է: Յետոյ նա նկատում է ուրիշ շատ իրեր, որոնք շատ նման են իր տեսածի հետ: Ամեն նոր իր տեսնելիս, նա յիշում է «սեղան» խոսքը, այնպէս որ նա յատուկ անունից քիչքիչ հասարակ անուն է դառնում երեխայի համար համանման իրերի վերաբերմամբ: Այդ գործողութեան հետ միասին այս կամ այն սեղանի և աթոռի առանձին նկատումներից ծագում է մի ընդհանուր գաղափար սեղանի մասին: Սակայն այդ գործողութիւնը (պրօցէսը) մտածողութիւն չէ, այլ գաղափարների հասարակ մեքենական գուցորդութիւն (association): Ըստ հակառակն, երբ աշակերտը կենդանիների մի քանի դասակարգերի քննողութիւնից յետոյ գըտնում է որ նրանց մէջ եղած նմանութիւնը այնքան էական է, որ բոլորովին կարելի է մի ընդհանուր առուամբ յորջորջել (ողնարարական), այդտեղ առանձին նկատումների ի մի ձուլման և նոցա ընդհանուր տարերքների մասնաւոր տա-

րերքներից ջոկելու գործողութիւնը կատարվում է զիտակցաբար և այլև մեքենական զուգործութեան գործ չէ, այլ մտածողութիւն:

Առաջին դիպուածում մանուկի մտքի մէջ գաղափարները միայն մեքենապէս միանում են, իսկ երկրորդ դիպուածում՝ նա միհնոյն ժամանակ մտածում է, խորհում է:

§ 14. Ետածելու ընդունակութիւնը կոչվում է բանականութիւննայացում է հասկացողութիւն, դատողութիւն և եզրակացութիւն կազմելու մէջ:

Զ.

Հասկացողութիւն (conceptus, notio, понятие)

§ 15. Հասկացողութիւն առարկայի մասին այն միտքն է, թէ ինչ է այդ առարկան և ինչի մէջ է կայանում նրա զանազանութիւնը ուրիշ առարկաներից: Հասկացողութիւն կազմելու համար պէտք է համեմատել մի առարկայի նըշանները ուրիշ առարկայի նշանների հետ. առարկաների մէջ նղած ընդհանուր նշանների միաւորութիւնը կամ առարկաների մասին զաղափար ունենալը, ըստ իրենց համանման նշանների—դա է հասկացողութիւնը: Առարկաները համեմատելիս մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք միայն նրանց ընդհանուր նշանների զրա և թողնենք որոշիչ նշանները: Օրինակ, ես տեսնում եմ տոնն. ինչ է այդ առարկան: Ես նկատում եմ զանազան տներ, տեսնում եմ որ ամենքն ունեն պատեր, տանիք, պատուհաններ,

գոներ և այլն. դիտում եմ սակայն որ բոլորի տանիքները գլխին են շինած, որ դաները պատերի մէջ են բացված. ես չեմ իմանում զեռտան այդ մասերի նշանակութիւնը, թէ ինչի համար են նըանք ծառայում, ուստի սկսում եմ հետազոտել իւրաքանչիւր մասի որոշիչ յատկութիւնները կամ նշանները, բաղդատում եմ այդ նշանները և գտնում եմ աների ընդհանուր կամ հիմնական նշանները, այն է թէ տունն է մի շինութիւն, որ տաճանված է մարդի ընակութեան եւ նրա գոյքի պահպանութեան համար. Այդ է հասկացողութիւնը տան մասին:

§ 16. Անհատական եւ ընդհանուր հասկացողութիւնների մասին:

Ընդհանուր կոչվում է այն հասկացողութիւնը, որի բովանդակութեան մէջ գտնվում են նշաններ, որոնք ընդհանուր են առանձին առարկաների մի ամբողջ դասի համար. օրինակ՝ քաղաք, առաքեալ և այլն. այն հասկացողութիւնը, որի մէջ գտնվում են ընդհանուր նշանների հետ միասին և մասնաւորապէս այս կամ այն առարկայի որոշիչ նշանները, կոչվում է անհատական. օրինակ եթէ քաղաք ընդհանուր հասկացողութեան հետ կցենք որոշիչ նշանը՝ նորագույան, երեւան:

§ 17. Պարզ եւ բարդ հասկացողութիւններ.

Այն հասկացողութիւնը, որ միայն մի հատեսակական նշան ունի, կոչվում է պարզ. օ-

րինակ՝ այս, այն, կարմրութիւն, սևութիւն, անհրաժեշտութիւն և այլն: Իսկ այն հասկացողութիւնը, որ բաղկացած է մի քանի նշաններից, եռչվում է բարդ. օրինակ՝ «ջուր». այս հասկացողութիւնը իր մէջ պարունակում է նշաններ—թափանցկութիւն, տարածութիւն, հեղուկ, հոտի, համի բացակայութիւն և այլն: «Նիվծ» հասկացողութիւնը ունի նշաններ — ինչոցիա, ծանրութիւն և այլն:

§ 18. Բարձր եւ ստորին, ցեղական եւ տեսակական հասկացողութիւններ.

Աւելի մեծ ընդհանուր հասկացողութիւնները, որոնք իրանց բովանդակութեան մէջ նշաններ ունեն (կամ լայն ծաւալ), կոչվում են բարձր կամ ցեղական, իսկ աւելի նուազ ընդհանուր հասկացողութիւնները, որոնք իրանց բովանդակութեան մէջ շատ նշաններ ունեն (կամ նեղ ծաւալ) կոչվում են ստորին կամ տեսակական: Եթէ մենք ընդհանուր հասկացողութիւնների նշանների բովանդակութիւնից դէն ձգենք նըանց տարբեր նշանները, օրինակ դէն ձգենք առանձին մարդկանց բոլոր որոշիչ նշանները, մենք կը ստանանք ընդհանուր հասկացողութիւն մարդի մասին. յետոյ դէն ձգենք այդ հասկացողութիւնից այն բոլոր նշանները, որոնցով մարդիկ որոշվում են շնչաւոր էակներից, կը ստանանք աւելի ընդհանուր հասկացողութիւն—«շնչաւոր էակի» մասին: Ուրեմն հետո—

տեսում է, որ բարձր, ցեղական հասկացողութիւնը կարող է կազմվել ստորին կամ տեսակական հասկացողութիւնից նշանների գէն ձգելովը՝ նոյնպէս և բարձր հասկացողութիւնից (կենդանի) ստորին (թռչուն) հասկացողութեան համար, պէտք է առաջնի վրայ աւելացնել մի քանի նոր նշաններ:

Պէտք է նկատել որ «բարձր» և «ստորին» բառերի նշանակութիւնը բոլորովին յարաբերական է, որովհետեւ մի և նոյն «կենդանի» հասկացողութիւնը կարող է լինել «բարձր» կամ «ցեղական» աւելի փոքր հասկացողութեան փերաբերմամբ (օրինակ «կաթնասունի») և «ստորին», կամ «տեսակական» աւելի ընդհանուրի (շնչաւոր է ակի) փերաբերմամբ:

Ուրեմն մենք տեսնում ենք, որ «բարձր» և «ստորին» հասկացողութեան մէջ եղած յարաբերութիւնը որոշելու համար գործ է ածվում «ցեղ» և «տեսակ» կոչումն, այսինքն՝ ընդհանուր հասկացողութեանը համապատասխանում է ցեղը, իսկ մասնաւոր հասկացողութեանը — տեսակը:

§ 19. Վերացական եւ հոծ հասկացողութիւններ.

Եթէ մենք կանգնում ենք առարկայի որիէ մի նշանի վրա, նրան յիշելու և տեսնելու թէ ինչի մէջ է կայանում նա և ինչով էականապէտ տարբերվում է ուրիշ նշաններից, այդ կը նշանակէ մենք նայում ենք նշանը բոլորովին ան-

ջառ առարկայից: Յետոյ երբ այդ առարկայի մասին մեր մէջ երևայ հասկացողութիւն, այդ հասկացողութիւնը կը կոչվի վերացական:

Ընդհակառակը, եթէ մենք զննում ենք առարկան բոլոր իր ամբողջութեամբ և բոլոր նըշաններով, այն ժամանակ այդ կը լինի հոծ հասկացողութիւն: Օրինակ՝ կարմրութիւն, սպիտակութիւն, մեծութիւն, առաքինութիւն — վերացական հասկացողութիւններ են, որովհետեւ զննում ենք միայն և եթ առարկային վերաբերող նշանները, իսկ եթէ ասենք մարդ, սար, ծի — այդ կը լինի հոծ հասկացողութիւն, որովհետեւ այդտեղ զննում ենք առարկաները բոլոր իրանց նըշաններով, այդտեղ զննում ենք և գեղեցկութիւնը, կարմրութիւնը, մեծութիւնը և այլն: Այդ հիման վրայ՝ ընդհանուր, բարձր հասկացողութիւնները մենք կարող ենք նկատել իրեն հոծ: Առաջին դիպուածում հասկացողութիւնը լինում է անորոշ, իսկ երկրորդում՝ որոշ, պարզ:

§ 20. Վերացականութիւն.

Մեր մտածողութեան առարկաները կամ անկախ իրեր և էակներ են, օրինակ՝ տուն, սար, ըոյս, մարդ, կամ գրանց որակութիւնները, օրինակ՝ սպիտակ, պինդ, քարեղէն և այլն: Որականութիւնները կամ նշանները ծառայում են առանձին առարկաների որոշութեան համար, բայց մի և նոյն ժամանակ իրանք ևս միմեանցից տարբերվում են. օրինակ՝ հալողութիւնը իւրաքանչփուր մետաղի նշանն է, բայց այդ նշանն իւ-

տարբերվում է—մի մետաղ միւսից դիւրահալ է լինում, սննդառութիւնը օրգանական էակների նշանն է, բայց այդ նշանն ինքն ևս իր նշաններն ունի, այն է մննդական նիւթերի ընդունելութիւնը և մարսողութիւնը, Երբ մենք զբնառում ենք առարկան, բոլոր նրա որակութիւնները ու նշանները մեր խելքի համար կազմում են մի առարկայ, օրին, մարդ, մենք զննում ենք նրա նշանները (բանականութիւն, ազատութիւն, մարմականութիւն) իբրև առանձին առարկաներ և կանգ ենք առնում մի նշանի վրա և նկատում ենք իբրև մի առանձին առարկայային ժամանակ մտածողութեան այն գործողութիւնը, որի միջոցով առարկայի նշանները փոխարկվելով դառնում են հասկացողութեան առանձին, ինքնուրոյն առարկայ, կոչվում է վերացականութիւն (abstractio):

§ 21. Հնդիանրացումն, սահմանափակումն.

Մենք գիտենք որ աշխարհի մէջ գոյութիւն ունեն միայն անհատական առարկաներ և այդ անհատական առարկաների թիւը շատ շատ է, այնպէս որ անկարելի է իւրաքանչիւրի համար առանձնապէս հասկացողութիւն կազմել: Ուստի որպէս զի կարողանանք մտածել առարկաների մասին, չը կազմելով իւրաքանչիւր անհատականի համար առանձին հասկացողութիւն, մենք միաւորում ենք շատ անհատական հասկացողութիւններ մի ընդհանուրի մէջ, այսինքն ստորին

կամ տեսակական հասկացողութիւնները շինում ենք բարձր կամ ցեղական, օրինակ՝ դասարանական սեւ քարետախտակը, գէն ձգելով «դասարանական» նշանը, ստանում ենք աւելի ընդհանուր միտք—«սև քարետախտակ», որ կարող է լինել և «կարմիր» և «սպիտակ». գէն ձգելով «սև» նշանը, ստանում ենք «քարետախտակ»—աւելի ընդհանուր հասկացողութիւն:

Տեսակական հասկացողութիւնից ցեղականը շինելու գործողութիւնը կոչվում է ընդհանրացումն (généralisatio):

Ծնդհանրացման հակառակ գործողութիւնը, այսինքն մի այնպիսի գործողութիւն, որի միջոցով մենք ցեղական քարձր հասկացողութիւնները շինում ենք տեսակական (ստորին), համանման նշանների վրայ աւելացնելով որոշչ նըշաններ, կոչվում է սահմանափակումն (determinatio): Օրինակ՝ վեց առնենք ցեղական հասկացողութիւնը «թոշուն»: Մենք գիտենք որ թոշունները լինում են զիշատիչ և տնային. աւելացնենք «թոշուն» հասկացողութեան: Վրանոր նշաններ—«գիշատիչ» և «տնային» և մենք կը ստանանք մի նոր հասկացողութիւն, որ աւելի մօտ է տեսակականին, և այն:

§ 22. Բովանդակութիւն և ժաւակ հասկացողութեան:

Իւրաքանչիւր հասկացողութիւն կարող է զննվել երկակի տեսակէտից. 1) բովանդակութեան և 2) ծաւալի կողմից:

Հասկացողութեան բովանդակութիւնը (complexus) կոչվում է առարկայի նշանների մասին ունեցած գաղափարների հաւաքումն. օրինակ՝ «Աստուած» հասկացողութեան բովանդակութիւնը կազմված է սրբութեան, ամենակարողութեան, ամենապիտութեան մասին ունեցած գաղափարներից. «տուն» հասկացողութեան բովանդակութիւնը կազմված է գաղափարներից.— ընակութեան, գոյքի պահպանութեան և ուրիշ նշանների մասին:

Հասկացողութեան ծաւալը (ambitus, օբյեմ) կարող էն կոչվել այն բոլոր հասկացողութիւնները, որոնց համար նա ծառայում է իրեւ նշան, բայց գլխաւորապէս սրանք, որոնց մէջ նա կազմում է բովանդակութեան գլխաւոր մասն, օրինակ՝ նեզը, ամերիկացի, յոյն, հայ՝ գանվում են «մարդ» հասկացողութեան ծաւալի մէջ, որով այդ վերջին հասկացողութիւնը նրանց բովանդակութեան գլխաւոր մասն է կազմում։

§ 23. Ստորադասող, ստորադասեալ եւ համատորադաս հասկացողութիւններ։

Իրանց ծաւալի մէջ որևէ ուրիշ հասկացողութիւններ պարունակող հասկացողութիւնները կոչվում են ստորադաս (բարձր հասկացողութիւններ) առաջնների վերաբերմամբ, իսկ դրանք (ստորին հասկացողութիւնները) ստորադասողների վերաբերմամբ կոչվում են ստորադաս եալ. իսկ այն յարաբերութիւնը որ ունեն ստորադասեալ հասկացողութիւնները դէպի միև

նոյն ստորադասողը (բարձր հասկացողութիւնը) կոչվում է համաստորադաս գառասութիւն։ Օրինակ՝ ցեղական հասկացողութիւնը «ծառ» ստորադասող է իր զանազան տեսակների, օրինադի կաղնու, խնձորենու, արմաւենու վերաբերմամբ։ Այդ տեսակական հասկացողութիւնները ստորադասեալ են առաջինին և համաստորադաս են միմեանց հետ։ Սակայն ստորադասեալ հասկացողութիւնները իրանց կարգին կարող են լինել ստորադասող աւելի ստորին հասկացողութիւնների վերաբերմամբ, ինչպէս «արմաւենի» հասկացողութիւնը՝ հնդկացնկուզի, պալմի, բունարմաւի պալմի վերաբերմամբ և այլն,

§ 24. Ծաւալի եւ բովանդակութեան մէջ եղած յարաբերութիւնը.

Առարկայի մասին եղած հասկացողութիւնը սերտ կերպով կապված է այդ առարկայի ծաւալի և բովանդակութեան հետ, այնպէս որ չիմանալով այդ երկուսը, չենք կարող իմանալ և հասկացողութիւննը։

Հասկացողութեան ծաւալը — նոյն ինքն հասկացողութիւնն է, այսինքն հաւաքականութիւնը այն բոլոր անհատական (միայնական) հասկացողութիւնների, որոնք կազմում են բովանդակութիւնը կամ հասկացողութեան նշանները. օրինակ՝ «մարդ» հասկացողութիւնը. նրա ծաւալն է — աշխարհի բոլոր մարդիկը, իսկ բովանդակութիւնը — մարդին յատկանիշ բոլոր նշանները։ Ուրեմն ծաւ-

ւալի և բովանդակութեան մէջ եղած զանազանութիւնն այն է, որ ծաւալը նոյն ինքն հասկացողութիւնն է, իսկ բովանդակութիւնը—նրանշանները, ուստի և հասկացողութեան ծաւալն ու բովանդակութիւնը հակադարձ յարաբերութեան մէջ են գտվում և բոլորովին ընդդիմադարձ են միմեանց հետ ըստ մեծութեան, այսինքն որքան մեծ է ծաւալը, այնքան փոքր է բովանդակութիւնը և ընդհակառակը։ Այդուղից հետեւմ է, որ բարձր, ցեղական հասկացողութիւնը մեծ ծաւալ ունի և փոքր բովանդակութիւն, որովհետեւ ցեղական, օրինակ «մարդ» հասկացողութեան մէջ աւելի քիչ նշաններ կայ, քան տեսակականի (նեզը) մէջ, բայց դրա փոխարէն մարդ ցեղական հասկացողութիւնը լայն ծաւալ ունի, ըստ որում իր մէջն է ամփոփում ուրիշ մարդկանց, այն է կարմրամորթերին, սպիտակամորթերին և այլն, ընդհակառակ՝ ստորին, տեսակական հասկացողութիւնը մեծ բովանդակութիւն ունի և նուազ ծաւալ միևնոյն պատճաններով։ Եթէ այժմ ընդհանրացման միջոցով մարդ հասկացողութիւնից գանք մի որեւէ աւելի բարձր հասկացողութեան, օրինակ՝ «կաթնասուն կենդանիներին», կը տեսնենք որ այդ բարձր հասկացողութեան ծաւալը աւելի մեծ է, իսկ բովանդակութիւնը փոքր, որովհետեւ մարդն ունի բոլոր այն նշանները, որոնք ունեն կաթնասուն կենդանիները և ուրիշ այլ նշաններ, որոնք միայն իրան են յատուել:

Համառօտելով՝ 1) ամենանուազ բովանդակութիւն (նշաններ) ունեցող հասկացողութիւնները ամենալայն ծաւալ ունեն, օրինակ՝ «առարկայ»։ Այդ հասկացողութիւնը ամենաքիչ նըշաններ ունի և մենք կարող ենք նրա մասին ասել միայն թէ «առարկան»—այն է, ինչ որ գոյութիւն ունի աշխարհի մէջ, բայց զլա տեղ նրա ծաւալը ամենաընդգրածակ է, որովհետեւ այդ հասկացողութեան ծաւալի մէջ մտնում են այն բոլորը ինչ որ մենք տեսնում, շշափում, լսում ենք և այլն։ 2) ամենահարուստ բովանդակութեան տէր հասկացողութիւնները (անհատական, սոորին) ամենաաղքատ ծաւալ ունեն, ինչպէս «աթոռ»։

Պարզ է, որ սահմանափակումը մեծացնում է բովանդակութիւնը և փոքրացնում է ծաւալը, իսկ ընդհանրացումը փոքրացնում է բովանդակութիւնը և մեծացնում է ծաւալը։

§ 25. Հասկացողութիւնների մէջ եղած յարաբերութիւնը բովանդակութեան և ծաւալի կողմից։

Միևնոյն ծաւալ և միևնոյն բովանդակութիւն ունեցող հասկացողութիւնները կոչվում են նոյնանման։

Այն հասկացողութիւնները, որոնց բոլոր նըշանները համանման են, կոչվում են միակերպ, իսկ որոնցը տարբեր—զանազանակերպ։

Այն հասկացողութիւնները, որոնք միևնոյն ծաւալն ունեն, բայց ոչ միևնոյն բովանդակու-

թիւնը, կոչվում են համափակ (հաւասար նշանակութիւն ունեցող, .notiones reciprocae). բօխնակ՝ Աղեքսանդր Մակեդոնացու դաստիարակը — Պլատոնի աշակերտներից մեծագոյնն է:

Այն հասկացողութիւնները, որոնք երկուան էլ միևնոյն երրորդ հասկացողութեան բովանդակութեան մէջ են մտնում, կամ նըանցից մինը մտնում է միւսի բովանդակութեան մէջ, կոչվում են համաձայն (notiones inter se convenientes), օրինակ՝ բանականութիւն եւ ազատութիւն. առողջ եւ հարուստ:

Իսկ դրա հակառակները, այսինքն այն հասկացողութիւնները որոնք չեն կարող միանալ մինը միւսի հետ իբրև միևնոյն հասկացողութեան նշաններ, օրինակ՝ առողջ եւ հիւանդ, հարուստ եւ աղքատ, սեւ եւ սպիտակ—կոչվում են անհամաձայն կամ ներհակ (notiones contrarie oppositae). Եթե այդ հասկացողութիւններից մինը չէ բովանդակում իր պարունակութեան մէջ ոչ մի դրական նշան, այլ միւսի ուղղակի հերքումն է, կոչվում է ժխտական կամ անորոշ (notio negativa indefinita). Իսկ այդ տեսակ հասկացողութիւնների մէջ եղած յարաբերութիւնը կոչվում է հակածառութիւն, հակադրութիւն (notiones contradictorie oppositae). օրինակ՝ մարդ եւ ոչ—մարդ, Ա և ոչ—Ա, ազատ և ոչ—ազատ:

Այն հասկացողութիւնները, որոնք իրանց բովանդակութեան մէջ մի քանի համանման նը-

շաններ ունեն, կոչվում են համանման. իսկ որոնք ոչ մի ընդհանուր նշան չունեն—անհամանման. օրինակ՝ սպիտակ եւ ազատ, պինդ եւ քաղցր:

Միատեսակ կամ (notiones disjunctae) չը մի ացող կոչվում են այն հասկացողութիւնները, որոնք վերաբերում են մի ցեղի, բայց իրանց ծաւալի ոչ մի մասով չեն մտնում մինը միւսի մէջ. օրինակ՝ մարդ, կենդանի, բոյս, լուսաւորչական, բողոքական:


§ 26. Հասկացողութիւնների ծաւալի մէջ եղած յարաբերութիւննը շրջանակների ծեւով:

Հասկացողութիւնների ծաւալի մէջ եղած յարաբերութիւնը կարելի է գծագրել շրջանակների մէջ եղած յարաբերութիւնների միջոցով:

Այդպէս՝ նոյնանման հասկացողութիւնների ծաւաների մէջ եղած յարաբերութիւնը նշանակվում է երկու շրջանակների կամ բոլորակների միջացով, որոնք միմեանց ծածկում են բոլորովին. օրինակ՝ եթէ հասկացողութիւնների ծաւաները շրջանակներով գծագրենք և Ա, Բ տառերով նշանակենք, կը ստանանք 1 պատկերը:

Միմեանց ստորադաս հասկացողութիւնների (եթե ծաւաները յարաբերվում են իբրև ցեղը տեսակին) ծաւաների յարաբերութիւնը գծագրվում է ներփակեալ շրջանակների միջոցով (պատկ. 2):

Ներհակ հասկացողութիւնների ծաւալները
գծագրվում են միմեանցից գուրս գտնվող շրջա-
նակներով (պատ. 3): Համաձայն հասկացողու-
պատ. 1 3



թիւնների ծաւալները նշանակվում են միմեանց
կտրող շրջանակներով (պատ. 4):

§ 27. Բ ա ռ ն ը լ.

Բառերը հասկացողութիւնների նշանիշներն
են և ով անկանոն կերպով է գործածում այդ
նշանները, նա կարող է անկանոն կերպով գոր-
ծածել և հասկացողութիւնները: Այդ գեպքում,
մտածողութիւնը սխալ է լինում և այն ինչ որ
հասկանալի պէտք է գառնայ, անհասկանալի է
լինում: Ուստի մտածողութեան ժամանակ շատ
կարեոր է բառերի ճիշտ գործադրութիւնը, մանա-

ւանդ երբ մեր միտքը ուրիշներին ենք հաղոր-
դում: Եւ ըստինեան այն մօտ 100,000 բառերը,
որ ունի հայոց լեզուն, դեռ բաւական չեն մեր
բոլոր հասկացողութիւնները որոշակի կերպով
յայնելու համար, ուստի միկնոյն բառը պէտք
է ծառայէ շատ և զանազան հասկացողութիւն-
ների արտայայտման համար: Յատուկ անուններ
մենք ունենք միայն այն առարկաների հա-
մար, որոնք մի անգամ գոյութիւն ունեն, կամ
որոնցից մի օրինակ կայ, ինչպէս Երևան, Ա-
րաքս, Հայկ, Տրդատ: Այն առարկաների համար,
որոնցից շատ կայ, գործ ենք ածում մի բառ
բոլորի համար, թէև նրանք զանազան լինեն,
ինչպէս զանազան տներ, ծառեր, մարդիկ, գե-
տեր, բարեր և այլն: Այդ տեսակ խօսքերը կոչ-
վում են ընդհանուր կամ ցեղական, նոյնպէս
և հաստրակ անուններ: Մենք նրանց միջո-
ցով յայտնում ենք առարկաները միայն ընդ-
հանրապէս, ուստի և նրանք են հասկացողու-
թիւնների համար բուն նշանները:

Իսկ ինչ վերաբերում է այն բառերին, ո-
րոնք քերականութեան մէջ կոչվում են յատ-
կացուցիչ, լրացուցիչ և այլն, նրանք ու-
րիշ բան չեն եթէ ոչ հասկացողութիւնների սահ-
մանափակումն:

Է.

Անալիզի եւ սինթէզի մասին.

§ 28. Առ հասարակ, գիտութեան կամ
որևէ հասկացողութեան (գաղափարի) շարադրու-

թեան համոր երկու ձև ունենք, անալիտիկական (վերլուծողական) և սինթետիկական (բաղադրական):

Եթե ամենից առաջ մենք վեր ենք առնում որևէ մի ընդհանուր (բարձր) հասկացողութիւն և լուծում ենք մասերի, ու յետոյ իւրաքանչիւր մասն առանձնակի զնում ենք, կամ երբ բարձրագոյն հասկացողութիւնից անցնում ենք ստորինին, լուծման այդ եղանակը կոչվում է անալիտիկան կամ վերլուծողական, իսկ ինքն գործողութիւնը, այն է բարձրագոյնից դէպի ստորինը անցնելը, կոչվում է անալիզ կամ վերլուծում:

Իսկ երբ սկզբում մասնաւոր (ստորին) հասկացութիւններ կամ գաղափարներ ենք վերլուծում, բացատրում ենք նրանց և այդ կերպով անցնելով յաջորդաբար ստորիններից դէպի բարձրագոյնը, համար ենք ամենաբարձրագոյն (ընդհանուր) հասկացողութեան, կազմողութեան այդ տեսակ եղանակը կոչվում է սինթետիկական կամ բաղադրական, իսկ ինքն գործողութիւնը, այն է ստորին հասկացողութիւնից դէպի բարձրն անցնելը, կոչվում է սինթետիկա, բաղադրական:

Սյու երկու եղանակները մանկավարժութեան մէջ իրեն դասաւութեան կերպեր մեծ դեր են խաղում: Երբ ուսուցիչը աշխարհագրութիւնը սկսելիս վեր է առնում երկրագունդը, բաժանում է երկու կիսագնդի, բացատրում է աշ-

խարհի մասերը, վեր է առնում մասերից մինը, օրինակ Ասիան, ցոյց է տալիս այն տէրութիւնները, որոնցից բաղկացած է նա, անցնում է կովկաս, բացատրում է քանի նահանգներից և գաւառներից է բաղկացած, մինչև համառ է հայրենի քաղաքին — կը նշանակէ նա աշխարհագրութիւնը աւանդում է վերլուծողական եղանակով: Իսկ երբ զրա հակառակ առաջ խօսում է աշակերտի գիւղի կամ քաղաքի մասին, գուրս է գալիս քաղաքից դէպի շրջականները, անցնում է գաւառին, յետոյ նահանգին, տէրութեան, մինչև համառ է Ասիային և ի վերջոյ երկրագնդին, այն ժամանակ նա աւանդում է առարկան սենթէտիկական եղանակով: Հայրենագիտութեան աւանդումները, այժմ սկսում են աշխարհագրութեան ուսումն, զրա վրա է հիմնված:

Հ.

Դատողութիւն

§ 29. Առարկաների մէջ եղած նմանութիւնը և զանազանութիւնը դատնել կամ նրանց որևէ նշան յատկացնել, կը նշանակէ մտախունել, դատել, իսկ առարկաների մէջ եղած նմանութիւնը և զանազանութիւնը դատնելու ու նրանց նշաններ յատկացնելու ընդունակութիւնը կոչվում է դատողութիւն: Երբ եռ ասում եմ՝ ձին եղիւրներ չունի, աղուէն փափուկ մորթունի, կը նշանակէ ես յատկացնում եմ առար-

կաներին այս կամ այն նշաննելը, այսինքն ես
դատողութիւն եմ անում»

Ուրեմն, դատողութիւնն (judicium)
է՝ առարկայի և նշանի մէջ եղած յարաբերու-
թեան արտայայտութիւնը, երբ նշանը առար-
կայից առանձնապէս է զննվում։ Օրինակ՝ մար-
դու ընակում է երկրի վրա—դատողութիւն է,
որովհետև՝ երկրի վրայ բնակելու նշանը քննվում
է առանձնապէս առարկայից, այն է մարդից։

Դատողութիւն անող (quaerit) անձի գիտակ-
ցութեան մէջ նախ և առաջ յայնվում է առար-
կայ դատողութեան համար, որ կոչվում է ենթա-
կայ (subjectum, լօդիկայի մէջ նշանակվում է
Տ տառով), իսկ յետոյ այդ առարկայի մասին
դատողութիւնը, որէ ստորոգելին (praedicatum
—!)։

§ 30. Հասարակ և քարդ դատողութիւն,

Ըստ իւրեանց կազմութեան, դատողութիւն-
ները բաժանվում են երկու դասակարգի. պարզ
և քարդ։ Պարզ կոչվում է այն դատողութիւնը,
որի կազմութեան մէջ մանում է երկու հասկա-
ցողութիւն կամ գաղափար, օրինակ՝ մարդը մահ-
կանացու է։ Բայց երբ դատողութիւնը կազմված
է աւելի քան երկու հասկացողութիւնից «մարդն
ըաղկացած է հոգուց և մարմնից» այդ կոչ-
վում է բարդ, որովհետև շինվում է մի քա-
նի հասարակ դատողութիւնների միացմամբ, այն
է մարդն ըաղկացած է հոգուց, մարդն ըաղկա-
ցած է մարմնից և այլն։

§ 31. Ենթակայի և ստորոգելոյն վերաբեր-
մամբ, կամ ըստ քանակութեան և որակութեան,
դատողութիւնները զանազան տեսակ են լինում։

1) Ստորոգելոյն վերաբերմամբ կամ ըստ
որակութեան (qualitas), այսինքն երբ հաստատ-
վում կամ բացասվում է դատողութեան մէջ
ենթակայի կապն ստորոգելոյն հետ—դատողու-
թիւնները լինում են հաստատողական (որական)
և բացասական։

Այն դատողութիւնը, որտեղ ենթակային
յատկացնվում է որ և է նշան, օրինակ՝ շունը
հաշում է, ծիւնը սառն է, աղուէսն կենդանի է,
—կոչվում է հաստատողական կամ դրա-
կան։ Զենք կարող ասել շունը երգում է, ծիւնը
տաք է, որովհետև այդ նախադատութիւնների
երկրորդ անդամը չէ պարունակվում առաջին
անդամի մէջ։ Հասարակ զրական դատողութիւ-
նը կազմվում է երկու հասկացողութիւնից, ու-
րուցից մինը (ստորոգելին) բովանդակվում է
միւսի (ենթակայի) մէջ։ Դրական դատողութեան
մէջ ստորոգելին ինքն ըստ ինքեան ամփոփված
է լինում ենթակայի մէջ, կամ թէ ենթական
յուծվում է երկու գաղափարի, ուստի դրական
դատողութիւնը մի և նոյն ժամանակ է մտա-
ծողութեան անալիտիկական կամ վերլուծողական
գործողութիւն։

Այն դատողութիւնը, որտեղ ստորոգելին,
այն է նշանը խլվում է ենթակայից, օրինակ՝ ոչ
մի կենդանի անման չէ կամ այս աշակերտը

ջանասէր չէ—կոչվում է բացառական: Այդ գատողութիւնը ծագում է այն ժամանակ, երբ երկու գաղափարներ միաժամանակ յայտնվում են գիտակցութեան մէջ, բայց իրենց մէջ ոչ մի ընդհանուր կազ չունեն, կամ մինը չէ ամփոփվում միւսի մէջ:

2). Ենթակայի վերաբերմամբ կամ ըստ քանակութեան (quantitas) գատող առարկաների, գատողութիւնները լինում են ընդհանուր, մասնաւոր և միասնական (քանակութիւնը ցոյց է տալիս թէ ինչ ծաւալով է վերցնվում ենթական):

Հնդ հանուր է այն գատողութիւնը, երբ ենթական վերցնվում է ամբողջութեամբ, այն է իր բոլոր ծաւալով. մարդն մահկանացու է («մարդ» ենթակայով իմացվում են բոլոր մարդիք): Այդպիսի (ընդհանուր) գատողութեան ձևն լոգիկայի մէջ է—Տ-ն է (բոլոր Տ-երն են) Բ:

Մասնաւոր է այն գատողութիւնը, երբ ենթական վերցնվում է միայն իր ծաւալի մի մասով. ոմանք մարդիք հարուստ են. այսուեղ մենք ինկատի ենք առնում միայն այն մարդկանց, որոնք հարուստ են:

Այդ տեսակ (մասնաւոր) գատողութեան ձևն լոգիկայի մէջ հետեւալի է. ոմանք Տ (շատ Տ-եր կամ մեծ մասն Տ-երի) են Բ:

Միասնական է այն գատողութիւնը, երբ ենթական անհատական հասկացողութիւն է. օրինակ, վեր առնենք մի անհատական հասկացո-

թիւն «Ալշակ» և կցենք նրա հետ մի ստորոգելի «գրում է», այն ժամանակ մենք կը ստանանք միասնական գատողութիւն—Արշակը զըրում է:

§ 32. Բատ յարաբերութեան (relatio), այսինքն ենթակայի և ստորոգելոյն մէջ եղած փոխադարձ յարաբերութիւնը ցոյց է տալիս թէ գատողութեան մէջ ինչ կերպով է արտայայտված ենթակայի միութիւնը ստորոգելոյն հետ, արդեօք որոշակի և անպայման կերպով, թէ պայմանաւոր կերպով, թէ անորոշ կերպով—գատողութիւնները լինում են վճռական կամ անպայման (կատէզօրիքական), պայմանաւոր (հիպօթէտիկական) և ռաժանողական կամ անորոշ:

Վճռողական այն գատողութիւնն է, երբ ենթակային յատկացնվում է նշանը առանց որ և պայմանի կամ թէ ուրիշ խօսքերով՝ երբ ենթակայի և ստորոգելոյն մէջ եղած յարաբերութիւնը արտայայտվում է ողոշ կերպով և առանց թէութեան, օրինակ՝ այսօր տաք է, երկիրն մոլորակ է: Այդ տեսակ գատողութեան մէջ ենթական և ստորոգելին կապակցվում են իմի «է» կատարով:

Այդ գատողութեան ձևն է—Տ-ն է Բ:

Պայմանականը այն գատողութիւնն է, երբ նշանը յատկացնվում է առարկային յայտնի պայմաններով. օրինակ՝ եթէ ես լաւ սովորեմ, այն ժամանակ դասատունս կը փոխեմ: Այդ

պարագայում մի դատողութեան առկախումն միւսից արտայայտվում է «Եթէ—այն ժամանակ» կամ «Եթէ—ուրեմն» մասնիկներով և կոչվում է հետեւողականութիւն։

Պայմանական դատողութեան ձևն է. եթէ կայ (է) S, այն ժամանակ կայ և P. կամ եթէ A է B, այն ժամանակ C է D. օրինակ՝ «Եթէ Ասուած արդարակատ է, ուրեմն առաքինութիւնը կը վարձատրի»։

Առաջին դատողութիւնը՝ A է B, որ հաստրակ դատողութեան մէջ համապատասխանում է ենթակային, կոչվում է առաջընթաց նախադասութիւն (antecedens) և ծառայում է իբրև հիմն. Երկրորդ դատողութիւնը—C է D, որ համապատասխանում է ստորոգելոյն, կոչվում է վերջընթաց (հետեւել, consequens) և ներկայացնում է հետեւանք։

Պայմանաւոր դատողութիւնը կանոնաւոր է միայն այն ժամանակ, երբ նախընթաց դրութիւնը յարաբերվում է վերջընթացին իբրև հիմն հետեւանքին, այսինքն երբ դատողութեան մէջ հետեւողականութիւն կայ. Օրինակ, «Եթէ N հարուստ է, ուրեմն և ուսումնական է» կամ «Եթէ ուսուցիչ է նա, ուրեմն և գեղեցկադէմ է»—այդ դատողութիւնների մէջ հետեւողականութիւն չը կայ։

Բաժանողականը այն բարդ դատողութիւնն է, որի մէջ մի ենթակային արւում է մի քանի ստորոգելիներ, որոնցից մինը պատկանում

է նրան, բայց թէ որը, յայտնի չէ. օրինակ «կամ ես, կամ զու պէտք է տանը մնանք», «կամ հարստութիւնը, կամ աղքատութիւնը պէտք է երջանկութեան պայման համարել»։

Զիշ.—1) S-ն է կամ ա, կամ ի, կամ ո.

2) կամ Ա, կամ Բ, կամ Ը է—P:

§ 33. Անալիտիկական եւ սինթետիկական դասողութիւն։

Անալիտիկական (վերլուծողական) կոչվում է այն դատողութիւնը, որի մէջ ենթակային դրվում է այնպիսի նշան, որ ամփոփված է նրա բովանդակութեան մէջ. օրինակ՝ դատողութեան մէջ վեր առնենք իբրև ենթակայ «մարդ», մենք գիտենք որ այդ հասկացողութեան ծաւալի մէջ մըտնում են «բանական, հոգի ունեցող, մարմին ունեցող» նշանները և եթէ այժմ այդ նշաններից մինը կցեմ «մարդ»—ի հետ և առեմ «մարդը» կերպով՝ «մարդ»։

Ուրիշ կերպով, վերլուծողական դատողութիւնն է միհետյն ժամանակ և դրական դատողութիւն։

Սինթետիկական (բաղադրական) կոչվում է, ընդհակառակը, այն դատողութիւնը, երբ ենթակային արւում է այնպիսի նշան, որ չէ ամփոփած նրա բովանդակութեան մէջ մինչեւ հասփառված նշան կացողութիւն կազմելը, օրինակ՝ «այս մարդն կացողութիւն կազմելը», օրինակ՝ «այս մարդն աղքատ է»։ մարդի մասին եղած հասկացողութիւնը

թեան բովանդակութեան մէջ մինչև նրան կազմելը չէր մտած այն նշանը, թէ նա աղքատ է:

§ 34. Դատողութիւնների բաժանումն ըստ հրեանց կերպաւորութեան:

Հաւաստիութեան այն աստիճանը, որով դատողը կազմում է դատողութիւնը, կոչվում է կերպաւորութիւն (modalité): Այդպիսի աստիճաններ երեք են—կարելիութիւն (posse), իրականութիւն (esse), անհրաժեշտութիւն (necessite), ուստի և դատողութիւնները լինում են 1) կարելի կամ հաւանական (պրօբլէմատիկական), 2) իրական (ասսէրտորիկական) և անհրաժեշտային (ապօդիկատիկական):

Հաւանական կոչվում է այն դատողութիւնը, որի հաւաստիութիւնը հիմնված է հասարակ ենթադրութիւնների վրա կամ որն չէ կարելի բոլորովին համարել, այնպէս որ կասկածանքի տեղի կայ. օրինակ՝ «աշակերտը կարող է ուսուցիչ դառնալ». «Վաղը կարելի է պայծառ օր լինի». «Չուտով, գուցէ, հարստանամ» և այլն:

Իրական կոչվում է այն դատողութիւնը, որի հաւաստիութիւնը հիմնված է իրողական աշկարայութեան (փորձի, վկայութեան) վրա. օրինակ՝ «Գայն զիշտիչ գագան է», «Երեւանը չըազդան գետի վրայ է հիմնված» և այլն:

Անհրաժեշտ կոչվում է այն դատողութիւնը, որ հիմնված է վճռողական ապացոյցի

վրա: Այդ աեսակիցն են գիտութեան հաստատած բոլոր գրութիւնները. օրինակ՝ «վերն ձըգված քարն անպատճառ գետին կընկնի», «Եռանկիւնու անկիւնների գումարը հաւասար է 90⁰ ի»:

Թ. Մտաեղբակացումն

§ 35. Մի քանի դատողութիւնների միաւորութիւնն, որոնցից կազմվում է մի գլխաւոր միար, կոչվում է մտաեղբակացումն (ratiocinatum): Կամ ուրիշ խօսքով մի կամ մի քանի դատողութիւններից՝ դատողութիւն հանելը կոչվում է մտաեղբակացումն:

Հանված դատողութիւնը կոչվում է եղբակացութիւն (conclusio), իսկ այն դատողութիւնները, որոնցից հանվում է եղբակացութիւնը, կոչվում են առաջադրութիւններ (propositiones praemissae):

Ուրեմն մտաեղբակացումն բաղկացած է առաջադրութիւններից և եղբակացութիւններից. օրինակ՝ «մարդը մահկանացու է» և «ես մարդ եմ», հետևաբար այդ երկու դատողութիւններից կամ առաջադրութիւններից հանում եմ այն եղբակացութիւնը թէ և «ես մահկանացու եմ»:

Մտաեղբակացման հիմնական ձևն—հետեւողութեան կամ հետեւողականութեան ձևն է. առաջադրութիւնները վերաբերում են եղբակացութեան ինչպէս հիմն հետևանքին:

Մտաեղբակացումներն երկու դասի են բա-

ժանվում. մէկը, երբ եզրակացութիւնը մի առաջադրութիւնից է հանվում, միւսը՝ երբ մի քանի առաջադրութիւններից. առաջինները կոչվում են անմիջական, իսկ երկրորդները—միջական:

**§ 36. Դէղուկցիա, ինդուկցիա, անալօգիա,
Հիպոթէզ.**

(Մակաբերութիւն, մակածութիւն, վերտանութիւն կամ հանգիտութիւն, ենթադրութիւն):

Միջական մտաեզրակացումները բաժանվում են չորս խմբի:

Ա) Դէղուկցիօնական կամ մակաբերական, այն է մտաեզրակացումն ընդհանուրից դէպի մասնաւորը:

Բ) Ինդուկցիօնական կամ մակածական, այն է մտաեզրակացումն մասնաւորից դէպի ընդհանուրը:

Ը) Անալօգիական կամ հանգիտական, այն է մտաեզրակացումն մասնաւորից դէպի մասնաւորը:

Դ) Հիպոթէտիկական կամ հնթաղրական, որ ներկայացնում է առաջնի միւսթիւնը երկրորդի կամ երրորդի հետ:

Ա.

§ 37. Դէղուկցիօնական մտաեզրակացումն կամ սիլլոգիզմ (syllogisme)—հաւաքարանութիւն կոչվածն այն է, երբ մենք ընդհանուր հասկացողութիւնների մասին արած դատողութիւննե-

րից անցնում ենք մասնաւոր հասկացողութիւնների դատողութեան. օրինակ՝ մարդը բանական եւ ասուն էակ է. ես մարդ եմ, հետեւաբար, ես եւս ասուն եւ բանական եմ:

Սիլլոգիզմը կամ հաւաքարանութիւնը բաղկացած է մեծ և փոքր առաջադրութիւններից և եզրակացութիւններից:

Մեծ առաջադրութիւն կոչվում է սիլլոգիզմի մէջ այն դատողութիւնը, որի ստորոգելին լինում է հանման (եզրակացութեան) ստորեգելին, իսկ փոքր առաջադրութիւնը այն դատողութիւնն է, որի ենթական լինում է եզրակացութեան ենթական. օրինակ՝ «մարդն պէտք է աշխատէ. ես մարդ եմ, որիմն եւ ես պէտք է աշխատեմ»: Այստեղ մեծ առաջադրութիւնն է «մարդը պէտք է աշխատէ», իսկ փոքրն—«ես մարդ եմ»:

Սիլլոգիզմները կամ ընդհանուրից դէպի մասնաւոր մտաեզրակացումները լինում են վճռողական, պայմանական և անորոշ:

1) Վճռողական (cathégorique) սիլլոգիզմը կամ մակաբերութիւնը բաղկացած է լինում երկու վճռողական դատողութիւնից և մի եզրակացութիւնից. օրինակ՝ «ըոլոր մարդիկ մահկանացու են, ես մարդ եմ, հետեւաբար եւ ես մահկանացու եմ»:

2) Պայմանական սիլլոգիզմն այն է, որի մեծ առաջադրութիւնը պայմանական դատողութիւնն է. օրինակ՝ «նթէ է Աստուած, որիմն նա

աշխարհի ստեղծողն է, բայց Աստուած է՝ (զոյլթին ունի), հետեւաքար նա է ստեղծել աշխարհը»:

3) Անորոշ սիլոգիզմն այն է, որի մէջ մեծ առաջադրութիւնը բաժանողական կամ անորոշ դատողութիւն է. փոքր առաջադրութիւնը կամ ընդունում է դատողութեան բաժանումներից (անդամներից) մինը, ուստի և եզրակացութեան մէջ հերքվում են բոլոր միւս անդամները կամ թէ հերքում է բոլորը բացի մինից, ուստի և եզրակացութեան մէջ այդ վերջինն է ընդունվում. օրինակ՝ «այս կովը կարող է լինել կամ կաթնատու կամ աշխատող, բայց նա ոչ աշխատող է եւ ոչ մասլի, հետեւաքար նա կաթնատու է»:

§ 38. Դիլէմմա.

Դիլէմման (dilemme, երկառած) այնպիսի մակարերութիւն է, որի մէջ հերքվում են երկու ստորոգելիներ կամ որն բացասութեան միջոցով հերքում է ծուռ ենթադրութիւնները: Օրինակ, Սոկրատ փիլիսոփայի հետեւալ յայտնի դիլէմման՝ մահվան մասին, «Եթէ պէտք է զարհուրել մահից, ուրեմն կամ այն պատճառով, որ մենք պէտք է ապրենք նրանից յետոյ, կամ այն պատճառով, որ մահից յետոյ չը պէտք է ապրենք»: Երկու դիպուածում եւս առիթ չըկայ զարհուրել մահից, հետեւաքար, նա ընդհանրապէս զարհուրելի չէ»:

Ուրեմն դիլէմմայի մէջ, ինչպէս այս օրինակում, մեծ առաջադրութիւնը մատնացոյց է լինում

այն բոլոր հասկանալի հետեւանքների վրա, որոնք կարելի է քաղել մի յայտնի հիմնից Ա. փոքր առաջադրութիւնը հերքում է բոլոր այդ հետեւանքները, յետոյ եզրակացութեան մէջ հերքվում է և Ա հիմն: Հետեւանքը լինում է միշտ բացասական, երբ Ա հիմն լինում է դրական, իսկ երբ Ա միաքը լինում է բացասական, այդ դիպուածում եզրակացութիւնը դարձեալ հերքելով այդ բացասութիւնը, ինքն դրական բնաւորութիւն է ստանում. օրինակ՝ Լէյբնիցի հետեւալ դիլէմման. «Եթէ գոյութիւն ունեցող տեղերը (մեր աշխարհը) ամենալաւն չէ, ուրեմն Աստուած կամ չէ իմացել զրանից լաւագոյնը, կամ չէ կարողացել եւ կամ չէ ցանկացել ստեղծել: Բայց ոչ առաջին, ոչ երկրորդ և ոչ երրորդ միտքը կարելի է ննջազրել (ըստ որում այլապէս հակառակ կը լինենք Աստուծու ամենազիտութեան, ամենակարողութեան եւ գիտութեան զաղափարին), հետեւաքար եղեալ աշխարհն լաւագոյնն է»:

§ 39. Էնթիմէմմա

Մակարակացումներ կազմելիս ամեն անդամ հարկ չը կայ բոլոր նրա մասերը մանրամասն բացատրել, ուստի և ընդհանրապէս սիլոգիզմի արտայայտութեան ժամանակ լինում են կրծատումներ: Սակայն կրծատումը չը պէտք է այնպէս լինի, որ սիլոգիզմի երեք զիսաւոր մասերից և ոչ մինը գուրս հանվի, այլապէս անհաս-

կանալի կը լինի: Կրծատած սի թզիգմները կոչվում են անկատար, որոնցից մինն է էնթիմէմայ (Եղառած, Enthimème) կոչվածը, այսինքն մի այնպիսի անկատար, կրծատած մտաեղբակացումն, որ կազմվում է դուրս ձգելով առաջադրութիւններից մինը, այնպիսին՝ որ շատ պարզ է: Օրինակ՝ «Ժատութիւնը ախտ է, հետեւաբար՝ նա արժանի է պարսաւանքի»: Այստեղ դուրս է ձգված մեծ առաջադրութիւնը, որովհետև ամենքին յարտնի է, որ «ամեն ախտը արժանի է պարսաւանքի»: Կամ թէ՝ «ամեն ախտը արժանի է պարսաւանքի, հետեւաբար եւ ժլատութիւնը արժանի է պարսաւանքի», և այլն:

§ 40. Բարդ մտաեղբակացումներ կամ քազմասիլոգիզմներ, սօրիտ, էպիխէրէմա:

Մի քանի հասարակ սիլոգիզմների միաւորութիւնից կազմված մտաեղբակացումները կոչվում են քարդ կամ քազմասիլոգիզմներ (պոլիսիլոգիզմ), այսինքն սիլոգիզմների մի ամբողջ շարք: Եթե բազմասիլոգիզմի մէջ հասարակ մրտաեղբակացումները մտնում են ամբողջ կազմութեամբ, կոչվում են լիակատար, իսկ ոչ—անկատար:

Անկատար, բարդ մտաեղբակացումներն, որոնք կազմվում են ուրոյն-ուրոյն էնթիմէմական մտաեղբակացումներից, կոչվում են սօրիտներ (soites, համաբարդութիւն). օրինակ՝ «Վարդը ծաղիկ, ծաղիկը թոյս է, թոյսը գործարանա-

տրութիւն է, գործարանաւորութիւնը քարդ մարմին է, քարդ մարմինը նղծող է, հնտեւաբար վարդն նղծող է»:

Սրանից երեսում է, որ սօրիտ կոչվում է սյն բարդ մտաեղբակացումն, որի մէջ առաջին առաջադրութեան ստորոգելին դառնում է երկրորդ առաջադրութեան ենթական, երկրորդ առաջադրութեան ստորոգելին+երրորդ առաջադրութեան ենթական և այլն, և վերջապէս՝ առաջադրութեան ենթական դառնում է եզրակացութեան ենթական, իսկ վերջին առաջադրութեան ստորոգելին—եզրակացութեան ստորեգելին:

Էպիխէրէման (épichéremé, փաստորդ) բարդ, անկատար մտաեղբակացման մի տեսակն է և կազմվում է հասարակ կրծատած մտաեղբակացումների միութիւնից. օրինակ՝ «ստորութիւնը արհամարհնելի է, որովհետեւ անքարոյական է. կեղծաւորութիւնը ստորութիւն է, որովհետեւ ծշմարտութիւնը դիտմամբ թագցնում է, հետեւաբար շողորորթութիւնը արհամարհնելի է»: Կամ թէ՝ «Թոյլատընելի է սատկեցնել նրան, ով մատնիչ է հայրենեաց. Ա. մատնիչ է հայրենեաց, հետեւաբար՝ Ա.-ին սատկեցնելը թոյլատընելի կը լինէր»:

Սրանից երեսում է, որ էպիխէրէման մի այնպիսի սիլոգիզմ է, որի մէջ իւրաքանչիւր առաջադրութիւնը իր փաստն ունի:

Բ.

§ 41. Ինդուկցիօն

Ինդուկսիօնը կամ մակաժութիւնը (inductio)

այն մէթոդն է, որի միջոցով մենք եզրակաց նում ենք, թէ ինչ որ ճշմարիտ է էապէս միմեանց նման շատ դիպուածներում, ճշմարիտ է նաև բոլոր դիպուածներում, որոնք էապէս նման են նախկինների հետ, կամ թէ մի որոշ դասակարգի շատ անհատների մասին ինչ որ ճշմարիտ է, ճշմարիտ է նաև ամբողջ դասակարգի համար: Կը նշանակէ, որ մինչդեռ սիլլօդիզմը կամ դէպուկցիօնական մէթոդը հանում է մասնաւորը ընդհանուրից, ինդուկցիօնը մասնաւորից հանում է ընդհանուրը:

Բացարել մի երկոյթ ինդուկցիօնօրէն կամ ինդուկցիօնի մէթոդով կը նշանակէ՝ նախ և առաջ հետազննին կերպով ժողովել, քննել, ձըշտել, հաշուել, համեմատել բոլոր մասնաւոր իշերը, յետոյ նրանցից ընդհանուր եզրակացութիւն դուրս բերել: Առհասարակ բոլոր տիեզերական ճշմարտութիւնները, բոլոր դիտնական դրութիւնները գտնվել են ինդուկցիօնի միջոցով: Օրինակ՝ զննելով և տեսնելով փորձերից որ թթուածինը, ջրածինը, բորակածինը և մի քանի ուրիշ գազեր հետեւում են Մարիօտափ օրէնքին, եզրակացրել և գտել են որ առհասարակ բոլոր գազերը հետեւում են Մարիօտափ օրէնքին (Փիզիկայի մէջ): Այդ կերպով հասել են և այն մեծ ճշմարտութեան, որ արտայայտել է քիմիայի հայր Լավուազիէն թէ «ընութեան մէջ ոշինչ բան չէ կորչում, չէ աւելանում, կամ պակասում»:

Գտնելով, որ Արուսեակ, Հրանտ, Լուսնթագ և այլ մոլորակները թաւալում են իրանց առանցքի շուրջը, հաստատում են ինդուկցիօնի հիման վրա, որ բոլոր մոլորակները ընդհանրապէս թաւալում են իրանց առանցքի շուրջը:

§ 42. Դէղուկցիօնական եւ ինդուկցիօնական մէթոդները գիտութեան մէջ մեծ դեր են խաղում. Նրանց ջնորհիւ գտնում, բացատրում են շատ երեսյթներ, օրէնքներ: Բայց լինում են շատ դիպուածներ, երբ աշխարհի շատ երկոյթների մասին չունենալով շօշափելի ապացոյցներ, փորձեր, շատ բան մեզ համար անբացարելի է մնում, ուստի և շատ երեսյթներ անհանկանալի, շատ գաղանիքներ անթափանցելի: Օրինակ՝ մինչդեռ մենք շատ լաւ քննել, զննել, բացատրել ենք ելեկտրականութիւնից, ձայնից, լոյսից առաջացած երեսյթները, գտել ենք շատ օրէնքներ նրանց համար փորձերի հիման վրա, բայց դեռ մեզ համար գաղանիք է մնում թէ ինչ բան է ինքն ելեկտրականութիւնը լոյսը, ձայնը: Սակայն մարդկային միտքը շարունակ ձգտում է թափանցել գաղանիքի խորը, ուստի և նա դիմում է զանազան միջոցների իր նպատակին համելու համար: Արդէն դիտված, զննված իրողութիւնների վրա նա իր մաքում աւելացնում է ուրիշ իրողութիւններ, որոնք շատ թէ քիչ նմանութիւն ունեն առաջինների հետ և այդպիսով մեր գիտողութեան պակասնորդը կամենում է լրացնել մտացածին իրողութիւններով, են-

թաղրութիւններ և յայտնի եղելութիւններից անյայտ եզրակացութիւններ անելով։ Դրա համար մարդկային միտքը ընարել է երկու ճանապարհ։ 1) հիմնվում է երկու կամ մի քանի առարկաների նմանութեան կամ համեմատութեան վրա, 2) եզրակացութիւններ և անում երեսութի հետեւանքից ոչպի պատճառը զնալով։ Այդտեղից առաջացել են երկու տեսակ՝ լրացուցիչ կամ հնֆազրողական մտաեզրակացումներ՝ անալօգիա և հիպօթեզ։

C.

Անալօգիա

§ 43. Անալօգիան (analogie) կամ հանգիտական մտաեզրակացումն այն մտաւոր գործողութիւնն է, որով իրերի նմանութիւնից անձանօթ ճշմարտութիւններ կամ հետևութիւններ ենք հանում։ Նկատելով որ երկու բառերի—Ա և Բ-ի մէջ մի համաձայնութիւն, նմանութիւն կամ մի օրինակութիւն կայ ա, բ, և նշանների վերաբերմամբ, զրանից հետեւցնում ենք կամ այն կարծիքն ենք հանում, թէ նրանք միենոյն բընութիւնը պիտի ունենան և միենոյն ներգործութիւնը պիտի ընդունեն, կամ թէ նրանք և մի ուրիշ X նշանի վերաբերմամբ, որ պատկանում է Ա-ին, պէտք է նման լինեն։

Օրինակ, բոլոր մոլորակները շարժում են ձուաձե ճանապարհներով արեգակի շուրջը, իրանց տաքութիւնը և լոյսը առնում են նրանից։

Այդ նշանի մէջ նրանք բոլորովին նման են մեր երկրագնդին։ Եւ յայտնի է, որ մեր երկրագունդը ընակված է կենդանի էակներով, Ռւրեմն, կարելի է ասել, որ մոլորակների վրա էլ ապրում են կենդանի էակներ։ Որովհետև մի քանի նշանների մէջ մոլորակները նմանութիւն ունեն մեր երկրագնդի հետ, ուստի երբ հաստատապէս պատասխանում ենք թէ նրանք և այդ նշանի մէջ պէտք է նման լինեն նրա հետ—ըստանում ենք մտաեզրակացումն ըստ անալօգիայի կամ հանգիտական։

Պէտք է նկատել որ ըստ անալօգիայի մտաեզրակացման հաւասարիութիւնը շատ հաստատչէ, այլ թոյլ է և չունի հաստատ արաժաբանական արժէք։ Այդ արժէքը այնքան շատ է, որքան 1) համեմատելի առարկաների նմանութիւնը միենանց հետ էական է. 2) որքան աւելի նշանաւոր է այդ նմանութիւնը և 3) որքան շատ թիւ նշանների այդ եւ այն առարկայի մէջ մեզ յայտնի է։

Այդ ասածներից տեսնվում է, որ անալօգիան է մտաեզրակացումն մասնաւորից առ մասնաւորն, մինչդեռ ինգու-կցիօնը է մասնաւորից առ ընդհանուրը։ Սակայն երկու գործողութիւնների մէջ սերտ կապ կայ և շատ անգամ միատեղ են գործածվում, որովհետև մասնաւորից առ մասնաւորը ճանապարհը հարկագրապէս գնում է ընդհանուրով։ Օրինակ՝ թէ ածխաթթուն հետեւմ է Մարիօտտի օրէնքին,

կարելի է հետեցնել անալոգիայով թթուածնի հետ համեմատելով, որն, հնչպէս յայտնի է, հետեւում է այդ օրէնքին։ Բայց այդ տեսակ հետեւթիւն անելով, մենք արած ենք լինում և այս ինդուկցիօնական հետեւթիւնը—բոլոր գաղերը հետեւում են Մարիօտի օրէնքին—որպիսի հետեւթիւնը ենքն ըստ ինքեան հասկացվում էր, երբ անալոգիայով հետեւթիւնն էինք անում։

D.

§ 44. Հաւաստիութեան կամ վստահութեան աւելի բարձր աստիճան ունի միւս լրացուցիչ մտաեզրակացումն, որ կոչվում է հիպոթէզա (*hypothèse*), այն է այնպիսի գատողութիւն (կամ գատողութիւնների ամբողջութիւն), որ թէս միայն հաւանական հաւաստիութիւն ունի, բայց մենք ընդունում ենք իբրև ճշմարտութիւն, որպէսզի նրանով մի խումբ իրողութիւնների հասկանալը թեթևացնենք մեղ համար, կամ թէ հիպոթէզան այն գատողութիւնն է, որ հիմնվելով հետեւնքի վրա, հաստատ եզրակացութիւններ է անում պատճառների մասին։ Պատմաբանը ենթադրում է, որ պատմութեան մէջ պատահած այս կամ այն դիպուածը, որի մասին միայն անստոյդ տեղեկութիւններ կան, կարելի է բացատրել այս կամ այն պատճառներով և հանգամանքներով. այդ ենթադրութիւնն է հիպոթէզա։ Երբ քարը ձգում ենք դէպի վերև, նա կախված չէ մուռ օդի մէջ. արեգակը ծագում է և մայր է մտնում, մենք այդ բոլորը բացատրում ենք

այնպիսի գորութիւններով, որոնք բոլորովին անշօշափելի են մնում մեղ համար։ Շատ անգամ պատահում է, որ մեր ենթադրութիւնները յաջող են լինում և մենք նոր ճշմարտութիւններ են գտնում։

Հիպոթէզան արժէք ունի միայն այն ժամանակ երբ մակարերական կերպով նրանից հետեւցրած բոլոր գատողութիւնները նիւթական ճշմարտութիւն ունեն և եթէ նրանց մէջ չէ գտնվում մինը, որի ստուգութիւնը հերքվէր փորձերով կամ փորձերի վրա հիմնված մտաեզրակացումներով։ Հիպոթէզան ստանում է զիտնական արժէք միայն այն ժամանակ, երբ՝ 1) իրականապէս բացատրում է առարկան 2) չէ հակառակ ընութեան ոչ մի ապացուցեալ օրէնքին 3) որքան կարելի է պարզ է եւ իր բացատրութեան համար օժանդակ ենթադրութիւններ չէ պահանջում։ Այդ տեսակ հիպոթէզաներից են Նիւտոնի երկրի ձգողական գորութեան տեսութիւնը, Լապլասի տիեզերքի կազման ուսումը, եթերի ճոճման ենթադրութիւնը, բոլոր մարդկերանց հոգի ունենալը։ Այդ հիպոթէզները ոչ թէ միայն բաւականացուցիչ կերպով բացարում են մեղ տիեզերական երկոյթները, բայց և միջոց են տալիս գէղուկցիօնական ճանապարհով գտնել մի քանի երկոյթներ, որոնք առաջ անկարելի էր գտնել փորձով. օրինակ՝ Լը-Վէրիէ գետնականը, հիմնվելով արեգակային սիստեմայի հիպոթէզի վրա, իբրև անմիջական

իրողութիւնների կամ ճշմարտութիւնների վրա,
հաշվւներ արաւ և գտաւ Նէպտուն մոլորա-
կը: Արդեօք բոլոր մարդիկ հոգի ունեն, ինչ-
պէս մենք: Այդ բանի մէջ մենք համոզված
ենք միայն ենթադրութիւն անելով, ըստ ո-
րում անմիջական կերպով ըմբռնել կարող ենք
միայն մեր սեպհական հոգու գոյութիւնը.
բայց որովհետև փորձը շարունակ, առանց բա-
ցառութեան, հաստատում է այդ ենթադրու-
թիւնը, ուստի նա մեզ համար մի անսա-
սան ճշմարտութիւն է դառել: Այդպէս և ծան-
ըութեան օրէնքի մասին: Ուրեմն շատ հիպօ-
թէզներ, որոնցով այսօր մենք շատ բան բա-
ցարում ենք, թէև լոկ ենթադրութիւններ են,
բայց քանի որ նրանց վրա հիմնված եղրակա-
ցութիւնների ճշտութիւնը փորձով տեսնում ենք,
քանի որ մինչեւ այժմ ոչ մի կերպով և ոչ մի
բանով չէ հերքվում նրանց ստուգութիւնը, ուս-
տի և այդ տեսակ ենթադրութիւնները դառնում
են մեզ համար անսասան ճշմարտութիւններ:

Ծնթ: Այն հիպօթէզան, որ գիտնական արժէք
տնի, այսինքն ճանաչված է գիտութեան
մէջ իբրև ճշմարտութիւն, կոչվում է Թէ-
րիա (տեսութիւն, théorie):

§ 44. Ժուռ մտաեղրակացումներ կամ սովինս-
տութիւն

Ծուռ մտաեղրակացումներ ծագում են ակա-
մայ սխալմունքից, իսկ յաճախ՝ ուրիշներին մոլորեց-

նելու յանկութիւնից: Վերջինը կոչվում է սովինս-
տութիւն (sophisme): Սխալմունքները կամ մոլո-
րումները կարող են լինել մտաեղրակացման բո-
լոր բաղադրիչ մասերի—առաջադրութիւնների,
հետեւութեան գործածման եղանակի և հետեւու-
թեան որակութեան—մէջ: Օրինակ՝ երբ կասկա-
ծաւոր առաջադրութիւնները առաջարկվում են
իբրև անհերքելի: «պոչաւոր մարդիկը գոյու-
թիւն ունեն, որովհետեւ ծանապարհորդները գլ-
տել են այդպիսիներին Աֆրիկայում»: Այստեղ
անստոյդ նկատողութեան վրա հիմնվածը ընդուն-
վում է իբրև ստոյդ, ուստի և առաջ է գալիս
սխալ եղրակացութիւն: Սովինստական դատողու-
թիւնները տեղի են ունենում մահաւանդ աստուա-
ծաբանական և փիլիսոփայական վիճաբանու-
թիւնների մէջ: Իւրաքանչիւր կուսակցութիւն
իր ենթադրութիւնները կամ կանոնները ներկա-
յացնում է իբրև ապացոյց, թէև դեռ նրանք ա-
պացուցված չեն: Լինում է, որ գատողութեան
բուն հիմն ծուռ է, ուստի և առաջ է գալիս հիմ-
նական սխալը: Առաջադրութիւնները շատ ան-
գամ ծուռ են լինում. օրինակ՝ «ով քիչ պա-
հանց ունի, նա աւելի երջանիկ է. աղքատը ա-
մենից քիչ պահանց ունի, ուրեմն նա ամենից ա-
ւելի երջանիկ է»: Կամ թէ.—«մենք պէտք է
ցանկանանք այն, ինչ որ կատարեալ է շինում
մեզ. տանջանքները մեզ կատարեալ են շինում»,
ուրեմն... եւ այլն»:

Այդ սխալը մտաեղրակացման մէջ, առաջա-

դրութիւնները գործածելիս, առաջ է գալիս խիստ հետեւողականութեան պակասութիւնից և արտայայտման եղանակից: Ճիշտ հասկացողութիւններից յաջորդաբար հանգում է միայն ճիշտ հետևութիւն, բայց շատ աղքամ խօսքը գործածելիս (մի խօսքը կարող է շատ հասկացողութիւն արտայայտել) չեն մտածում այն հասկացողութեան մասին, որն պէտք է, ուստի և ծագում է ծուռ հետևութիւն: Օրինակ՝ հետեւեալ մտաեզրակացման մէջ—«ըսուրը կենդանիներին կարելի է մոռթել. Սիմէօնը կենդանի է, ուրեմն նրան կարելի է մոռթել»: «Կենդանի» խօսքը երկրորդ անգամ այսաեղ այն մեկնութեամբ չէ վերցրած, ինչ որ պէտք էր, ուստի և ծագել է ծուռ հետևութիւն: Կամ թէ—«երիտասարդ»-ը ածական է, Արշակն երիտասարդ է, ուրեմն Արշակն ածական է»:

Ժ. Հօգիքական սանդուխ.

§ 45. Եթք մենք սեռը բաժանում ենք տեսակների, իւրաքանչիւր տեսակ՝ խմբերի և եթք վլսաւոր հիմն անցնում է բոլոր տեսակների վլրայով, այդ տեսակ բաժանումը կոչվում է լոգիքական սանդուխ:


Ուրեմն լօգիքական սանդուխը մի շըթայ է, որ ցոյց է տալիս բարձրագոյնի առ ստորինը անցնելը կամ ստորինի առ բարձրագոյնը անցնելը:

Լօգիքական սանդուխի շինվածքը լինում է անալիտիկական և սինթետիկական:

Առաջինը կայանում է նրանում, որ ստորին հասկացողութիւնը բարձր հասկացողութեան տակ է դրվում, իսկ երկրորդը—նրանում, որ բարձր հասկացողութիւնը ստորինի տակ է դրվում: Առաջին գիպուածում լինում է սահմանափակումն, իսկ երկրորդում—ընդհանրացումն:

Այսուեղ դնում ենք անալիտիկական ձևով շինված լօգիքական սանդուխը գձերով արտայայտված:

Վերլուծողական լօգիքական սահմանութեաւ



ԺԱ. ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ օԳՈՒԹՐ.

Որովհետեւ այնպիսի առարկաներ և առնչութիւններ կան, որոնց գոյութեան մասին համոզվել չէ կարելի պարզ դիտողութեամբ կամ զըննողութեամբ, այլ կարելի է համոզվել միայն ըմբռնողութիւնների և հասկացողութիւնների յօդաւորութեան միջոցով, ուստի և հարկաւոր է մի այնպիսի գիտութիւն, որ ցոյց տար ընդհանուր միջոցներ՝ կանոնաւոր համոզումը ծուռ համոզումից որոշելու, կամ սովորեցնէր կանոնաւոր կերպով մտածելու:

Ի հարկէ, եթէ մարդ ունի ընածին խելք և առողջ դատողութիւն, նա շատ լաւ կարող է մտածողութեան կանոնաւոր եղանակը անկանոնից որոշել ինչպէս կարելի է կանոնաւոր խօսել առանց քերականական կանոնները իմանալու, կամ ինել առաքինի առանց բարոյագիտութեան հետ ծանօթ լինելու։ Տրամարանական գիտութիւնը չէ կարող ստեղծել մեր մէջ մատածելու ընդունակութիւնը. այդ ընդունակութիւնը բնական է, բայց նա սահման ունի, և եթէ կամենում ենք անցնել այդ սահմանը կամ զարգացնել, կատարելագործել այդ ընդունակութիւնը, պէտք է դիմենք այն գիտութեան, որ ճառում է մտածողութեան կանոնաւոր ձևերի մասին և ցոյց է տալիս հիմնական կանոնները, այն է գիտնական տրամարանութեան, որի սարերքի հետ ծանօթացանք:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Տ Ե Ր Բ Ե Ր Ք

Բ Ա Ն Ա Հ Ի Ւ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

§ 1. Բանահիսութիւնը գիտութիւն չէ, այլ արուեստ: Գիտութիւնը որևէ առարկալի ուսումնասիրութիւնն է, մինչդեռ արուեստը՝ նոր երեւոյթներ արտադրելու, այսինքն նոր ձեռք ստեղծելու կարողութիւնն է, սակայն մի այնպիսի ձեռք, որ նրան արտայայտելու համար համապատասխան միաք լինի: Արուեստներն երկու տեսակ են լինում. կամ նրանք արտադրում են օգտակար առարկաներ, և այնպիսի իրեք, որոնք կեանքի նիւթական պիտոյքին բաւարարութիւն են տալիս, օրինակ՝ հազուստ, կօշիկ, թուղթ, կարասիք և այլն, կամ թէ ստեղծում են զեղեցիկ, շքեղ, իղէա արտայայտող առարկաներ, օրինակ՝ պատկեր, արձան, վէպ, դրամա և այլն:

Առաջին տեսակ արուեստները մեքենական են և կոչվում են արհեստ. երկրորդը՝ ստեղծագործական են և կոչվում են շքեղարուեստ կամ գեղարուեստ:

§ 2. Գեղարուեստների բաժանումը.

Մինչդեռ արհեստաւորը ջանք է անում որ իր ձեռագործը յարմար լինի գործածութեան և ձեռագործի գեղեցկութիւնը նրա համար երկ-

ըորդական բան է, գեղարուեստաւորը, ընդհակառակն, աշխատում է որ իր ստեղծած գործը կամ ձեզ, որքան կարելի է վայելուչ, չքեղ, գեղեցիկ կերպով արտայայտէ իր միտքը կամ իդէալը։ Սակայն որպէսզի արուեստաւորի ձեռակերտ—իդէալը չքեղարուեստ դառնայ, պէտք է որ նա նիւթեղէն որևէ միջոցով արտայայտվի։ Իդէալը կամ միտքը արտայայտելու միջոցները գանազան են. օրինակ՝ վեր առնենք մի միտք՝ լիովինը իւ. մենք կարող ենք այդ միտքը նկարագրեն և մարմի շարժողութիւններով, և ձեռքով, և գոյներով (նկարով), և ձայներով և վերջապէս խօսքերով։ Այդ միջոցները հետզհետէ կատարելագործվելով կազմվել են առանձին գեղարուեստներ. օրինակ՝ մարմի շարժողութիւնների ամբողջութիւնը արտադրել է միմիկութիւնը. ձեռքի կամ կերպարանքների ձուլումն—անդրիագործութիւնը, գոյների համախմբումն—նկարչութիւնը. ձայների համամիտութիւնը — երաժշտութիւնը կամ մուզիկան. վերջապէս խօսքերի հեւսումն—ըանահիւսութիւնը։

Առաջին երեք գեղարուեստները, այն է միմիկութիւնը. անդրիագործութիւնը և նկարչութիւնը պատկերացնում են առարկան տարածութեան մէջ և ներգործում են միայն մեր տեսողութեան վրա, ուստի և կոչվում են պլաստիկան արուեստներ, իսկ երկուսը, այն է երաժշտութիւնը և ըանահիւսութիւնը պատկերացնում են առարկան ժամանակի մէջ և ներգոր-

ծում են միայն լոռզութեան վրա, ուստի և կոչվում են ձայնական (տօնիկական) արուեստներ։

Ուրեմն՝ ըանահիւսութիւնը մի արուեստ է, որի օգնութեամբ մաքերը արտայայտվում են խօսքերով շքեղ ձեռք. կամ խօսքի արտադրութիւնների օրէնքները և ձեռքը բացայացող մի գեղարուեստ է։

Աւելի լայն ըմբռմամբ՝ բանահիւսութիւնն է ժողովածու խօսքի այն արձանների, որոնք ցոյց են տալիս ազգի հոգեւոր կեանքը և նրա քաղաքակրթութիւնը. կամ ընդհանրապէս՝ այն ամենը, ինչ որ ստեղծել է մարդկային բանը (խօսնը, ինչ որ ստեղծել է մարդկային բանը (խօսնը, լօգոս) թէ բերանացի արտայայտված (օրինակ՝ առաջնորդ, երգեր, հեքիաթներ) և թէ գըրաւոր կամ առաջարութեսնմբ—կոչվում է ըանահիւսութիւն։

Իսկ խօսքի գրաւոր կամ տպագրական արտադրութիւնների ամբողջութիւնն, որոնց մէջ արտայայտվում է որևէ ազգի մտաւոր կեանքը, կոչվում է գրականութիւն (littérature). Այդպէս մենք ունենք յունական, լատինական, ֆրանսիական, ուռուսական, հայկական գրականութիւն։

§ 3. Յանահիւսութեան գերակշութիւնը գեղարուեստների մէջ.

Գեղարուեստների մէջ առաջին տեղը պատկանում է ըանահիւսութեան։ Ամեն արուեստ չէ կարող արտայայտել կամ նկարագրել բոլոր առարկաները կամ իդէաները. օրինակ՝ անդրիա-

գործութիւնը կարող է արտայայտել միայն մարդկային մարմնի ձևերի գեղեցկութիւնը, բայց չէ կարող արտայայտել որևէ հոգեկան յուզմունք. Երաժշտութիւնը չէ կարող արտայայտել մարդկանց բնաւորութիւնը, այլ միայն նրանց զգացումների ելեկջները ու զանազան գումաւորութիւնները, այն է ուրախութիւն, վիշտ, յոյս, յուսահատութիւն և այլն. Իսկ բանահիւսութիւնը կարող է արտայայտել ամեն իդէա, որովհետեւ իր մէջ պարունակում է բոլոր միւս արուեստների միջոցները, այն է 1) բառերը լինելով ձայնի հնչիւններ, կարող են երաժշտական միութիւն կազմել, օրինակ ոտանաւորները ունեն նոյն ներդաշնակութիւնը, նոյն տակտերը ինչպէս մուզիկան. 2) բառերը՝ նշանակելով առարկայ՝ նկարագրում են նրա պատկերը երեւակայութեան մէջ, այսինքն այնպիսի պատկեր, որ ներկայացնում է անդրիագործութիւնը, օրինակ արտասանելով կաղնի, զինուզ, տուն խօսքերը, մենք ներկայացնում ենք մեզ այդ առարկաների պատկերները. 3) բառերը՝ նկարչութեան գոյների նման, կարող են նկարագրել առարկան այնպիսի կենդանութեամբ, որ կարելի է նկարել. ուստի և շատ անգամ նկարագրութիւնը նիւթ է հայթայթում նկարչութեան համար. Բառերով կարելի է արտայայտել և այնպիսի գծեր, որոնք անհասանելի են նկարչութեան համար. օրինակ՝ վիպասան Ռաֆֆու հետնեալ կտորը «Զբարերդ» բանաստեղծութիւնից.

«Անցնում ես սարի միւս կողմը. քո առջև բացվում է մթին անդունդ: Նայում ես, նայում ես անդունդի խորութեան մէջ, աշքերդ սեանում են, զլուխտ պալավում է, ոչինչ չես տեսնում: Յետոյ երեսում են քեզ ծառերի հաւասար կտարներ, որոնք, կարծես, մկրատով հարթած լինէին: Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում, ցած են իջնում և լցնում են կանաչապատ ձորի ամբողջ խորութիւնը: »

... Բայց թարթարը չէ երեսում: Նա կտրել անցել է ժայռերի ամրութիւնը. նա տաշել է միապաղաղ ապառաժների զանգուածը. նա հազարաւոր քայլերով ցած է իջել գէպի երերի սիրտը. նա դարերով գործել է այստեղ, մինչև քարերի միջով բաց է արել իր համար մի նեղ և անձուկ ճանապարհ: Այդ ճանապարհի մէջ խեղդված, մի հսկայ վիշտապի նման գալարգված, ճնշված, մի հսկայ վիշտապի նման գալարգվում է նա, պտոյտներ է գործում, որոտում է, մռնչում է և կատաղի կերպով աղմուկ է բարձրացնում...»:

Սյստեղ նկարագրութիւնը այնքան կենդանի է, որ կարելի է պատկեր նկարել. սակայն նկարիչը կարող է նկարել սարեր, անդունդ, գետ, ծառեր, բայց նա չէ կարող նկարել ոչ գետի որոտումը, մռնչիւնը, ոչ աղմուկ հանելը, և ոչ ևս ջրի զովութիւնը:

§ 4. Բանահիւսութեան տեսութիւնը և պատմութիւնը.

Բանահիւսութիւնը, ինչպէս և ամեն արուեստ, կարելի է ուսումնասիրել տեսականա-

պէս (թէօրէտիական կերպով) և պատմականապէս, կը նշանակէ քննել և համեմատել զանազան ժամանակների և աղղերի բանաւոր արտադրութիւնները, իւրաքանչիւր արտադրութեան տեսակի օրէնքները և ձևերը որոշելու համար։ Օրինակ՝ վեր ենք առնում հայ քերթողների ամենալաւ առակները — Մխիթար Գօշի, Վարդան վարդապետի — յոյն առակախօս Եղովանսի, ոռւսաց Կրիլովի, Փրանսիացոց Լաֆօնտէնի առակները, համեմատում ենք միմեանց հետ և որոշում ենք առակի գլխաւոր յատկութիւնները, կամ նրա թէօրիան (տեսութիւնը):

Ուստի՝ բանահիւսութեան թէօրիան է սիստէմատիկական բացատրութիւն այն օրէնքների, որոնցով ստեղծվում են բանաւոր արտադրութիւնները։

Ուսումնասիրել բանահիւսութիւնը պատմականապէս կը նշանակէ քննել մի աղղի բանաւոր արտադրութիւնները ժամանակագրական (ըրոնիկական) կարգով, այսինքն նրանց լոյտ աշխարհ տեսնելուն ժամանակի համեմատ, այդ աղղի լուսաւորութեան յառաջադիմութիւնները որոշելու համար։

Ուստի՝ բանահիւսութեան կամ գրականութեան աստմութիւնը մի որոշ ազգի բանաւոր արուեստի յաջորդական զարգացման բացատրու-

թիւնն է այդ ազգի քաղաքակրթութեան ընթացքի հետ միասին։

§ 5. Բանահիւսութեան թէօրիայի քաղաղրիչ մասերը.

Ելք կամենում Կնք ուսումնասիրել որևէ մի արուեստ, նախապէս պէտք է ծանօթանանք այն նիւթի հետ, որ նա գործ է ածում իր արտադրութիւնների համար։ Նկարչութեան արուեստը սովորելու համար պէտք է առաջ իմանալ գոյնների յատկութիւնը, նրանց զանազան խառնուրդը, լոյսի և պտուերի օրէնքները և այլն, յետոյ սկսենք սովորել նկարչութեան զանազան տեսակները։ — պատմական նկարչութիւնը, պատկերներ նկարելը, բնութիւնը նկարել և այն նոյնպէս և բանահիւսութեան տեսութիւնը ուսումնասիրելուց առաջ պէտք է ծանօթանանք այն նիւթերի հետ, որոնցից կազմվում է բանը, խօսքը, այն է լեզուի հետ, այն զանազան պայմանների հետ, որոնցից կախուած է խօսքի շքեղութիւնը, նրա յատկութիւնների հետ, յետոյ սկսենք քննել բանաւոր արտադրութիւնների զանազան սեռերը և տեսակները։ Որքան որ բազմակերպ և բազմազան լինեն բանաւոր արտադրութիւնների տեսակները, բայց նրանք երկու գըլխաւոր նպատակ ունեն, կամ մարդկային միտքը գլխաւորապէս երկու տեսակ է արտայայտվում։ Մինը նկարագրում է իրական աշխարհը, այսինքն այն, ինչ որ իրողապէս գոյութիւն ու-

նի և առարկաները ներկայացնում է այն կերպարանքով, որով նրանք գոյութիւն ունեն բնութեան մէջ. այսպէս օրինակ, ճանապարհորդները (Յովհաննէս Շահխաթունեան, Թաղիաթեան) նըկարագրում են իրանց տեսած երկիրները, տեղերը, բնակիչների սովորութիւնները և այլն. պատմագիրները (Մ. Խորենացի, Զամշեան, Կարամզին) նկարագրում են հայ և ռուս ազգերի կեանքի պատահարները, գործող անձանց բնաւորութիւնները և այլն:

Միւսը՝ նկարագրում է հնարաւոր, իդէալական աշխարհը, այսինքն այդ տեսակի արտադրութիւնների մէջ կամ բանաստեղծի իդէան է իրականանում, մարմին առնում կենդանի պատկերներով, կամ թէ իրողապէս գոյութիւն ունեցող մի առարկայ ներկայացնվում է իդէալական ձևերով, բանաստեղծի ստեղծագործական երևակայութեան մէջ հնարած: Օրինակ՝ հարստանարիչ, կեղեքից մարդու իդէան Ռաֆֆին իրականացրել է Թովմաս Էֆէնդու անձնաւորութեան մէջ. Սունդուկեանցը — Արութինի մէջ («Պէպօ»), նախանձի իդէան Շէքսպիրը իրականացրել է Օտէլլօյի մէջ, և այն:

Նոյնպէս և հին ժողովրդական երգերի մէջ Հայաստանում եղած քաջ և ըմբիշ անձինք, ինչպէս Վահագն, վիպասանները ներկայացնում են իրեն գերենական ոյժ ունեցող հսկաներ, օրինակ Գողթան երգերի մէջ «երկնէը երկին և երկիր» յայտնի երգը:

Ուստի և բանահիւսութեան տեսութիւնը բաղկանում է երեք մասից. «ո՞՛ի տեսութիւն, արծակ բանի (պրօզայի) տեսութիւն, և բանատեղծութեան տեսութիւն», կամ ստիլիստիկա, ըիտօրիկա և պիէտիկա (ոճաբանութիւն հոեսորութիւն և բանաստեղծութիւն):

ՄՈ.ՄՆ Ա.Ի.Ա.ԶԻՒ

Ո Ճ ի տ ե ս ո ւ թ ի ւ ն ը

§ 6. Այն ուսումը, որ բացայալտում է գլուխեան (ճառի) բնաւորութիւնը և այն պայմանները, որոնցից կախված է ոճի շքեղութիւնը, կոչվում է ոժարանութիւն (ստիլստիկա): Ոճ կամ ստիլուս (le style, stylus) խօսքը լատիներէն է և հին ժամանակը նշանակում էր այն մետալական ձողը, որի մի ծայրը սուր էր, իսկ միւսը բութ և որով հները զրում էին մոմով քսած տախտակների վրա, այն է սուր ծայրով զրում էին, իսկ բութովն ջնջում:

ՈՇ կոչվում է գլուխի կամ հեղինակի գրութեան բնաւորութիւնը, նրա լեզուի առանձնայատկութիւնները—արտայայտութեան այն եղանակը, որ յատուկ է միայն նրան: Մենք գիտենք, որ Մովսէս Խորենացին, Փարավեցին, Յովհաննէս կաթողիկոսը, Բաֆֆին, Պատկանեանը, Աղայեանը, Խրիմեան Հայրիկը, բոլորն էլ միևնոյն հայերէն (գրաբառ կամ աշխարհաբառ) լեզով են գրել, բայց իւրաքանչիւրը նրանցից միայն իրան յատուկ արտայայտման եղանակն

ունի, այն է իւրաքանչիւրի ոճը առանձին է. այդ է պատճառը, որ ասում են «Բաֆֆու ոճը, Խորենացու ոճը» և այլն: Շատ հեշտ է զանազանել Ազաթանգեղոսի և Խորենացու ոճը: Ուրեմն լեզու և ոճ—զանազան հասկացողութիւններ են: Լեզուն՝ մի ազգի ունեցած բոլոր բառի ամբողջութիւնն է, իսկ ոճ՝ մի որոշ գրողին յատուկ արտայայտման եղանակն է: Լեզուն է այն նիւթն որից գրողը կազմում է իր ոճը: Եւ որովհետեւ լեզուն ամբողջ ազգի ժառանգութիւնն է, իսկ ոճը միայն մի անհատի—գրողի սեպհականութիւնը, ուստի և ոչ մի գրող չէ կարող փոխել լեզուն, բայց ամեն մարդ կարող է բարենորոգել ոճը. օրինակ՝ մինչև Աբովեանցը և նրանից յետոյ էլ հայերէն լեզով էին գրում, բայց ոճը նա բոլորովին փոխել է մեզանում:

§ 7 Գրութեան կամ ըարբառի գլխաւոր յատկութիւնները.

1) Իւրաքանչիւր խօսք երեք կողմն ունի. նա մտքի արտայայտութիւն է (ներքին, լոգիքական կողմն), նա հնչին է (արտաքին կողմն). նա առարկայի պատկերն է (գեղարուեստական կողմն):

Խօսքի կամ ճառի լոգիքական (ներքին) կողմն պահանջում է, որ խօսքը արտայայտողի կամ հեղինակի մտքի կատարեալ արտայայտութիւնը կամ թարգմանը լինի: Արտաքին կողմը պահանջում է

որ խօսքը ւաղցրահնչիւն լինի: Կայ և երրորդ
կողմն, այն է խօսքի պատկերական կողմն, որ
նկարում է առարկան նկատողական կերպով,
այդ կողմը պահանջում է գեղարուեստականու-
թիւն: Ուրեմն իւրաքանչիւր ճառի զլիստոր յատ-
կութիւններն են—կանոնաւորութիւն, բաղցրա-
հընչողութիւն և գեղարուեստականութիւն:

2) Ոճի լոգիքական կողմը կամ կանօնաւո-
րութիւնը պահանջում է պարզութիւն և ծըշ-
ռութիւն:

Պարզ (կամ պայծառ) ոճն այն է, երբ ար-
տայայտված միտքը կարե ի լինի հեշտութեամբ
և առանց որեւէ ջանքի հասկանալ, կամ մի դրու-
թիւն կարդալիս հասկանալ առանց միտքը լարե-
լու: Հումէական հոետոր կվինտիլեանը ասում
էր. «պէտք է աշխատել ոչ թէ այն մասին, որ
ամեն մարդ հասկանայ մեղ, այլ որ անկարելի
մինի չը հասկանալ»: Ուստի լաւ երկասիրութիւ-
նը կամ հեղինակութիւնն այն է, որ կարդալիս
անկարելի լինի չը հասկանալ: Իսկ ոճի ճշգու-
թիւնը կայանում է որեւէ մտքի որոշ արտայայ-
տութեան մէջ, այնպէս որ խօսքի մէջ լինի այն-
քան բառեր, որքան նրա մէջ հասկացողութիւն
կայ, ոչ աւելի, ոչ պակաս: Արտայայտել ճըշ-
գութեամբ մի միտք, կը նշանակէ ասել միայն
այն, ինչ որ մտածում ես առարկայի մասին:

Երբ այդ պայմանները չեն կատարվում, ո-
կը լինում է մոլուն (ոչ—պարզ) և շփոթ (ան-
ճիշդ): Մութ ոճը խօսքի այն դարձուածն է, ո-

ըսկ դժուար է լինում հասկանալ թէ հեղինակը
ինչ է ուզում հասկացնել:

Մթութիւնն ասած է գալիս զանազան պատ-
ճառներից, զլիստորապէսնրանից, որ գրողն երկա-
սիրութեան առարկան լաւ չէ ըմբռնել և հասկացել,
կամ հիմնաւոր կերպով չէ ուսումնասիրել: Մթու-
թիւնն առաջ է գալիս և այն ժամանակ, երբ անտե-
ղի կերպով գործ են ածում հետեւեալ խօսքերը.

1) Արխայական խօսքեր կամ արխայակա-
նութիւն (արհանում), այլինքն հնացած և գոր-
ծածութիւնից դուրս եկած ու ժամանակակից
կենդանի լեզուից արտաքսված խօսքեր ու գար-
ձուածներ. օրինակ՝ առփորձնցումն փոխանակ
հաւանութեան, փաղարկութիւն (կարծիք), նա-
խանձութիւն, բալութիւն, փախչութիւն, աղազաւ
(աշխարհաբարի մէջ, փոխանակ համար, մասին)
ապառում ժամանակն (փոխանակ ապագայում):

Մեր գրողներից շատերը սիրում են աշ-
խարհաբար գրութեան մէջ գործածել գրաբառ
դարձուածներ, հոլովումներ, խոնարհումներ. օրի-
նակ հետեւեալ դարձուածը, որ գործ է ածում
մի թարգմանիչ:

«Այսպէս ուրեմն, պատմութիւնն յամեն
կուսէ ցոյց կը տալ զանազան հետք հաւատոյ
դէպի ապագայ կեանքը, բայց այդ հաւատոքը կե-
րմի կամ աղօտացած թեթեամիտ սնոտիապաշ-
տութեամբ, կամ պղտորված վիլիսովայական
կարծիքներով, որ սկիզբն արար կրօնն մաքրե-
լոյ, բայց վախճան առաւ զայն կործանելով»:*)

*) Արիստ. վ. Սեղբական, «Յաւիտ. կեանք» Թէոդ. 1871, 6
էջ 24:

Այդ տեսակ ձևերի և գարձուածների գործածութիւնը վնասում է խօսքի մաքրութեան։ Դրանով չենք ուզում ասել թէ հարկաւոր չէ գրաբար բառերի և գարձուածների գործածութիւնը. ընդհակառակ, պատշաճ և յարմար տեղ գրաբար բառեր և գարձուածներ գործածելը կարող է լեզվին գեղեցկութիւն և վայելութիւն տալ.

Սակայն հարկաւոր է միայն բառերի և գարձուածների ընտրութիւն անել, անսավոր, խորթ և հնացած ձևերից խորշել։ Կան բացատրութիւններ, որոնք գրաբարի մէջ սովորական են և ընդհակառակն։ Դրաբարս, իբրև աշխարհաբար լեզուի մայրը, չը պէտք է օտար համարվի, բայց սակայն մի որոշ սահման պէտք է դնել նրա ոճերի վերաբերմամբ. պէտք է զգուշանալ գեղծումներից, այսինքն այնպիսի գարձուածներ և խօսքեր գործածելուց, որոնք չեն միաբանում աշխարհաբար լեզուի կազմութեան հետ. օրինակ՝ չը պէտք է ասել. «Ես կը վարկանեմ թէ ուշ պէտք է ժամանենա», «Ելլելով ետեւ զնաց (իբրև թարգմանութիւն «յարուցեալ երթ զկսի նրա»), «Ճեղ տեսնելէն զկնի» և այլն. Բայց կան ոճեր և բացատրութիւններ, որոնք սովորական և ընտիր համարված են, ուստի և գործածելով աշխարհաբարի մէջ, լեզուն վայելչութիւն է ստանում. օրինակ՝ «ի նալաստ խօսել», «ի յիշատակ», «ի մասնաւորի», «ի գործ դնել», «յականէ յանուանէ», «ի հաշու» և այլն։

2) Նորաբանութիւններ (néologisme, նէօլոգիզմներ)՝ այն բառերը, որոնք նոր են կազմված, բայց դեռ ընդհանուր գործածութիւն չեն գտել, օրինակ՝ Ստեփանոս Նազարեանցի կազմած խօսքերը՝ «գնացք» (ընթացք), «բազմառինակաբար», «վարքագրութիւն» (կենսագրութիւն), «հարազատախօսութիւն», «թոռնորդի» (ծոռն), «խաղարկութիւն», «խոփանարկութիւն» (արգելք), «սրտաթափութիւն» (վախել) կամ «աշխարհավարութիւն» (քաղաքականութիւն, պօլիտիկա) և այլն։

3) Օտար խօսքեր կամ բարբարոսականութիւններ (barbarisme)՝ այն օտարագոյի խօսքերը և գարձուածները, որոնք քաղաքացիական իրաւունք չեն ստացել լեզուի մէջ և որոնց համանշան բաներ կարելի է գտնել հայերէնի մէջ. օրինակ՝ «ագիտացիա», «պլինցիալ», «պարօդիա», «գեներացիա», «ինորիգա», «էմպիրական», «մասխարութիւն», «չալել», «խարճեր», «խաթեր», «մարդաբօյ» և այլն. կամ «խաթեր» համար, «մարդաբօյ» և այլն. կամ ամբողջ խօսուածքներ, որոնց կազմութիւնը լինուի է հայ լեզուի մէջ. օրինակ՝ «կաղացիորթ է հայ լեզուի մէջ. օրինակ՝ «կաղացի ալիւր կը դառնայ» (перемесяцся мука чи ալիւր կը դառնայ), «ուս շատ խելօք է, որպէսզի այդ նշանը անէ» (թարգ. Փրանս. Գուխանակ նա այն բան խելօք է, որ այդ բանը չի անի»), կամ քան խելօք է, որ այդ բանը չի անի»), կամ քան խելօք է, որ այդ բանը չի անի»), «գուք այնքան յիմար ուսւերէն դարձուածներ՝ «գուք այնքան յիմար չեք, որքան ես էի կարծում», «անխոհեմ եղայ չեք, որքան ես էի կարծում», «անխոհեմ արի»), «նայելու յանդպնուածնեմութիւն արի»).

Թիւնն ունեցաւ (յանդգնեց), «այս գիրքը Մեծն Պետրոսի կենսագրութիւնն է պարունակում» (այս գիրքը Մեծն Պետրոսի կենսագրութիւնն է), և այլն։ Օտար լեզուներից փոխ առած այդ տեսակ դարձուածները կոչվում են այն աղքի անուամբ, որից վերցրած են— հելենաբանութիւն, լատինաբանութիւն, ֆրանսիաբանութիւն, գերմանաբանութիւն, ռուսաբանութիւն։

4) Արուեստական (տեխնիկական) խօսքեր, որոնք յատուկ են որիէ գիտութեան կամ արուեստի, ուստի և մեծամասնութեան անհապականալի, օրինակ քիմիական, ֆիզիքական, մեքենայական գործիքներին վերաբերեալ։

5) Գաւառական խօսքեր, որոնք յայտնի են և գործածական ոչ թէ ամբողջ աղքի, այլ միայն մի որոշ գաւառի մէջ, օրինակ զօկի խօսքեր, զարաբաղցու խօսքեր։

6) Ռիամկարանութիւններ կամ գոեհիկ կոչված խօսքեր, ինչպէս թոռ (անձրև), պլել (փաթաթել) լափ (բոլորն), խէ (էր, ինչու), շնթռնէլ, օշտռ (եօթն), անկաճ (ականջ) և այլն։

Ծեր։ Այլ է ծողովրդական լեզուն, որ մեծ նշանակութիւն և կարեորութիւն ունի ամբողջ լեզուի համար։ Ժողովրդական բառերը և զարձուածները, իբրև ժողովրդի կենդանի և գործածական լեզուն, հարստութեան մեծ աղբիւր են գրականական լեզուի համար, ուստի և նրանց հետազոտութիւնը տնհարժեցաւ է։ Ժողովրդական խօսքերը և ոճերը շատ սուր, նուրբ և պատկերական են. հաստրակ ժողովրդի բերանում խօսքը

ոչ թէ միայն որևէ մի հասկացողութեան նշանն է, բայց և առարկային յատկանիշ բնաւորական գծերը նկարող, օրինակ «կոման», «կէծան» «շարմաղ»։

Բացի այդ բոլորից, մթութիւնն առաջ է գալիս և երկար պարբերութիւններ գործածելուց։

Երբ ճշդութիւն չէ պահպանվում, առաջ է գալիս ոճի շփոխութիւն, այսինքն մի այնպիսի ոճ, որ արտայայտում է հեղինակի միաքն բոլորովին այլայլեալ կերպով և այդ մտքին ուրիշ սխալ նշանակութիւն կարելի է տալ։

Ծփոթութիւնը առաջ է գալիս հետևեալ պատճառներից։

1) Բառերի անհանոն դասարութիւնից. օրինակ՝ «խոնաւ և անձրեային օրը իր հետ բերեց աշունը», այսաեղ որոշ չէ—աշունը բերեց իր հետ խոնաւ և անձրեային օր, թէ օրը բերեց աշունը։ Պէտք է ասել. «Աշունը բերեց իր հետ խոնաւ և անձրեային օր»։

2) Զանազան հոլովների մէջ միակնրազ վերջատրութիւն գործածելուց. օրինակ՝ եղբայրը սիրում է քոյրը. յայտնի չէ, եղբայրն է սիրում քոյր թէ քոյրն՝ եղբօրը. պէտք է ասել—եղբայրն սիրում է իր քոյրը. կամ եղբայրն սիրում է քոյրն։

3) Կէտաղըութեան նշանների անձիշը գործադրութիւնից. օրինակ՝ մեծ զանազանութիւն կայ եթէ գրենք այսպէս. «մի հայր կտակել է իր որդուն կանգնել տալ մի ոսկեայ խաչը գլխին արձան իր գերեզմանի վրա» և կամ այսպէս. «մի

հայր կտակել է իր որդուն կանգնել տալ մի ոսկեայ, խաչը գլխին արձան իր գերեզմանի վրա»:

4) Նոյնանշան (synonime) և հոմանուն (homonyme) բառերի սխալ գործածութիւնից: Նոյնանշան (սինօնիմ) կոչվում են այն բառերը, որոնք հնչիւնով տարբեր, բայց միևնույն նշանակութիւնն ունեն, կամ միևնույն համկացողութեան զանազան գոյներն են ցոյց տալիս. օրինակ՝ ջրել և առողել, գեղեցիկ և գեղանի, գործել և բանել, աշխատել և վաստակել, սպառել և ծախել, յանգել և վերջաւորել, ճշմարտութիւն և արդարութիւն, տաք և ջերմ, տաղաւար և խորան, և այլն:

Հոմանուն կոչվում են այն խօսքերը, որոնք հնչիւնով մի են, բայց տարբեր նըշանակութիւնն ունեն. օրինակ՝ ակն—աչք և աղբիւր. լեզու—մարդի, կենդանիների լեզուն և խօսքի ձիրք կամ որևէ ազգի խօսքերի ամբողջութիւնը և — ազգ—ժողովուրդ կամ տեսակը խումբ:

Նոյնանշանների և հոմանունների անձիշդ կիրառութիւնը երկմտութիւն է պատճառում. օրինակ՝ եթէ ասենք «ճանապարհից դուրս է եկել» որ կը նշանակէ և «անբարոյական մարդ է դարձել» և «արահետից ծովել է»: Կամ այսօր շատ վաստակեցի, —և «յոգնեցի» և «փող աշխատեցի»: Կամ «տգեղ լեզու ունի» և այլն:

Հոմանունների վրա է հիմնված կալամբուր (calambour) կոչվածը, այսինքն բառերի խաղ

կամ մի քանի հոմանունների ի միասին գործածելը սրախօսութիւն ասելու համար, օրինակ. «մեղինւորական գնալով ի պատերազմ, ասաց. կը հոչակվեմ քաջութեամբ և կը ստանամ իսլչ: Ի հարկէ, ասաց միւսը, այն էլ մեծը, փայտէ խաչ (այսինքն գերեզմանի վրա)»: Ամենալաւ կալամբուրները ֆրանսիականն են, որովհետեւ ֆրանսիական լեզուն ձոխ է հոմանուններով. օրինակ միևնույն մէռ բառը մի քանի նշանակութիւն ունի. —mer (ծով), mere (մայր), maire (որդի). vert (կանաչ), vers (ստանաւոր), vers (դէպի) և այլն:

Խօսքի արտաքին կողմը պահանջում է քաղցրահնչիւնութիւնն և ներդաշնակութիւնն: Քաղցրահնչիւն կոչվում է այն ոճն, որի մէջ բառերը և նախադասութիւնները շարված են կարգով, ներդադասակութեամբ, այնպէս որ լազութեան համար դուրեկան լինի խօսքը. օրինակ, հետեւամար դուրեկան լինի խօսքը. օրինակ, հետեւամար կարկանդակ ձեռքը աղաղակեց և բարխօսքը. «կարկանդակ ձեռքը աղաղակեց» շատ աններդաշնակ է, որովհետեւ միաբարպ ժանկեր շատ կամ մէջը: Բայց Պէտիկթաշկերպ ժանկեր շատ կամ մէջը: Բայց Պէտիկթաշկեանի, Գամառութաթիբայի և ուրիշների ոտանաւեանի, Երաժշտական են, որները այնքան ներդաշնակ, Երաժշտական են, որ համարեա մօտենում են մուզիկային. օրինակ «Ծիծեռնակ» երգը, կամ հետեւալ բանաստեղծութիւնը.

Ո՞չ, ի՞նչ անուշ և ի՞նչպէս զոյլ
Առաւօտուն փըչիս, հովիկ,
Ծաղկանց կերպ գուրգուրալով

Եւ մաղերուն կուսին փափկիկ:
Բայց չես, հովիկ իմ հայրենեաց,
Գընա, անցիր սրտէս ի բաց:

(Պէշիկթաշլեան)

Ոճի ներդաշնակութեան դէմ չը մեղանչելու
համար հետեւալ կանոնները պէտք է ի նկատի
ունենալ. 1) իւրաքանչիւր բառի մէջ ձայնաւոր
տառերը զօդված են բաղաձայնների հետ. լեզուի
այդ յատկութեան մէջ արդէն կայանում է ներ-
դաշնակութիւն, ուստի և խօսվածքի կամ գըր-
վածքի մէջ ևս բառերը պէտք է այնպէս զօդել,
որ յաջորդաբար կակուղ հնչիւններին հետեւն
կոշտերը և կոշտերին կակուղները, եթէ խօսքի
մէջ շատ ձայնաւորներ կամ բաղաձայներ միա-
տեղ են գումարված, այդ խօսքը գուրք կը լինի
ներդաշնակութիւնից և կոշտ հնչիւն կունենայ.
2) ամեն բառի մէջ քանի փանկ որ լինի, միշտ
մինը շեշտ ունի, մնացածները ոչ, նոյնպէս և
խօսքի մէջ բառերից մի քանիսը արտասանվում
են ձայնը բարձրացնելով, իսկ մի քանիսը՝
ցածրացնելով. ուստի բառերն պէտք է այնպէս
դասաւորվեն, որ շեշտերը հաւասար հեռաւորու-
թիւն ունենան միմեանցից, այսինքն շատ միա-
փանկ կամ շատ բաղմափանկ բառեր միասին չը
լինեն:

Ոճի ներդաշնակութիւնը կախված է և խօս-
քի (ճառի) կազմութիւնից, այսինքն նախադա-
սութիւնների կարգաւորութիւնից երկասիրու-
թեան մէջ: Խօսքի կազմութեան կողմից երեք

ահսակ ոճ է լինում. 1) հատու կամ կտրուկ, 2)
պարզերական, և 3) խօսակցական (սովորական,
գործածական):

Են ճառն է կոչվում կտրուկ ոճ, որ բաղ-
կացած է կարճ նախադասութիւններից, որոնք
չեն կազմած շաղկապներով: Այդտեղ ամեն նա-
խադասութիւնը առանձին է, արտայայտում է ան-
կախ, ինքնուրոյն միտք, ուստի այդ ոճը պէտք
է գործածել, երբ պէտք է նկարագրել առարկա-
ների բազմազանութիւնը և բաղմագունութիւնը:

Կտրուկ ոճի օրինակ.

«Փարնան թարմ երեկոներից մինն էր: Ա-
րեի ճառագյթները ոսկեղօծում էին կազբէկի
ձիւնապատ գագաթը: Ժամատներից լսելի էին
լինում զանգանարութեան հնչումները»: (Րաֆֆի)

Կամ հետեւալը.

«Զիս պատրաստ էր: Ճանապարհ ընկի մի
առաջնորդի հետ: Գեղեցիկ առաւոտ էր: Արեկա-
կը փայլում էր: Թոչունները հիացնում էին ի-
րանց գայլայլիկներով: Կանաչ արօտների վրա
արածում էին անհամար ոչխարներ: Մենք զնում
էինք խոտաւէտ գաշտի միջով: Հասանք ըլուրի
գլուխը: Յանկարծ հովասուն և զով քամին փչեց
մեր երեսին. մեր առջև սքանչելի տեսարան
քացեց. ահա Արարատը, կանչեց առաջնորդս:
Արարատ: Հայրենիքի վսեմ և նուիրական սարը:
Անպատում զգացումով լցից սիրու»:

Երբ կտրուկ ոճը չափազանց կրծատվում է,
այնպէս որ ոչ շաղկապն է լինում, ոչ բացայա-
տիչ բառեր խօսքի մէջ, կոչվում է լակոնական,

Հակէդէմօնիս յունական երկրի անունով, որտեղ օրէնք էր համառօտ խօսելը։ Անուանի Յուլիոս Կեսարը հետևեալ կերպով յայտնեց Հոօմի ծերակոյտին իր յաղթութիւնը Քաղղիայում։ Վին, վիճ, վիշ. «Եկի, տեսի, յաղթեցի»։ Լակօնական խօսքը գործ է ածփում գլխաւորապէս տապանագրերի վրա. օրինակ՝ «Ներսէս պատրիարքին՝ երախտապատ Հայութիւնը»։

Պարբերական ո՞նկ, ընդհակառակը, բաղկացած է պարբերութիւններից, որոնց մէջ բոլոր նախադասութիւնները կապված են շաղկապներով։ Այդուեղ գլխաւոր ուշազրութիւնը դարձընվում է մի գլխաւոր մտքի վրա, որից կախված են ուրիշ շատ երկրորդական մտքեր։ Այդ ո՞նը գործ է ածփում այնաեղ, ուր պէտք է նկարագրել առարկաների ոչ թէ բազմազանութիւնը, այլ ազգակցութիւնը, կամ թէ միմեանց հետ սերտ կապ ունեցող մտքերի ամբողջութիւնը։ օրինակ ճառախօսութիւնների, քարոզների, դատադրութիւնների մէջ և այլն։ Պարբերական ո՞նը յատուկ է լատինական և գերմանական լեզուներին։ Մեր աշխարհաբար լեզուի մէջ պարբերական ո՞նը մտցրել է Ս. Նազարեանցը գերմաններէնի ազգեցութեան տակ։ «Հանդէս նոր հայախօսութեան» գրքի մէջ օրինակները անբաւ են.

«Մի անպատմելի տիրութիւն է գալիս իմ որտի վրայ, որ այսօր պատճառ ունեմ բարձրացնել իմ ձայնը և քարոզել հրապարակաւ, թէ հայց բանական ոգին, որ այդքան երկար ու ձիգ

դարեր մահանման քնի մէջ թմրած ու կապած մնացել էր, ահա սկսանում է զարթնուլ և նայել յետ և առաջ, հասկանալ իր տիրուր անցիալը, հասկանալ իր տգեղ ներկան, որպէս անցածի հարկաւորապէս հետևանքը, և ներկայում հոգաբարձու լինել ապագային, ինչքան կարելի է այդ, այսպիսի դրութեան մէջ, ինչպէս նոցայն է։

Խօսակցական ո՞ն այն է, որ միջին տեղն է բոնում կտրուկի և պարբերականի մէջ, այսինքն բազկանում է մտսամբ փոքր պարբերութիւններից, մտսամբ կարճ նախադասութիւններից։ Այդ ո՞ն արուեստական չէ, ուստի և ընդհանուր գործածական է։ Մեր վիպասանները՝ Բաֆֆի, Աղայեան, Պոօշեան և այլք այդ ո՞ն են գործածում։

Ահա խօսակցական ո՞նի մի օրինակ Սրուանձտեանի գրքից։ «Առաւօտ է, ինչպէս ամեն տեղ՝ այնպէս էլ Հայաստանի գիւղերում ամենքը շարժողութեան մէջ են։ Գիւղացինները արդէն զարթել են այն փոքրիկ թոշնիկի ձայնից, որ զալիս նստում է երդիքների վրա ու կանչում։ «Լծէ, լծէ»։

§ 8. Ո՞նք ներդաշնակութիւնը առաջ է գալիս և խօսքերի միաւորութեան տեսակից։ Խօսքը կամ շարադրութիւնը լինում է կամ ազգատ, ոչ մի չափի չենթարկվող կամ չափազատ, որոշ սահմաններ ունեցող։ Ուստի և լիկան, որոշ սահմաններ ունեցող։ Ուստի և լինում է երկու տեսակ խօսք. արձակ (պրօգալկական) բան և չափական կամ ոտանաւոր։ Սրձակ բանի կազմութիւնը ենթակայ է միայն քերականական կանոններին, իսկ ոտանաւոր բանի

կազմութիւնը, բացի քերականութիւնից, ենթարկվում է և մի ուրիշ արուեստի կանոններին, որ կոչվում է տաղաչափութիւն, որի մասին յետոյ կը խօսենք:

§ 9. Խօսքի (բան) պատկերական կողմը.

Ասացինք, որ խօսքը (բան) և առարկայի պատկերն է, ուստի և իրեւ այդպէս, նա գըողի լեզուին մի առանձին յատկութիւն է տալիս— պատկերականութիւն կամ նկարագրութիւն։ Պատկերական կամ նկարագրական լեզուն այն է, որն նկատողական կերպով ներկայացնում է մեզ առարկան կամ նկարում է առարկան։ Ոմանք այդ լեզուն կոչում են զարդարուն կամ մէտաֆօրական։ Դրա համար գործ են ածում շարադրութեան, խօսքի մէջ—մակղիբներ (էպիտէտ), այլախօսութիւններ (արօպ) և կերպարաններ (ֆիզուրա):

Էպիտէտ յունարէն բառ է և իսկապէս նըշանակում է մականուն, մակրիք, ուստի և քերականութեան մէջ էպիտէտները ուրիշ բան չեն եթէ ոչ ածականներ։ Բայց շարադրութեան մէջ էպիտէտը զանազանվում է հասարակ ածականից նըանով, որ զարդարում է խօսքը և ներկայացնում է առարկան աւելի փայլուն գէմքով։ Օրինակ հայերէն լեզուի մէջ ժողովրդական բարբառը հարուստ է էպիտէտներով—լրյս աշխարհ, Աստծու օր, մայր-արեգակ, մայր-հկեղեցի, կոյս անտառ, և այլն։

Կան զըողներ որոնք ի չարն են գործ գըոնում մակղիբների գործածութիւնը։ օրինակ՝ դժոխային ծիծաղ, հրաբուխային կիրք. այդ չափանցութիւն է։

Տրօպը (յունարէն տրօպոս խօսքից) նշանակում է այլախօսութիւն, այսինքն երբ խօսքերը գործ են ածվում ոչ իւրեասց սեպհական նշանակութեամբ, այլ այլաբանորէն։ օրինակ՝ երբ մենք ասում ենք սուր գանակ, այդտեղ սուր բառը իր սեպհական նշտնակութեամբ է գործածվում։ իսկ երբ ասենք, սուր միտք, սուր երեխայ, բութ յիշողութիւն, երկաթեայ կամք, այդտեղ այդ բառերը այլաբանորէն են գործածվում։ Այլախօսութիւնների ծագումը շատ հեշտ կարելի է բացատրել. զանազան առարկաներ միատեսակ տպաւորութիւն են ունենում մեր վրա, ուստի և միատեսակ անուն են ստանում. օրինակ, երկաթը մեզ վրա տպաւորութիւն է գործում իրեւ մի շատ ամուր բան. մարդն ևս իր հաստատութեամբ մեզ վրա ամրութեան տպաւորութիւն է անում, ուստի և ասում ենք՝ «երկաթեայ մարդ», «մարդ չէ, երկաթ է», կամենալով ասել որ նա հաստատամիտ է։ Այլախօսութիւնները ոկզբում ծագել են լեզուի ազքատութիւնից և յետոյ փոխվել են դարձել լեզուի զարդ։ Որովհետեւ ամեն աղքի մէջ սովորաբար գաղափարները, մտքերը աւելի շատ են քան բառերը և բոլոր մտքերը արտայայտելու համար բառերի պակասութիւն է զգացվում, ուստի և ժողովուր-

դը զգայական առարկաների կոչումները փոխակրում է մտաւոր առարկաների գրա և բառերի զգայական նշանակութիւնը փոխադրվում է բարոյականի։ Այսպէս օրինակ՝ յեղյեղուն խօսքը (յեղել խօսքից) սկզբում նշանակում է եղել թափվող, իսկ յետոյ ստացել է բարոյական նըշանակութիւն։

Որքան աւելի երիտասարդ է ժողովուրդը, այնքան և հարուստ է նրա լեզուն այլախօսութիւններով. արևելեան լեզուները աւելի ճոխ են այլախօսութիւններով, քան արևմտեան լեզուները, և ընդհակառակը, որքան ծեր է ժողովուրդը, այնքան և աղքատ է նրա լեզուն այլախօսութիւններով, որովհետեւ հաստիլի հետ միասին նուազում է և երևակայութեան կենդանութիւնը։

Տրօպների գլաւոր տեսակները հետեւալներն են—մէտաֆօրա, մէտօնիմիա, սինէկոնա, հիպէրօլա, ալլէգօրիա և իրօնիա։

Մէտաֆօրա (յունական խօսք, որի բառացի թարգմանութիւնն է փոխանցել)՝ մի այնպիսի խօսք է, որ մի առարկայի յատկութիւնները փոխադրում է ուրիշ առարկայի վրա ըստ նմանաթեան. օրինակ՝ երբ ասում ենք վառվուն երեւակայութիւն, կուակոտ քնտւղրութիւն, երկառնեայ կամք, քամին մոնշում է, բնութիւնը ծիծաղ ամ՝ է և այն, այստեղ մենք մետաֆօրական լեզու ենք գործածում։ Այսպէս մետաֆօրական լեզու է՝ երբ մի առարկան կոչում ենք ուրիշի անունով, բայց նրա հետ միատեսակ յատկու-

թիւն ունեցող. օրինակ՝ անզգայ մարդին կանչում են քար, արծան. խորամանկին—աղուէս, հարուստին կրեզոս. պարսիկ տզգին—արևելքի ֆրանսիացիք, Պ. Բուրգը—Հիւսիսային Փալմիրա, մատնիչին և գաւաճանին—Վասակ, Սեհրուժան և այլն։

Ժողովրդական լեզուն շատ ճոխ է մետաֆօրական խօսքերով. Ժողովուրդը անշունչ առարկաներին յատկացնում է մարդի յատկութիւնները, մարդկային մարմնի զանազան մասերը, օրինակ՝ տան կամ վնութեան առջեկ կողմն անուանում է ծակատ, ընտանիքը, տոհմը—ըոյն, սատանային—քաջը։

Ասածներից յայտնի է, որ մետաֆօրական լեզուի նպատակն է կենդանութիւն ներշնչել նիւթական բնութեան և շնչաւորել վերացական աշխարհի առարկաները։

Այն առարկաները, որոնք յայտնի հասկացութիւնների համար ծառայում են իրք մշտական նշաններ, կոչվում են հանգանակ կամ նշանադրոշմ (symbol). օրինակ՝ կաղնին—ամրութեան նշանադրոշմն է. արծիւը—հեռատեսութեան նշանադրոշմը, էշը—միմարութեան նշանադրոշմը, առիւծը—հզօրութեան, ոյժի նշանադրոշմը. գարը—անմեղութեան նշանադրոշմը և դրոշմը. գարը—անմեղութեան նշանադրոշմը և այլն։ Քրիստոնէական հաւատի նշանադրոշմը կամ հանգանակն է—«Հաւատամբ ի մի Աստուած» աշխարհը։

Մէտօնիմիա կամ անուանափոխութիւն կոչ-

վում է այն արտայայտութիւնը, որն խօսքի ունեցած նշանակութիւնը փոխում է ուրիշ նշանակութեան, ըստ որակութեան։ Այսպէս, մենք անուանում ենք պատճառը փոխանակ գործողութեան։ օրինակ՝ կրակը փչացրեց ամբողջ տունը։ կրակը (պատճառ) փոխանակ հրդեհի (կրակի գործողութիւնը)։ կամ ասում ենք—լաւ ձեռք ունի, այսինքն վայելուչ զրում է։ իմ աշխատանքովս եմ ապրում (այսինքն իմ աշխատանքի համար ստացած փողովս եմ ապրում)։ Պատճառի տեղ գործողութիւնն ենք անուանում։ օրինակ՝ երկնքից ոսկի է թափում։ ոսկին (գործողութիւն, հետևանք) փոխանակ անձրևի (պատճառ բերիութեան, հարստութեան)։ կամ թէ պարունակողը դնում ենք պարունակեալի տեղ։ օրինակ՝ երեք բաժակ խմեցի, փոխանակ երեք բաժակ կաթ, ջուր, թէյ խմեցի։ Նոյնպէս մէտօնիմիական լեզու է, երբ ասում ենք, «Ես կարգացի եղիշէն, թարգմանեցի Խորենացին», այսինքն հեղինակութեան տեղ հեղինակին ենք դնում։ կամ երբ ասում ենք՝ «Ի՞նգերորդ դարը հոչակաւոր է հայ գրականութեան պատմութեան մէջ» (այսինքն այդ դարի փառաւոր գործերը և գործիչները)։

Սինէկղօիա յունարէն բառ է և իսկապէս նշանակում է ըմբռնողութիւն։ Նա փոխում է խօսքի նշանակութիւնը ուրիշ նշանակութեան, ըստ քանակութեան։ Այսպէս, երբ մենք ամբողջը ընդունում ենք մասի տեղ, օրինակ՝ «որքան

քաղցը է խմել Արաքսը» (փոխանակ Արաքսի ջուրը), կամ մասն ընդունում ենք ամբողջի տեղ—«որքան գլուխ, այնքան խելք», կամ եղակի թիւը ընդունում ենք յոգնականի տեղ—«հայ, ոսւս, թուրք հաւաքվել պոռում էր», «որքան փրանսիացին կրթված, քաղաքավարի է, այնքան հայը անկիրթ, կոպիտ է»։ կամ թէ յոքնական թիւը ընդունում ենք եղականի տեղ—«Յաղկերտներ, Լանկթամուներ, Զենկիդներ հեկել զնացել են, աւերել եկեղեցիները, մատուռները, բայց Հայտատանեաց Եկեղեցին միշտ մըները, կամ է կանգուն և անսատան»։ կամ թէ՝ «Ներսացի է կանգուն և անսատան»։ չեքապիրները դարերով չեն ծնկում»—այս բոլորը սինեկղօիա է։

Հիպէօքոլա՝ բառացի թարգմանութեամբ չափազանցութիւն, խօսքի այն գարձուածն է, որ ներկայացնում է առարկան չափազանց միծացրած կամ նուազեցրած։ օրինակ՝ արտասուբը հեղիղի նման թափում էր. քրտինքը անձրեւի նըման հոսում էր երեսից. նա այնքան ակար է, մասն հոսում էր երեսից. նա այնքան ակար է, որ ծանծն ևս չէ կարող սպանել։ Բերենք մի երկու օրինակ կրիլօփի առակներից։

«Հոր գիշերը ցերեկ է, ցուրտ ըստ բանըդ չըկայ. Տարին տասուերկու ամիս մայիս է հուն մըշտակայ. Այն կողմերը ծառ տընկել կամ ցանք ընել չէ լըսուած Սակայն ինչպէս ամեն բան միշտ ծըլած է ու ծաղկած։ Զոր օրինակ. ես Հոռմ քաղաքը մէկ վարունդ մը տեսայ, բայց ինչ վարունդ... որքան ըսիմ... զըլուիլը վկայ... կարծիս աչքիս առջև է այս մինչեւիլը վկայ...»

Կը հաւատոնս, մըզաենի, սա գիմացի լեւան չափ
կայ.» (Ստախոս առակը)

«Ինչ դազաններ, ինչ թըռչուններ,
Թիթեռնիկներ, բըդէղներ,
Ինչ զատիկներ, ինչ կերպ ճանձներ,
Հապա մանրիկ բատունները, հաւատա,
Գընդասեղին զըմսէն ուլ շատ փոքրը կայ»:
(«Հետաքրքիւ առակը)

Ալէգօրիա, ըստ բառացի յունական թարգ-
մանութեան՝ այլաբանութիւն։ Երբ ոչ միայն մի
բառ, այլ ամբողջ մի ասացուածք, ամբողջ մի
պարբերութիւն, ամբողջ մի շարադրութիւն պէտք
է հասկանանք ոչ թէ իր բուն, բառական մըս-
քով, այլ այլաբանօրէն, այդ տեսակ արտայայ-
տութեան եղանակը կոչվում է ալէգօրիանկան
կամ այլաբանական։ Այսպէս օրինակ, տուակնե-
րի մէջ կենդանիների հետ պատահած հնարառի
իրողութիւնների անուան տակ նկարագրվում է
մարդկանց արարքը։ Իբրև օրինակ ալէգօրիայի
կարող է ծառայել հրէական ազգի վիճակի նկա-
րագրութիւնը չթ. Սաղմոսի մէջ.

«Զայդի յեգիպտոսէ փոխեցեր, հաներ զհե-
թանոս» և զնա տնկեցեր, և առաջնորդեցեր
նմա։ Հաստատեցիր զարմատս նորա և էլից զհր-
կիր. ծածկեաց զլերինս հովանի նորտ. և բարու-
նակ նորա զմայրս Աստուծոյ։ Զդեսց զորթ իւր
մինչեւ ի ծով. մինչեւ ի գետս են շառաւիզը նո-
րա։ Ինդէր փակեցեր զցանկ նորա. և կթեն զնա
անցաւորք ճանապարհ։ Ապականեաց զնա խող
անտառի, և էրէ վայրի արածացաւ ի նմա։ Առ-
տուած դօրութեանց՝ դարձ. հայեաց յերկնից՝ և

տես. այց արա այգույս այսմիկ. և դարման տար-
սմա զոր տսկհաց աջ քո»։

(Սաղմոս Դաւթի)։

Այս այլաբանութեան մէջ ամեն ինչ վերա-
բերում է այլոյն և որթին, բայց միենոյն ժա-
մանակ և այդ անուան տակ գեղեցիկ կերպով
նկարագրված է հրէական ազգի վիճակը։

Կրիլօվի «Էշ և Սոխակ» առակը ալէգօրիա-
յի ամենագեղեցիկ օրինակ է։ Այդտեղ թէև խօս-
վում է էշի և սոխակի մասին, բայց պէտք է
բոլորովին ուրիշ բան հասկանալ. էշը—տգէտի
ալէգօրիական պատկերն է, իսկ սոխակը—խե-
լօր, տաղանդաշոր մարդի ալէգօրիական պատ-
կերու։ Նոյնպէս Բաֆֆու Խենթի երտզը ալէգօ-
րիական մի դարձուած է, որով հեղինակը կա-
մեցել է բոլորովին ուրիշ միաք յայտնել։

Իսօնիա, ըստ բառացի թարգմանութեան
հեգնութիւն, երբ խօսքին տալիս են ուրիշ նշա-
նակութիւն ծաղրելու համար։ Օրինակ՝ «ոհ, ինչ
մեծ պատիւ է ինձ համար, եթէ դուք այցելէք
ինձ», Կծու հեգնական խօսքը կոչվում է սար-
կազմ (գառն հեգնութիւն) և դրանից խօսքը լի-
սում է սարկաստիկական. օրինակ Աւետարանի
մէջ երբ հրէաները հայհոյում էին Փրկչին խա-
չի վրա, ասելով «ողջ լեր, թագաւոր հրէց»։

Հարկաւոր է նկատել այլախօսութիւնների
վերաբերմամբ, որ ամեն լեզու ունի իր տրոպ-
ները, որոնք անհնարին է թարգմանել բառացի։

այն ինչ որ մի լեզուի զարդն է կազմում, ուրիշ լեզուի մէջ տգեղ է լինում:

Այն արտայայտութիւնները, որոնք յատուկ են մի որոշ լեզուի և անթարգմանելի են ուրիշ լեզուով, կոչվում են իդիոտականութիւններ, օրինակ՝ հայերէն «ձեռք վեր առ», «մեծ օջախի որդի է», անձանց մերոց եղամ» և այլն, կամ Նարեկացու շատ ասացուածները, որոնք անթարգմանելի են օտար լեզուով, օրինակ՝ «վերըստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի ի խորոց սրտի խօսք ընդ Աստծոյ»:

§ 10. Կերպարանների նշանակութիւնը եւ նշուանց տեսակները.

Կերպարաններ (լատին. figura, խօսքի դարձուած) կոչվում են այն արտայայտութիւնները, որոնք շեղվում են խօսքի սովորական ընթացքից և պրոզի զգացմունքի յուզմունքն են յայտնում: Մեր զգացմունքները չափազանց բազմազան են և անկարելի է խօսքով արտայայտել նրանց բոլոր ձևերը և կողմերը: Զգալ և ինչպէս յայտնել զգացմունքը, այդ ուսուցանում է ինքն բնութիւնը, ուստի զգալու համար աւելորդ է և չէ կարելի կանոններ դնել և սովորեցնել: Կայ շարագրութիւն, որ համակված է խորին զգացմունքով և ընթերցողների հոգու ու սրտի մէջ խորին համակրութիւն է զրգում, թէև զրված է լինում ամենաշանպանոյն, ամենապարզ

լեզուով. կայ և շարագրութիւն, որի ոճը պաճունակ է, որտեղ դործածված են սասափիկ և բուռնարտայայտիչ խօսքեր, բայց նա անկարող է շարժել ընթերցողին, որովհետեւ համակված չէ անկեղծ զգացմունքով:

Գլխաւոր կերպարանները, որոնց մէջ ամենից յաճախ արտայայտվում են հոգու բուռն զգացումները — են՝ պրոզիզոպէա, անտիթէզ, պացականչութիւն, կրկնողութիւն, լսողութիւն, ովհողութիւն (ապոստրօֆ):

1. Պրոզիզոպէա, կամ կերպարանացումն-խօսքի այն գարձուածն է, որով գրողը անշունչ և վերացական առարկաներին տալիս է չնչաւոր և զգայական առարկաների յատկութիւնները: Անզգայական բնութիւնը ժողովրդեան ենողի, անբանական բնութիւնը ժողովրդեան երևակայութեան մէջ ներկայանում է իբրև կենդանի, բանական, նրան վերագրում են մարդի մտքերը, խօսքերը և սովորութիւնները: Մարդը սովոր է կերպարանք տալ բնութեան, որովհետեւ նա ապրում է նրա մէջ և ենթակայ է միշտ նրա աղղեցութիւններին: Մեր հին ժողովրդական բանաստեղծութեան մէջ շատ օրինակներ կան երբ ժողովուրդը իր երգերի մէջ անշունչ կան երան կենդանացրել է, օրինակյայտնի Գորդան երգը:

«Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծիրանի ծով.
Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն. և այլն:
կամ Գամառ-Բաթիբայի ԱՄայր Արաքսի»

Երկը, ուր գետը կերպարանք է ստանում և խօսում:

Անտիթէղ կամ հակադրովթիւն կոչվում է այն ձեզ, որով գրողը միամեղ դաստորում է երկու հակասական առարկաներ: Հակագրութեան նպատակն է երկու առարկաների որոշիչ գձերը փայլուն կերպով ցոյց տալ և սաստկացնել դժանով ընթերցողի տպաւորութիւնը: Օրինակ. «մի ժամ առաջ ուրախութիւն, հրճուանք տիրապետում էր այստեղ. այժմ լաց, կոծ, վիշտ»: «Հոյակապ պալատների, հիասքանչ վանքների և մեծագործ արձանների տեղ, այսօր միայն աւերակներ, թշուառ խրճիթներ»: Անտիթէղի գեղեցիկ օրինակ կարող է ծառայել ո. Գրիգոր Նարեկացու ո. Աստուածածին ներբողեանից հետեւեալ իթ. կտորը.

Իսկ անանկեցաւ, որով ճոխացաւ.

Իսկ ճնագանդեցաւ, որով պաշաեցաւ.

Իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ.

Իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ.

Իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց. իսկ բերկրեցոյց, որով տրամեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ»:

Բացականչովթիւնը այն կերպարանն է, որով գրողը արտայայտում է իր զարմանքը, որ պատճառում է նրան առարկան կամ գործողութիւնը: Բացականչութիւնը մեծ ոյժ է տալիս ասացուածին: «Ո՞վ մեծ զարմանքիս, ինչեր եմ տեսնում»: «Ո՞վ այդան, անմիտ պատանի, նիրհը

ինչն գարեւը վըրդովում ես, նորոգում, իմ ցաւերը բիւրաւոը»:

Կրկնողութիւնը այն կերպարանն է, որ ցոյց է տալիս թէ հոգին յափշտակված է որևէ մի առարկայով, զբաղված է միայն մի մտքով, ուստի և գրողը տկամայ կրկնում է միենոյնը, օրինակ՝ «ահա, ահա, ահա, նա է Մասիսը». «ոսկի, ոսկի տուէք մեղ, կրկնում են այժմ տոսկի, ոսկի տուէք մեղ, կրկնում են այժմ մենքը»:

Լոռողութիւնը խօսքի այն դարձուածն է, որի մէջ զրողը, զգացմունքների բուռն յուզմունքից չէ կարողանում մի միաք լրացնել և միւսին անցնել, «Ես, ես, պէտք է»...

«Յառաջ, յետ, աջ, ձախ, արագ... Դիմողութիւնը այն դարձուածն է, որով հեղինակը գիմում է բացակայ առարկաներին, իբրահինակը ներկայ լինէին կամ մեռեալ և ըստ թէ նրանք ներկայ հետ խօսում է իբրև անշունչ առարկաների հետ: Դիմողութեան մէջ արկենպանիների հետ: Դիմողութեան մէջ արկեայտվում է կասկածանք, աղերս, զայրատայտվում է կասկածանք, աղերս, զայրացումն, բողոք և այն: Օրինակ՝ Խրիմեան Հայրիկի «Հայդոյժ» զբքոյկի հետեւեալ կտորը:

«Ո՞վ լուսին, լուսին, հայոց աշխարհէն կը գաս, Բագրեանդայ կոտորածի գաշտերէն անցար. այսպէս կը թուի որ՝ գիշերաժամուն մէջ շառաւ երգսերդ արինոտ դիակներուն վըայ զարնելով՝ երեսդ շառագունել է»:

«Բարզուղիմէ, Բարզուղիմէ, հայոց նախկին լոյս և լուսաւորիչ ուր ես, տարան, տարան կին լոյս և լուսաւորիչ ուր ես, տողովորդն, որ քո հովաք փոքրիկ հօտն ու ժողովորդն, որ քո հովա-

նհաց տակ և քո գերեզմանիդ շուրջը կը բնակէր...»

§ 11. ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ

Մենք առացինք, որ խօսքը, ճառը, նախադասութիւնների կազմուածքի կողմից, կարող է ենթարկվել կամ որոշ երաժշտական չափի, լինել չափական, ինչպէս

«Ես լսեցի մի անոյշ ձայն—

Իմ ծերացած մօր մօտ էր.

Փայլեց նըշոյլ ուրախութեան.—

Բայց ափսոս, որ երազ էր»:

Կամ լինել արձակ, ազատ, անչափական, ինչպէս.

«Աղասու անուշ բնաւորութիւնը, բարի սիրոն ու հոգին քիչ մարդ կունենայ»:

Որոշ, երաժշտական չափով շինված խօսքը, կոչվում է չափական խօսք կամ ոտանաւոր, իսկ չափ չունեցող խօսքը կոչվում է արձակ բան, պրօզա:

Ուրեմն ոտանաւորը խօսքի կամ բանի արտադրութեան ձևերից մինն է և ունի իր շինութեան առանձին կանոնները, որոնց հետ պէտք է ծանօթանալ: Ոտանաւոր խօսք կազմելու որուեստը կոչվում է տաղաչափութիւն (versification):

Ա.) Տաղաչափութիւնը դանապան է լինում, նայելով լեզուի յատկութիւններին: Եւրօպական թէ հին և թէ նոր լեզուների մէջ յայտնի են երեք տեսակ տաղաչափութիւն կամ ոտանաւոր.

1) Մէտրիքական (չափական). այն տաղաչափութիւնն է, որ հիմնված է վանկերի երկարութեան և սղութեան վրա կամ կազմված է, ինչպէս ասում են, քանակով և ամանակով, այսինքն վանկերի երկար կամ կարճ արտասանութեամբ: Մէտրիքական տաղաչափութիւնը յատուկ էր հին, այն է յոյն և լստին լեզուներին, որոնց առողակութիւնը իրական երկայնութիւն և կարգութիւն ունէր.

2) Սիլլաբիքական կամ յժոնական (լատ. syllaba—վանկ բառից). այն տաղաչափութիւնն է, որ հիմնված է վանկերի թուի վրա: Նա գործածական է իտալական, ֆրանսիական և լինական լեզուների մէջ, որովհետև այդ լեզուները շատ քիչ ընդունակ են կամ ամենին ընդունակ չեն ոտքի և նրանց մէջ շեշտը միշտ կամ զըրեթէ միշտ զրվում է նախավերջին կամ վերջին վանկի վրա: Թուական ոտանաւորը կարող է վանկ երեքից մինչև տասն և չորս վանկ ունետասն իսկ հայերէսի մէջ նոյնիսկ մինչև տասն և վեց վանկ:

4) Տօնիքական կամ շնչուառը, շնչառալ (տաղաչափութիւնը (յոյն տօնոս—շնչառ բառից): Ոտանաւորի մասերն են—ոտք, անդամ, յանգ, տող, տուն:

Բ. Ոտանաւորի մասերը

Ոտանաւորի մասերն են—ոտք, անդամ, յանգ, տող, տուն:

1) Ոաք կոչվում է ոտանաւորի մէջ ա-
նընդհատ կրկնվող վանկերի որոշ քանակութիւ-
նը: Ոտքը ոտանաւորի մէջ նոյնն է, ինչ որ
տակտը երաժշտութեան մէջ: Թուական տաղա-
չափութեան մէջ ոտք ասելով խմացվում է մի
տողի իւրաքանչիւր վանկը և գըտ համար թուա-
կան տաղաչափութեան մէջ ոտք և վանկ նոյ-
նանշան են: Այդ պատճառով հինգ վանկանի տո-
ղը կոչվում է հնգոտնեան, վեց կամ եօթը վան-
կանինը—վեցոտնեան, եօթնոտնեան և այլն:

Հայերէն տաղաչափութեան սովորական տո-
ղերն են՝ հինգ վանկից մինչև տասնեվեց վան-
կով և վանկերի թուի համաձայն կոչվում են՝
հնգոտնեան, տասնոտեան, հնգետասանոտնեան,
և այլն: Գտնվում են նաև նուազագոյն վանկի-
թւով տողեր—շորեքոտնեան, երեքոտնեան, մին-
չև իսկ երկոտնեան և միոտնեան, բայց մինակ
չեն գործածվում:

Ծանօթութիւն: Զափական տաղաչափութեան
մէջ, որ գործ է ածվում հին ազգերի մօտ, ա-
մենագործածական ոտքերն են—եամբ, քօրէյ,
դակտիլ, ամֆիբրախի և անապեստ:

Եամբը այն ոտքն է, որ բաղկացած է եր-
կու վանկից—առաջինը կարճ, երկրորդը՝ երկար:

Քօրէյը (պարառական) այն ոտքն է, որ
բաղկացած է երկու վանկից—առաջինը՝ երկար,
երկրորդը՝ կարճ:

Դակտիլը (մատն) այն ոտքն է, որ բաղկա-

ցած է երեք վանկից—առաջինը՝ երկար, եր-
կրորդը և երրորդը՝ կարճ:

Ամֆիբրախին (շուրջը կարճ) այն ոտքն է,
որ շուրջը կարճ է, իսկ մէջտեղը՝ երկար: Երեք
վանկանի ամֆիբրախին—առաջինը կարճ է, եր-
կրորդը՝ երկար, երրորդը՝ կարճ:

Անապէստը (յետ խփել) ոտք է, բաղկացած
երեք վանկից. առաջինը և երկրորդը՝ կարճ, եր-
րորդը՝ երկար:

Բացի այդ ոտքերից, հին ազգերը գործ էին
ածում նաև հելզամէտը (վեց չափեան), բաղ-
կացած վեցոտաքից. Նրանցից երկուսը՝ դակտիլ,
միացածը՝ քօրէյ: Հեկզամետրեան չափով գրված
են Հօմերոսի հոչակառոր քերթուածները—«Իլիա-
կանը» և «Ոդիսականը»:

2. Հատուծ և անդամ: Հատածը (caesura,
կարում եմ) կոչվում է այն փոքր բաժանումը,
որ տաղաչափութեան մէջ տողի ոտքերը այլ և
անդամների կամ մասերի է բաժանում, կամ
անդամահատում է: Հատածը բառի շեշտից կա-
խումն ունէ:

3. Ցանգ կամ ըիթմոս—կոչվում է այլ և
այլ տողերի նմանաձայն վերջաւորութիւնը, օ-
րինակ

«Անմահ անուշ գու գինի
Շատ սիրելի ես քաջին,
Զի գոյնդ արեան նմանի
Պատերազմաց ի դաշտին.
Բոսորափայլ քո փրփուր
Որ մեզ ի կոիւ փըչէ հուր

Թէ հաշտութիւն գայ արդար
Փոխի ի ցող զովաբար,
(Պէտքթաշեան)

Յանգերով շինված ոտանաւորը կոչվում է
յանգական կամ յանգաւոր, իսկ առանց յանգի
շինվածը—անյանգ։ Նոր լեզուների տաղաչափու-
թիւնը ընդհանրապէս յանգական է։

4. Տող—Ոտանաւորի էութիւնն է, որ տող
տող գրվի։ Տողերի որպիսութիւնը վանկերի համ-
րանքից կախում ունի։ Մէկ զմէկ յաջորդող
տողերը իրանց երկայնութեան կամ վանկե-
րի թուի կողմից կարող են բաժանվել՝ 1) հաւա-
սար, 2) անհաւասար և 3) իսուն տողեր։

5. Տուն—Շատ տողեր ետևէ ետև մի տուն
կը կազմէն։ Ատկայն կայ ոտանաւոր, որ տնա-
տեալ է, այսինքն որոշեալ տներ ունի, կայ որ
առանց տան է։

§ 12. Ընդհանուր նկատողութիւններ ոտանա- ւորի մասին։

Պէտք է իմանալ, որ ոտանաւորը բանաս-
տեղծութեան բացառիկ սեպհականութիւնը չէ
կազմում։ Շատ զիտնական երկասիրութիւններ
գրված են ոտանաւորներով, իսկ շատ բանաս-
տեղծութիւններ գրված են արձակ բանով։ Բա-
նաստեղծութեան զանազան տեսակների հետ
մենք կը ծանօթանանք յետոյ։

§ 13. Ոճաբանութեան մասին եզրակացումն.
Հին, այն է կլասիք գրողները շատ մեծ ու-

շաղըութիւն էին դարձնում ոճի, կամ իրանց ո-
ճի մշակութեան վրա։ Կիկերօնը գրել է. «ոճը
լեզուի լաւագոյն և գերազանց ուսուցիչն է»
(Stylus est optimus et praestantissimus dicendi
effector et magister)։ Կղենտելիսնը խորհուրդ
է տալիս, ինչքան կարելի է շատ և ինչքան կա-
րելի է ջանասիրութեամբ գրել։ Հօրացիոն նոյն
իսկ որոշում է այն ժամանակը, որի ընթացքում
գրողը պէտք է ուղղէ իր շարադրութիւնը։ Նա
որոշում է ինն տարի, ինամքոն ուղղելու հա-
մար։

Հին գրողները այնքան խիստ էին վերաբեր-
վում իրանց երկասիրութիւններին, որ հոչակա-
ւոր յոյն գրող իսօկըատը (V—IV դար Ք. ա.)
իր մի ճառի վրա 15 տարի աշխատեց։

ոք իր թանին թթու չի ասի». «ծիտը երազում կուտ կը տեսնի». «հարք կերին զազովին և որդոց առամունք առին». «մահ ոչ իմացեալ մահ է, մահը իմացեալ անմահութիւն է» և այնպարաւնակում են իրանց մէջ միաք, բայց գեռաշարադրութիւններ չեն:

Շարադրութեան համար հարկաւոր են որոշ պայմաններ, այն է.

ա) Շարադրութիւն գրելիս, ամենից առաջ պէտք է ընտրել որևէ մի որոշ առարկայ, այն ինչ որ ընտրվում է շարադրութեան առարկայ, կոչվում է թեմա (théme, ρύθμια): Օրինակ, դուք կամենում էք գրել Արարատեան դաշտի մասին, մի ուրիշ՝ թաթարների յարձակման մասին Հայաստանի վրա. երբորդը՝ Ուսման օգտակարութեան մասին—այն ժամանակ մենք ասում ենք որ այս ինչը իր շարադրութեան համար թեմա կամ ընտրան է ընտրել «Արարատեան դաշտ», «Թաթարների յարձակումը Հայաստանի վրա» և այլն: Թերև կամ ընտրան կարող է լինել և ընտրվել ամեն բան, ինչ որ մատչելի է մարդկային մտքին, այն է ամեն, ինչ որ բնութեան մէջ յին մտքին, այն է ամեն, ինչ որ բնութեան մէջ որոշ տարածութիւն է բնուում (այսինքն բնութեան բոլոր առարկանները և արուեստական առարկանները), ամեն, ինչ որ կատարվում է ժամանակի մէջ (այսինքն բոլոր դորձողութիւնները և դէպքերը), ամեն, ինչ որ գոյութիւններն միայն մեր մտքում (վերացական հասկացողութիւններ, դտուղութիւններ):

ՍԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊՐՕԶԱՅԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

§ 1. Պրօզայ յունական բառ է և նշանակում է արձակ, ազատ, չափի տակ չընկած խօսք: Ընդհանուր իմաստով, պրօզան կամ պրօզաիկական ըանը կոչվում է շարադրութիւնների կամ երկասիրութիւնների այն ընդարձակ տեսակը, որի սպասարկն է նկարագրել իրական աշխարհը, այսինքն ինչ որ եղել է և ինչ որ իրողապէս կայ: Պրօզայիկը (արձակ գրողը) չէ գրում ոչ մի մտացածին, հնարովի բան, այլ միայն ինչ որ էութիւն ունի, ուստի՝ իրական աշխարհի վերաբուղութիւնը խօսքով կոչվում է պրօզա,

§ 2. Շարադրութիւնը եւ նրա կազմութիւնը.

Շարադրութիւնը կոչվում է որևէ իրական կամ վերացական առարկայի մասին մտքերի բացարութիւնը: Սակայն մի միտք գեռ չէ կարող կազմել ամբողջ շարադրութիւն. պէտք է այդ միտքը հարկաւոր կերպով բացարել և ապացուցանել: Օրինակ, հետևեալ ասածները—«Ոչ

բ) երբ բնաբանը արդէն բնարված է, մեղ
պէտք են մտքեր ընտրված առարկայի մասին։
Իսկ մտքերը առարկայի մասին երևան են գալիս
մարդի մէջ, երբ հետզհետէ մտածում ենք և
բացարում նրան մեր դիտակցութեան մէջ։ Որ-
քան շատ ուսումնասիրենք առարկան, որքան ա-
ւելի մօտ ծանօթանանք նրա հետ, աւելի խոր
թափանցենք նրա մէջ—այնքան լիտկատար և
պայծառ կը լինեն մեր մտքերը նրա մասին։ Ա-
ռարկայի հետ մենք կարող ենք ծանօթանալ կամ
1) սեպհական նկատողութեամբ և փորձառու-
թեամբ, անմիջական ուսումնասիրութեամբ, կամ
2) գիտութիւնների ուսումնասիրութեամբ և ըն-
թերցանութեամբ։ Ուրեմն ով ցանկանում է որիէ
մի երկասիրութիւն զրել, պէտք է դիմէ այդ եր-
կու ազբիւրներից մէկին կամ նոյն իսկ երկու-
սին։ օրինակ, «Արարատեան դաշտի արգաւան-
դութեան մասին» զրողը կարող է կամ անմի-
ջապէս ծանօթանալ այդ դաշտի հետ, ինքն ու-
սումնասիրէ, կամ ծանօթանայ ուրիշ զրողների
նկարագրութեան միջոցով, օրինակ, կարգալով
Դապար Փարաեցու նկարագրութիւնը։ «Թաթար-
ների յարձակումը Հայաստանի վրա» թեմայի
մասին զրողը ինքն, ի հարկէ, չէ կարող աեսնել
այդ անցած գէպքը, ուստի պէտք է դիմէ պատ-
մական յիշատակարանների վկայութեան — հայ
և օտար պատմագիրների վկայութեան։

Բնաբանի յաջորդական բացարութիւնը կամ
լուսաբանութիւնը զրողի գիտակցութեան մէջ

կոչվում է թեմայի, ընաբանի գարգացումն, իսկ
հաւաքված մտքերը կազմում են ապագայ, դեռ
անողատրաստ շարադրութեան ցովանդակութիւն։

գ) Ամեն շարադրող, զրող պէտք է ի նկա-
տի ունենայ ընթերցողին։ Ընթերցողը կարող է
հասկանալ զրողի մտքերը միայն այն ժամանակ,
երբ նրանք աւանդվում են հետեղողական կար-
գով. այդաեղից ծագում է երրորդ պայմանը ա-
մեն մի զրողի համար, այն է իր մտքերը որոշ
կարգով աւանդելու անհրաժեշտութիւնը։ Այն
կարգը, որով մենք շարադրում ենք, բացարում
ենք մեր մտքերը, կոչվում է շարադրութեան
յատակագիծը (պլան)։

դ) Սակայն մտքերը թէն կատարեալ կար-
գի գերածված, բայց ցորչափ գոյութիւն ունեն
միայն մեր զիմում, շարադրութիւն գեռ չը կայ.՝
որպէսզի շարադրութիւն լինի, պէտք է որ նո-
րոգի առնվի, պէտք է մտքերը արտայալակել խօս-
քերով։ Մտքերի արտայալառութիւնը խօսքերով
կոչվում է ըացատրութիւն կամ ըուն շարադրու-
թիւնը։

Ուրեմն երկասիրութիւն կազմելու համար
հարկաւոր է չորս պայման. 1) թէմա, ընաբան
2) ցովանդակութիւն, 3) յատակագիծ և 4) ուս-
ցաւորութիւն կամ ըուն շարադրութիւն։

Համաձայն այդ չորս տարերքի, մենք կա-
րող ենք սահմանել շարադրութիւնը այսպէս.
Շարադրութիւնը որեւէ առարկայի մասին մըտ-
քերի ներդաշնակ ըացատրութիւնն է։

Շարագրութեան մէջ կարող է լինել և հինգերորդ պայման—եզրակացութիւն կամ սարոյախօսութիւն (մօրալ), բայց դա անհրաժեշտ պայման չէ:

Բնաբանը, բովանդակութիւնը և յատակագիծը կազմում են շարագրութեան ներքին կողմը, իսկ բացատրութիւնը կազմում է արտաքին կողմը:

§ 3. Արձակ լանի կամ պրօզաիկ արտադրութիւնների տեսակները:

Բանահիւսութեան գիտութեան մէջ երեք տեսակ պրօզաիկ արտագրութիւններ են ճանաչում. պատմական կամ պատմողական արտագրութիւններ, հոետորական և փիլիսոփայական կամ ուսումնական արտագրութիւններ; Նրանց ամենքի նպատակը մի է—ծշմարտութիւնը. զանազանութիւնը՝ այդ ճշմարտութիւնը աւանդելու ձեերի մէջն է. պատմական երկասիրութիւնները պատմում են ճշմարտութեան մասին. հոետորականները ուղղում են օտարի կամքը, որոշ ճշմարտութեան համաձայն. Փիլիսոփայական երկասիրութիւնները ապացուցանում են ճշմարտութիւնը:

§ 4. Պատմողական երկասիրութիւնները.

Պատմողական կոչում են այն երկասիրութիւնները, որոնք պատմուի են ճշմարտութեան մասին, այսինքն ինչ որ եղել է, կամ ինչ որ իրօք կայ:

Պատմողա՛մն երկասիրութիւնների տեսակներն են—տարեկարութիւն կամ ժամանակագրութիւն, յիշատակագրեր (témoires), պատմութիւն, կենսագրութիւն, ճանապարհորդութիւն:

Ա. Տարեկարութիւն

Տարեկարութիւնը կամ ժամանակագրութիւնը (annales, քրոնիկոն) է պատմողութիւն տարեկան անցքերի, առանց իրողութիւնների բննակատական լուսաբանութեան: Տարեգիրը, նկարագրելով որևէ մի ազգի կեանքի մէջ տեղի ունեցած դէպքերը, չէ բացատրում նրանց մէջ եղած ներքին կապը, այսինքն նրանց պատճառները և հետևանքները: Տարեգրութիւնը ներկայացնում է մի անարուեստակ, անպաճոյն պատմուած պատահած դէպքերի, առանց քննելու պատճառները: Տարեգիրը, իբրև լոկ ականատես և կեանք նկարագրող, գորգի է անցնում ամենից առաջ արտաքին գորգի է առաջնում կարեսը դէպքերը. նա ա) քննադատօծերը, արտակարգ դէպքերը. նա ա) քննադատօծերէն չէ վերաբերվում փաստերին, չէ զանազարէն զի վերաբերվում փաստերից, չէ ստուգում, այլ նույն կարեսը անկարևորից, չէ ստուգում, այլ լսածին հաւատ է ընծայում. բ) չէ որոնում իր լսածին հաւատ է, չէ որոնում իր լսածին հաւատ է ընծայում. բ) չէ որոնում կամքը մէջ ներքին կապ, չէ մտնում պատցէպքերի մէջ ներքին կապ, չէ մտնում պատցէպքերի մէջ ներքին կապը, բացատրութեան մէջ:

Տարեգրութիւնները հին ժամանակ գրվում էին վանքերում: Տարեգրութեան կամ ժամանակագրութեան իբրև օրինակ հայ մատենագրութեան մէջ կարող են ծառայել Սամուէլ Երէցի, Մատթէոս և Մատթէոս Ուռհայեցու տարեգրութեան մատթէոս:

թիւնները: Մեր պատմագիրներից շատերը, իւրանց պատմութիւնը սկսում են ժամանակագրութեամբ, ինչպէս Ասողիկը: Ժամանակագրութիւններին պէտք է առհասարակ քննադատաբար վերաբերվել: Ծուսաց առաջին տարեգրութիւնը գրել է Նեստոր վարդապետը, որ ծառայել է հիմն ուսաց պատմութեան: Եկեղեցական մատենագրութեան մէջ յայսի է Եւսեբիոսի ժամանակագրութիւնը:

բ) Յիշատակագրեր

Յիշատակագրերը կամ յիշատակարանները (Mémoires) կոչվում են ժամանակակից անձի պատմածը իր տեսածի և լսածի մասին:

Պատմական յիշատակագրերը կազմում են մի տեսակ անցողական աստիճան տարեգրութիւնից դէպի պատմութիւնը: Մի կողմից նըրանք նման են տարեգրութեան, որովհետեւ յիշատակագրողի պատմածը, ինչպէս և տարեգրի պատմածը հիմնված չէ գիտնական ուսումնասիրութեան վրա. բայց միւս կողմից յիշատակագրը նման չէ տարեգրութեան, որովհետեւ նա զանազանվում է նրանից ներքին կապակցութեամբ, լծորդութեամբ, որ հեղինակը պահում է իր ամբողջ գրուածի մէջ: Սակայն, յիշատակագիրը, թէև իր շարագրութեան այդ կապակցութեամբ, մօտենում է պատմութեան, բայց նա դեռ պատմութիւն չէ, որովհետեւ նրա մէջ չը կայ պատմութեան ամենագլխաւոր պայմանը

— գիտնական ուսումնասիրութիւնը: Ուրիշ խօսքով, յիշատակագիրը տարեգրում է տարեգրութիւնից իր սիլվեկտիվ (անձնական, ենթակայական) բնաւորութեամբ, մինչ տարեգրութիւնը օրենկանիվ (առարկայական) բնաւորութիւն ունէ, այսինքն յիշատակագրի մէջ տիրում է հեղինաայսին յիշատակագրի մէջ տիրում է հեղինաայսին հայեացը և աչառութիւն: Հայ մատենագրութեան մէջ յիշատակագրերի իբրև օրինակ կարող է ծառայել Սարգիս-Դիտիլանենցի Օրագիրը:

գ) Պատմութիւններ

Պատմութիւնը, իսկական մտքով (իբրև գիտութիւն), մարդկային ցեղի կեանքի յաջորդական զարգացման նկարագրութիւնն է: Մարդկան ցեղի, ինչպէս և առանձին ազգերի և առանձին անհատների կեանքը բաղկացած է շատ տարեգրից: Բացի արտաքին գէպքերից, բացի հասարակական յարաբերութիւնից, բացի գիտութիւնից և արուեստից ոչ նուազ կարեոր են և թիւնից, կենցաղաբարութիւնները, ընտանեկան վարք-բարքերը, սովորութիւնները, կենցաղաբարութիւնը և յարաբերութիւնները, կենցաղաբարութիւնը և ապահովագրութիւնները, այն է բնակարան, ուղարկուատի միջոցները, այն է բնակարան, ուղարկուատի միջոցները, այն է բնակարան, ուղարկուատի պահանջմանը մէջ և լծորդվեն միմեանց հետ ներկազմութեան մէջ և լծորդվեն միմեանց հետ ներկազմութեամբ:

Մարդկութեան կեանքի այդ տեսակ նկարագրութիւնը կոչվում է ընդհանուր պատմութիւն, իսկ որևէ մի ազգի կեանքի նկարագրութիւնը կոչվում է ազգային պատմութիւն, ինչպէս պատմութիւն հայոց, պատմութիւն ռուսաց, պատմութիւն պարսից և այլն:

Ուրեմն, պատմութիւնը՝ դէսլքերի լծորդական նկարագրութիւնն է, շարսդրված զիտնական հիմունքների համաձայն, այսինքն երբ փառտերը քննադատօրէն ստուգված են և նրանց մէջ եղած ներքին կապը ցոյց տուած:

Պատմութեան աղբիւրները: Պատմութիւնը իր նիւթերը քաղում է զանազան աղբիւրներից, որոնց գլխաւորն են—կենդանի աւանդութիւններ, տարեգրութիւններ, յիշատակագրեր, կենսագրութիւններ, հայրենի և օտար ձանազարհորդութիւններ, նամակներ, զանազան տեսակ ակտեր, արխիվի նիւթեր, գիտնականների հետազոտութիւններ և այլն, նոյն իսկ լեզենդաներ: Բոլոր այդ բազմազան նիւթերը պատմագիրը ովէտք է խնամքով ուսումնասիրէ, բաղդատէ, գհահատէ և կազմէ նրանից մի ինքնուրոյն ամբողջութիւն, որի անունն է՝ պատմութիւն և որի նպատակն է՝ ծշմարտութէնը:

Պատմութեան շաղաղրութեան նղանակներ:

Պատմական փաստերի կամ նիւթերի շարադրութեան եղանակի վերաբերմամբ, նայելով թէ պատմագիրը ինչ հայեացը ունէ, երկու տարեր ուղղութիւն կամ դպրոց կայ, այն է փիլիսո-

փայական և զեղարուեստական ուղղութիւն: Փիլիտափայականը կոչվում է նույ պրազմատիկական կամ ըննադատական: Բացատրենք դրանց առընթերութիւնը: Վեր առնենք մեր հայ պատմագիրները, ոկուած Մովսէս Խորենացուց մինչեւ Զամշեանը և Ս. Պալասանեանը: Կարգալով հայ պատմութիւնները, մենք դալիս ենք այն եզրակացութեան, որ մեր պատմագիրները չեն տալիս մեզ հայ աղգի, ժողովրդի կեանքի յաջորդական զարգացման նկարագրութիւնը, այլ աւանդում են մեզ միայն զանազան ներուների, թագաւորների, գորագեանների, կաթողիկոսների անհատական պատմութիւնը, այսինքն նրանց կատարած գործերի պատմութիւնը, այնպէս որ հայոց պատմութիւնը ոչ թէ ընդհանուր հայ ժողովրդի, այլ մասնաւոր հայերի պատմութիւնն է, կամ որոշ փաստերի շարադրութիւնը: Սակայն երբ պատմաբանը չէ բաւականում միայն փաստերի շարադրութեամբ, այլ աշխատում է փաստերի շարադրութեամբ, այս կամ աշխատանում է նիւթերի մէջ եղած ներքին ցոյց տալ և այդ փաստերի մէջ եղած նպատակները, այդ տեսակ պատմաբանը կոչվում է նետեանքները, այդ տեսակ պատմաբանը կոչվում է պրազմատիկ, իսկ այդ տեսակ շարադրութեան է պրազմատիկ: Պրազմատիկ՝ պատմականակը պրազմատիկ: Պրազմատիկ՝ պատմա-

պարսաւաքան, եթէ միայն Կա պարսաւում է նրան:

Կլասիքական աշխարհի մէջ իբրև կենսագիրներ նշանաւոր էին Պլոտարխ և Կօրնէլի նեպոտ:

Պլոտարխը (I—II դար Ք. յ.), յոյն գրող, հիւպատոս էր Տրայիանոս կայսրի ժամանակական յայտնի է իր նշանաւոր կենսագրական աշխատութեամբ «Յունաստանի և Հռոմի արանց համեմատական վարքագրութիւնը» վերնագրով։ Այդ գրուածից մեզ հասել է միայն 50 կենսագրութիւն, իսկ 10-ը կորել է։

Կօրնէլի նէպոտ, կիկերոնի ժամանակակիցը, զրել է 25 կենսագրութիւն, որոնք այսօր ևս մեծ հետաքրքրութեամբ կարդացվում են։ — Հայերի մէջ, հին զրական աշխարհում, իբրև կենսագրող յայտնի է Կորիփւնը, որ զրել է ս. Մեսրոբի Վարքը։ — Նորագոյն ժամանակում, Եւրոպայում յայտնի է Երնէստ Ռնան, որ զրել է Յիսուսի կեանքը, ինչպէս և Ֆէրրար, որ դարձեալ զրել է Յիսուսի կեանքը։ Ռուսահայոց նոր գրականութեան մէջ իբրև կենսագրող աշքի է ընկնում Լէօ, որ զրել է Ստեփան Նազարեանցի, Յովաէփ կաթողիկոսի և Գրիգոր Արծրունու կենսագրութիւնները, թէև երբեմն նա հանգիստնում է աւելի պանեզերիկ, գովաբան, քան կենսագրող։

Երբ հեղինակը նկարադրում է իր սեպհական կեանքը, այդ աեսակ կենսագրութիւնը կոչ-

վում է ինկնակենսագրութիւն (autobiographie), ինքնակենսագրութեան իբրև օրինակ կարող է ծառայել Գեօտէի «Wahrheit und Dichtung» վերնագրով զրուածը, այն է «Իմ կեանքի բանասեղծութիւնը և ճշմարտութիւնը», կամ Ժան-Ժակ Ռուսոյի «Mes Confessions» (Իմ խոստովանութիւնները) աշխատութիւնը։ Հայերի մէջ ինքնակենսագրութիւն զրել է Ա. Աղայեան «Իմ կեանքի զիսաւոր գէպքերը» վերնագրով։

Ե. Շանապարհորդութիւններ

Շանապարհորդական նկարագրութիւն կոչվում է այն երկասիրութիւնը, որ բովանդակում է իր մէջ մի շարք նկարագրութիւն տաճեայն բանի, ինչ որ աեսել է հեղինակը իր ուղեորդութեան ժամանակա։

Շանապարհորդութիւնը պատմողական գրականութեան կարեւոր և ամենահետաքրքրական մասերից մինն է։ Շանապարհորդութիւնը տալիս է ընթերցողին ճոխ, բազմազան և շահագրգիռ նիւթ։ Ընթերցողը նրա մէջ գտնում է բնութեան բազմապատճեակ պատկերներ, վարք և բուրքի նկարագմատեակ պատկերներ, վարք և բուրքի նկարագրութիւն, պատմական տեղեկութիւններ, գիտնականների, գեղարուեստագէտների նկարագրութիւն, առևտորի, արդիւնաբերութեան նկարագրութիւն, նոյնիսկ վիպական պատմուածներ։ Վյդպիսով ճանապարհորդութիւնը մասամբ պատմութիւն է, մասամբ աշխարհագրութիւն և ազգագրութիւն, մասամբ ուսումնական շարագրուգրութիւն, մասամբ ուսումնական շարագրու-

թիւն, մասամբ քաղաքականութիւն և մասամբ վիպասանութիւն, այդ պատճառով, եթէ նա աւ-
ւանդում է պարզ և ամենքին մատչելի ձեռվ,
նա գառնում է ընթերցանութեան շատ գեղեցիկ
և զուարձալի՝ օգտակար նիւթ։ Ճանա զարհոր-
դութիւնը շարադրում են կամ նամակների կամ
օրագրի ձեռվ, որ ամենապարզ և սովորական
ձեն է. հեղինակը ասում է այն, ինչ որ սրտից
բղխում է, ինչ որ զգում և մտածում է ու այդ
զգացումները, մտքերը գրի է առնում անպա-
ճոյց և անարուեստակ։ Ճանապարհորդական նր-
կարագրութեան լեզուն պէտք է լինի խօսակ-
ցական, պարզ, կենդանի, բայց մշակված։ Եյտ-
տեղ մանաւանդ ժողովրդական լեզուն մեծ գեր
է խաղում, սակայն գուենկարանութիւններից խոյս
պէտք է տալ:

Եւրօպական գրականութեան մէջ նշանա-
ւոր է Մարկօ-Գոյօյի ճանապարհորդութիւնը Թա-
թարստան 14-րդ դարում, Շարդէնի ճանապար-
հորդութիւնը Պարսկաստան 17-րդ դարում։ Ռու-
սոց գրականութեան մէջ յայտնի են կարտամզի-
նի նամակները և Պուշկինի ճանապարհորդու-
թիւնը երգում։ Մեր մէջ ճանապարհորդական
շարագրութիւններ ունեն գրած Յովիանէս և
պիտկոպո Շահխաթունեան և Սարգիս եպիսկո-
պոս Հասան, Զալալեան, թէե այդ շարադրու-
թիւնները նկարագրութիւն են աւելի վանքերի
և արձանագրութիւնների։ Իրեւ խսկական և հե-
տաքրքիր ճանապարհորդութիւն կարելի է յանձ-

նարարել գ. Սրոււանձտեանի աշխատութիւնը։
Առհասարակ մեր, հայոց գրականութիւնը շատ
աղքատ է ճանապարհորդական նկարագրութիւն-
աղքատ է յանձնարարել Տուրեանի «Սև
ծովի ափերին» և լ. Սարգսեանի «Այց թիւրքաց
չայտատանին» աշխատութիւնները, Աւ. Ահարո-
նեանի «Խալիխայում» գիրքը, Ա. Միթթարեանի
«Դէպի Արարատը»։

§ 5. Հոնետորական երկասիրութիւններ

Հոնետորական կամ ժարտասան ական երկա-
սիրութիւն կոչվում այն ձառը, որ հեղինակը
սրբատառում կամ գրում է՝ համոզելու մտքե-
արտասանում կամ գրում է՝ համոզելու մտքե-
արտասանում կամքի վրա և
այդ գէպքում նա կոչվում է հոետոր կամ մեր
հայերի մէջ՝ ճարտասան։

Հոետորը ահազին նշանակութիւն ունէր կը-
լամիքական աշխարհում—յոյների և հոօմէտցի-
լամիքական աշխարհում—յոյների և հոետորը, հասարակական և պե-
ների մօտ։ Նա, հոետորը, հասարակական և պե-
տական անձն էր համարվում։ Նշանաւոր հոե-
տական անձն էր համարվում։ Պիզիսո-
տորներն են—Կիկերոն, Կիմոնիլիան, Պիզիսո-
տորներուն, Պէրիկլ, Արիստոտէլ, Դեմոս-
տէն, Պլինիուս Կրտսեր, Յովհան Ուկերերան։
Հնչալէս է բնաորոշում Կիկերոնը հոետո-
րին. «erit éléguens is, gemitadicet, ut probet, ut
delectit, ut flectat». (Խոկական հոետորը նա է,
ով շնորհք ունի ուսուցանել, դուր գալ, յուզել և
ով շնորհք ունի ուսուցանել, դուր գալ, յուզել և
թէ համոզել)։ Մի այլ տեղ Կիկերոն ասում է թէ
համոզել)։ Մի այլ տեղ Կիկերոն ասում է թէ

նա պէտք է բռնկէ՝ իրր' կայծակ, լինի արագ՝
իբրև հեղեղ, ուժեղ՝ իբրև փոթորիկ. նա պէտք
է առաջուց ըմբռնած լինէ բոլոր մեծ զիտու-
թիւնները և արուեստները: Բացի գրանից հոե-
տորից պահանջում էր անկեղծութիւն, այսինքն
խորին համոզմունք այն բանի մէջ, որի մասին
նա պէտք է խօսէ ժողովրդին: Ուրեմն հին աշ-
խարհի հոետորի գլխաւոր արժանաւորութիւն-
ներն էին—առաջինութիւն, ոզեւորութիւն, ու-
սումնականութիւն, անկեղծութիւն և անպանց
լիզու:

Հոչակաւոր են կիկերնի ճառերը 1) Կա-
տիլինիայի դէմ, որ թարգմանված է և հայերէն
Ա. Նազարեանցի ճեռքով «Հիւսիսավայլի» մէջ,
2) ի պաշտպանութիւն Միլօնի, 3) ի պաշտպանու-
թիւն բանաստեղծ Արխայի, 4) ընդդէմ Ռուլի
կամ նրա առաջարկած օրէնքի (լոչ agraria) 5) ընդդէմ կուսակալ Վերբէսի: Յունաստանում
հոչակաւոր են Դեմոսթէնի ճառերը, մանաւանդ
այսպէս կոչված «Փիլիպպիականները», ընդդէմ
Մակեդոնիայի Ֆիլիպպ թագաւորի:

Հոետորները արտասանում էին իրանց ճա-
ռերը կամ տպղային ժողովներում կամ սենա-
տում, նոյնիսկ ներկայութեամբ հզօր իշխանա-
ւորների, ըմբռուտ ամբռխի աղաղակների և զօր-
քերի սուխների առաջ և շատ անդամ իրանց
պերճախօսութեամբ, համոզիչ խօսքերով իրանց
կողմն էին գարձնում իրանց թշնամիններին: Հին
շախտիւմ պերճախօսութիւնը ճանապարհ էր

հարթում ամենաբարձր և ամենապատուաւոր
պաշտօնների համար. Կիկերնը իր հոչակաւոր
ճառերով հասաւ կվեսաօրի, պըէտօրի, էղիլի և
հիւսիսատուի պաշտօններին ու կոչվեց «Հայր Հայ-
քենեաց», որովհետեւ իր ճառով Կատիլինիայի
գէմ աղատեց Հոօմը նրա դաւադրութիւնից:
Պէրիկլը ամբողջ 40 տարի իշխեց Աթէնքի վրա
գլխաւորապէս իր պերճախօսութեան շնորհիւ:
Դեմոսթէն միայն իր հոետորական տաղանդի
շնորհիւ հազարաւոր ամբռխ քաշէր տալիս իր
շնորհից: Պէրիկլից յետոյ հանդէս եկան մարդ-
եականց մի յատուկ դասակարգ, որոնք պերճախօ-
կանց մի յատուկ դասակարգ, որոնք պերճախօ-
սութեան կանոններն էին աւանդում կամ ճար-
տասանութեան դասեր էին տալիս: Դրանք կոչ-
վում էին սովիստներ, ճարտասաններ, բայց,
կոչվում էին սովիստներ, ճարտասաններ, բայց,
վում էաւ հոչակաւոր և տաղանդաւոր ճառախօս-
ի հարկէ, հոչակաւոր և տաղանդաւոր ճառախօս-
ները այդ տեսակ դարբոցներում չէին զարգաց-
նում իրանց ձիրքը: Ապագայում սովիստները
դարձան իմաստակներ:

Ֆրանսիացիների մէջ իբրև նշանաւոր հոե-
տորներ յայտնի են Բօսուէ և Մասիյօն քարո-
ւորներ, իսկ ներկայումս Փօրէս, Պրէսանսէ:
զիչները, իսկ ներկայումս Փօրէս, Պրէսանսէ:
Մեր մէջ՝ Ներմէս Լամբրօնացին, Գըհկոր Նա-
Մեր մէջ՝ Ներմէս Երգնկացին: Մեր ժամա-
րեկացին, Յովիաննէս Երգնկացին: Մեր ժամա-
րեկացին, Նոյնիսկ կարելի է անուանել Օրմանեան
նակում հոետոր կարելի է անուանել Օրմանեան
պատրիարքին, իսկ իբրև ժողովրդական հոետոր՝
պատրիարքին, և Խորէն Ստեփանէին (այժմ հան-
հրիմեանին և Խորէն Ստեփանէին (այժմ հան-

շուշեալներ):
Հոետորական ճառը բաղկացած է լինում

հետևեալ մասերից—նախաբան, առաջարկ, բաժանումն, պատմողութիւն, ապացոյցներ, պաթէտիկական մասն և եզրափակումն:

Նախաբանը նպատակ ունի բացատրել ճառի պատճառը, առիթը, ինչպէս և գրաւել ունկնդիրների բարեհաճ ուշադրութիւնը:

Առաջարկը պարունակում է իր մէջ ամբողջ ճառի գլխաւոր բովանդակութիւնը, նաև բացատրվում է կարծ և պարզ:

Բաժանումը պարունակում է ճառի ամբողջ կարգը: Ճառախօսը, բաժանելով ճառը մասերի, հեշտացնում է ունկնդիրների ուշադրութիւնը, որովհետեւ նրանք հեշտ կարող են տեսնել նախընթացի կապակցութիւնը յաջորդի հետ: Դրա համար պէտք է բաժանման մէջ պահպանել յաջորդականութիւն, այն է անցնել հասարակ առարկաներից՝ դժուարը:

Պատմութիւնը—գործի հանգամանքների շարայրութիւնն է կամ բացատրութիւնը: Նա պէտք է պարզ լինի, ամփոփ, որպէս զի ունկնդիրները կարողանան ըմբռնել գործի ամբողջ ընթացքը և համոզվել հետևեալ ապացոյցներով:

Ապացոյցները — ճառի փիլիսոփայական տարրն են կազմում: Նրանք հիմնվում են բանականութեան համոզմունքների վրա: Ապացոյցների դասաւորութեան համար գործ է ածվում երկու եղանակ—վերլուծողական և բաղադրական (անալիտիկական և սինթէտիկական): Առաջին եղանակով ճառախօսը անցնում է մասնաւորից՝

ընդհանուրին, երևոյթներից՝ օրէնքներին, գործադղութիւններից՝ պատճառներին—մի խօսքով, նա ուղղակի չէ ցոյց ապահով իր նպատակը, այլ յաջորդաբար պատրաստում է ունկնդիրներին՝ այդ նպատակին: Երկրորդ եղանակով, ճառախօսը ուղղակի որոշում է նպատակը, ընդհանուրից անցնում է մասնաւորին, պատճառներից՝ երեւոյթներին:

Պաթէտիքական (կրքալին) մասով հին հոկտեմբերը նպատակ ունեին շարժել ունկնդիրների սիրտը: Այդ խօսքը ծագում է յունական «Պաթոս»—կիրք—բառից: Ուժեղ և համառոտ գարձուածներ—առա պաթէտիքական մասի առանձնայակութիւնը:

Եզրափակումը կամ կրկնում է համառոտաբար ամբողջ ճառի էութիւնը, կամ եզրափակցութիւն է հանում նստակին բոլոր ասածներից: Երբեմն էլ հոկտեմբերը եզրափակում էին իրանց ճառերը դիմելով աստուածներին կամ կայսրներին:

Հոկտեմբական ճառի կամ ճարտասանութեան տեսակները—Հին ժամանակ ճարտասանութեան տեսակը երեք էր, յորզորական կամ խորհրդատու, պատմողական կամ ապացուցական և դատաստանական:

Յորդորական ճառերը արտասանվում էին հասարակական գործերի առիթով, երբ պէտք էր պատերազմ՝ յայտարարել հաշտութիւն կնքել, օրէնք մտցնել կամ փոխել. այդ ճառով հը-

ոետորը նպատակ ունէր համողել ժողովուրդը
այս և այն գործի անհրաժեշտութեան մէջ. կամ
խորհուրդ էր տալիս ընդունել և կամ մերժել
այս և այն առաջարկը, ձեռնարկութիւնը:

Պատմողական կամ ապացուցական ճառերը
պարունակում էին գովասանք, ներբող յայտնի
անձնաւորութեան՝ հայրենիքն մասուցած ծա-
ռայութիւնների համար:

Դատաստանական ճառերը նպատակ ունէ-
նէին ամբաստաննել կամ պաշտպանել քաղաքա-
ցուն յանուն օրէնքի:

Ճառերի այդ երեք տեսակը պահել են ի-
րանց նշանակութիւնը և մինչև այսօր, բայց նոր,
քաղաքակիրթ ազգերի մէջ առաջ են եկել և հե-
տեւալ տեսակները.

1. Քաղաքական ճառեր:—Արտասանվում են
այն երկիրներում, ուր պետական գործերը
վճռվում են պարլամենտներում, կօնքրէմներում,
ինչպէս Անգլիա, Ամերիկա և առհասարակ սահ-
մանագրական ու հանրապետական երկիրներում:
Իբրև քաղաքական ճառախօսներ և հոետորներ
յայտնի են Գլազուտն, լորդ Ռօզբրի, Գամբէտտա,
Ժիլ Սիմոն, Վ. Հիւգո, Բերէլ, Ժօրէս և այլք:
Ուսւաստանում, ուր կառավարութիւնը միապե-
տական է, քաղաքական ճառերի տեղը բանում
են բարձրագայն մանիֆէստները, օրինակ Ալեք-
սանդր 1 կայսրի մանիֆէստը՝ Նապոլէօնի ար-
շաւանքի գէմ, Ալեքսանդր II կայսրի մանիֆէս-

տը, 1861 թ. փետրվարի 19-ին, ձորտերի ազա-
տութեան համար:

2. Ակադէմիական ճառեր.—Ճեմարաններում,
համալսարաններում, գիտնական հաստատու-
թիւնների մէջ արտասանված հանդիսաւոր ճա-
ռերը, գիտնական բովանդակութեամբ, որոնց նը-
պատակն է բանալ, ցոյց տալ ճշմարտութիւնը
գիտութեան, բարոյականութեան և գեղարուես-
տի մէջ:

3. Դատաստանական ճառեր.—Նրանց նը-
պատակն է մեղադրել կամ պաշտպանել ամբաս-
տանեալին յանուն օրէնքի և ապացոյցների: Դա-
տաստանական ճառերը գոյութիւն ունեն միայն
այն երկիրներում, որտեղ մտցրված է հրապարա-
կական կամ յայտնի դատավարութիւն: Ամենից
շատ ծաղկած դրութեան մէջ է գտնվում դա-
տաստանական ճարտասանութիւնը Ֆրանսիայում,
որտեղ կան համաշխարհային հոչակ վայելող
վաստարաններ, ինչպէս Ժիւլ Ֆավը, Լաբօրի,
Վալդէկ Ռուսսօ: Մուսաստանում հոչակաւոր են
Սպասովիչ, Կօնի, Պլեվակօ:

4. Ներքողական ճառեր կամ պանէզիրիկ-
ներ: Նպատակն է վառ գոյներով նկարագրել որ
է նշանաւոր անձի, գործչի վեհ յատկութիւն-
ները: Եթք ներբողը գրվում է հանգուցեալի հա-
մար և նրան կցվում են նաև կենսագրական տե-
սակութիւններ, նա կոչվում է զավանական,
զեկութիւններ:

5. Սպիցներ—անգլիական բառ է, այդպէս

կոչվում են համառօտ, բայց գորեղ զգացմունք
արտայայտող ճառերը:

6. Եկեղեցական քարոզներ, ըեմբատացութիւն: Քրիստոնէական ազգերի մէջ ամենից շատ տարածված հոետորական ճառերը կազմում են եկեղեցական քարոզները, որոնք ծագել են միայն քրիստոնէութեան ժամանակից: Հոետորական ճառերը կամ ձարտասանութիւնը հայերի մէջ արտայայտվել են գրեթէ բացառապէս քարոզների մէջ և մեր նշանաւոր հոետորները եղել են հընչակաւոր քարոզիչներ—Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրանացի, Յովհան Երզնկացի, Գրիգոր Տաթևացի, Մատթէոս կաթողիկոս, Խրիմեան, Օրմանեան, Խորէն Ստեփանէ:

Ժանօթութիւն: Հին աշխարհի մեզ թողած ձարտասանութեան ամենանշանաւոր աշխատութիւնը Արիստոտելի զիլքն է «Ծարտասանութիւնն մասին»: Այդ ձարտասանութիւնը բաժանված է երեք մասի, որոնց մէջ աւանդվում են ձարտասանութեան կամ հոետորական արուեստի էութիւնը ու կանոնները:

§ 6. Փիլիսոփայական երկասիրութիւնները

Փիլիսոփայական կամ հւտումնական կոչվում են այն երկասիրութիւնները, որոնց մէջ ձշմարտութիւնը ապացուցանվում է խիստ-լոգիքական կերպով: Ուսումնական երկասիրութիւնների շարքին են պատկանում ուսումնասիրութիւնները գիտութեան և գեղարուեստի զանազան շրջաններում:

Ա. Փիլիսոփայական երկասիրութիւնների շարադրութիւններ.

Փիլիսոփայական կամ իմաստանիրական աշխատութիւնների մէջ մտքերի բացառութիւնը, շարայարութիւնը կատարվում է երկու եղանակով—վերլուծողական և բաղադրական: Վերլուծողականը գնում է երկոյթներից գէպի օրէնքները, գէպքերից գէպի կանոնները, մասնաւորից գէպի ընդհանուրը, որոշից գէպի անորոշը, յայտնից գէպի անյայաբ: Օրինակ, Հայոց պատմութեան մէջ երեցած հերոսների և նրանց կատարած հայրենասիրական գործերի մասին խօսելով, մենք անցնում ենք խօսելու առհասարակհայրենասիրութեան մասին: Բաղադրական եղանակը ցոյց է տալիս մտանաւոր երկոյթների զարգացումը մի ընդհանուր սկզբից: Մենք, մեր մտածողութեան մէջ, անցնում ենք կանոնից գէպի օրինակը, պատճառից՝ գործողութեան, ցեղական հասկացողութիւնից՝ տեսականին և միասնականին: Օրինակ, մենք կամենում ենք ապահուցաներ, որ մարդ հայրենասէր պէտք է լինի, կամ հայր պէտք է սիբէ իր ազգը, եկեղեցին, կամ հայր պէտք է սիբէ իր ազգը, եկեղեցին, այլ բերում հայոց և ընդհանուր պատմութիւնները բերում ենք և մասնաւոր հայրենասէրնից, նկարագրում ենք մասնաւոր հայրենասէրների յատկութիւնները և այլն:

Բ. Փիլիսոփաների հայրը համարվում է յոյն փիլիսոփայ Պղատոնը (ծնվեց 429 ա. թ. ա. և մեռաւ 345 ա. թ. ա.): Նրա գրուածները, թւով

մօտ 40, ծառայում են իբրև օրինակ վիլիսովայական ստեղծագործութեան։ Իր 20 տարեկան հոսակից մինչև 80 տարեկան լինելը, նա ամբողջ զովին նուրից իրան վիլիսովայութեան ծառայութեան։ Նա Սոկրատի աշակերտն էր, իսկ ինքն ունեցաւ Արքաստուէլի, Լիկուրդի և Դեմոսթէնի պէս աշակերտներ։ Նրա վիլիսովայական գըրուածները շօշափում են գիտութեան և բարոյականութեան վերաբերեալ զանագան հարցեր, այն է առաքինութեան, ազնւութեան, հոգու անմտհութեան, արգարութեան և անարդարութեան, աղօթքի, գեղեցկութեան, բանաստեղծութեան մասին։

Գ. Վիլիսովայական երկասիրութիւնների տեսակները,

Առ հասարակ, այն երկասիրութիւնները, որոնց մէջ տիրապետող տարրը խորհրդածութիւնն է, վերաբերում են վիլիսովայութեան, ինչպէս և այն երկասիրութիւնները, որոնց մէջ տիրապետող տարրը—քննադատութիւնն է կամ կրիտիկան։ Խորհրդածական երկասիրութիւններին վերաբերում են։

1) Գիտնական կուրսերը կամ դասընթացները, այն է գասազբերը և ձեռնարկները, որոնց մէջ բացատրվում է որևէ մի գիտութեան լիակատար ընթացքը, օրինակ մաթեմատիկայի, քիմիայի, բուսաբանութեան և այլն։ Գիտնական դասընթացները լինում են դպրոցական և ուսու-

նական։ Դպրոցական ձեռնարկները յարմարեցրված են զանագան մանկավարժական պահանջների (օրինակ Պալասանեանի «Հայոց պատմութիւնը»), իսկ ուսումնական դասընթացները ինկատի ունեն միայն գիտութեան շահերը (օրինակ, Եյգընեանի «Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի»)։

2) Գիտնական երկասիրութիւններ, որոնց ամեն մինը զբաղվում է որևէ մի առանձին գիտնական հարցով. օրինակ, «արիական ցեղագիտութեան», «հայոց լեզուի ծագումը», «գեղագիտութիւնների այց պատմութեան ժամանակը», «աստղների շարժման տեսութիւնը» և այլն։ Երկասիրութիւնների այս մասը անագին անշանակութիւն ունի, որովհետև գիտութեան առաջադիմութիւնը կախված է մասնաւոր հարցերի մշակումից։

3) Հրապարակախօսական յօդուածներ, այն է այնպիսի յօդուածներ, որոնց մէջ հեղինակը խօսում է կամ խորհրդածութիւններ է անում ժամանակից հասարակական և պետական կեանքագիտութիւններ եղել են—Ա. Նազարեան, Մ. պարակախօսներ եղել են—Ա. Նազարեան, Գրիգոր Արծրունի, Խորէն Ստենիանէ, Արփիար Արփիարեան։

4) Քննադատական յօդուածներ կամ կրիտիկա։ Կրիտիկան կամ քննադատութիւնը գիտութեան և գեղարուեստի արտադրութիւնների ընդութիւնն է, հիմնված բանականութեան ընդ-

հանուր սկզբանքների վրա։ Խայն մտքով կրի-
տիքական կոչվում են բոլոր այն յօդուածները,
որոնց նպատակն է՝ մարդի հոգիոր գործունէու-
թեան արտադրութիւնների գիտասութիւնը։ Նեղ
մտքով, կրիտիքական յօդուածներ կոչվում են
նրանք, որոնք գնահատում են գեղարուեստի—
բանաստեղծութեան, նկարչութեան, երաժշտու-
թեան և այլ—արտադրութիւնները։

Որիէ մի առանձին կամ գիտական երկա-
սիրութեան քննադատութիւնը կոչվում է ըԵցնն-
գիա, մատենախօսութիւն։

Կրիտիկոսի կամ քննադատի կոչումը և շատ
կարեոր է, և շատ ծանր ու գժուար։ Իսկական
քննադատը պէտք է ունենայ թափանցող և ու-
ղիղ միտք, որով դեկավարվի իր դատողութիւն-
ների մէջ. զգացումը ցոյց է տալիս նրան զե-
նեցկութիւնը այնուեղ, ուր կայ, բոլոր իր գու-
նաւորութիւնների մէջ։ Խելքը որոշում է այդ
գեղեցկութեան խակական գինը և թոյլ չէ տալիս
կուրանալ կեղծ փայլով, որ երբեմն խակական
գեղեցկի տեղն է բռնում։ Կրիտիկոսը գիտէ գե-
ղարուեստի բոլոր կանոնները, ուսումնասիրել է
նրա ընտիր օրինակները, բայց իր դատողու-
թիւնների մէջ ստրկաբար չէ հետևում այդ օ-
րինակներին և կանոններին։ Նրա հոգու մէջ գո-
յութիւն ունէ իր սեահական իդէալը (օրինակը),
որի հետ և համեմատում է գեղարուեստաւորի
ամեն մի նոր արտադրութիւնը, բայց այդ սեպ-
հական իդէալը մի կատարելութիւն է, որ կազ-

միած է բոլոր այն գեղեցկութիւններից, որ կրի-
տիկոսը նկատել է գեղարուեստի արտադրու-
թիւնների մէջ։ Ի հարկէ, այդ տեսակ կրիտի-
կոսների թիւը շատ քիչ է. նրանք նոյնքան հա-
գուադիւտ են, որքան այն մեծ գեղարուեստա-
գուադիւտ են, որոնց ստեղծագործութեամբ նրանք
սովոր են հիանալ։

Իբրև նշանաւոր կրիտիկոսներ յայտնի են—
Լէսովինդ (1724—1781), Սէն-Բիօվ, Օգուստ
Կանտ, Տէն և ալին. Ռուսաց մէջ յայտնի են՝ Վ.
Բէլինսկի, Պիսարէվ, Դոբրոլիւքով։ Հայոց զրա-
բէլինսկը և հայ մտաւոր կեանքը գեռ ան-
կանութիւնը և հայ մտաւոր կեանքը գեռ
մշակ լինելով, գեղարուեստը գեռ շատ քիչ զար-
գացած լինելով մեր մէջ, մենք չունենք իսկա-
կան կրիտիկոսներ. զոնէ մենք չենք կարող
կան կատարել եւրոպական մտքով հասկաց-
մատնացոյց լինել եւրոպական մտքով հասկաց-
վող որիէ հայ քննադատի վրա։ Մենք ունենք
ուռ այժմ միայն ըԵցննզենաներ, զբախուններ, ու-
ռոնց մէջ աչքի էր ընկնում հանգուցեալ Ա. Պա-
լարաննեանը, իսկ այժմ Լէօն:

հիմքը կազմում է պատմուածք արտաքին աշխարհի մասին, երկրորդ տեսակ քերթուածների հիմքն բանաստեղծի անձնական զգացումն է, իսկ երրորդ տեսակ քերթուածների հիմքը՝ գործողութիւնն է:

Ա. Հպիքական սանաստեղծութիւն.

§ 3. Հպիքական քերթուած (վիպասանական) կամ էպոս (յունական «էպօս» բառը, որ նշանակում է վեպ, պատմուածք) կոչվում է այն երնակութիւնը, որ սանաստեղծական ծերով խօսում է արտաքին աշխարհի դէպքերի մասին:

Հստ իր ծագման, էպոսը բաժանվում է երկու տեսակի. ա) Ժողովրդական կամ սանատոք) գոյականական կամ գրատո:

Ժողովրդական կամ սանատոք էպոսը.

§ 4. Ժողովրդական կամ սանատոք կոչվում են այն Հպիքական արտագրութիւնները, որ ըստեղծում, յօրինում, շարադրում է ինքն ժողովուրդը բերանացի, և բերանացի էլ աւանվուրդը սերնդից սերունդ: Ժողովրդական էպիգում սերնդից սերունդից շատերը կազմվել քական արտագրութիւններից շատերը կազմվել են ամենափոք հնութեան ժամանակ և նոյնիսկ գրի երեալուց առաջ: Ենչպէս լեզուն ամբողջ գրի երեալուց առաջ: Ենչպէս և ժողոազգի ստեղծագործութիւնն է, այնպէս և ժողովրդական բանաստեղծութիւնը ոչ թէ մի անհատի, այլ ամբողջ ժողովրդի ստեղծագործութիւնն է: Ինչպէս լեզուն աւանդվում է սերնդից սերունդ, այնպէս և ժողովրդական բանաս-

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

(Պիէտիկա)

§ 1. Նկարագրել գեղեցիկը, շքեղը խօսքով, նշանակում է բանաստեղծել: Ուրեմն ըսնաստեղծութիւն կամ պօէզիա նշանակում է գեղեցիկ, շքեղի նկարագրութիւնը խօսքով. «պօէզիա» յունարէն բառ է և նշանակում է ստեղծագործում եմ»:

Բանաստեղծը կամ պուէտոսը (րօետ) իր երեակայութեան պժով ստեղծում է նոր աշխարհ կեսնքի իրական փաստերի հիման վրա. Նա կարող է և հնարել գեպքերը, բայց միայն նման լինեն ճշմարտութեան: Ծշմարտանմանութիւնը — բանաստեղծական քերթուածի էական յատկանիշն է:

§ 2. Բանաստեղծութեան տեսակները: Բանաստեղծական երկասիրութիւնները կամ քերթուածները բաժանվում են երեք զիսաւոր ճիւղերի — ա) էպիքական, բ) լիրիքական և գ) դրամատիքական: Առաջին տեսակ քերթուածների

աեղծութիւնը աւանդվում է բերանից բերան, սերնդից սերունդ. նա պահվում է ժողովրդի յիշողութեան մէջ անգիր, մինչև որ հնութեան որ ևէ մի սիրահար կամ հաւաքող զրի է առնում նըրան: Այսպէս օրինակ, հանգուցեալ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանը հաւաքեց և զրի առաւ «Խաւիթ Մհերի» ժողովրդական բանաստեղծութիւնը: Մ. Խորենացին հաւաքեց և զրի առաւ ազգային նախնական բանաստեղծութեան մի քանի հատուկտորներ և մի քանի երգեր:

Ժողովրդական էպոսը կամ վէպը այն յատկութիւնն ունի որ 1) նրա մէջ գերակշռող է հանդիսանում մտացածին, ժանտաստիկական տարը. 2) նա խստ օրէկտիվ է, այսինքն հեղինակի անձնաւորութիւնը բոլորովին չքացած է նրա մէջ, չէ երեսում, չը կայ ամենեին քնարական (լիրիքական). առար. հեղինակը ոչ մի տեղ իր մասին ոչ ինչ չէ խօսում, չէ արտայայտում իր անձնական զգացումները և ցանկութիւնները, ոչ ևս իր դասողութիւնները:

§ 5. Ժողովրդական էպոսի գլխաւոր տեսակները.

Այդ տեսակներն են. ա) առասպել կամ հէքեաթ. բ) վիպասանական երգներ կամ խաղներ, գ) պատմական երգեր. դ) հանելուկներ և ե) առածներ:

ա) Առասպել կամ հէքեաթ.

Առասպելը կամ հէքեաթը կազմում է ժո-

ղովրդական էպիքական բանաստեղծութեան ամենաընդարձակ մասերից մինը: Հէքեաթները ներկայացնում են անմեղ, միամիտ ֆանտաստիկական զրոյցներ, մտացածին բան—առասպել, բայց ուշադրութեամբ քննելով, մենք կը տեսնենք, որ հէքեաթը կարևոր նշանակութիւն ունի ժողովրդական կեանքի մէջ: Նախնական մարդը, գտնվելով մտաւոր զարդացման ստոր աստիճանի վրա, մանկական շրջանում, անկարող հասկանալ իրան շըջապատղ բնութեան ոյժերը ու երևոյթները, ոկսեց աստուածացնել նրանց, աստուածային գերբնական և հրաշալի զոյսութիւն վերագրել նրանց: Այդ է պատճառ, որ հէքեաթվերագրել նրանց: Այդ է պատճառ, որ հէքեաթների սեղծած աշխարհը իրական կեանքի հետ յարաբերութիւն չունի և մտացածին է. նրա մէջ յարաբերութիւնը մասնի և առաջածին է. նրա մէջ նապելները մասնի և առաջածների մասին և առասպելազրոյցների աստուածների մասին և առասպելազրոյցների աստուածների մասին, իսկ մարդը լիսոյթների ու ոյժերի մարմնացումն, իսկ մարդը սկսեց մարմնացնել բնութիւնը այն պատճառով, ինչպէս ասացինք, որ չէր հասկանում նրա հընչպէս ասացինք, որ չէր հասկանում նրա հընչութեամբ և նրա անփոփոխելի օրէնքները: Շատ հէքեաթների մէջ խօսվում է անմահական ջրի մասին, որ բժշկում է վերքեր, յարութիւն է տալիս մեռեալներին, խօսում է անասունների թռչունների մասին և կենդանիներին յատկացնվում են մարդկային կերպարանք ու յատ-

կութիւններ—խեք, զգացմունք, խօսելու ձիրք և այլն։ Այդ հէքեաթները կենդանիների մասին պարունակում են իրանց մէջ հետքեր խորին հնութեան, մարդկային կեանքի այն նախնական շըջանից, երբ նա որսորդական և խաշնարած կեանք էր վարում, երբ նա երևակայում էր իրան բնութիւնը նոյնպէս կենդանի, ինչպէս ինքն էր և հաւատում էր թէ կենդանիներն ևս իր նման խօսում, գործում, մտածում են։ Այդ պատճառով հէքեաթները կամ առասպելները, ըստ բովանդակութեան, կարող են բաժանվել մի քանի խմբերի, այն է 1) միջադահան, 2) կենդանական, 3) բարոյախօսական հէքեաթներ։

Միթական հէքեաթները կամ առասպելները ներկայացնում են ֆանտաստիկական զրոյց, որի հիմքում կայ մի հին միթ պայծառ աստուածութիւնների խաւարինների հետ ունեցած կուի մասին։ Կենդանական հէքեաթները ներկայացնում են զրոյցներ կենդանիների սխրագործութիւնների մասին, իբրև բանական արարածների, նրանց ճշգրիտ բնագրուական գծերով։ Բարոյախօսական հէքեաթները թէկ դարձեալ շատ միթական, ֆանտաստիկական տարր են պարունակում իրանց մէջ, բայց գլխաւորապէս ի նկատի ունեն որևէ բարոյական միտք։ Հարութիւնը միշտ պատճփում է, առաքինութիւնը վարձատրվում և այլն։

Հէքեաթները ներկայացնում են և կենցաղական նշանակութիւն, նրանց մէջ արայացտ-

վում են այս և այն հայեացքները ընտանեկան կեանքի և ընկերական զանազան յարաբերութիւնների մտալին այնպէս, ինչպէս իրական կեանքի մէջ եղել են և ցոյց են տալիս ժողովրդի հին, նախնական կեանքի զանազան սովորութիւնները, համկացողութիւնները։

Այդպիսով հէքեաթները կամ առասպելները իրանց բարոյական ուղղութեամբ ունեն մանկավարժական ու դաստիարակչական մեծ նշանակութիւն, որովհետեւ նրանք տուատ նիւթ են մատակարարում երեխաների երևակայութեան և բարոյական գարգացման համար։ Նրանք ունեն բարոյական մեծ նշանակութիւն ժողովրդի և պատմական մեծ նշանակութիւն նախնական կեանքի, աշխարհայեցքի, սովորութիւնների ուսումնամիբութեան համար։ Դեռ Պատօն փելիխոսոփան, Քրիստոսից Վ դար առաջ, խորհուրդ էր տալիս յոյն մայրերին պատմել երեխաներին միթեր և առասպելներ և երեխաները չափազանց սիրում են լաել հէքեաթները իրանց պապից, տատից, մօրից։ Այդ պատճառով բանց պապակիրթ ազգերը ուշադրութիւն են դարձ քաղաքակիրթ ազգերը ուշադրութիւն հէքեաթները, ընտձըել հաւաքել ժողովրդական հէքեաթները, նըստըել լաւագոյնները և հըստարակել։ Շատ գրողներ էլ աշխատել են կազմել մշակված հէքեաթները, պահելով ժողովրդական ոգին, օրինակ, Գրիմի պահելով ժողովրդական ոգին, օրինակ, Գրիմի պահայրների հէքեաթները, Գերմանիայում։ Անեղբայրների հէքեաթները, Գանիայում, որոնք թարգուշընի հէքեաթները՝ Գանիայում, որոնք թարգուշընի հէքեաթների մի մասը թարգմանվեց գէրսընի հէքեաթների մի մասը թարգմանվեց

վերջերս հայերէն և լոյս տեսաւ Հ. Առաքելեանի «Հանրամատչելի գրադարանի» իբրև և գիրք (Թիֆլիս, 1904): Խուսաց բանաստեղծները՝ Ժուկովսկի և Պուշկին, Չարունակ զիմում էին ժողովրդական հէքեաթներին և նրանց մէջ որոնում բարձր բանաստեղծութեան իդէալներ. Պուշկինը իր գեղեցիկ առասպեկլը «Զկնորսի և ձկնիկի մասին», որ հայերէն գեղեցիկ կերպով թարգմանել է Ղ. Աղայեանը «Ոսկէ ձկնիկ» վերնագրով, վիրցրել է իր գայեակի պատմած հէքեաթից:

Հայերի մէջ ժողովրդական հէքեաթներ հաւաքել և հրատարակել է Տ. Նաւասարդեանը և 1884—1891 թ. ընթացքում հրատարակել է 8 գիրք: Հայ ժողովրդական հէքեաթները, սովորաբար, սկսվում են այսպէս «Եղել է և չէ եղել» կամ «Կար ու չը կար»—խօսքեր, որոնք շատ ճշգրիտ կերպով ցոյց են տալիս առասպեկլի յատկութիւնը:

բ) Վիպասանական երգեր կամ խաղեր.

§ 6. Վիպասանական երգեր կամ խաղեր կոչվում են ժողովրդական այն գրոյցները, որոնց մէջ ժողովուրդը պատմում է, թւում, համարում, երգում թագաւորների, իշխանների, զիւցազների գործերը, կամ իր կեանքի մէջ պատմած նշանաւոր դէպքերը. ուրեմն վիպասանական երգերի կամ խաղերի մէջ ժողովուրդը ժանտապիկական պատկերներով խօսում է որ և է մի պատմական եղելութեան մասին, բայց այդ եղելութիւնը նա պատմում է այնպէս, ինչ-

պէս ինքն է հասկացել, ըմբռնել, տալով նրան գերբնական և հրաշալի կերպարանք: Այն անձը, հերոսը, որի մասին խօսվում է, դառնում է ժողովրդի երեակայութեան մէջ գիւցազն, աստուածային ծագումն ունեցող. ընութեան երեսյթների կամ “պատահարների” գէմ ունեցած կոփւը գառնում է կոփւ՝ դեերի, վիշապների, հսկաների դէմ: Երբ խօսվում է դիւցազների մասին, առասպեկրգը կոչվում է դիւցազնական կամ առասպեկրական, որ վիպասանական բանաստեղծութեան մէջ ամենահինն է հանդիսանում, որովհետև նա էր ժողովուրդը ամեն մի բանի մէջ ձգտում երբ ժողովուրդը ամեն մի բանի մէջ ձգտում էր առանել գերբնականը և հրաշալին, երբ նա, իր մեսնել գերբնականը կամ հրաշալին էր տալիս, տառեսած բնական ոյժերին կեանք էր տալիս, տառուածայնում նրանց կամ դիւցազնական պատկերը ընծայում: Երբ գիւցազնուները կուում են, կեր ընծայում: Երբ գիւցազնուների, դեերի, վանրանք կուում են չոր ողիների, դեերի, վանրանք կուում են զար վիթխարի գագանների, վիշապների գէմ:

Վիպասանական երգերը պահվում էին ժողովրդի յիշողութեան մէջ և երգում էին գուսանները, աշուղննը, ուստի և կոչվում էին հայերի մէջ նաև գուսանական երգ, թուել աց հայերի մէջ, անշուշտ, բազմաթիւ են երգ: Հայերի մէջ, անշուշտ, բազմաթիւ են դեկ այդպիսի երգեր, բայց մեզ հասել են միայն դեկ այդպիսի երգեր, օրինակ «Վահագնի» մի քանի հատուկարոններ, օրինակ «Վահագնի» մասին երգի մի կտորը, այն է «Երկնէր երկին երկիր, երկնէր և ծիրանի ծով», և այլն:

գ) Պատմական երգներ.

§ 7. Պատմական երգներ կոչվում են իրական և պատմական անձերի ու դէպքերի մասին երգերը: Այդ պատմառով նրանք աւելի ուշ են ծագում ժողովրդի մէջ, քան վիպասանական, դիւցազնական երգերը, այսինքն այն ժամանակ, երբ ժողովուրդը ոտք է կոխում պատմական ասպարէզի մէջ, երբ նրա աշխարհայեացքը աւելի լայնանում է: Իրանց կազմութեամբ, նրանք նրան են դիւցազնական երգերին, բայց էութեամբ տարբերվում են նրանցից այն բանով, որ նրանց մէջ ֆանտաստիկան, երևակայական տարրը աւելի քիչ է և հանդէս է գալիս պատմական տարրը: Օրինակ, պատմական երգեր են — «Անգեղ Տան Տորք նահապետի» վրա երգածը, Արտաշէս թագաւորի մասին երգը «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ» և այն, «Տեղ ոսկի տեղայը ի փեսայութեան Արտաշէսի», Վարդգէսի վրա երգը «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկ ի Տունաց գաւառէն» և այն:

Այս պատմական երգերը կազմվել են որոշ պատմական շրջաններում, երբ որևէ մի պատմական դէպք առանձին զօրեղ տպաւորութիւն է գործել ժողովրդի վրա: Նրանք թէկ փաթաթված են ֆանտաստիկան պատեանով, բայց այդ պատեանի միջից երևում է պատմական մի դէպք, իսկապէս գոյութիւն ունեցած դէպք:

գ. Ե) Հանելուկներ եւ առածներ:

§ 8. Հանելուկը այլաբանական (ալէգօրիական) մի արտայայտութիւն է, որի մէջ մի առարկայ նկարագրվում է մի ուրիշ առարկայի սիջոցով, որ նրա հետ որևէ, թէկուզ խիստ հեռաւոր, կապ ունի օրինակ:

«Ճերմակ տակառիկ, մէջն երկու կերպ ըմպելիք»:

«Վերեկից երթիկ, ներքեմից դռնակ, մէջտեղում ջուր ու կրակ»:

«Մէկ շէնք ունեմ բարձր ու շարժուն, ներքւ ունի չորս հատ սիւն, մի դուռ փոքրիկ, նեղ, գալարուն, վրան շքեղ մի վերնատուն»:

§ 9. Առածները կոչվում են այն կարճ, ուրամիտ ասացուածները, որոնցով ժողովուրդը արտայայտում է իր կենցաղական իմաստութեան կամ փորձառութեան մասին մտքեր, դատողութիւններ: Օրինակ «ամեն կլօրը խնձոր չէ». «Ամեն օր տատը գաթայ չի ուտիլ». «գողն ինչ կուզի, մութ գիշեր», «գիծը գատի, խելօքն ուտի», «թունդ քացախը իր ամանը կը ճաքացնի» և այն: Առածների մէջ ամբողջ փիլիսոփայական մտքեր կան:

Հանելուկները և առածները պատկանում են բանաստեղծութեան, որոինեակ պատկերաւոր են, բանաստեղծական ձև ունեն, գրեթէ միշտ չա-

փական են և նոյնիկ յաճախ ոտանաւոր, — «խօսքը մենծին, ջուրը պստկին»: — «թանը կերաբ, արդարացար»: Իսկ նրանք պատկանում են էպիքական բանաստեղծութեան, որովհետեւ, նախ՝ առարկայական (օբէկտիվ) բնաւորութիւն ունեն, երկրորդ՝ հանելուկների և առածների սկզբնական ծագումը կապված է էպօսի հետ. հին ժամանակներում հանելուկները և առածները առանձին էին կազմվում, այլ նրանք հատուած են, մասն մի որևէ էպիքական, վիպասանական պատմուածքի. այդ մասը, հատուածը յետոյ սկսել է կտոր-կտոր տարածվել ժողովրդի մէջ:

ծանօթութիւն: Ժողովրդական էպիքական արտադրութիւնները — հէքիաթները, դիւցազնական երգերը, խաղերը, պատմական երգերը — չը պէտք է խառնել այն հէքիաթների, երգերի, խաղերի հետ, որոնք զբած են ժողովրդական ողով, այսինքն ժողովրդականի հետևողութեամբ, մասնաւոր անձերի, գրողների ձեռքով. օրինակ Դ. Աղայեանը դրել է «Ճորք Անգեղը»: Դա որքան էլ մօտ լինի ժողովրդական երգին, բայց չէ կարող կոչվել ժողովրդական, որովհետեւ նրա ստեղծողը ժողովուրդը չէ, այլ մասնաւոր անձն է զբող:

II. Գրականական կամ գրաւոր էպոս.

§ 10. Գրականական կամ գրաւոր էպոս, իբրև հակագիր ժողովրդական կամ ըանաւոր էպօսին կոչվում են այն էպիքական արտադրու-

թիւնները, որոնք ստեղծվում են ոչ թէ ժողովրդի, այլ մասնաւոր անձերի, անհատների — զրողների ձեռքով: Նա կոչվում է նաև գեղարուելական էպոս: Այդ արտադրութիւնները գրաւոր կոչվում են նրա համար, որ չեն յօրինվում բանաւոր, բերանացի, այլ գրաւոր:

Գրականական էպօսը տարբերվում է ժողովրդականից ոչ միայն իր ծագումով և աւանդման եղանակով (գրաւոր, իսկ միւսը բանաւոր), այլ և ուրիշ յատկութիւններով, այն է.

ա) Գերակշողը նրա մէջ ընական յօրինուածքն է և ոչ երևակայականը (թէև գրականական էպօսի մի քանի տեսակների մէջ, օրինակ առակների, բալլագների մէջ, երևակայականը հանգէս է գալիս).

բ) Գրականական էպօսի շատ արտադրութիւնների մէջ օբէկտիվականութիւնը (առարկայականութիւնը) խիստ չէ. յաճախ հեղինակները ընդհատում են պատմուածքը իրանց նկատողութիւններով, գաաողութիւններով, զգացումների արտայայտութեամբ, իրանց յիշողութիւններով:

§ 11. Գրականական կամ գեղարուեստական էպօսի դիմաւոր տեսակներն են — 1) առակ, 2) պօէմա, 3) բալլագա, 4) իղիլիա, 5) ըօման կամ վէպ, 6) վէպիկ, 7) պատմուածք:

1. Առակ.

Առակը մի փոքրիկ այլաքանական պատ-

մուածք է, որ խրատողական նպատակով, նկարագրում է որ եւ է մի երեսոյթ մարդկային կեանքից կենդանիների, անշունչ առաջկաների կամ մարդկանց մէջ որպէս թէ տեղի ունեցած հէպքերի պատկերով։

Առակների իդէան եւ ձեւը։ Իւրաքանչիւր առակ երկու տարրից է բաղկացած. ա) ալլեգօրիա (այլաբանութիւն) և բ) բարոյախօսութիւն, մօրալ (այսինքն խրատողական, բարոյական տարրը)։ Առաջինը արտադրութեան բանաստեղծական ձեն է, երկրորդը—արտադրութեան իդէան է, որ յարաբերութիւն ունի մարդկային կեանքի հետ։ Այդ պատճառով ժամանակակից գեղարուեսաական առակի մէջ բարոյախօսութիւնը, իբրև իդէա, այնքան սերտ կերպով ձուլվում է այլաբանական պատմուածքի հետ, իբրև ձեի, որ կազմում է նրա հետ մի անբաժան ամբողջութիւն և առակը դառնում է բոլորովին գեղարուեստական, բանաստեղծական մի արտադրութիւն, որի մէջ հեղինակի միտքը հաղորդվում է կենդանի պատկերով։ Յաճախ առակախօսն ինքն չէ արտայայտում առակի խրատողական իդէան, այլ թողնում է, որ ինքն ընթերցողը քաղէ այդ իդէան, խրատը բանաստեղծական պատմուածքից, կամ արտայայտում է նրան կարծ առածի ձեռվ, առակի սկզբում, ինչպէս կրիօփի Ալգուա և աղուէս առակի մէջ՝ կամ թէ վերջում, ինչպէս «Թնդանօթներ» և առագաստներ» առակի մէջ։

Առակի ժագումը եւ նրա զարգացման պատմութիւնը։ Այժմեան գեղարուեստական առակը միանգամից չերևաց, այլ կամաց կամաց մշակվեց կենդանիների մասին հէքիաթներից կամ կենդանական էպօսից։ Իր զարգացման առաջին աստիճանում առակը մի հասարակ օրինակ էր կամ համեմատութիւն, փոխ առնված հէքիաթներից կենդանիների մասին, մարդի կեանքից վերցրած դէպքերը նկատողական կերպով բացարելու համար։ Բայց կենդանական էպօսում գեռ չը կայ ինչ որ պէտք է առակի համար, գեռ չը կայ ինչ որ պէտք է առակի համար, զարդարուեան առաջին, նա ալլէգօրիա չէ այն պատուիվ, որ կենդանիները նրա մէջ մնում են կենդանիներ, երկրորդ՝ հէքիաթները կենդանիների մասին ոչ մի մօրալ, բարոյականութիւն չեն պարունակում։ Այդ տարրերը—ալլէգօրիան և մօրալը—մտան կենդանական պատմուածների մէջ հետզհետէ, երբ, ժամանակի ընթացքում, ժողովուրդը սկսեց մոռանալ կենդանական էպօսը, նրա մնացորդներով օգտվեց գրականութիւնը և սկսեց մշակել հէքիաթները կենդանիների մասին ու մշակված ձեռվ յարմարեցնել մարդկային կեանքի այս և այն դէպքին, համեմատութեամբ կամ օրինակով համոզելու համար մարդկանց որևէ մի ճշմարտութեան մէջ։ Այդ ձեռվ առակներ մենք տեսնում ենք արևելեան աղքերի մէջ, Հնդկաստանում, իսկ Յունաստանում, առաջին անգամ նզովպոսը (որ ապրում էր VI դ. թ. առաջ) հանդիսացաւ առակաբան։

Սակայն այդ առակները, դեռ իսկական չէին, այնպէս, ինչպէս մենք այժմ հասկանում ենք. Նրանք միայն յարմարացումներ էին ամեն մի առանձին գէպքի համար: Այդ յարմարացմամբ, մարդի գործողութիւնները համեմատվում էին կենդանիների գործողութիւնների հետ և հէսց այդ համեմատութեան մէջ պարունակվում էր Եզովկոսի առակների խրատողական կողմը:

Միայն հօօմայեցի առակախօս Թեղոր (ապրում էր Օզոստոս և Տիրերիոս կայսրների ժամանակ) մշակեց առակը և դարձրեց նրան այլարանական պատմուածք, կցելով եւ ըարոյախօսութիւնը: Ֆեղրի առակների մէջ արդէն երկու անկախ մասեր կան. ալէզօրիական պատմուածքը և բարոյախօսութիւնը: Ահա այդ ձևով, զուտ դիտակտիրական բնաւորութեամբ, առակը հոօմէացիներից անցաւ եւրոպական նոր ազգերին և պահպանեց իր բնաւորութիւնը մինչև ֆրանսիացի առակախօս Լոֆօնտէնը (1759—1831) որից սկսվում է արդէն գեղազուեստական առակը:

Նորագոյն առակախօսները, որոնց լաւագոյն ներկայացուցիչներ համարվում են Լաֆօնտէնը և Կրիլօվը (1768—1844) առակին տուին բոլորովին ուրիշ բնաւորութիւն: Նորագոյն առակի մօրալը կայանում է ոչ միայն այն բարոյախօսութեան մէջ, որ հեղինակը իր կողմից աւելացնում է իր պատմուածքի սկզբին կամ զերծին, այլ հէսց իրա պատմուածքի մէջ, որը թէ

Լաֆօնտէնը, թէ Կրիլօվը չեն համարում առակի անէական մասն, այլ ընդհակառակը, հոգս են տանում որ նա մշակված լինի գեղարուեստորէն, կենդանի, պատկերաւոր և բանաստեղծօրէն: Նրանց պատմուածքը արդէն պարունակում է իր մէջ մօրալ, ուստի և յաճախ նրանք չէին աւելացնում առակին իրանց կողմից բարոյախօսութիւն. այդ բարոյախօսութիւնը ինքն իրան հասկանալի է, ինքն իրան բղխում է պատմուածքից:

Հայերի մէջ իբրև առակախօս յայտնի են 1) Միխթար Գոշ վարդապետը (12-րդ դար), որ մօտ 190 առակներ է գրել, նմանողութեամբ Եզովկոսի և այդ պատճառով ստացել է «Հայոց Եզովկոս» անունը. 2) Վարդան վարդապետ (13-րդ դար), որ գրել է մօտ 140 առակներ, հաւաքած Միխթար Գոշից և ուրիշներից: Սակայն այդ երկուսի առակները ստոր են Եզովկոսի և Ֆեղրի հանձարից ու Փիլիսոփայութիւնից:

Լաֆօնտէնի և Կրիլօվի առակները թարգմանված են հայերէն Նուբարեանի և Այվագեան Գաբրիէլ եպիսկոպոսի ձեռքով: Մուսաց մէջ իբրև առակախօս, բացի Կրիլօվից, կան նաև Խեմնիցէր (1745—1784) և Դիմիտրիէվ (1760—1834): Քերմանացիների մէջ իբրև առակախօս յայտնի են՝ Բօնէր (XIV դար) և հոչակաւոր Փիլիսոփայ Հէսսինգ (1724—1781):

2. Պ օ չ մ ա

§ 12. Պօէմա (յուն. խօսք—ստեղծագործութիւն) կամ քերթուած հին ժամանակներում կոչվում էր մի ընդարձակ էպիքական երկասիթիւն, որի մէջ պատմվում էր ժողովրդի, ազգի կիանքի մէջ պատահած մի նշանաւոր դէսք:

Պօէման առաջինը երեաց յոյների մէջ և երեաց ա) ժողովրդական դիցազնական պօէմայի ձևով: Ապա հոօմայեցիները սկսեցին նմանեցնել յունականին և առաջ եկաւ բ) նմանողական—դասական կամ կլասիքական պօէմա, իսկ կլասիքական պօէմային սկսեցին ստրկօրէն հետեւ նոր-եւրօպական ազգերը և առաջ եկաւ գ) կեղծ-կլասիքական պօէման: Եթե կեղծ-կլասիքականութիւնը ընկաւ XIX դարի սկզբում, երեան եկաւ դ) նորագոյն պօէման, որի հիմքը դրեց Բայրօնը և որ բոլորովին տարբերվում է կլասիքականից և կեղծ-կլասիքականից: Մի առանձին տեսակ ևս ներկայացնում է ե) րօմանտիքական պօէման, որ ծագեց միջին դարերում:

ա) Հնագոյն դիցազնական պօէման կամ էպոպէա.

§ 13. Հնագոյն (կամ կլասիքական) ժողովրդական դիցազնական պօէման, որ կոչվում է նաև էպոպէա, ներկայացնում է գեղարտեստական մշակումն ժողովրդական դիցազնական էպոսի, որ վերաբերում է որ եւ է մի պատմական դէս-

քի, որին մասնակցել է ամբողջ ժողովուրդը: Նա կազմում է անցողական աստիճան անարութեստակ, անպաժոյժ ժողովրդական քանաստեղծութիւնից դէպի արութեստական կամ գեղարութեստական քանաստեղծութիւնը:

Հոմերոսի հիմական և Ողիսական քերթուածները համարվում են դիցազնական հնագոյն ժողովրդական պօէմաների կամ էպոպէագոյն ժողովրդական պօէմաները: Առհասարակ, ների ամենազեղեցիկ նմուշները: Առհասարակ, ների ամենազեղեցիկ նմուշները: Առհասարակ, կային ստեղծվում: Հին յոյների մէջ, օրինակ, կային դիցազնական երգեր (բազմոգիաներ), ինչպէս դիցազնական երգեր (բազմոգիաներ), հայերի մէջ գուսանական կամ թուելեաց երգեր, հայերի առանձին դիցազների քաջագործութիւնների, մասին—Սքիլէսի, Ողիսևի, Այաքսի, Զիկտորի, մասին—Սքիլէսի, Ողիսևի, Այաքսի, Տիգրանի, Զերկուլէսի (յոյների) և Վահագնի, Տիգրանի, Արտաշէսի, Արտաւազդի (հայերի) մասին: Այդ երգեր ստեղծողները և պահողները յոյների մէջ ըստ երգերը երկար ժամանակ մէջ գուսանները: Այդ երգերը երկար ժամանակ մէջ գուսաններն էին, երգիչներ, ինչպէս հայերի ըստ պահողներն էին, երգիչներ, ինչպէս հայերի մէջ գուսանները: Այդ երգերը երկար ժամանակ մէջ գուսանները մոռացվում էին և նորերը մըտքանցից շատերը մոռացվում առանձին դիցազնում: Ժամանակի ընթացքում առանձին դիցազնական երգերը քիչ-քիչ սկսում են համացազնական դիցազնական դիցազնում դէպի շուրջը խըմբվել մի որ և է նշանաւոր դէպի շուրջը (օրինակ յոյների մէջ—Տրօայի առումը) և առանձին պատմուածները այդպիսով միացվում են: Ժողովրդի միջից դուրս եկած հանճարաւոր բանաստեղծները կամ քերթողները մի քանի

դարերի ընթացքում հաւաքված և պատրաստված այդ էպիքական նիւթին տալիս են կատարեալ միութիւն և գեղարութական ձեւ։ Այսպէս օրինակ հանճարաւոր յոյն քերթող Հոմերոսը (որ ըստ աւանդութեան ապրում էր X դարում թ. առաջ) հաւաքեց ի մի յունական ժողովուրդական էպոսները և նրանցից ստեղծեց գեղեցիկ պօէմաներ—իլիականը և Ողիսականը։ Այդ ձեւով ստեղծվեցին հնդիկների մէջ «Մագարզարատա» և «Շամայանա» պօէմաները, պարսից մէջ «Շահնամէ» պօէման (1020 թ.) Ֆիրդովսու ձեռքով։ գերմանացիների մէջ—«Երգ Նիբելունգների մասին» (որ մշակել է մի անյայտ բանաստեղծ 1210 տ. առաջ) և հայերի մէջ, հաւանօրէն, գարձեալ մի անյայտ բանաստեղծի ձեռքով «Սասունցի Դաւիթ և Մհերի Դուռը» պօէման, որ մեր ժամանակում դրի. առաւ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանը։

Եւ ուրեմն, հին դիցազնական պօէման կամ էպօպէան է պատմուածք մի կարեւոր պատմական դէպքի մասին, որի մէջ մասնակցութիւն է ունեցել ամքող ժողովուրդը։ Օրինակ, Իլիականը պատմում է մի կարեւոր պատմական դէպք յոյն ժողովրդի կեանքի մէջ—Աքեացիների կոիւը Տրօյացիների հետ. այդ կոիւը երկու ազգերի համար կենաց և մահու խնդրի նշանակութիւն ունէր, որովհետեւ Աքեացիները, դուրս քշվելով իրանց հայրենիքից, Հելլադայից, Դօրիացիների ձեռքով, նոր հայրենիք և գաղթավայր

էին որոնում, կամենում էին Խլել Տրօյացիների հողը, իսկ սրանք պաշտպանում էին իրանց հողը եկորների յափշտակութիւնից։ Երկու ազգերն էլ ամբողջովին մասնակցում էին այդ կուփին։

Այդպիսի ընդհանութիւն-ժողովրդական նշանակութիւն ունեցող կարեւոր պատմական դէպքերի մասին պատմվում են և ուրիշ հնագոյն պօէմաների մէջ, որոնք կազմվել են ժողովրդական դիցազնական էպոսից։ Օրինակ, հին Պարսկաստանում գոյութիւն ունէին ժողովրդական երգեր, էպիքական պատմուածներ, որոնց մէջ երգվում էին Իրանի և Թուրանի միմեանց դէմ մըզած պատերազմի մէջ զանազան քաջագործութիւններ կատարող հերոսների կամ դիցազների մասին։ Այդ երգերը և էպիքական պատմուածները գեռ Vll դարում, Սասանեան վերջին թագաւորի ժամանակ հաւաքվեցին և զրի առնվեցին «Դաստաննամէ» ժողովածուի անունով։ Եւ 1020 թ. Ֆիրդովսի բանաստեղծը օգտվելով այդ բոլոր նիւթերից, ստեղծեց «Շահնամէ» հիանալի՝ պօէման, որ պատմում է Իրանի մղած կոիւը Թուրանի դէմ, կենդրունացներով այդ կոիւը մի քանի դիցազների շուրջը։ «Նիբելունգների մասին երգեր» գերմանական պօէմայի մէջ արտացոլվում է ազգերի գաղթականութեան դարբաշընանը։ «Սասունցի Դաւիթ և Մհեր» պօէմայի մէջ արտացոլվում է մի դիցազնական սխրագործութիւն, կամ մի պատմական դէպք,

որ տեղի է ունեցել Սասունում, ինչպէս երկի, քրիստոնէութիւնից առաջ և որի հերոսներն են հանդիսանում «Դաւիթ» և «Մհեր»։ Ֆրանսիական «Քոլանի Երգի» մէջ հանդէս է գալիս XI դարի մի կիսապատմական հերոս։

Այդ բոլոր գիւցազնական պօէմաների կամ էպոպէաների մէջ հեղինակը, քերթողը ինքն չէ հարում բովանդակութիւնը, որովհետև բովանդակութիւնը տալիս է նրան ժողովրդական էպօպը. նա միայն մշակում է գեղարուեստօրէն այդ բովանդակութիւնը և առանձին, ուրոյն ուրոյն, անջատ կառներից ստեղծում է մի միութիւն, ամբողջութիւն, որի մէջ բազմակողմանի եւ մանրամասն կերպով արտափայլում է ղարեշը ջանը։ Ուրեմն, գիւցազնական պօէման, նկարագրելով մի պատմական դէպք, որին մասնակցել է ամբողջ ժողովուրդը, նկարագրելով այն կոիւը, որի մէջ լարվել են մարդի բոլոր ոյժերը, ֆիզիքական և հոգեսր, ակամայ ցոլացնում է իր մէջ և նրա կենցաղի ամբողջ մանրամասնութիւնները ու նրա հոգու բոլոր կողմերը, Օրինակ, Իլիականի և Ոդիսականի մէջ մենք տեսնում ենք զինուրական, հասարակական, ընտանեկան կենցաղի լիակատար, մանրամասն և կենդանի պատուելներ, ծանօթանում ենք յոյների կրօնական հաւատալիքների, նրանց հասկացողութիւնների, համոզմունքների, հայեացքների, նախապաշարումների — մի խօսքով

նրանց կետնքի հետ իր ամենալայն մտքով։ Դիւցազնական պօէմայի մէջ կան և շատ ֆանտաստիքական ռաներ, հրաշըներ, բայց դրանք հսարել է ոչ թէ քերթողը, այլ որովհետև եղել են ժողովրդի կրօնական հաւատալիքների մէջ։

Այս բոլորը ի նկատի ունենալով հեշտ է դալ այն եզրակացութեան, որ դիւցազնական պօէմաները ահագին նշանակութիւն, ունեն ժողովրդի, ազգի պատմութեան համար, որովհետև մանրամասն և բազմակողմանի կերպով լուսաբանում են պատմութեան որոշ դարեշրջանը։

Այդ տեսակէտից Հոմերոսի պօէմաները աննման են և անզուգական, համաշխարհային նշանակութիւն են սաացել և կազմում են զարմանքի ու մանրազննին ուսումնասիրութեան առարկայ բոլոր լուսաւորեալ ազգերի մէջ։ Հոմերոսի պօէմաների մէջ ամենալաւ կերպով արտայայտվել է յունական ժողովրդի ազգային հանճարը իր բոլոր արժանաւորութիւններով և կատարելագործութիւններով, այն է 1) մի ամբողջ դարեշրջանի կեանքի անօրինակ կատարեալ նկարագրութիւն՝ կրօնական, քաղաքական, հասարակական և ընտանեկան կողմից, 2) բնաւորութիւնների անօրինակ բազմազանութիւն, 3) բընութեան պատկերների զարմանալի ճշտութիւն և պլաստիքականութիւնն. 4) համեմատութիւնների, էպիտէաների նրբութիւն, օրիգինալութիւն և կենդանութիւն։

Ահա ինչ է ասում Շէրը Հոմերոսի պօէ-

մաների մասին, «Այն ամենը, ինչ որ մարդկային կեանքի մէջ կայ ազնիւ, վեհ, գեղեցիկ, գըթաշարժ և հիանալի, արտայայտված է Հոմերոսի երգերի մէջ սքանչելի պարզամտութեամբ և այնպիսի ձկով, որ կարող է գտնել իր համար արժանաւոր օրինակ գուցէ միայն արեգակից լուսաւորված ովկիանոսի անդորր վեհութեան մէջ»։ Հոմերոսի պօէմաների հէնց այդ պարզութիւնը, գեղարուեստականութիւնը և համարմարդկային նշանակութիւնը դարձել են նրանց համաշխարհային։

բ և գ) նմանողական կլասիքական պօէմա.

§ 14. Հոմերոսի «Ելիական» և «Ողիսական» պօէմաները ծառայեցին օրինակ զանազան քերթողների համար, որոնք կամեցան իրանց ազգային զրականութիւնն ևս հարստացնել այդպիսի արտադրութիւններով։ Այդ տեսակ քերթուածները կոչվեցին նմանողական։ Առաջին նմանողը եղաւ հոօմայեցի քերթող Վիրզիլիոս (Օգոստոս կայսրի ժամանակ) իր Ենէականներով (Ենէյիզ), որի մէջ պատմում է Տրօյական արքայ Ենէյի ուղեւորական արկածները Տրօյայի առմանից յետոյ, Նրա իջնելը Տիբր գետի ափին, Իտալիա, ուր նա հիմն դրեց հոօմէական պետութեան և դարձաւ հոօմէական թագաւորների նախահայր։ Շարադրութեան յատակագծով և բովանդակութեամբ Ենէականը մեծ նմանութիւն ունի «Ողիսականի հետ։

Քրիստոնէութեան շրջանում եւրօպական ազգերը, ծանօթանալով յունական և հոօմէական գրականութեան օրինակների հետ, սկսեցին ստրկօրէն նմանվել նրանց և ստեղծել նմանողական քերթուածներ։ Այդ նմանողական կամ կեղծ-կլասիքական շարժումը սկսվեց Իտալիայից, որտեղից անցաւ Ֆրանսիա և այնտեղից էլ տարածվեց Եւրօպա, Ռուսաստան և նոյնիսկ անցաւ հայերին։ Գրականութեան մէջ մշակվեց մի առանձին ուղղութիւն, որ տիրապետում էր մի քանի դար (XVII—XVIII) և որ կոչվում է կեղծ-կլասիքական։ Ֆրանսիացի գլուղ Բոււլոն (1637—1711) նոյնիսկ կազմեց քանաստեղծութեան թէօրիա (L'art poétique), իբրև հրահանգ քերթուածների համար և այդ թէօրիայով ղեկավարվում էին եւրօպական բոլոր ազգերի բանաստեղծները։

Իտալացիների մէջ նմանողական կամ կեղծկլասիքական պօէմաներն են 1) Արիօստի «Կատապղի Օրլանզը» (1474—1533), 2) Տօրկլատ Տասսի «Ազատված Երուսաղէմը» (1544—1595), 3) Դանտի «Աստուածային կօմեդիան» (1264—1325), թէև վերջինս իր բարձր գրական և պատմական յատկութիւններով բոլորովին անկախ արտադրութիւն է կազմում։ Սնգլիացիների մէջ — Միլտոնի «Դրախտ Կորուսեալը» (1608—1674): Գերմանացիների մէջ — Կիոպլոտովի «Մհասիադան» (1724—1803): Պօտուգալցիների մէջ — Կամօնսի «Լուգիադան» (1525—1579). Ֆրանսիացիների մէջ — Վոլտերի «Հենրիադան» (1694—1678): Ռուսների մէջ — Խելտերի «Հենրիադան» (1773—

1808) և «Վլադիմիրը»: Հայերի մէջ—ն. Արսեն Բագրատունու «Հայկ Դիւցազն» և Յովհաննես Վանանդեցու «Որդիական Հայաստանին» և «Ռուկեղար Հայաստանի»:

Նմանողական եւ օրիգինալ պօէմաների տարբերութիւնը.

Վիրդիլիոսի Ենէականը չէ կազմում հոռվմէական ժողովրդական դիւցազնական էպոսի մշակումն. Նրա բովանդակութեան հիմքը կազմում էն յոյն ժողովրդի առասպելները Տրօյական դիւցազն Ենէայի մասին: Վիրդիլիոսը ապրում էր ամենաքիչը 8 դար աւելի ուշ տրօյական պատերազմից. հոօմէական ժողովրդի հաւատալիքները, բարքերը և հասկացողութիւնները «Ենէականի» ստեղծման ժամանակ շատ տարբերվում էին դիւցազնական էպօխայի յոյների բարքերից և հաւատալիքներից: Այդ պատճառով Վիրդիլիոսը, ի հարկէ, չէր կարող տրօյական պատերազմի էպօխայի դէպքերը այնպէս ճշգրիտ և կենդանի նկարագրել, ինչպէս նրանք նկարագրված են Հոմերոսի պօէմաների մէջ: Նոյնը և «Հայկ Դիւցազնի» մէջ Բագրատունին, որ նկարագրում է Հայկ նահապետի էպօխայի դէպքերը, որոնք կատարվել են իրանից մօտ 2000 տարի առաջ, չէր կարող այնպէս ճշգրիտ և կենդանի կերպով նկարագրել, ինչպէս արդ էպօխային աւելի մօտ հայ գուսանները: Այդպիսով թէ «Ենէականը», թէ «Հայկ Դիւցազն» և այլք հանդիսա-

նում են արուեստական քերթուածներ, որոնք չեն տալիս մեկ ճշգրիտ պատկերը այն էպօխայի բարքերի, որին վերաբերում է նրանց բովանդակութիւնը: Սակայն այդ պօէմաները իրանց լիզուի շքեղութեամբ, ուտանաւորների քաղցրահնչութեամբ բարձր գնահատելի երկասիրութիւններ են:

Դեղօ-կլասիքական պօէմաների առանձնայատկութիւնները:

Բուալօյի մշակած կանոնների համաձայն կեղծ-կլասիքական պօէման պէտք է համապատասխաններ հետևեալ պայմաններին. 1) Պօէմայի առարկան պէտք է լինէր մի կարեւոր դէպք, այնպիսի դէպք, որի մէջ մասնակցէին ամբողջ ազգեր. 2) Պօէմայի հերոսները պէտք է լինէին մեծ մարդիք, օֆտաված ուժեղ կրքերով, գլխաւորապէս թագաւորներ և զօրավարներ. 3) Պօէմայի բովանդակութեան մէջ պէտք է մտնի հրաշային, ֆանտաստիքական տարր. 4) Վերջապէս կեղծ-կլասիքական պօէմաների մէջ շատ պատկերներ ներկայացնում են ուղղակի հոմերոսի եւ Վիրդիլիոսի պօէմաներից վերցրած պատկերների սյլափոխութիւն:

Այդ կանոնների իրագործումը, ի հարկէ, նմանողական պօէմաներին տալիս էր հին, կլասիքական պօէմաների նմանութիւն, բայց այդ նմանութիւնը լոկ արտաքին էր, որովհետև նմա-

նողական կամ կեղծ-կլասիքական պօէմաների մէջ չը կար ամենակարեռը, ամենաէական յատկութիւնը կլասիքական պօէմաների—բովանդակութեան ազգայնութիւնը և նկարադրված էպօլայի կեանքի ծիշո ներկայացումը։ Հոմերոսի պօէմաների յատկութիւնները ուղղակի բղխում են յունական ժողովրդական դիւցազնական էպօլոսի յատկութիւններից։ «Իլիականի» և «Ողիսականի» հերոսները—դրանք ամենքը յունական ազգային իդէալներ են, իսկ հերոսների կեանքը և բարքերը—դիւցազնական էպօլսայի յոյների կեանքը և բարքերն են։ Նոյնը և պարսից Շահնամէն *). Նրա յատկութիւնները բղխում են ուղղակի պարսկական ժողովրդական դիւցազնական էպօսից։ Նրա հերոսները—Բուստամ Զալը, Քէյկավուսը, Սիավուշը, Զուրաբը, Ֆրէյդունը—պարսիկ ազգային իդէալներ են, այդ հերոսների կեանքը և բարքերը—դիւցազնական էպօլսայի պարսիկների կեանքը և բարքերն են։

Եւրոպական ազգերը և այժմեան հայերը ուրիշ իդէալներ, բարքեր և հաւատալիքներ ունեին և սակայն պօէմաների մէջ (Մէսսիադ, Հայկ Դիւցազն) գուրս են բերվել հերոսներ, նման կլասիքական հերոսներին, գուրս են բերվել հեթա-

*) Շահնամեն մենք ընդունում ենք ոչ թէ արտադրութիւն ֆրդօվսու, որ ապրում էր մահմեդականութեան ժամանակ, այլ շատ հին դիւցազնական պօէմաներ, որ գոյութիւն ունէին դիւցազնական էպօլսայում և ֆրդօվսին միայն հաւաքից։

նոսական աստուածներ, մոգեր, կախարդներ մարմնացած առաքինութիւններ և ախտեր, որոնց գոյութեան չեն հաւատում ոչ իրանք հեղինակները, քերթողները—Կլոպչոկը և Արսէն Բագրատունին, ոչ ևս ընթերցողները։ Դրանից հետեւում է, որ այն ամենը, ինչ որ բնական էր և կազմում էր կլասիքական պօէմաների արժանաւորութիւնը, նմանողական պօէմաների մէջ յայսվում է իրեւ արուեստական, կեղծ և կազմում է նրա պակասութիւնը։

Եւ որովհետև նմանողական պօէմաները կամ քերթուածները նման էին կլասիքականների հետ միայն արտաքին կողմից և չունէին վերջինների էական ներքին արժանաւորութիւնները, ուստի և նրանք կոչվեցին կեղծ-կլասիքական։

XIX դարում կեղծ-կլասիքական թէօրիան ընկաւ, նրա հետ միասին ընկաւ և կեղծ-կլասիքական պօէման և նրա անդր բռնեց նորագոյն ժամանակի պօէման։

Դ. Նորագոյն ժամանակի պօէման.

§ 15. Այժմ պօէմա կոչվում է բանաստեղծական պատմուածք նշանաւոր դէպքերի մասին ականաւոր անձանց կնանքից։ այդ պատմուածքի մէջ բանաստեղծը պայծառօրէն գծադրում է հերոսների բնաւորութեան միայն մի քանի աշքի ընկնող գծերը (իդէալացնում է հերոսի անձնաւորութիւնը) և յաճախ արտայայտում է իր անձ-

նական մտքերը և զգացումները (մտցնում է քնարերգական կամ լիրիքական տարր):

Նոր պօէմայի հիմնադիրը համարվում է անգլիացի բանաստեղծ Բայրոնը (1788—1824թ.), որին շատ հետևողներ եղան: Եւ Բայրոնի ու նրա հետևողների գրչի տակ պօէման դարձաւ բանաստեղծական պատմուածք այս կամ այն անձի, դէպքի կամ գործողութեան (փաստի) կեանքի ամենանշանաւոր կողմերի մասին: Բայրոնից սկսած պօէմայի իբրև նիւթ վերցնվում են ամենաբանաստեղծական, իդէալական ըովէները այս կամ այն դէպքից, այս կամ այն անձի կեանքից—ըովէներ, որոնք առանձնապէս շացրել են բանաստեղծի երևակայութիւնը: Պօէմայի պատմուածքը ընդհատվում է բանաստեղծի անձնական տպաւորութիւններով (լիրիքական տեղեր)՝ մի բան որ չոմերոսի հին պօէմայի մէջ չը կար: Որովհետեւ նոր ժամանակի պօէմաների մէջ տիրապետում է լիրիքական տարրը, ուստի նրանց անուանում են լիրա-էպիքական:

Բայրոնի պօէմաների մէջ, որոնք հոչակեցին նրան իբրև մեծագոյն գեղարուեստագէտ բանաստեղծական պատմուածքի ասպարէզում, նըշանաւոր են այս պօէմաները: «Ծիլիօնի կալանաւորը» (կայ թարգմանված և հայերէն), «Կորսար», «Գեավոլը», «Չայլդ Հարօլդ», «Մանֆրէդ»: Ռուսաց բանաստեղծներից լաւագոյն պօէմաները պատկանում են Պուշկինին («Կովկասնան գերին», «Պոլտավա», Աւազակ եղբայր-

ները», «Բախչիսարայի ֆօնտանը», «Ծիգան-ները») և Լեռմօնտօվին («Իզմայիլ-թէյ», «Մշիւ-ներ», «Երգ կալաշնիկօվ վաճառականի մասին»): Սայերի մէջ լաւագոյն պօէման՝ Սմբատ Շահազայերի պիզի «Լեռնի վիշտը», ինչպէս և Խ. Արովեանի «Վէրք Հայաստանին»:

Նոր ժամանակի պօէմայի առանձնայատկութիւնները.

Նա տարբերվում է կլասիքական և կեղծկլասիքական աջէմայից նրանով, որ 1) նկարագրում է ոչ միայն կարեոր դէպքեր, համաժողովրդական նշանակութիւն ունեցող («Պոլտագորդական գաղափար»), այլ և մասնաւոր անձանց կեանքից նշավա»), այլ և մասնաւոր անձանց կեանքից նշանաւոր դէպքեր («Կովկասնեան գերի») և բանաստեղծը կանգ է առնում ոչ այնքան դէպքերի նկարագրութեան վրա (ինչպէս այդ լինում էր կլասիքական և կեղծ-կլասիքական պօէմաների մէջ), այլ տւելի հերոսների ներքին կեանքի վրա («Լեռնի վիշտը»). 2) պատմուածքը նոր ժամանակի պօէմայի մէջ սիրեկտիվ (հնթակայական) է և ոչ օրէկտիվ (առարկայական):

Պօէման լինում է և պատմական: Պատմական պօէման այն բանաստեղծական պատմուածքն է, որ ընորոշում է նշանաւոր պատմական անձնաւորութիւններին:

Ներկայումս գրականութեան մէջ պօէմաները յաճախ չեն երեւում, որովհետև նրանց նիւթը, առարկան իր բովանդակութեան մէջ է գըր-

բաւել ժամանակակից էպօսի ամենատարածված
տեսակը—«ըօմանը»:

Ե. Ռօմանտիքական պօէմա.

Ռօմանտիքական պօէմա կոչվում է ուստա-
նառոր պատմուածք մի որեւէ բարդ դէպքի մա-
սին ֆանտաստիքական բնաւորութեամբ։ Այդ պօ-
էմակի սկիզբն միջին դարից է։ Նրա բովանդա-
կութիւնը կազմում էին ասպետների քաջազոր-
ծութիւնների և սխրագործութիւնների մասին
հէքիաթներ, որոնց մէջ մեծ մասը հնարովի էր,
քան իրական։ Միջին դարերում ամեն մի տա-
պետ ունէր իր սրտի սիրելին, իր տիկինը, որի
սիրոյ համար հրաշքներ էր գործում—կուռում էր
վիշապների, կախարդների հետ, գնում էր որո-
նելու անմահական ջուր, ոսկէ խնձոր, իջնում
էր անդուղները և այն։ Ռօմանտիքական պօէ-
մայի իբրև օրինակ կարող է ծառայել իտալա-
կան բանաստեղծ Արիօսափ (16 րդ դար) «Կա-
տաղի Օրլանդ» պօէման։ Միջնադարեան րօման-
տիքական պօէմայի ոգով է գրված և Պուշկինի
«Մուսալան և Լիւդմիլա» պօէման, որի բովանդա-
կութեան մէջ շատ հրաշքային, ֆանտաստիքա-
կան սիրթ կայ։ Այդ տեսակից են և այն հէ-
քիաթները, որոնց մէջ պատմվում են. կախարդ-
ների, անմահական ջրի, հրէշների մասին։ Իս-
կապէս րօմանտիքական պօէման՝ հէքիաթ է,
բայց ոտանաւոր։

Յ. Բալլագանկանական պատմութեան մէջ

§ 16. Բալլագան կամ՝ պարերգ կոչվում է
մի փոքրիկ էպիքական արտադրութիւն, որի բո-
վանդակութեան մէջ գերբնական, հրաշալի եւ
ֆանտաստիքական կողմը շատ է զարգացած։
Նրա անունը առաջ է եկել «բալլիդո» (պարում
եմ) յունարէն բառից, որովհետեւ երգելիս պա-
րում էին։ Իր սիրթը բալլագան քաղում է պատ-
մութիւններից կամ ժողովրդական աւանդութիւն-
ներից և շարադրում է մի խաղաղ էպիքական
պատումի մէջ։

Բալլագան սկիզբն առաւ հարաւային ֆրան-
սիայում, Պրօվանսում։ Ժողովրդական պրօվան-
սալ երգիչները կամ աշուղները, որոնք յայտնի
են տրութաղուր անունով, շրջում էին դղեակից
զղեսկ և երգերով փառաբանում էին ասպետնե-
րի քաջազործութիւնները։ Այդ երգերի հետ միա-
սին պարում էին, ուստի և իտալացիները կո-
չեցին այդ երգերը բալլագա, ballare իտալ. բա-
ռից, որ ծագում է յունականից և նշանակում է
պարել։ Ֆրանսիայից բալլագաները անցան Անգ-
լիա և Գերմանիա։ Մուսաց գրականութեան մէջ
բալլագան մացրեց Ժուկօվսկին։ Հայերի մէջ,
իսկապէս, ժողովրդական աշուղների երգերը սա-
զով նոյնպէս կազմում են բալլագայի մի ոչ մը-
շակված ձև։

Բալլագաներ գրել են գերմանացի նշանա-
ւոր բանաստեղծներ՝ Շիլլերը («Իբիկոսի կոռունկ-

ները», «Բաժակը»), Գեօտէն (Անտառային արքան»), Ուլանդը, Բիւրգէրը. ոռոս բանաստեղծներ՝ Ժուկովսկին («Լիւդմիլա», «Սվետլանա», «Աքիլլէս»), Պուշկինը (Երդ կախարդ Օլեգի մասին»), Լերմոնտօվ («Օդաչու նաւուր»):

Իր «Իրիկոսի կոռոնկները» բալադայի նիւթը Շիլէրը վերցրել է հին յունական ժողովրդական աւանդութիւնից՝ Իրիկոս երգչի աւազակների ձեռքով սպանվելու և կոռոնկների օգնութեամբ մարդասպաններին զանելու մասին և մշակել, յղկել, բանաստեղծական բովանդակութիւն է տուել նրան: Պուշկինը՝ նիւթը վերցրել է հայրենի պատմութիւնից: Գեօտէի «Անտառային արքայ» բալադայի նիւթը վերցրած է գերմանական ժողովրդական նախապաշարութիւններից և հէքիաթներից, մի խօսքով բալադայի նիւթ վերցնվում է բոլոր այն աղբիւրներից, որոնք պարունակում են հրաշալի, գերբնական, արտասովոր տարրեր:

Բալադան իր բովանդակութեան ֆանտաստիքական կողմով նմանութիւն ունի հէքիաթների նետ, բայց շատ բանով և տարբերվում է՝ չէքիաթները—արդիւնք են անմիջական ժողովրդական ստեղծագործութեան: Ֆանտաստիքական տարրը նրանց բովանդակութեան մէջ նշանակութիւն ունի ինքն ըստ ինքեան իրեր արտայայտութիւն ժողովրդական նախնակենցաղական հաւատալիքների և հայեացըների, բայց բալադների մէջ ֆանտաստիքական տարրը ծառա-

յում է միայն իրեր գեղարուեստական ձեւ՝ ողեւ է իդէա արտայայտելու համար: Օրինակ՝ «Օդաչու նաւու» Փանտաստիքական պատումի մէջ արտայայտված է նապօլէօն Լի սէրը առ իր հայրենիք ֆրանսիան. Պուշկինի «Խեղդված» բալադայի մէջ արտայայտված է բարոյական պատժի իդէան (խեղդվածը — խղճմտանքի խայթի մարմնացումն է) մի մնութիպաշտ գիւղացու, որի պարագը չէ կատարել մի խեղդվածի վերաբերմամբ:

Բալադան մեծ նմանութիւն ունի և ըօմանտիքական պօէմայի նետ, բայց տարբերութիւնն այն է, որ ըօմ-պօէմայի բովանդակութիւնը աւելի բարդ է և ծառալը աւելի լայն:

Հայերի մէջ բալադան շաա քիչ է զարգացած: Պարերգ կարելի է ընդունել Քարոզ-խաչը, որ իր մէջ ամփոփում է հայոց եկեղեցու հրաշքով իր և իր ժողովրդի գոյութիւնը պահպանելու պատումը:

4. Ի դ ի լ լ ի ա.

§ 17. Իղիլիա կամ հովուերգ կոչվում է փոքրիկ էպիքական արտադրութիւն, որի մէջ նկարագրվում է պարզանողի մարդկանց, զիկատրապէս շինականների խաղաղ, անդորր կեանքի պատկերներ: Իղիլիայի գլաւոր միտքն է— ներկայացնել մարդին բնութեան ծոցում, հեռու կենցաղական զանազան յուզումներից, գիւղական

կեանքի պարզութեան մէջ, հեռու քաղաքային կեանքի աղմուկներից, խոռվութիւններից, իսկ նպատակն է—նկարագրելով պարզ և անպաճոյն կերպով բնական կեանքը, բնութեան հրաշալի տեսարանները, շինականների խաղաղ, պարզ կենցաղավարութիւնը, գարթեցնել ընթերցողի մէջ համակրութիւն դէպի բնականը, պարզը, անպաճոյն կեանքը:

Իդիլիան բոլորովին տարբերվում է պօէմայից. մինչ պօէման նկարագրում է մի կարետը դէպի, իդիլիան նկարագրում է մի ամենահասարակ երեւոյթ. պօէմայի հերոսները—նշանաւոր անձինք են, իսկ իդիլիայի հերոսները—ամենահասարակ մանկանացուներ. պօէմայի մէջ առաջին են բոնում պետական եւ հասարակական կարեւոր շահեր, իսկ իդիլիայի մէջ—համեստ, ընտանեկան եւ անձնական շահեր:

Իդիլիայի ժագումը եւ պատմական տեսութիւնը.

Իր ծագումը հովուերդը պարտական է ի հարկէ, մարդու բնական ձգտման՝ ապրել բնութեան և կեանքի պարզութեան մէջ, փոխանակ արուեստականօրէն ստեղծած ձանձրալի կենցաղի: Եւ իդիլիան հէնց ծագեց Յունաստանում, այդ պարագաների մէջ: Յոյն բանաստեղծ թէոկրատէար, որ ապրում էր III դարում նախք., իբրև կրթված մարդ, մեծ յարգանք էր վա-

յելում Ալեքսանդրեան պալատում (Եգիպտոսում) Պտղոմէոս Ֆիլադելֆի և Սիրակուզի Հիէրօն թագաւորների մօտ: Այդ արքունիքներում շոայլութիւնը, ձոխութիւնը, փափկակեցութիւնը սաստիկ գարգացած էին. բանաստեղծը կամենալով ցոյց տալ շոայլ և ցոփ Ալեքսանդրեան արքունիքին աւելի պարզ և համեստ կեանքի բերկրութիւնները, սկսեց նկարագրել իր բանաստեղծութիւնների մէջ պատկերներ հասարակ մարդկանց, գլխաւորապէս սիկիլիական հովիւնների կեանքից: Այդ բանաստեղծութիւնները և կոչվեցին իղիլիաներ, հովուերգներ:

Նոյնպիսի պայմանների մէջ ծագեց և հոմէական իղիլիան: Եւ առաջին մշակողն եղաւ Վերգիլիոսը, Օգոստոսի օրով, երբ հոօմէական աղնուականութիւնը, յղփացած շոայլ և ցոփ կեանքով, սաստիկ ձանձրութիւնից չը գիտէր ինչ անել. այդ ժամանակի Վիրգիլիոսը իր արինչ անել. այդ ժամանակի Վիրգիլիոսը իր արտադրութիւնների մէջ սկսեց նկարագրել գիւղական և հովուական կեանքի քաղցրութիւնը, հետեւով թէօկրիտէսին:

Վերգիլիոսի հովուերգական արտադրութիւնները կոչվում են «քուկօլիկներ» (հովուական) և «էկլօզներ» (ընտիր): Առաջինների մէջ նա համուկէս է բերում հովիւններին. նրանք ըստ մեծի մասին կամ նմանողութիւն են թէօկրիտէսի հովուերգներին կամ ուղղակի նրանց կեղծումն, ուստի և ըստ որակութեան ստոր են յունակա-

Նից, որովհետև հասարակ կամ շինական կեանքի նկարագրութիւնն անբնական է:

Թէօկրիտէսը և յոյները հասկացան, թէ հովուերգների գլխաւոր բնորոշ յատկութիւնը—պատկերների բնականութիւնը և պարզութիւնն է: Սակայն նորագոյն եւրօպական ազգերի գրողները չը հասկացան այդ և փոխարինեցին բնական զգացումը կեղծ զգայականութեամբ, պարզութիւնը՝ ճռխութեամբ: Հովուերգը մեծ զարգացումն ստացաւ XVII և XVIII դարերում, եւրօպայում, երբ բարձր դասակարգերի սասաիկ ապականված բարերի պատճառով, նոյնիսկ փիլիսոփաները (Բուօն) սկսեցին քարողել թէ անհրաժեշտ է վերադառնալ ընուժեան ծոցը և պարզ կեանքին: Սակայն որովհետև այդ ժամանակ տիրապետում էր գրականութեան մէջ կեղծկասիքական ուղղութիւնը, ուստի և նոր իդիլիստները, փոխանակ նկարագրելու բնութիւնը պարզ, անպաճոյն, այնպէս, ինչպէս կայ, սկսեցին ազնուացնել նրան և նկարագրել միայն հովուական կեանքը: Այդտեղից և առաջ եկան պատօրաները (պատօր-հովիւ բառից), այսինքն արտադրութիւններ, որոնք բացառապէս նկարագրում էին հովուական կեանքը: Բայց այդ հովուական կեանքն ևս կեղծ էր նկարագրվում: Կեղծ-կասիքները սկսեցին իդէալականացնել հովիւներին և հովունիներին, նկարագրել նրանց իբրև անմեղ աղանիներ, որոնք խոր և քնքոյշ զգացումներ էին արտայայտում և պերճախօս ու շքեղ կերպով

արտայայտում իրանց զգացումները. մի խօսքով, նրանք նկարագրում էին մարդկանց այդպիսի վեհ յատկութիւններով, որպէսզի կարողանան բարձր աշխարհիկ դասակարգի մէջ համակրութիւն և նմանողութիւն զրգուել: Հովիւների միանքը, ըստ պատօրալների, հոսում էր խակեանքը, անհոգ ստուերախիտ, հովասուն բարակ-զաղ և անհոգ ստուերախիտ, հովասուն բարակ-ների, սաղարթախիտ անսապների մէջ, կուրկա-չուն աղբիւրների մօտ, անցնում էր քնքոյշ բա-րեկամուհիների կողքին: Այդ սանտիմենտալ ուղ-ղութիւնը սաստիկ ազգում էր բարձր հասարա-կութեան վրա և Մարիա Սնտուանէտա թա-գուհին ու իր պալատական տիկնայք ծրիանօն կոչված փոքրիկ պալատում հովուական կեանք էին վայելում: հազնում էին հովուական զեեստ, էին վայելում: հազնում էին բարձր զիլակներ բայց մետաքսից, կրում էին բարձր զիլակներ (թանկագին, ի հարկէ) և կարծում էին, թէ յա-րութիւն են տուել ոսկէ դարի պարզութեան: բայց այդ էին այսպէս աղքան պատօրական ուղղութիւնները բողոքեցին այդ կեղծ ուղղութեան գէմ և աշխատեցին իդիլիային տալ այն ուղղու-դիմ և աշխատեցին իդիլիային տալ այն ուղղու-թիւնը և բնաւորութիւնը, որ նա ունէր հին յոյների մօտ: Անգլիացի բանաստեղծ Գէորգ Կրաբբը (1754—1830) համարձակ և ուղղակի նայեց հանապազորեայ կեանքի վրա իր բոլոր մերկութեան և իրականութեան մէջ: Նրա իդիլ-իական արտադրութիւնը «Գիւղը» մի խարազն եղաւ կեղծ-կասիքական իդիլիական մուսայի համար:

Սակայն նորագոյն ժամանակի եւրօպական գրողները բողոքեցին այդ կեղծ ուղղութեան գէմ և աշխատեցին իդիլիային տալ այն ուղղու-թիւնը և բնաւորութիւնը, որ նա ունէր հին յոյների մօտ: Անգլիացի բանաստեղծ Գէորգ Կրաբբը (1754—1830) համարձակ և ուղղակի նայեց հանապազորեայ կեանքի վրա իր բոլոր մերկութեան և իրականութեան մէջ: Նրա իդիլ-իական արտադրութիւնը «Գիւղը» մի խարազն եղաւ կեղծ-կասիքական իդիլիական մուսայի համար:

Գերմանացի բանաստեղծներ Փոսսը (1761—1826), Հօմերոսի, Հօրացիայի և Տիբուլի հռչակաւոր թարգմանիչը՝ Բրոննէրը (1758—1850) և Գեթէլը (1850—1826) գարգացրին իսկական հայեացքը հովուերգութեան մասին, որ է՝ նկարագրել կեանքից, մարդկանց սովորական, առանին կենցաղից վերցրած պատկերներ, բայց այնպիսի մարդկանց (ով և լինեն), որոնք աչքի են ընկնում իրանց բարեարտութեամբ և վարում են խաղաղ, անդորր կեանդ: Ռուսաց մէջ էղիլիան զարգացնողը եղան Գնէդիչը (1784—1833) և Գօգօլը իր «Ստարօսվէտուկի Պամէշչիկներ» արտադրութեան մէջ:

5. Ծօման.

§ 18. Էպիքական բանաստեղծութեան մի առանձին և սաստիկ տարածված ճիւղն է կաղմում րօմանը կամ վէպը: Ներկայումս թէ ոռւսական, թէ եւրօպական և թէ հայկական բանասիրութիւնը արտայայտվում է նախամեծարապէս այդ ձևով. րօմանը գերակշիռ է հանդիսանում էպիքական բանաստեղծութեան բոլոր միւս տեսակների վրա և փոխարինել է հին դիւցազներգութիւնը: Ուրեմն՝ Ռուսան կամ վէպ կոչվում է մի էպիքական արտադրութիւն, որ ներկայացնում է հասարակական կեանքի գեղարումստական պատկերը, բանաստեղծի ստեղծած տիպիական անձնաւորութիւնների կեանքի եւ գործունէութեան պատմողութեամբ:

ա) Բօմանի բովանդակութիւնը բազմազան է: Բօմանի պաշտօնն է—ներկայացնել հասարակութեան բոլոր խաւերի և դասակարգերի մարդկանց կեանքին նկատողական պատկերը, նրանց բազմակերպ արտայայտութիւնների մէջ, ցոյց տալ, թէ «ինչպէս ենք ապրում մենք ամենքս, թէ մեծ եւ փոքր, հարուստ եւ աղքատ, քարի եւ շար, ինչպէս ենք զգում, ինչպէս պէտք է գործենք եւ զգանք եւ ինչով հետաքրքրվենք, ինչի պէտք է ծատենք, ինչից վախենանք եւ ինչի վրա յոյս կապենք»: Մի խօսքով՝ վէպը ներկայացնում է մարդկային որ և է մի կրքի, մի էտապի զարգացումը. նրա նպատակն է նկարագրել մարդկային իրական կեանքը, թէ անցեալ և թէ ներկայ, բոլոր իր լուսաւոր և խաւար կողմերով, մի որոշ ժամանակամիջոցում, դարեշրջանում: Բօմանից կարելի է ճշգրիտ և մանրամասն հասկացողութիւն կազմել մի ամբողջ դարի մասին, օրինակ Վալտէր Սկօտտի «Իվանօէ» վէպից կարելի է գաղափար ունենալ ասպետական էպօխայի մասին. Բաֆֆու «Սամուէլ» վէպից կարելի է գաղափար կազմել Հայաստանի Վ դարի կեանքի մասին: Պուշկինի, Տուրգենէվի, Գօգօլի, Դոստոէվսկու բօմանների մէջ գտնում ենք ուսւագիների, չինօմնիկների, կալուածատէրերի, ճորտատէրերի կեանքի նկարագրութիւնը իր բոլոր բազմազան շահերով և արտայայտութիւններով:

Բօմանը իր բովանդակութիւնը չէ սահմա-

նափակում միայն ներկայով, այլ բովանդակութիւն, նիւթ վերցնում է անցեալից, ժողովրդի անցեալ կեանքից (պատմական բօմաններ) և նկարագրում է այդ կեանքը նոյնքան բազմակողմանի, ինչպէս և ժամանակակից կեանքը: Նշանաւոր պատմական բօման է, օրինակ, Սենկեվիչի Յո՞ն երթաս վէպը, Վալտէր Մկոտտի՝ հվանիօէն, Էքերսի Փարաւոնի աղջիկը, Բաֆֆու Սամուէլը, Դաւիթ թէգը, Ծերենցի Երկունը IX դարու, Վիկոր Հիւգոի հննսուն եւ երեքը, Լ. Տօլստոյի Պատերազմ՝ եւ Խաղաղութիւն, և այլն:

Գրաւելով իր բովանդակութեամբ մարդկարին կեանքի բոլոր կողմերը, բօմանը խափանեց էպօսի ուրիշ տեսակների (պօէմանների, իդիլիաների) անհրաժեշտութիւնը, թէև նրանք կարող են գոյութիւն ունենալ և ունեն նրա հետ միասին:

բ). Ռօմանի ծագումը, նրա զարգացման եւ տեսակների պատմութիւնը: «Ռօման» (roman) խօսքի ծագումը վերաբերում են Հուօմայեցիների Գալլերի վրա ունեցած տիրապետութեան, ժամանակին, երբ Հուօմայեցիները, գրաւելով Յուլիոս Կեսարի օրով Գալլիան (Գալլիան), մացըին այդտեղ իրանց լեզուն և երկու լեզուների—տեղականի և գոեհիկ լատինականի—խառնումից գոյացաւ «Romans» (romanso), «Ռօմանուս», բարբար և առաջին շարադրութիւնները Գաղղիայում գրված են այդ բարբարով և նրանից ստացվել է «Ռօմանների» անոնը, որոնց

բովանդակութիւնն էին պատերազմական, կախարդական և էրօտիքական դէպքեր: Սակայն պէտք է ասելը որ, առհասարակ, վէպի սկիզբն դրվել է Յունաստանում թ. ծն. II—VI դարերի շրջանում, երբ երևացին զանազան ֆանտաստիքական պատմուածներ, որոնց գլխաւոր առարկան կազմում էր սիրոյ զգացմռնքի ամեն տեսակ արտայայտութեան նկարագրութիւնը: Մի երիտասարդ և մի աղջիկ, երկուսն էլ գեղեցիկ, փորձած չը լինելով սիրոյ զգացումը, հէնց առաջին տեսակցութիւնից բորբոքվում են փոխագարձ կրքով: Սակայն չարաշուք բախտը բաժանում է նրանց և նրանք, հիւծվելով բաժանումից, ճանապարհորդում են հեռաւոր երկրները և իրանց տանջանքները հաղորդում են անտառներին, լեռներին: Վերջապէս, յաղթելով բոլոր արգելքներին, նրանք գտնում են իրար և իրանց անփոփոխ սէրը գոհացնում են ամուսնական շաղկապով: Այդ տեսակ պատմուածները դեռ այսօր էլ կոչվում են «Յունական բօմաններ»:

գ). Ասպետական բօմաններ: Մենք սացինք, որ «Բօման» անունով առաջ կոչվում էին ամեն տեսակ զրականական արտադրութիւնները բօմանական լեզով: Ապա բօմանի պատմութեան մէջ առանձնապէս աչքի են ընկնում Միջին Դարերը. այդ ժամանակ երևացին այսպէս կոչված ասպետական բօմանները, առաջ Ֆրանսիայում, յետոյ Սպանիայում (XII դար):

Ասպետական բօմանի լաւագոյն ժամանակը Միջն Դարերի վերջն էր։ Ասպետական բօմանի բովանդակութիւնը բաւական միակերպ էր. բօմանը սկսվում է, սովորաբար, որ և է ասպետի ծագման և գաստիարակութեան պատմողութեամբ, յետոյ պատմվում է նրա ծառայութեան մասին իրերև պաժ (մանկլաւիկ) և իրրև զինակիր, նրա ասպետ ձեռնադրվելու մասին. ապա պատմվում են ասպետի սխրագործութիւնները տուրնիրների և որսորդութիւնների, կամ պատերազմական արշաւանքների և կամաւոր թափառումների մասին փառք և ասպետի պաշտած տիկոնջ տրամադրութիւնը ձեռք բերելու համար։ Ահա այդտեղ սանձարձակ ազատութիւն էր գրվում երեսակայութեան. նկարագրվում էր կախարդների աշխարհը, ուր հրաշքներին սահման չը կար, ուր ամեն բան հնարաւոր էր թվում, ուր երկինքը, երկիրը և ովկիանուը յօժար էին ամեն տեսակ հրաշքի. ասպետները կովում էին վիշապների հետ, ձեռք էին բերում սակէ ինձոր, անմահական ջուր, կախարդված սիրուհի և այլն։ Այդ տեսակի ամենալաւ ասպետական բօմանն է «Գալեան Ամաղիսը», որ երեաց XIV—XV դարում, հեղինակութիւն պօրտուգալցի Վասկօ դը Լուկյորի (մեռաւ 1325 թ., իսկ ըստ այլոց 1403 թ.): Ամաղիսը, ֆրանսիական Պէրիօն թագաւորի որդին է. բօմանի պլաստոր առարկան—Ամաղիսի և անզիփական թագաւոր Լիզուարտի դուստր՝ Օրիօնի սէրն է։ Այդ վեպը դարձաւ նախահայր բոլոր անհամար

ասպետական բօմանների և սպանիացի գրող Սերվանտէսը, որ յետոյ սաստիկ դէմ կացաւ ասպետական բօմաններին, գտնում է, որ նա այդ տեսակի մէջ, ամենալաւ գրված գիրքն է։ Սնոտիապաշտ և նախապաշտեալ միջնադարեան հասարակութիւնը, տրամադիր դէպի հաւատը առ ամեն հրաշալին և ֆանտաստիքական բանը, սաստիկ յափշտակվեց ասպետական բօմաններով և նրանց ընթերցման մէջ մոռացաւ իր ուղղակի պարտաւորութիւնները։ Այդ յափշտակութեան վնասը այնքան մեծ էր, որ Սպանիայում կառավարութիւնը ստիպված եղաւ հրատարակել գրական օրէնք (Կարլոս V-ի հրովարտակը 1543 թ.), արգելելով ասպետական բօմանների տպագրութիւնը, վաճառումը և ընթերցանութիւնը։

Դ). Երգիծաքանական բօման։ XVI դարում ֆրանսիացի գրող Բարլէն (1483—1553), «Գարգանոսուա» և «Պանտագրիէլ» բօմանով և սպանիացի հոչակաւոր գրող Սերվանտէսը (1547—1616) իր «Դօն Կիխոտ» ումանով սկիզբն գրեց «Երգիծաքանական վէպերին», որոնց առարկան է հասարակական ախտերի և թերութիւնների ծաղրումը։ Սերվանտէս սաստիկ յարձակվեց ասպետական բօմանների դէմ։ Նա ծաղրի և կծու հեզնութեան ենթարկեց կախարդական և հրաշալի աշխարհները, կախարդական պալատները դարձրեց հասարակ գինետներ, հակայ-ասպետներին—հողմաւոր ջրաղացներ, փառքի և պատուի ռագմիկներին հագցրեց ժանդուած գրահներ և այլն.

«Դօն-Կիխօտը»: Սերվանտէսի այս ըօմանը համաշխարհային հռչակ ունի և թարգմանված է եւրոպական լեզուներով, նոյնպէս և հայերէնու Այդ վէպի մէջ հեղինակը ենթարկեց ամւնախիստ սատիրայի, հեղնութեան անհեթեթ ասպետական թօմանները և դրանով վերջ դրեց իր ժամանակակիցների յափշտակութեան այդ թօմաններով: Վէպի գլխաւոր հերոսը, սպանիացի մի ազնուական, Դօն-Կիխօտ անունով, Լամանչ գիւղուց, խանգարեց երեակ այութիւնը ասպետական թօմանների մշտական ընթերցանութեամբ և 50 տարեկան հասակում մտածեց նոյնպէս դառնալ թափառող ասպետ: Հաղնելով ասպետական զրահ, ընտրելով իր սրտի համար տիկինն, յանձին Տօրօզո գիւղի մի գեղջկուհու՝ Դուլցինէա անունով, նա գնում է արկածներ որոնելու Սանխօ-Պանչօ անունով մի գիւղացու ընկերակցութեամբ, որին ձեռնադրում է իր զինակիր:

Թօմանի գլխաւոր բովանդակութիւնը և կայանում է հէնց Դօն-Կիխօտի չափազանց ծիծագութիւնը և անհեթեթ արկածների նկարագրութեան մէջ: Պատկերացնելով այդ արկածների բոլոր անհեթեթութիւնները, Սերվանտէսը շօշափելի կերպով ցոյց տուեց ամենքին, թէ ասպետական վէպերի մէջ նկարագրված ասպետների անգոյ սըխուրագործութիւնները—արդիւնք են միայն անզուսպ ֆանտազիայի, հիւանդուս երեակայութեան, թէ իրական կեանքի մէջ նման բան գոյութիւն չունի: Սերվանտէսը շարունակ հակադրում է իր թօմանի մէջ սովորական իրականութիւնը այն ֆանտաստիքական նկարագրութեան, որով նա կատարվում է ասպետական թօմանների մէջ, ստիպելով երեակայութիւնը խանգարված իր հերոսին տեսնել հասարակ առարկաների մէջ

հրաշալիք—հիւրանոցը Դօն-Կիխօտն ընդունում է դղեակի տեղ, գեղջկուհիներին — զքսուհիների տեղ, հողմահար ջրազացները—հսկաների տեղ, ոչխարիների երամակը—զօրքի տեղ. թաղման յուղարկաւորութիւնը—մողական տեսելքի տեղ և այլն:

Երբ ասպետական թօմանների բովանդակութեան ստութիւնը այդպէս մերկացրվեց, նրանք կորցրին որ և է նշանակութիւն:

Բարլէի «Դարձանտիւա և Պանտագրիւէլ» թօմանը ներկայացնում է մեզ XVI դարի բարքերի լայն պատկերը. նրա մէջ ծաղրի ենթակայ են եղել պապութիւնը, կուսակրօնութիւնը, կրօնական վէճերը (Կիւտերականների և կալվինիստների), սքօլաստիկ դաստիարակութիւնը, ասպետական թօմանները, վարչութիւնը, պատերազմները, արդարագատութիւնը և այդ դարեցը անի ուրիշ զանազան կողմերը. Մի գեղեցիկ դէպք է կազմում այդ թօմանի «Պանուրգեան Հօտ» գլուխը:

ե). Ըստանեկան - ըարոյախօսական թօման: XVI-րդ դարում, Անգլիայում, հիմն դրվեց բարոյախօսական թօմանին: Այդ աշանի բոլոր վիպասանների հոգուը կազմում էր այն, որ վերափոխեն բարքերը և մերկացնեն ախտերը. Նըրանք նպատակ ունեին տալ ընթերցողին հիմնական խրատ, ճշգրիտ ցուցմունք, օգտակար խորհուրդ: Բարոյախօսական թօմանի հիմնագիրներն եղան—Դէֆօ (1661—1731), Ռիշարդոն (1689—

1761), Փիլինգ (1707—1754) և Գօլդսմիտ (1728—1774): Առաջինի «Թօբինզօն Կրուզէ» ըօմանը, որ թարգմանվեց բոլոր լեզուներով, նաև հայերէն, երկրորդի «Պամէլա» և «Կլարիսսա Գարլօվ» վէպերը, երրորդի «Տօմ Ջօնս» և չորրորդի «Վէկֆիլդի երէցը» րօմանները ահազին տարածումն ունեցան, մասամբ ունեն և դեռ այժմ, օրինակ «Թօբինզօն Կրուզօն» և «Վէկֆիլդի երէցը»:

Սակայն պէտք է ասել, որ բարոյախօսական րօմանի թերութիւնն ևս այն էր, որ, ծգտելով համակրութիւն առաջ քերել դէպի քարին եւ այդ նպատակով նկարագրելով վէպերի մէջ առաջինի հերոսներին առանց որ եւ է ահտի, պակասութեան, իսկ շարագրոծներին՝ առանց որ եւ է լաւ կողմի, որպէսզի զգուանք յարուցանվի դէպի շարը—դրանով խափանվում էր իրական կեանքի ճշգրիտ և իսկական պատկերացումը: Հէնց իրական կեանքի անձիշդ նկարագրութիւնը և կազմում էր բարոյախօսական վէպերի գլխաւոր պակասութիւնը:

զ). Պատմական րօման: Պատմական վէպի հիմնադիրն եղաւ անգլիացի գրող Վալտէր Սկոտը (1771—1832). Նրա ազգեցութիւնը եւրօպական հասարակութեան վրա հզօր էր. բանաստեղծները և պատմաբանները սկսեցին ուսումնասիրել և նկարագրել պատմական կեանքը վիպասանների ցոյց տուած ճանապարհով: Այդ օրից պատմութիւնը այլ ևս չէր պատմողութիւն

պատերազմների և հաշտութիւնների մասին. Նա դարձաւ պատմողութիւն մարդի և հասարակութեան մասնաւոր կեանքի և գեղարուեստի արտադրութիւն: Վալտէր Սկոտտ իր րօմաններով հիմն դրեց Պատմութեան մէջ գեղարուեստական դպրոցին: Նրա լաւագոյն վէպերը համարվում են «Վիվերէյ», «Իվանհօէ», «Էկնելվօրտ», «Կվենտին Դիւրվալդ»:

է). Գեղարուեստական, կենցաղական կամ ժամանակակից րօման: XIX դարում երեսում է գեղարուեստական կենցաղական կամ բարքանկարագրական րօմանը, որ նկարագրում է վիպասանին ժամանակակից հասարակութեան կեանքը. իր բազմազան արտայայտութիւններով և այդ պատճառով կոչվում է նաև ժամանակակից րօման:

Գեղարուեստական կենցաղական րօմանի հիմն դրեցին անգլիացի հոչակաւոր գրողներ—Վալտէր Սկոտտ (1771—1832), Ջեկկերէյ (1811—1863) և Դիկէնս (1812—1870):

Դիկէնսը և Ջեկկերէյը իրանց հզօր տաղանդով և հիմորով դրին րօմանը այնպիսի բարձրութեան վրա, որ նա ահազին հասարակական նշանակութիւն ունեցաւ: Դիկէնսի «Պիկֆինեան կլուբի յիշատակագրերը» րօմանը հրաւիրեց հասարակութեան ուշագրութիւնը մնանկացած պարտապանների համար յատկացրված բանտերի անգոհացուցիչ վիճակի վրա: Նրա միւս րօմանը «Օլիվէր Ջվիստ» առաջ բերեց ծխական հոգա-

բարձութիւնների կազմակերպութիւնը: «Ծանր ժամանակներ» րօմանը նպաստեց գործարաններում և ֆաբրիկներում աշխատող բանուորների վիճակի բարւոքման: «Նիկոլայ Նիկէլբի» վէպը, ուր Դիկէնսը նկարագրում է իր դաստիարակութիւնը, միանգամայն ջնջեց հօրկշիրեան սոսկալի գլաբրոցները, որոնց մէջ տիրապետում էին զեղծումներ, տգիտութիւն և անգութ վարմունք երեխանների հետ: Ինքն անգլիական կառավարութիւնը ունկն էր զնում զիպասան Դիկէնսի ձայնին: Նշանաւոր է և նրա «Թօմբի և Որդին» րօմանը: Դիկէնս մերկացնում էր անգլիական հասարակական և ժամանաւոր հաստատութիւնների թոյլ կողմերը և ստիպում էր ուղղել թերութիւնները: Շնորհիւ այդ գրողների, րօմանը, ստանալով հասարակական նշանակութիւն, այսօր արգէն իր ձեռքն է առել հասարակական, քաղաքական, սօցիալական, զինւորական, գրականական, և նոյն իսկ զիտնական հարցերի լուծումը. նա շշափում է հասարակութեան բոլոր խաւերի, բոլոր դասակարգերի և կոչման կեանքը:

Ը). Պատմական և ժամանակակից րօմանի տարը ծրութիւնը: Գեղարուեստական րօմանների—պատմական և ժամանակակից—նպատակը մի և նոյնն է. երկուսն էլ ձգտում են տիպորէն և որքան հնարաւոր է ծշգրիտ նկարագրել անցեալ կամ վիպասանին ժամանակակից իրական կեանքի պատկերը իր բոլոր արժանաւորութիւններով

և թերութիւններով, բայց տարբերութիւնն այն է, որ ժամանակակից րօմանը ստեղծվում է հեղինակի իր ժամանակակից հասարակութեան կեանքի անմիջական ուսումնասիրութեան հիման վրա, մինչ պատմական րօմանը ստեղծվում է պատմութեան մանրամասն ուսումնասիրութեան հիման վրա, այն է պատմական կոթողների (տարեգրութիւնների, յիշատակագրերի, կենսագրութիւնների, նամակների), բանաւոր ժողովրդական արտադրութիւնների (պատմական և կենցաղական երգերի) և առհասարակ բանաւոր աւանդութիւնների հիման վրա:

Եզրակացութիւն: Ռօմանի նշանակութիւնը: Ռօմանը կամ վէպը քաղաքակրթական կարեար նշանակութիւն ունի:

Հուազին. վէպը նպաստում է մեզ ուսումնասիրելու ժամանակակից հասարակութիւնը եւ հեշտացնում է մեզ համար իրական կեանքի հակացողութիւնը:

Եթէ ի նկատի ունենանք, որ հասարակութիւնը ներկայացնում է բնաւորութիւնների ահազին բազմազանութիւն, որ նա բազմազան նըպատմակներ, ձգտումներ և կիրքեր ունի, մենք կը տեսնենք, որ ամեն մարդ չէ կարող իրականութեան այդ քառոյի մէջ գլուխ հանել ջոկել կարեորը անկարևորից, պատմահականից, էականը անէականից:

Վիպասանը, իբրև բանաստեղծ, իբրև մի մարդ, որ դիտելու առանձին ընդունակութեամբ

է օժտված, Նկատում է, թէ իրական կեանքի մէջ որն է կարեւորը և էականը, և որն է հանդիպանում պատահական և սակաւ-էական։ Այդ դիտողութիւնների հիման վրա, նա առանձին անհատների ըստ էականի միմիանց համաձայն քնարութիւնները միացնում է, այսինքն ստեղծում է տիպիքական անձանց պատկերներ, որոնք մարդկանց ամբողջ դասերի ներկայացուցիչներ են դառնում։ Եւ այդպիսով, այն ինչ որ կարող էին իմանալ միայն անձնական դիտողութեամբ և բազմաթիւ մասնաւոր անձանց հետ ծանօթութեամբ, մենք հեշտութեամբ իմանում ենք վեպի մէջ դուրս բերված մի քանի տիպերի հետ ծանօթութեամբ։

Երկրորդ, բօմանը օգնում է մեզ ուսումնասիրել մեզ ինքներնիս և ինքնաճանաչողութեան ծանապարհով տանում է մեզ դէպի կատարելագործութիւն։

Կարդալով բօմանը, մենք ակամայ ապրում ենք այն հոգեկան կուով, որով ապրում են բօմանի մէջ դուրս բերված հերոսները, մեզ զնում ենք նրանց տեղը, խորհում ենք թէ ինչ մտքերով մենք կը համակվէինք նոյնափի հանգամանքներում, համեմատում ենք մեզ առհասարակ բօմանի հերոսների հետ եւ այդ եղանակով մենք մեզ համար բացատրում ենք մեր սեպիական հոգեւոր աշխարհ։ Եւ ենթարկելով մեր խղճմտանքի դատարանին բօմանի հերոսների վարմունքը, մենք որոշում ենք, թէ որն է բարին, որն է չարը, որն է շի-

տակը, որը ստորը և այդպիսով ամրացնում ենք մեր ձգտումները դէպի բարին։ Ուստի և բօմանի հեղինակը ոչ մի դէպօւմ չը պէտք է թերագրէ ընթերցողին իր անձնական հայեացքները և համոզունքները։ Նրա գործը պէտք է լինէ նկարել կեանքի պատկերը, համաձայն իրականութեան, իսկ ընթերցողն ինքը կը քաղէ իր համար օգուտ գուրս բերված տիպերի հետ ծանօթանալով։ Մենք տեսանք, թէ որպիսի բարերար ազգեցութիւն գործեցին հասարակութեան վրա Դիկէնսի, Տեկկերէյի բօմանները, որոնք առաջ բերին Անգլիայում դպրոցների, ապաստարանների, բանտերի, հասարակական հաստատութիւնների բարւոքումն և վերանորոգութիւնը, իսկ Ամերիկայում Բիչէր Ստոու հեղինակի «Ճօմաս աղջօր իրծիթը» բօմանը առաջ բերեց նեղիները դուրս են բերված խեղաքիրված, այլափոխված կամ այսպիսիները, որոնք զրգում են մարդկային բնուրեան յուր կիրքերը եւ բնազդները։ Այդպիսի բօմանները ուղղում են մատադ մաքերը դէպի ծուռ ճանապարհ, խանգարում են երեւակայութիւնը և անբարոյականացնում երիտասարդ ընթերցողներին, ուստի վերջիններս պէտք է իմաստ մեծ ընտրութեամբ կարդան բօմանները։

Ծանօթութիւն։ Պէտք է իմանալ սակայն, որ ժամանակակից բօմանների մէջ կան բազմաթիւ բօմաններ, որոնց մէջ իրական կեանքի երեւոյրենք դուրս են բերված խեղաքիրված, այլափոխված կամ այսպիսիները, որոնք զրգում են մատադ կային բնուրեան յուր կիրքերը եւ բնազդները։ Այդպիսի բօմանները ուղղում են մատադ մաքերը դէպի ծուռ ճանապարհ, խանգարում են երեւակայութիւնը և անբարոյականացնում երիտասարդ ընթերցողներին, ուստի վերջիններս պէտք է իմաստ մեծ ընտրութեամբ կարդան բօմանները։

Պատմական, գեղարվեստական եւ ժամանակակից վէպերի հոչակատը հեղինակները, Անգլիացիների մէջ—Վալտէր Սկոտ, Դիկէնս, Տեկներէյ, Դիզրայելի: Ֆրանսիացիների մէջ—Շատօքրիան, Վիկտոր Հիլդո, Ալֆոնս Դողէ, Ալեքսանդր Դիւմա, Փլուէր, Բալզակ, Էմիլ Զօլա: Գերմանացիների մէջ—Շահլիագէն, Էրերստ: Լեհացիների մէջ—Սենկեվիչ, Պշերիչէվսկի, Տիրմայէր: Ռուսներիմէջ—Պուշկին, Գօգոլ, Ա. Տոլստոյ, Լև Տոլստոյ, Լերմոնտով, Տուրգենև, Դոստոէվսկի, Գրիգորովիչ, Գոնչարով, Չէխով, Գորկի, Պուտապենկօ, Շչեդրին, Զագոսկին և այլք:

6. Ի է պ ի կ.

Վէպիկ կոչվում է համեմատաբար փոքր ծառ եւ աւելի սակաւ բարդ բովանդակութիւն ունեցող վէպը: Մակայն տարբերութիւնը վէպի և վէպիկի մէջ այնքան անէական է, որ յաճախ մի և նոյն արտադրութիւնը կոչում են և վէպ, և վէպիկ, օրինակ Գօգոլի «Տարաս Բուլբա» արտադրութիւնը, Ռաֆֆու «Ոսկէ Աքալտղը», Մոպասանի վէպիկները և այլն:

7. Պատմուածք.

Պատմուածք կամ պատումն կոչվում է բանաստեղծական պատմողութիւնը որ են է դէպքի մասին, որ ընաւորոշում է պատմուածքի հերոսին, օրինակ Տուրգենէվի «Բէժին Լուգ» պատ-

մուածքը, Նամալեանի, Ահարոնեանի, Շահրիարի պատմուածները և այլն:

Հայ վէպերի, վէպիկների եւ պատմուածների հեղինակներ: Պերծ Պոօշեան, որին կարելի է համարել կենցաղական, գեղարուեստական հայ վէպի հիմնադիրը. Ռաֆֆի—պատմական հայ վէպի հիմնադիրը. Դ. Աղայեան («Յարութիւն և Մանուէլ»), Շիրվանզադէ, Վ. Փափագեան, Մուրացան, Լէօ («Մէլիքի աղջիկը»), Ա. Ահարոնեան, Նամալեան, Շանթ, Շահրիար (աղգագրական-կենցաղական վէպի հիմնադիր—«Զնուդ Քուշան»), Վահագան, Նար-Դոս, Ա. Արփիար, Տ. Կամսարական, Լ. Բաշալեան, Մ. Գերազ, տիկին Դիւստբ:

Բ). Լիրիքական ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

§ 19. Լիրիքական (յուն. Λύρα, քնար խօսքից) կամ քնարերգական կոչվում են այն բանաստեղծական արտադրութիւնները, որոնց մէջ արտայպտվում են քաղցրահնչիւն (ոտանատր) խօսքերով բանաստեղծի անձնական զգացումները, նրա մտքերը եւ իղձերը:

Այդպէս են, օրինակ, Պուշկինի «Դաքձեալ Հայրենիքում», Գամառ Քաթիբայի «Բաւէ, եղբարք», «Նկարիչ», «Լուսնի պատմութիւնը», Ալիշանի՝ «Բլբուլն Աւարայրի», Յովհաննիսեանի «Գիշերուան երգը» բանաստեղծութիւնները:

Իբրև բանաստեղծի անձնական զգացումների, նրա ցանկութիւնների, փափազների արտայայտութիւն, լիրիքական արտադրութիւնները սիրեկտիվ են: Սակայն այդ սիրեկտիվութիւնը պէտք է տոգորված լինի հանրամարդկային սկզբունքներով, այսինքն ցոյց տայ այնպիսի կողմեր, որոնք յատուկ են ամեն մի բանական էակի:

Ուրեմն, քնարերգական բանաստեղծութիւնը երևան է հանում բանաստեղծի ներքին աշխարհը, հոգեկան տրամադրութիւնները, այնպէս որ այդտեղ մենք տեսնում ենք նրա զգացմունքութիւնը, վիշտը, բերկրութիւնը, իղձերը: Սակայն դրանից չը պէտք է հետեւյնել, թէ քնարերգութանաստեղծը պէտք է խօսէ իր արտադրութիւնների մէջ միայն և եթ իր մասին. ոչ, նա կարող է իր քնարի բովանդակութիւն, նիւթ ընտրել զանազան առարկաներ երեելի և աներեւոյթ (հոգեոր) աշխարհից, բայց ամեն մի այդպիսի առարկայ նա քննում է յարաբերութեամբ իրան, իր զգացմունքին, իր մտքին: Օրինակ, Ալիշանի «Մասիսու սարերն» բանաստեղծութիւնը բաց է անում մեր առաջ բանաստեղծի հոգին, սիրտը, ամբողջ «եսը»:

Լիրիքական բանաստեղծութեան կոչման բացատրութիւնը: Հին յոյների մէջ մարդի ներքին աշխարհը արտայայտող քերթուածները (երգերը) երգում էին մի երաժշտական գործիքի ընկերակցութեամբ, որ կոչվում էր լիրա (քնար).

Ինտոյ այդ գործերի անունը յատկացվեց իրանց քերթուածներին, որոնք և կոչվեցին լիրիքական:

Ծանօթութիւն: Մարդի ներքին աշխարհը, նրա հոգեկան գրութիւնը, բացի լիրիկայից, արտայայտվում են և երաժշտութեան մէջ: Բայց հոգեկան շարժումների երաժշտական արտայայտութիւնը տարբերվում է իր անսրոջութեամբ: Մարդի զգացմունքը աւելի հասկանալի են լինում մեզ համար այն ժամանակ, երբ մենք գիտենք նրանց պատճառները և ծնեցնող հանդամանքները: Լիրիկան ցոյց է տալիս երկուան ևս, իսկ երաժշտութիւնը չունի գրա համար միջոցները: Հոգեկան շարժումների արտայայտութեան ամենակատարեալ եղանակը կայանում է լիրիկայի և երաժշտութեան միացման մէջ (ճայնակամ կամ գործիալիան):

Հաղիքական տարրը լիրիքական քերթուածների մէջ: Մարդի մտքերը, զգացումները և փափազները ծագում են արտաքին պատճառների ազդեցութեան ներքոյ, ուստի և լիրիքական քերթուածների մէջ յաճախ պատահում է արտաքին աշխարհի պատկերների նկարագրութիւնը, այսինքն պատահում է էպիքական տարրքայց որովհետև լիրիկայի մէջ զիմաւորը ոչ թէ արտաքին աշխարհի պատկերների նկարագրութիւնն է, ինչպէս էպօսի մէջ, այլ այն մտքերի և զգացումների, որոնք ծագում են քերթողի մէջ նրանց ազդեցութեան ներքոյ, հետեւաբար արտաքին աշխարհի առարկաները մտնում են լիրիկայի քովանդակութեան մէջ միայն բացա-

տրելու համար քերթողի որոշ հոգեկան տրամադրութիւնների պատճառները կամ առիթը։ Օքինակ, Նալբանդեանի «Ազքատ կին» ոտանաւորի մէջ խօսվում է ծինի, ցրտի, կառքի, ընթրիքի, զինու մասին, բայց այդ ոտանաւորների մէջ այդ առարկաները ինքն ըստ ինքեան մեղչեն հետաքրքրում, այլ մեզ հետաքրքրում են բանաստեղծի այն մտքերը և զգացումները, որոնք յուզում են նրան այդ առարկաների յիշողութիւնների ազդեցութեան ներքոյ։ Բանաստեղծը մատնացոյց է լինում այդ առարկաների վրա միայն իբրև իր խոհերի և զգացումների պատճառների վրա։

Լիրիքական քերթուածների գեղարուեստականութեան պայմանները։

Ինչպէս ամեն մի գեղարուեստական արտադրութեան, նոյնպէս և ամեն մի լիրիքական արտադրութեան կամ քերթուածի արժանաւորութիւնը կայանում է և որոշվում նրա գեղարուեստականութեամբ, որի պայմանները վերաբերում են մի կողմից՝ քերթուածի մէջ արտայայտվող զգացումներին, միւս կողմից՝ նրա արտայայտութեան ձևին, ուստի և այդ պայմանները լինում են ա) ներքին և բ) արտաքին։

ա) Ներքին պայմաններն են—1) հանրամարդկային նշանակութիւն, 2) անկեղծութիւն, 3) մաքրութիւն և 4) արտայայտվող զգացմունքի խորութիւն։

1) Քնարերգութեան մէջ, ինչպէս ասացինք, արտայայտվում են բանաստեղծի անձնական զգացումները, բայց միևնույն ժամանակ այդ անձնական զգացումը պէտք է հանրամարդկային նշանակութիւն ունենայ, այսինքն նապէտք է հասկանալի լինի ամենքին և իւրաքանչիւրին. նա կարող է ծագել ամեն մէկի մօտ նոյն պայմաններում, որոնց մէջ ծագել է բանաստեղծի մօտ։ Մ. Նալբանդեանի «Բանաստեղծ» և Ալիշանի «Մասիսու սարերը» բանաստեղծութիւնների մէջ արտայայտված են այդ բանաստեղծների անձնական զգացումները, բայց նրանք ունեն հանրամարդկային նշանակութիւն, որովհետև ամեն մի մարդի յատուկ է զգալ հիացումնի տես մի հսկայական սարի, կամ ոգեսորվել լիշելով այն մարդկանց, որոնք ծառայութիւն են մատուցել հայրենիքին։

2) Լիրիքական քերթուածի մէջ արտայայտված զգացումը պէտք է անկեղծ լինի, այսինքն բանաստեղծը պէտք է արտայայտէ միայն այն, ինչ խորապէս զգացել է և որով նա ապրել է։ Եթէ մեր սովորական կեանքի մէջ անկեղծութեան բացակայութիւնը վեգովում է մեզ, ևս առաել կեղծութիւնը անտանելի պէտք է լինի բանաստեղծութեան մէջ։ Եւ հէնց զրահամար է, որ կեղծ-կլասիքական արտադրութիւնների մեծ մասը մոռացված է այսօր, որովհետև նրանց մէջ չը կայ անկեղծութիւն, մինչ այնպիսի բանաստեղծութիւններ, ինչպէս

են «Ծիծեռնակ»-ը (Դոդոխեանի), «Առաջին համբոյր»-ը (Ա. Ծատուբեանի), «Մի վհատիր, եթէ աւեր և սուզն ընկաւ քեզ բաժին»-ը (Յ. Յովհաննիսեանի), «Ի բիւր ձայնից»-ը (Պէշիկթաշեանի), իբրև անկեղծ և ջերմ զգացումների արտայայտութիւններ, մեծ հաճոյք են պատճառում մեզ:

3) Քնարերգութեան մէջ արտայայտված զգացումը պէտք է մաքուր լինի: Քնարերգական բանաստեղծութեան նշանակութիւնն է — արթնացնել մարդի բարի եւ վեհ զգացումները, ուստի և ամեն մի կոպիտ, անբարոյական, մարդի կամ ամբոխի ստոր կրքերը և ինստինկտները շոյող բան չը պէտք է տեղ գտնէ քնարերգութեան մէջ: Լաւագոյն լիրիքական արտադրութիւնները արթնացնում են ընթերցողների սըրտում ամենաազնիւ, ամենավեհ զգացումներ — սէր առ մարդկութիւնը, հայրենիքը, սէր դէպի գեղեցիկը, բարին և չքնաղը: Օրինակ՝ Պուշկինի «Մարգարէ» ոտանաւորը: Մինչ այնպիսի ոտանաւորներ, որոնք կազմում են «Արեան Զայներ» ժողովածուն (Թիֆլիս, 1908 թ., հրատ. Ս. Մելք-Սողոմոնեանի), իբրև ամբոխի ստոր ինստինկտները շոյող և մարդի մէջ սպանութեան հակումներ դրդող միայն զգուանք կարող են արթնացնել ընթերցողի մէջ:

Ուստաց նշանաւոր բանաստեղծ Պուշկինը իր «Յուշարձան» (Памятникъ) ոտանաւորի մէջ արտայայտել է, թէ լիրիքական բանաստեղծու-

թեան նշանակութիւնն է՝ արթնացնել բարի և վեհ զգացումներ մարդի մէջ:

4) Քնարերգութեան մէջ արտայայտվող զգացումը պէտք է խոր լինի: Միայն բանաստեղծի խոր զգացումը կարող է ներգործութիւն անել ուրիշների վրա և արձագանք գտնել ընթերցողների սըտի մէջ: (Օրինակ՝ «Մեր հայրենիք թշուառ անտէը»):

բ) Լիրիքական քերթուածների գեղարուեստականութեան արտաքին պայմաններն են — 1) զգացմունքի արտայայտութեան նկարագրութիւնը 2) սեղմութիւնը, 3) լիզուի քաղցրահնչիւնութիւնը կամ երաժշտականութիւնը:

1) Լիրիքական քերթուածների մէջ բանաստեղծը արտայայտում է իր մտքերը և զգացումները ոչ վերացականօրէն, այլ ամփոփում է նրանց պատկերների մէջ: Արտայայտութեան նկարագրութիւնը և կայանում է այն պատկերի լուսութեան մէջ, որ բանաստեղծը ստեղծում է զգացումն արտայայտելու համար: Իսկ պատկերի լրութիւնը կայանում է ոչ թէ մանրամասնութիւնների մէջ, այլ հատու, կտրուկ գծերի մէջ, որոնցով ուրուազգուրմ է պատկերը: Այսպէս, օրինակ, Ռ. Պատկանեանի «Մայր Արաքսի ափերով» բանաստեղծութիւնը, ուր բանաստեղծը իր զգացումներն արտայայտել է պատկերօրէն, հատու, կտրուկ գծերով:

2) Գեղարուեստական լիրիքական քերթուածների մէջ արտայայտվում են խորունկ

զգացումներ, իսկ խորունկ զգացումները լինում են սեղմ, համառօտ, ուստի և լիրիքական երկասիրութիւնները ըստ ծաւալի լինում են կարծ. լաւագոյնները բաղկացած են մի քանի ոտանաւորներից: Այն երկասիրութիւնները, և ոչ միայն բանաստեղծական, այլ և արձակ երկասիրութիւնները, որոնք ծնունդ են դատողութեան և ոչ խորին, իսկական զգացմունքի, միշտ ձգձգված և երկար են լինում:

3) Լիրիքական երկասիրութիւնների մէջ խօսքը սկէտք է լինի քաղցրամնչիւն: Զգացմունքները թափվում են միշտ ներդաշնակ հնչիւնների մէջ—երաժշտութեան, երգի մէջ, իսկ խօսքի ամենաներդաշնակ ձեր ոտանաւորն է, յանդաւոր խօսքը. դրա համար էլ լիրիքական երկասիրութիւնները միշտ ոտանաւորով են գըրպում: Եթէ մի որևէ քնարերգական բանաստեղծութիւն վերածենք արձակի, իսկական գեղարուեստականութիւնը կը կորցնէ իր բոլոր նշանակութիւնը, ուստի և ճիշտ է նկատել ուսւացնշանաւոր քննադատ Բէլինսկին, որ իսկական գեղարուեստական լիրիքական երկասիրութիւնների բովանդակութիւնը չէ կարելի պատմել ուրիշ խօսքերով:

Լիրիքական բանաստեղծութեան տեսակները

§ 20. Ըստ ծագման, լիրիքական բանաստեղծութիւնը, ինչպէս և էպիքականը, երկու տեսակ է լինում. ա) ժողովրդական-բանաւոր և

բ) զրական-գեղարուեստական: Առաջինին պատկանում են երգերը. երկրորդին՝ օղան (ներբող), էլեզիան (եղերերգ), սատիրան (երգիծաբանութիւն), էափլաման (կծու հեգնութիւն) և հիւմորը:

Ե թ գ.

§ 21. Ժողովուրդը իր ներքին աշխարհը, իր մտքերը և զգացմունքները արտայայտում է միակ մի ձևով—պարզ, անպաճոյն ժողովրդական երգի ձևով:

Ժողովրդական երգը, երգը ժողովրդի խոհերի, իղձերի եւ զգացմունքի ակամայ, անպաճոյն արտայայտութիւնն է—խոհերի, իղձերի և զգացմունքի, որոնք ծագել են կեանքի բազմազան տպաւորութիւնների ազդեցութեան ներքոյ:

Երգերի պահանջը: Զգացումները երգեցողութեամբ արտայայտելու պահանջը մարդի բնութեան մէջ է դրված, ուստի և չը կայ մի մարդ, որ երգելու պահանջ չը զգայ (Շիլերն ասել է, թէ միայն չար մարդիկ երգ չունեն). և չը կայ մի ժողովուրդ, որ չունենայ երգեր. վայրենիներն անգամ ունեն երգեր: Ժողովուրդը, և մասնաւորապէս մեր հայ ժողովուրդը, երգում է իր երգերը ամենաբազմազան վիճակների մէջ. մայրը երգով է քնեցնում երեխային, հարսանիքները երգով է քնեցնում երեխային, հարսանիքները առանց երգի չեն կատարվում, երգում են քէֆերի և խրախճանի ժամանակ, հանդիսաւոր

արարողութիւնների, նոյնիսկ սուզի ժամանակ, երգում է գիւղացին հողը մշակելիս և այլն:

Ժողովրդական նրգերի տեսակները

Ժողովրդական երգերի բովանդակութիւնը շատ բազմազան է, որովհետեւ ժողովուրդը երգի ձեփի կամ կաղապարի մէջ է ձուլում, արտայայտում իր հոգեկան տրամադրութիւնների ամբողջ բազմազանութիւնը։ Սակայն, ըստ բովանդակութեան, բոլոր ժողովրդական երգերը կարելի է դատուրել երկու մեծ հատուածների—ա) ղիցաքանական կամ ծիսական երգեր և բ) կենցաղական երգեր։

ա) Ղիցաքանական կամ ղիցազնական, ծիսական կոչվում են այն երգերը, որոնցով արտայայտվում են բնութեան ոյժերն, աստուածացնող ժողովրդի կրօնական զգացումները։

Նրանք ղիցաքանական կամ ղիցազնական կոչվում են այն պատճառով, որ նրանց մէջ պահպանվել են հին հեթանոսական (միթական) հաւատալիքները, իսկ ծիսական կոչվում են—որովհետեւ հին ժամանակ կրօնական արարողութիւնները կատարվում էին այդ երգերի երգեցողութեամբ։ Այդ երգերը կարելի է անուանել և միհենական։

Այդ տեսակ ղիցաքանական կամ ղիցազնական երգերի օրինակ կարող է ծառայել հայոց հին հեթանոսական երգերից՝ «Երկնէր երկին եւ

Երկիր, երկնէր եւ ծիրանի ծով» երգը և այլ մեհենական երգերը։

բ) Կենցաղական կոչվում են այն երգերը, որոնց մէջ արտայայտվում են ժողովրդի զգացումները, ծագած, առհասարակ, ընդհանուր կեանքի եւ մասնաւրապէս ընտանեկան կեանքի սլայմաններից։

Մարդկային կեանքի մէջ նշանաւոր դէպքերն են ծննդեան, ամուսնութեան և մահուան դէպքերը։ Ամենից շատ ուրախական երգերով ուստանդութիւններով հարուստ է հարսանիքը։ Հայերը, ինչպէս և ուրիշ ազգերը, առհասարակ, մեծ հանդէսներով և ուրախութիւններով էին կատարում հարսանիքը, իսկ թագաւորների, իշխանների և նախարարների հարսանիքները հասարակական տօնախմբութիւններ էին, հարապարակներում ժողովուրդը պարում էր (պար և պարանցիկը) և խաղեր ասում. այդ երգերը կոչվում էին «ցուցք» կամ «ցցոց երգք», որոնց բովագակութիւնը, գժբաղդաբար, մեզ չէ հասել։

Ահա հարսանեկան երգերի մի օրինակ. «Տեղուուկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարզարիտ ի հարսնութեան Սաթինկան»։

Բացի գրանից, ժողովուրդը սովոր է, աշխատութիւնից յետոյ, ազատ ու տօն օրերին՝ պարեր սարքել և տօնական երգեր երգել, պահպանութեամբ զանազան հին, յաճախ հեթանոսութիւնից մնացած սովորութիւններ։ Այդ տեսակ երգեր այսօր էլ շատ կան մեր մէջ և դրանց

մէջ նշանաւոր են՝ վիճակի և եալլի երգերը (օր. «Զան գիւղում, զան ծաղիկ» երգը):

Սակայն, որովհետև մարդկային կեանքը բարկացած չէ միայն ուրախութիւններից և զուարճութիւններից, այլ նաև զանազան ձախորդութիւններից, գժեադդութիւններից, հիւանդութիւններից, աղէտներից, ուստի և բազմաթիւ են տըխուր, թախծալի, սպային երգերը։ Հեթանոսական հայոց ժողովրդական երգերից նշանաւոր էին ողբերը, որ երգում էին յուղարկաւորութեան ժամանակ յատուկ վարձված լալկան կանայք, որոնք կոչվում էին «եղերամարք» կամ «ձայնարկու գուսանը»։ Նրանք երգում էին իրանց ողբերը պարելով և ծափ տալով և պատմելով հանգուցեալի սիրագործութիւնները, քաջութիւնները։

Հայկական կենցաղական երգերի ընաւորութիւնը։ Հայկական կենցաղական երգերը բնորոշվում են իրանց թախծալի, եղերերզական (էլեգիական) և տիրուր բնաւորութեամբ, և տիրապետող նիւթը նրանց մէջ կամ յուսահատ սէրնէ, կամ բողոքն ընդդէմ բռնութեան, կամ մայր-հայրենիքի փափագը, կարօտը։ Առ հասարակ հայ ժողովրդական երգերի մէջ կարմիր թե՛լ պէս անցնում են վիշտը, թախիծը, բողոքը։ Այդ բացատրվում է 1) կեանքի դառնութիւններով, 2) անընդհատ ասպատակութիւններով, արշաւանքներով, աւերումներով, որոնց ենթակայէր Հայտատանը, 3) ընտանեկան կեանքի ծանր

պայմաններով (բռնակալութիւն և կամայականութիւն ընտանիքի մէջ), 4) տնտեսական եւ քաղաքական ծանր վիճակով։

Ժողովրդական երգերի առանձնայատկութիւնները։ Ժողովրդական երգերի առանձնայատեղութիւններն են, ըստ ներքին կողմի—ա) անկեղծութիւն եւ խորութիւն զգացմունքի. Ժողովուրդը հեղը է իր երգերի մէջ միայն այն, ինչով որ ապրել է և ինչով որ զգացել է իրողապէս. բ) տոնի, ոճի քնքշութիւնը սիրազեղութիւնը, որոնք բացատրվում են ժողովրդական բնաւորութեան փափելութեամբ. ոճին քնքշութիւն և սիրազեղութիւն տալիս են յաճախ գործածվող փաղաքշաթիւն տալիս են յաճախ գործածվող փաղաքշաթիւն մտերմական խօսքերը (հոգի ջան, հոկան և մտերմական խօսքերը (հոգի ջան, հոգեակս, որդեակս, նազելի, աշքի լոյս, հրեշտակի և այլն):

Ժողովրդական երգերի առանձնայատկութիւններապէին կողմից կազմում է ա) լնզուինկարչութիւնը. Ժողովրդական երգերը յաճախ սկսվում են ղիմումով առ ընութիւնը, նրանց մէջ առատ են համեմատութիւններ, էպիտէտներ (արծաթափայլ համեմատութիւններ, զապոյտ երկինք, որախտավայր). բ) վոլուսին, կապոյտ երկինք, որախտավայր). վիշտուք, ջահել և նոր ախարերականութիւն. դիցուք, ջահել և նոր ամուսնացած կինը դժոն է իր վիճակից, ամուսնութիւնը անաջող է գուրս եկել. նա տեսնում է, որ իր կեանքը խորտակված է, ընկել է անէ, որ իր կեանքը խորտակված է, ընկել է անէ, որ իր կեանքը կարողանալով ուղղակի դունդի մէջ, բայց չը կարողանալով ուղղակի յայտնել իր ցաւը՝ նա իր եռգում յիշում է այն յայտնել իր ցաւը՝ նա իր եռգում յիշում է այն

վիճակը, որի մէջ գտնվում է խոր գետի մէջ
ընկածը, և ասում է.

Դեռ նի մտայ՝ խոր ա,
Քաթան շապիկս նոր ա,
Իմ նանին խաբար արէք,
Ես օլքիա օլքիա կորայ *):

Կան և մի շարք ժողովրդական երգեր (լի-
քիքական), որոնց նիւթը պատմական անցքեր են
կազմում, օր. «Այ հաւար Բայազիտ առեցին»,
կամ «Ափսոս քեզ հայոց խեղձիկ ժողովուրդ»: **)

Արուեստական ժողովրդական երգեր: Առան-
ձին անհատներից կազմված լիրիքական արտա-
գրութիւնները, նմանողութեամբ ժողովրդական
երգերի, ծառայում են իբրև անցողական ձև ժո-
ղովրդական-բանաւոր լիրիքական բանաստեղծու-
թիւնից դէպի գրական-գեղարուեստական արտա-
գրութիւնները: Ռուսաց մէջ շատերն են աշխա-
տել շարադրել լիրիքական քերթուածներ ժողո-
վրդական ոգով, օր. Մերզլեակօվ, Ցիգանօվ,
Դէլվիգ, բայց նրանց փորձերն անաջող են ան-

*) «Բանահիւսութեան տեսութիւն» Յ. Ճաղարբէ-
գեանի:

**) «Բնար Հայկական» Միանսարեանի:

ցել, որովհետև ժողովրդական երգեր հիւսել
կամեցողը պէտք է նախ՝ անպայման քանաստեղ-
ծական տաղանդ ունենայ, երկրորդ՝ գեղեցիկ
կերպով ծանօթ լինի ժողովրդական կեանքի պայ-
մանների հետ ծանօթ լինի ժողովրդական մաս-
սայի, զանգուածի շահերի հետ: Այդ կողմից
հոչակաւոր ռուս բանաստեղծ Պուշկինը իր «Ձըկ-
նորսի և ձկնիկի» մասին երգով հիանալի կեր-
պով կարողացել է նմանել ժողովրդական երգչիւ-

օդա (Ներքող)

§ 22. Օդա նշանակում է իսկապէս ներբողա-
կան երգ ի պատիւ աստուածների, դիւցազների,
հերոսների և ականաւոր քաղաքացիների: Նա ծա-
գել է յոյների մէջ և կապակցված էր կրօնական
արարողութիւնների և քաղաքացիական տօնա-
խմբութիւնների հետ:

Պարսկական պատերազմների փայլուն դա-
րաշրջանում (490—480) յունական լիրիկան
հասաւ բարձր կատարելագործութեան: Այդ ժամա-
նակի լիրիկների կամ քնարերգուների մէջ առանձ-
նապէս հոչակվեց Պինդարը *): (520—490 թ.ն.թ.):
Ժամանակը պահպանել է մեզ համար նրա քեր-
թուածներից միայն յաղթական երգերը, կոչված
էլինիկիաներ, որովհետև նրանք շարադրվում

*) Յոյները ունէին 9 լիրիկներ—Ստէլիքօր, Ալ-
կէյ, Սիմօնիդ, Իբիկոս, Ալկման Վակքիլիդ, Անակրէօն,
Սաֆօ և հոչակաւոր Պինդարը:

էին ի փառաբանութիւն յաղթողների յունական նուիրական խաղերի մէջ—Օլիմպիական, Պլթիական, նումէյական և հստմիական։ Խաղերի մէջ տարած յաղթութիւնից յետոյ, ի պատիւ յաղթականի կազմվում էր խրախճան, տօնախըմբութիւն։ Կազմվում էր կրօնական թափօր, որ գնում էր տաճարը կամ ողջակէզի վայրը։ այդտեղ մատուցվում էր զոհը կամ ողջակէզը, յետոյ սկսվում էր խրախճան, ուր երգեցիկ և նուագածուների խումբերը երգում էին ի պատիւ յաղթողի յատկապէս այդ դէպքի համար շարադրված յաղթական երգ կամ էպինիլիա։ Պինդարի «յաղթական երգերը» շարադրված են այդպիսի դէպքերի առիթով։ Նրանք համակված են վեհ ազգային բնաւորութեամբ։ Բանաստեղծը կարողանում է միացնել յաղթութիւնը խաղերի մէջ յոյների կրօնական և հայրենասիրական աւանդութիւնների հետ, յաղթողի ոչ միայն ամբողջ ցեղի և քաղաքի, այլ և ամբողջ Յունաստանի պատմութեան և քաղաքի հետ։ Այդտեղից և առաջ է եկել օգաների վեհ, հանդիսաւոր տոնը։ Ամեն մի օգա շնչում է մի ինչոք նուիրական զգացումն, որպէս թէ համակված է աստուածային էութեամբ։ Այն յաղթողներին, որոնց փառաբանում էր Պինդարը, իրօք հերոսներ էին այն ժամանակի յոյների աչքում։ Նրանց սխրագործութիւնները տեսնելու համար գալիս էին ամենահեռաւոր գաղութների բնակիչները։ Ժամանակակից յոյները ճանաչեցին Պին-

դարի քնարի բարձր արժանիքը, և բանաստեղծն իր կենդանութեամբ ահազին հոչակ էր վայելում։ Հոօմայեցիները ոսկեայ տառերով գծագրեցին այն երգը, որով նա փառաբանել էր իրանց կղզին։ Աթենացիք ահազին պատիւներ մատուցին նրան։ Թեբացիք խորին երկիւղածութեամբ պահպանում էին այն տունը, ուր ծնվել էր բանաստեղծը։

Մեզ հասել են միայն 45 էպինիկիաներ, որոնք, ըստ այն խաղերի, ուր երգվել են, բաժանվում են 4 տեսակի—Օլիմպիական, Պիթիական, նումէյական և հստմիական։

Պինդարի երգերը երգվում էին խմբովին։ Պինդարի օղաների առանձնայատկութիւնները։ Այդ առանձնայատկութիւնները, որոնց ապագայում աշխատեցին նմանել կեղծ-կառսիքները, հետևեալներն էին—1) Օղայի առարկայի կարեւորութիւնը։ Խաղերի մէջ յաղթական հանդիսացողները, որոնց փառաբանել է Պինդարը, խաղապէս հերոսներ էին այն ժամանակի յոյների աչքում։ ամբողջ Յունաստանը վազում էր տեսնելու իր այդ հերոսների քաջագործութիւնները։ 2) Օղաների մէջ արտայայտված զգացմունքի ոյժը, խորութիւնը եւ անկերծութիւնը։ Յաղթականների քաջագործութիւնները բոլոր հանդիսականներին աննկարագրելի զմայլանք էին պատճառում։ Բանաստեղծն ինքն ուրիշների հետ միասին զմայլվում էր փառաբանված յաղթականի քաջագործութիւններով և իր անկեղծ

գմայլանքը արտայայտում էր մի էպինիկիայով, 3) Մտքերի շարադրութեան մէջ խիստ լօգիքական հետեւողականութեան քացակայութիւն (լիրիքական անկանոնութիւն): Պինդարը թոյլ էր տալիս իրան արագ և անակընկալ անցումն մի առարկայից դէպի միւսը, մի զգացումից դէպի մի ալ զգացումն, որ հետեւանք էր խորունկ զգացման թափերի: 4) Շեղումն օղայի գլխաւոր առարկայից կամ էպիգորիքական պատմուածներ դիցաբանական և հերոսական դարաշրջաններից: Պինդարը գործ էր դնում այդ շեղումը փառաբանված հերոսին աւելի բարձրացնելու նպատակով, որովհետեւ այդ էպիգորիքական պատմուածների մէջ բանաստեղծը յիշում. էր այն աստուածներին կամ հերոսներին, որոնք համարվում էին կամ յաղթողի նախնիք խաղերի մէջ կամ նրա ցեղի հովանաւորներ: 5) Ոճի կամ տոնի առանձին հանդիսաւորութիւն: Պինդարի օդաների մէջ հանդիսաւորանը բնական ձև էր օդայի բովանդակութեան համար. ուժեղ և խորունկ զգացումները միշտ արտայայտվում են վեհ տոնով: 6) Վերջապէս, առարկայի կարևորութիւնը ստիպում էր Պինդարին խոստովանել, թէ իր ոյժերը անբաւարար են հերոսին ըստ արժանոյն փառաբանելու համար, ուստի, բնականապէս, նադիմում էր աստուածներին (Ապօլօնին, մուսաներին), ինդրելով իջեցնել իր վրա ոգետրութիւն:

Եւ այսպէս զգացմունքի անկեղծութիւնը, ոյժը եւ խորութիւնը, նրա արտայայտութեան անսովոր պատկերացումը—ահա այն յատկութիւնները, որ յոյները շատ բարձր էին գնահատում Պինդարի օդաների մէջ և որոնց համար նրան լիրիկայի շրջանում յատկացրին նոյնպիսի պատուաւոր տեղ, որպիսին յատկացված էր Հոմերոսին էպօսի շրջանում:

Այս ամենից պէտք է եզրակացնենք, որ այն առարկան, որի առիթով գրվում է օդա, ներբող, պէտք է լինի կարեւոր, ընդունակ սաստիկ ցնցել բանաստեղծի հոգին, իսկ օդաների մէջ արտայայտվող զգացումը պէտք է լինի վեհ, ուժեղ և խոր. տոնը կամ ոճը պէտք է լինի վեհ, հանդիսաւոր:

Եւ ուրեմն՝

Օդա կամ ներբող կոչվում է մի լիրիքական քերթուած, որի մէջ զգացմունքի քնատրութեան համապատասխանող տոնով, ոճով արտայայտվում է հիացմունքի զգացումն, որ ծագել է մի որեւէ կարեւոր առարկայից—մեծ մարդերի սրխրագործութիւնից կամ ժողովրդի կեանքի մէջ մի նշանաւոր ոչպիցից:

Հայկ դիցագնի կամ նահապետի, Վահագնի, Արտաշէսի, Վարդան Մամիկոնեանի սխրագործութիւնները կամ հայ ժողովրդի կեանքի մէջ առաջացած նշանաւոր փոփոխութիւնը—քրիստոնէութեան ընդունելութիւնը—ահա կարեւոր առարկաներ՝ ներբողների համար: Ուստաց մէջ

1812 թւի պատերազմը, որ ցնցեց ամբողջ Ռուսաստանը, առիթ եղաւ Լերմոնտօվ բանաստեղծի համար գրել «Բօրոգինո» (Бородино) օդան: Պուշկինը գրեց «Կլևետնիկամ Ռուսի» օդան, որի մէջ արտասովոր ոյժ կայ և եռանդով արտայայտել է հայրենասիրական հպարտութեան զգացումը, որ վիրաւորվել էր արևմտեան պետութիւնների ներկայացուցիչների անարդար յարձակումներից 1831 թւի լեհական ապստամբութեան առիթով:

Մեր հայոց եկեղեցական երգերի, ներբողների, տաղերի, շարականների մեծ մասը օդաներ են ներկայացնում:

Օդան Հոօմայեցիների մօտ: Յոյների օդան անցաւ Հոօմայեցիներին: Հոօմէական նշանաւոր լիրիք բանաստեղծ Հօրացիոսը, որ ապրում էր Օգոստոսի ժամանակ, նմանողութեամբ Պինդարի գրեց օդաներ, որոնք սակայն տարբերվում են յունական կենդանի, երգեցողական բանաստեղծութիւնից իրանց դիդակտիքական բնաւորութեամբ, ուստի և կոչվում են դիդակտիքական կամ փիլիսօփայական, որովհետև այդ օդաների գլխաւոր առարկան ոչ թէ բանաստեղծի զգացումն է, ինչպէս Պինդարի օդաների մէջ, այլ խորհրդածութիւնը:

Հօրացիոսի ամենանշանաւոր օդաներն են հայրենասիրականները, որոնք բուռն սիրով են համակած առ հոօմէական հին առաքինութիւնը (νίτες): Բացի գրանից, նրանք պարունակում են

բանաստեղծի շատ ժամանակակիցների կենդանի նկարագիրը, օրինակ՝ Օգոստոսի, Մեկենասի, Վերգիլիոսի: Հօրացիոսը համարում է իրան մի խոնարհ մեղու ընդդէմ վեհապանծ կարապի, որպիսին է յոյն քնարերգու Պինդարը:

Կեղծ-կլասիքական կամ արուեստական օդան: XVII և XVIII դարերում, նոր Եւրոպայում, ուր տիրապետում էր ամբողջ գրականութեան մէջ կեղծ-կլասիքականութեան ուղղութիւնը, օդան, ինչպէս և պօէման, դարձաւ արուեստական, նվանողական քերթուած: Եւրոպական քերթողները սկսեցին ստրկօրէն հետեւել, նմանել հին Յունական և Հոօմէական բանաստեղծներին և գործածել նրանց ձևերը: Ֆըրանսիացի գրող Բուլաօն, որ կազմեց կեղծ-կլասիքական էպոսի թէօրիան, կազմեց կանոններ նոյնպէս և օդաներ շարադրելու մասին:

Համաձայն այդ կանոնների, օդան պէտք է շարադրվէր հետեւեալ պայմանների հիման վրա—
1) առարկան պէտք է լինէր կարեւոր, 2) զգացումը ոգեւորեալ 3) քնարերգական անկանոնութիւն, 4) էպիգոններ, 5) ոճը՝ հանդիսաւոր, 6) որքան կարելի է շատ մօտ նմանելու համար Պինդարի օդաներին, փոխ առնել պատկերներ կլասիքական դիցարքանութիւնից, գործածել կլասիքական աստուածների անունները, «Երգեմ», «քնար» խօսքերը, 7) վերջապէս, ամեն մի օդապէտք է բաղկացած լինէր որոշ թւով՝ մասերից

— նախերզանքից, առաջարկից և եզրակացութիւնից:

Այս ամենից պարզ է, որ ստրկական նմանողութիւնը Պինդարի օղաներին, ի բացակայութեան այն պայմանների, որոնց մէջ ստեղծում էր յոյն բանաստեղծը իր անմահ քերթուածները, դարձնում էր կեղծ-կլասիքական օդան վերին աստիճանի արուեստական։ Եւ հէնց այդ պատճառով, կեղծ-կլասիքական շրջանի ամենաստադաւոր գրողների նոյն իսկ անկեղծ հիացման զգացմունք արտայայտող քերթուածները, օրինակ ոռւսաց բանաստեղծ Դերժավինի օդաները, դարձեալ չեն գործում ընթերցողների վրա տպաւորութիւն, որովհետևնրանց շինուածքը արուեստական է։

Ոռւսաց մէջ կեղծ-կլասիքական թէօրիայի կանոնների համաձայն օդաներ գրել են—Տրեգեակօվսկի, Լոմօնոսով, Դերժավին։ Վերջնիս լաւագոյն օդան համարվում է «Ֆէլիցա» քերթուածը։

Հայոց մէջ կեղծ-կլասիքական թէօրիայով գրված քերթուած կարելի է համարել Բագրատունու «Հայկ Դիւցազնի» մի քանի մասերը։

Օդաներով, մանաւանդ կեղծ-կլասիքական օդաներով, հարուստ է թիւրքահայոց գրականութիւնը։

Գեղարուեստական օդա։ Կեղծ-կլասիքականութեան անկմամբ (XVIII դ. վերջին և XIX դարի սկզբին), երբ բանաստեղծութիւնից

արտաքսվեց արուեստական շինուածքը, երեւաց գեղարուեստական օդան, իբրև բանաստեղծական մի արտայայտութիւն, որի մէջ ազատորէն և ընականաբար արտայայտվում են անկեղծ-ոգեւորնեալ զգացումներ, ծագած մի կարևոր առարկայի շնորհիւ։ Այդ տեսակ գեղարուեստական օդաների օրինակ կարող են համարվել Պուշկինի «Նապոլեոն», «Քլեվետնիկամъ Россія», «Պոլководецъ», իսկ հայոց մէջ «Խորհուրդ մեծ եւ սքանչելի», «Տէր, կեցո դու զչայս» օդաները։

Հիմն (օրիներգ) կամ կրօնական օդա։ Օդաների մի առանձին տեսակն են կազմում կրօնական ներբողները, որոնք կոչվում են հիմն (օրիներգ)։ Հիմնի առարկան՝ կրօնական զգացումն է, ամենանուիրական զգացումն, որ արձագանք է գտնում ամեն մի մարդի հոգու մէջ։ Հիմնի մէջ արտայայտվում է փառաբանութիւն Աստուծուն, իբրև Արարչի և տիեզերքի նախախնամողի, և քրիստոնէական խոնարհութիւն ու ապաշխարութեան զգացումն։

Ուստի և կրօնական զգացմունքի բանաստեղծական արտայայտութիւնը կոչվում է հիմն (օրիներգ)։

Օրիներգի օրինակներ։ Ոռւսաց գրականութեան մէջ լաւագոյն օրիներգներն են—Դերժավինի «Աստուծ» (Յօր), մի քերթուած, որ թարգմանվել է եւրօպական բոլոր լեզուներով։ Ժուկովսկու «Տէր, կեցո զարքայն» («Եօյշ Цարյ

Խրան), որ կազմում է այժմ ոռւսաց ազգային հիմնը, ինչպէս ֆրանսիացիների մօտ «Մարսէյլէօզը»։ Հայոց մէջ իբրև օրէներգի օրինակ կարելի է ցոյց տալ «Տէր, կեցո դու զհայս» (Մ. Թաղիաթեանցի), «Տէր, կեցո դու զհայաստան» (Խորէն վ. Գալֆայեանի) և այլն։

Օրէներգներ կարելի է համարել թէ հրէական Սաղմոսները և թէ հայոց Շարականները, որոնք կրօնական բանաստեղծական սբանչացման հիանալի օրինակներ են։

Հին յոյների մօտ հիմն կոչվում էին ներբողական երգերը ի պատիւ աստուածների։ Յունական հիմների առանձնայատկութիւնն այն էր, որ նրանց բովանդակութեան մէջ գերակշռում էր էպիքական տարրը։ Այդպէս էր, օրինակ, հիմնը ի պատիւ Դելֆիեան Ապօլօնի, որի ամբողջ բովանդակութիւնը բաղկացած է էպիքական պատմուածից այդ հզօր աստուծու ծննդեան հանդամանքների մասին։

Է լ է գ ի ա

(Յուն. էլէզօս—սպային, վշտալի, թախծալի երգ)

§ 23. Էլէզիա կամ Եղերերգ լնարերգական այն քերթուածն է, որի մէջ արտայայտվում է բանաստեղծի վշտի զգացմունքը՝ ծագած որեւէ տիսուր երեւոյթի պատճառով։

Էլէզիան՝ լիրիկայի ամենատարածված ձևն է, որովհետեւ թէ մասնաւոր անհատի և թէ հա-

սարակական կեանքի մէջ շատ առիթներ կան՝ տրամադրող մարդին դէպի թախիծ, տխուր իսուներ և վշտալի զգացումներ առաջացնող, ուստի և էլէզիայի բովանդակութիւնը կազմում են փշրված յոյսերը, խորտակված իդէալները, սիրելի անձանց կորուստը, եղբայրակիցների տանընքը, հայրենիքի թշուառութիւնը, քաղցր և երջանիկ օրերի անդառնալի կորուստը և այլն։ Եւ այդ է պատճառ, որ ամեն մի լիթիկ-բանաստեղծի արտադրութիւնների մեծ մասը բաղկացած է լինում էլէզիաներից։

Էլէզիայի ծագումը եւ զարգացման պատմութիւնը։ Էլէզիան իր ծնունդն ստացել է Փոքր-Ասիայում, յոյների մէջ։ Առաջ նա աւելի ընդարձակ նշանակութիւն ուներ և բազմազան բովանդակութիւն։ Լիդիացիների և Կարիացիների մէջ էլէզիաները կոչվում էին թաղւան երրոր մէջ էլէզիաները կոչվում էին տաւիդով։ Փոքր-Ազեր, որոնք երգվում էին տաւիդով, Փոքր-Ասիայից էլէզիան անցաւ Յունաստան, ուր բանաստեղծները սկսեցին նրանով արտայայտել և հայրենասիրական զգացմունքներ, ուստի և այդ տեսակ էլէզիաները կոչվում էին նաև ղիցազտեսակ էլէզիաները կոչվում էին նաև ղիցազտեսակ էլէզիաները կոչվում էին նաև ղիցազտեսակ էլէզիաներն էին համարվում կալին և Տիրուէսու, որի երգերը, Հօրացիոսի ասելով, Մարտին անգամ պատերազմի էին գրգռում։ Ուրիշ էլէզիաների մէջ արտայայտվում էին թախիծի, վշտի զգացումներ (Յիմօնիդ), ուրախ տրամադրութիւն (Յոնիաս (Յիմօնիդ), ուրախ տրամադրութիւն (Յոնիաս (Յիմօնիդ), կային և վարդապետական, խրատութիւնցի), կային և վարդապետական, խրատութիւնցի),

ղական էլէգիաներ, որոնց նպատակն էր զգուշացնել ժողովրդին չարից, նրա մէջ բարի ձըգտումներ զարգացնել (Սողոն և Թէօֆնիս). Յունաստանից էլէգիան անցաւ Հոօմ: Հոօմէական բանաստեղներ՝ Կատիւլոս, Տիբուլ, Պրօպերցիոս և Ովիդիոս ընդ միշտ կնքեցին էլէգիա անունով թախիծ արտայայտող ոտանաւորները: Այդ տեսակ և էլէգիան անցաւ հոօմայեցիներից եւրօպական ազգերին:

Ս ա տ ի ր ա

§ 24. Սատիրա կամ Երգիծաբանութիւն կոչվում է լիրիքական այն արտադրութիւնը, որի մէջ բանաստեղծը կամ արտայայտում է զայրոյթի զգացումն ոչպի բարոյական որեւէ ապականութիւն, կամ ծաղրի է ենթարկում մարդկանց թերութիւնները եւ թուլութիւնները:

Երգիծաբանութիւնը երկու գործիք ունի— խիստ մերկացումն, մտրակումն կամ ծաղր, հեղնութիւն: Ուստի և լինում է երկու տեսակ— խիստ և մեղմ կամ թեթեւ երգիծաբանութիւն:

Խիստ երգիծաբանութիւն: Այն երգիծաբանութիւնը, որի մէջ արտայայտվում է բանաստեղծի զայրոյթի զգացումը, կոչվում է զայրոյթային կամ խիստ: Զայրոյթային սատիրայի աղբիւը լինում է սովորաբար հասարակական ծայրայեղ ապականութիւնը, երբ մարդկային արժանապատւութիւնը ստորացնող ախտերը դառնում են հասարակութեան ամբողջ դասակար-

ղերի սեպհականութիւն: Տեսնելով հասարակական ապականութիւնը, ախտերը, ազնիւ և տպաւորվող բանաստեղծը, վրդովված մինչև իր հոգուխորքը այն հակասութեամբ, որ կայ իրականութեան եւ իր իդէալի միջեւ, խիստ և կծու վատկերի մէջ մերկացնում է հասարակութեան ապականութիւնը ի ցոյց ամբողջ մարդկութեան, խարանում է նրան արհամարհանքով այնպիսի ուժգնութեամբ, որ ցնցում է ամեն մէկի ողին: Ուղեմն երգիծաբանութեան աղբիւը այն ջերմսէն է, որ բանաստեղծը տածում է դէպի վսեմը, առաքինին: Այդտեղից և հետևում է, որ անձնական ձգտումները—վրէժինդրութիւն, վիրաւորանք, ատելութիւն—տեղ չը պէտք է գլունեն երգիծաբանութեան մէջ:

Այսպէս, օրինակ, ուուսաց բանաստեղծ Լերմօնտով իր «Դումա» սատիրայի մէջ մտրակում է իր ժամանակակից երիտասարդութեան ապականութիւնը: Նա մերկացնում է այդ երիտասարդ սերնդի բարոյական ոչնչութիւնը և անսարդ սերնդի բարոյական ոչնչութիւնը և անսարդ սերնդի բարոյական ոչնչութիւնը է նրան: Երինայ ու դառն կերպով մտրակում է նրան: Երիտասարդ սերունդը, բանաստեղծի խօսքով, շունի որոշ իդէալներ, ուստի և նա դատապարտված է անգործունէութեան, մշտական ձանձրոյթիված է վաղաժամ ծերութեան: Այդ սերնդի մէջ սպանված են բոլոր վանել շահները. նրան չեն յուզում ոչ բանաստեղծութեան անուրջները, ոչ արուեստի ստեղծագործութիւնները: Միւլիւկն (Ռ. Պատկանեան) իր «Ճեմերթ»

Երգիծաբանութեան մէջ ներկայացնում է մեզ
մի հարուստ, որ կամենում է առատաձեռն, ո-
ղորմած (ճեմերթ) հոչակվել, բայց հանրային
գործի համար կարող է նուէր բերել աղբանոցի
մէջ գտած փոլուշկան:

Սմբատ Շահազիզը «Հարուստ հայեր» եր-
գի մէջ հարուածում է այն զազրելի և ամօթա-
լի յարգանքը, որ ժամանակակից հասարակու-
թիւնը մտաւցանում է ոսկուն:

Խիստ սատիրան կոչվում է և սարկազմ:

Մեղմ սատիրա: Այն երգիծաբանութիւնը,
որի մէջ բանաստեղծը սրամիտ ծաղրի եւ հեգ-
նութեան է ենթարկում մարդկային թերութիւն-
ները և թուլութիւնները, կոչվում է մեղմ, կա-
տակային: Մեղմ երգիծաբանութիւնը ըստ մեծի
մասին ուղղված է լինում մարդկային թուլու-
թիւնների, մոլորութիւնների, նախապաշարում-
ների, սնոտիապաշտութիւնների դէմ, որոնք
թէկ հակասում են բանաստեղծի իդէալներին,
բայց խորապէս չեն վրդովում նրան: Այդպի-
սի թերութիւններին բանաստեղծը աւելի հան-
դարտօրէն է վերաբերվում, բայց ենթարկում է
նրան հասարակական ծաղրի, իբրև անկանոն ե-
րեսյթներ:

Երգիծաբանութեան նպատակը: Թէ խիստ
և թէ մեղմ երգիծաբանութեան նպատակը մի և
նոյնն է—մաքրագործել եւ վսեմացնել մարդկա-
յին բնութիւնը: Առաջին դէպքում երգիծաբա-
նութիւնը համարմ է իր նպատակին՝ զրգուելով

ազնիւ զայրոյթ ամեն մի բանի դէմ, որ անբա-
րոյական և ստոր է. երկրորդ դէպքում՝ ենթար-
կելով հասարակական ծաղրի ամեն մի անկանոն
բան, որովհետեւ ախտը վախենում է աւելի ծաղ-
րից, քան պատժից:

Երգիծաբանութիւնը պէտք է ունենայ ա-
ռարկայ ամքողջ հասարակութեան ախտերը և,
իբրև գեղարուեստական արտադրութիւն, պէտք
է տիազօրէն նկարագրէ այդ ախտերը: Այն եր-
գիծաբանութիւնը, որ ուղղված է մասնաւոր
անհատների դէմ, կոչվում է պասկվիլ:

Երգիծաբանութեան ծագումը եւ զարգացման
պատմութիւնը: Երգիծաբանութիւնը սկիզբն և
գեղարուեստական մշակումն ստացաւ հոօմայե-
ցիների մօտ: «Սատիրա» (Satyras, կուշտ) բառով
հոօմայեցիներն առաջ անուանում էին զանազան
տեսակ պտուղներով պատրաստված մի ափսէ,
որ մատաղ էր բերվում Բաքոսին և Ցերերին:
Ապա «սատիրա» կոչումը, փոխարերական մշտ-
քով, սկսեցին տալ ոտանաւորներին ակտակային
և սրամիտ բովանդակութեամբ, գրված գանազան-
չափի յանգերով: Վերջապէս, Լիւկիլիոս հոօմա-
յեցի բանաստեղծի օրով (150 տ. ն. Ք.), սա-
տիրա սկսեցին կոչել լուրջ բովանդակութեամբ
ոտանաւորները, որոնց մէջ մերկացվում եւ
ծաղրվում՝ էին հասարակութեան բազմազան
ախտերը: Իբրև կատարեալ գեղարուեստական
վաստակ՝ սատիրան հանդիսացաւ միայն հոօմա-
յեցի բանաստեղծներ Հօրացիոսի (Օգոստոսի օ-

ըով) և Յուլիանալի ժամանակ (42—122թ. Ք. յ.)։ Հօրացիոսը մշակեց մեղմ սատիրայի տեսակը, իսկ Յուլիանալը՝ խիստ զայրոյթային տեսակը։ Այդ երկու ձևերով երգիծաբանութիւնը անցաւ և նոր եւրօպական ազգերին։

Հիմոր։ Այն ծաղը, որ գունաւորված է բարեհոգութեամբ և խոր կարեկցութեամբ գէպի մարդկային թերութիւնները, կոչվում է հիմոր։

Հիմորիստը, ինչպէս և երգիծաբանը, նկարագրում է իրական կեանքի զեղտոտ կողմը. ամեն մի կեղտոտ բան հիմորիստը, ինչպէս և երգիծաբանը, ենթարկում է հասարակական ծաղը։ Բայց մինչ երգիծաբանը իր ուշադրութիւնը դարձնում է մարդկային ախտերի վրա, որոնք յարուցանում են նրա մէջ մերթ զայրոյթ, մերթ ծաղը եւ հեգնութիւն, հիմորիստը առաջին տեղն է դնում մարդի անծնաւորութիւնը, որ շեղվելով զիտակցաբար կամ անգիտակցաբար իղէալից՝ դառնում է խղճուկ, թշուառ, կարեկցութիւն և արգանատանք արտայայտող էակ։ Հիմորիստը միաժամտնակ և ծալլում է մանր ախտաւոր մարդկանց և խորապէս ափսոսում է նրանց, գրգռելով նոյն զգացումները և ընթերցողների մէջ։ Ռուս գրող Գօգոլը ասել է, «Ո հիմորը՝ է տեսանելի ծիծաղ անտեսանելի արտասուրի մէջ»։

Հիմորի օրինակ կարող է լինել Գօգոլի «Շինէլ» վիպակը։

Գ. ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

§ 25. Էպօսից և լիրիկայից բացի կայ բանատեղծական արտադրութիւնների երբորդ տեսակը, որ կոչվում է դրամատիքական կամ դրամատ։

Դրամա կոչվում է զնիհանդապէս մարդկային կեանքի դէպքերի նկարագրութիւնը գործողութեամբ։ Եւ այդ պատճառով գէպքը ցոյց է տրվում կատարվող ոչ թէ անցեալի, այլ ներկայի մէջ, և հէնց գըա մէջ է կայանում նրա գանագանութիւնը էպօսից։

Բացի իր էական տարրից—գործողութիւնից, առանց որի չէ կարող գոյութիւն ունենալ ոչ մի դրամատիքական արտադրութիւն, դրաման ունի և ուրիշ տարրեր, որոնք պատահում են նաև էպօսի մէջ, բայց շեն կազմում նրա անկապտելի սեպհականութիւնը, մինչ դրամայի հետ նրանք անբաժանելի են, ինչպէս կոիւր (ներքին և արտաքին), լուսակցական ծեւը։

Դրամայի առարկան։ Դրամայի առարկան կարող է լինել միայն գէպք մարդկային կեանքից, որովհետև դրամայի նպատակն է—մարդի

հոգեւոր աշխարհի յայտնազործութիւնը՝ արտաքին աշխարհի կամ ինքն իրան հետ ունեցած կուի, պայքարի մէջ:

Դրամայի տարբերութիւնը լիրիկայից եւ էպոսից: Դրաման էապէս տարբերվում է լիրիկայից նրանով, որ նրա մէջ չը կայ իրաքանաստեղծի ներքին աշխարհի արտայայտութիւնը. Ընդհակառակը, նա հանդիսանում է զուտ-առարկայական (սիւբէկտիվ) արտադրութիւն, որովհետև բանաստեղծի անձնաւորութիւնը բոլորովին չքացած է նրա մէջ: Միւս կողմից՝ դրաման թէն աւելի մօտ է էպոսին, որովհետև նրա մէջ նկարագրվում են դէպքեր արտաքին աշխարհից (բանաստեղծի վերաբերմամբ), բայց մի և նոյն ժամանակ նա տարբերվում է նրանից նրանով, որ էպոսի մէջ դէպքը պատմվում է և աւանդվում, իբրև անցեալ, իսկ դրամայի մէջ դէպքը ներկայացվում է գործողութեամբ, ուստի և նա կատարվում է ներկայի մէջ: Այդաեղ բեմ դուրս բերված անձինք իրանք են գործուն այնպէս, ինչպէս գործում են կենդանի մարդիկ կեանքի մէջ: Ահա այդ գործողութիւնը և կազմում է դրամայի էական պայմանը, դրա համար էլ նա կոչվել է դրամա (յունարէն նշանակում է գործողութիւն):

Այս ամենից հետեւում է, որ դրաման է մարդկային կեանքի դէպքերի նկարագրութիւնը դէպքերի մէջ մասնակցող անձանց կենդանի եւ շօշափելի գործողութեան միջոցով, նպատակ ունենալով յայտնազործել մարդի հոգեւոր աշ-

խարհը այն կուի մէջ, որ նա մղում է արտաքին աշխարհի կամ ինքն իրան հետ:

Դրամատիքական կոիւ: Դրամայի գործողութիւնը կայանում է այն կուի մէջ, որ մղում է հերոսը իր ձգտած նպատակին տանող ճանապարհի վրա հանդիպած խոչընդուների դէմ: Մարդի թէ արտաքին խոչընդուների և թէ ինքն իրաքանչակը դէմ, իր զգացումների դէմ մղած պայքարի նկարագրութիւնը մենք գտնում ենք և էպոսի մէջ, բայց այդ կուի նկարագրութիւնը չէ բըռնում ամբողջ շարադրութիւնը, այլ հանդիսանում է միայն նրա մի էպիզօդը. այն էլ այդ կոււը նկարագրվում է ոչ թէ գործողութեամբ, ոչ թէ աշքի ասած, այլ պատմողութեամբ և աւելի արտաքին, քան ներքին կողմից, այսինքն նկարագրվում է ոչ այնքան կուողի ներքին վիճակը, որքան այդ կուի արտաքին արտայայտութիւնը: Այլ բան ենք տեսնում դրամայի մէջ. այդտեղ գլխաւոր շահեկանութիւնը կենորօնացած է այն կուի մէջ, որ մղում են գործող անձինք և մըկում են հանդիսականի աչքի առած, առանց պատմողի օգնութեան, բաց անելով իրանց հոգին սկսքով և գործով: Օրինակ, Գրիբօէդովի «Խելխուքով և գործով» Երկի շահեկանութիւնը կայաքից պատուհաս» Երկի շահեկանութիւնը կայանում է Երկու սերունդի՝ հսկի և նորի ընդհարման և պայքարի մէջ: Շէկսպիրի «Մակբէտի» մէջ ամենամեծ շահեկանութիւն գրգում է նկարագրութիւնը այն կուի, որ նա մղում է իր փառասիրութեան արգելք լինող խոչընդունութիւնը:

Ների դէմ: Նոյնը պէտք է ասել և ամեն մի իսկական դրամատիքական արտադրութեան համար. նրա մէջ գործող անձերի կոփւը հանդիսանում է կարևոր տարր, որը և կոչվում է դրամատիզմ, իսկ կուելու անհրաժեշտութեան մէջ գտնվող անձի դրութիւնը կոչվում է դրամատիքական դրութիւն:

Արտաքին կոիւ: Դրամայի հերոսը իր նպատակին հասնելու համար ստիպված է լինում կուել ուրիշ անձանց և այդ նպատակին հասնելուն խոչընդոտ հանգամանքների դէմ. դա՝ արտաքին կոիւ է:

Ներքին կոիւ: Բացի ուրիշ անձանց և հանգամանքների դէմ կուից՝ հերոսը ստիպված է լինում կուել և ինքն իր դէմ, երբ նրա մէջ ընդհարվում են հակասական շահեր: Հերոսի կոիւը ինքն իր դէմ՝ ներքին կոիւ է: Օրինակ, երբ մի անձ այնպիսի դրութեան մէջ է դրված, որ ստիպված է իր որդուն կամ հօրը պատժել, նրա դէմ գործել, նրա մէջ ծագում է կոիւ մի կողմից հայրական կամ որդիական սիրոյ և միւս կողմից՝ պարտականութեան կատարման:

Դրամատիքական գործողութեան յատկութիւնները: Դրամայի գործողութիւնը պէտք է լինի անընդհատ և միութիւն ու ամքողջութիւն ունենայ: Գործողութեան միութիւնը եւ ամքողջութիւնը պայմանաւորվում է դրամայի հիմնական գաղափարի միութեամբ, որը պահանջում է, որ բոլոր գործող անձանց արարքները բղիսեն

մի հիմքից և ծառայեն մի գաղափարի գարգացման: Օրինակ, եթէ մի պիէսայի մէջ նպատակ է դրված արծարծել հայրենասիրութեան գաղափարը, պէտք է որ գործող անձանց բոլոր գործողութիւնները պտտեն այդ գաղափարի շուրջը:

Դրամայի գլխաւոր գործող անձը կամ հերոսը, թէև բոլոր գործող անձինք նպաստում են դրամայի հիմնական գաղափարի գարգացման, բայց նրա գլխաւոր արտայայտիչը սովորաբար հանդիսանում է որևէ մի անձն, որն և կոչվում է դրամայի հերոսը կամ հերոսուհին: Յաճախ երկասիրութիւնը կրում է հերոսի անունը, ինչպէս «Մակրէտ», «Էդիալ թագաւորը», «Օտէլլօ», «Արշակ Բ.» և այլն:

Դրամայի խօսակցական կամ դիալօգիական ձեւը: Ներկայացնելով գէպքը գործողութեամբ, դրաման, բնականաբար, պէտք է շարադրվի խօսակցական կամ դիալօգիական ձևով, որ կոչվում է նաև դրամատիքական ձև: Սյդ ձեւ երբեմն պատահում է նաև էպիքական շարադրութիւնների մէջ, բայց նա չէ կազմում նրա անթիւնների մէջ, բայց նա չէ կազմում նրա անկապտելի սեպհականութիւնը, մինչ դրաման առանց այդ ձևի անհնարին է: Մական թէև զիալօգը լուսաբանում է հերոսների հոգիների ներքին վիճակը, բայց երբեմն հերոսը չէ ցանկանում կամ չէ կարող որևէ պատճառով բանալուրիշների առաջ իր այն թագուն մտածմունքները և ցանկութիւնները, որոնք ղեկավարում են նրա գործողութիւնները, ուստի այդ գէպ-

քում դրամայի մէջ մտցվում է մօնօլօզ, այս-
ինքն խօսակցութիւն ինքն իրա հետ: Դա ամե-
նախն այն չէ, ինչ որ է էպօսի մէջ մօնօլօգիա-
կան (միախօսակցական) խօսակցութիւնը. այս-
տեղ խօսում է ոչ թէ հեղինակը, այլ ինքը գոր-
ծող անձը. դա միևնույն դիալոգն է, բայց առան-
ձին տեսակի, դիալոգ ինքն իրա հետ:

Դրամայի շինուածքը: Սովորաբար գրաման
սկսվում է որևէ մի դէպքի նկարագրութեամբ,
որ դնում է հերոսներին դժուար դրութեան մէջ
և կանչում է նրանց կուի: Դրամատիքական
կուի պատճառ եղող դէպքը կոչվում է դրամայի
հանգոյց, իսկ հերոսի դժուարին գրութիւնը, երբ
նա ստիպված է կոխւ մղել խոչընդոտների
դէմ, կոչվում է հերոսի դրամատիքական դրու-
թիւն: Դրամատիքական գրութիւնը, որ պայմա-
նաւորվում է հերոսի երկու բոլորովին հակադիր
շահերի ընդհարմամբ, կոչվում է կօլիգիա:
Սկսված կոխւը հետզհետէ բարդանում է զանա-
զան հանգամանքներով. դրամատիքական պայքարի
այդ բարդացումը կոչվում է ինտրիգա: Այն փո-
փոխութիւնները, որոնք առաջ են զալիս հերոս-
ների գրութեան մէջ ինտրիգայի հետևանքով,
կոչվում են ակերիալէտիաներ: Զարդացած կոխւը
այս և այն ելքն է ունենում. կուի հետևանքը
կամ ելքը կոչվում է դրամայի լուծումն: Եթէ
լուծումը կատարվում է հերոսի կորստեամբ, նա
կոչվում է կատաստրօֆա (աղէտ):

Դրամայի բաղկացուցիչ մասերը: Ամեն մի
դրամատիքական վաստակ բաժանվում է մա-
սերի, որոնք կոչվում են ակտեր (actus—
գործողութիւն) կամ արարուածներ: Ամեն մի
ակտ պէտք է ներկայացնէ դրամատիքական պայ-
քարի մի ամբողջացեալ բօպէ: Նայելով թէ այդ
պայքարը սպառող քանի բօպէներ կան, նոյն-
քան պէտք է լինեն և արարուածներ: Սովորաբար
դրաման բաղկացած է լինում երեք ակտերից,
համաձայն նկարագրված գործողութեան սկզբն
(հանգոյցին), միջինին (գործողութեան զարգաց-
ման), և վերջին (լուծման). բայց բարդ բովան-
դակութեամբ արտադրութիւնները բաղկացած են
մինում հինգ ակտերից. դրանից աւելին ընդուն-
ված չէ: Արարուածները բաժանվում են տեսիլ-
ների և երեւոյժների: Երբեմն, բացի արարուած-
ներից, դրաման բաժանվում է և պատկերների
այն դէպքերում, երբ հարկաւոր է ներկայացնել
միաժամանակ զանազան տեղերում կատարվող
գործողութիւններ: Երբեմն էլ դրամատիքական
վաստակը սկսվում է կանխարանով (պրօլոգ),
ուր ներկայացվում են դէպքերը և հերոսի դրու-
թիւնը մինչև դրամատիքական պայքարի սկսիլը,
և աւարտվում է վերջաբանով (էպիլոգ), ուր
ներկայացվում է հերոսի դրութիւնը դրամա-
տիքական պայքարից յետոյ:

Դրաման ընմի վրա ներկայացնելու անհրա-
ժեշտութիւնը, Դրամայի էութիւնը պահանջում է,
որ նա ներկայացվի բեմի վրա, որովհետև նա նկա-

Դրամայի որոշումն ընդհանրապէս։ Մինչեւ
այժմ դրամայի մասին ասվածներից կարելի է
հետեւալ որոշումն տալ դրամային։ — Դրաման է
բանաստեղծական մի վաստակ, որ գրված է
դիալօգիական ձևով և ներկայացնում է որևէ մի
գեպք գործողութեամբ, որ արտայայտվում է
գլխաւորապէս հերոսի զանազան խոչընդուների
ոչմ մղած կուի մէջ և կենտրօնանում է մի որեւէ
առարկայի վրա, որով և գործողութեան քոն
զարգացումը դրամայի մէջ աչքի է ընկնում
և ստ միութեամբ։

**ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՏԵ-
ՍԱԿՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄՈՒ-
ԹԻՒՆԸ**

§ 26. Դրաման (այսինքն դրամատիքական
բոլոր վաստակների ամբողջութիւնը) գեռ հնումն
բաժանվում էր երկու տեսակի՝ տրագեդիա և
կօմեդիա։ Ապագայում մշակվեց և դրամայի մի
երրորդ տեսակը, որ միջին տեղը բռնեց տրա-
գեդիայի և կօմէդիայի միջև, բայց ստանալով
մեծ ծաւալ և տարածումն՝ առանձին անուն
չընդունեց, այլ կոչվեց իր ցեղական անունով,
այնպէս որ «դրամա» խօսքը այժմ երկու նշա-
նակութիւն ունի. 1) դրամա, իբրև դրամատի-
քական բոլոր վաստակների համախմբումն. 2)
դրամա, իբրև դրամատիքական վաստակների մի
որոշ տեսակ։

Ուստի և ներկայումս դրամատիքական բա-
նաստեղծութիւնը բաժանվում է երեք գլխաւոր
տեսակի. 1) տրագեդիա (ողբերգութիւն), 2) կօ-
մեդիա, (կատակերգութիւն) և 3) դրամա (խօսքի
նեղ մաքով)։

I. ՏՐԱԳԵԴԻԱ.

§ 27. Տրագեդիա կամ ողբերգութիւն կոչ-
վում է դրամատիքական մի վաստակ, որ նկա-
րագրում է հերոսի յամառ, բայց իր ոյժից բարձր
մի կուի, նրա հոգեկան տանջանքների եւ կո-
րստեան պատկերը, հերոսի, որ տարբերվում՝ է
սովորական մարդկանց դասից իր տոկուն ընա-
տրութեամբ, անխորտակելի կամքով, կորովի եւ
կրքոտ ընաւորութեամբ. տրագեդիան յարուցա-
նում է հանդիսականների մէջ սարսափի, կա-
րեկցութեան եւ սքանչացման զգացումներ։

Տրագեդիայի որինակներ. — «Մակրէտ», «Օտէլլո»,
«Արքայ Լիլլ», Շէկսպիրի. «Էդիպ թագաւոր», «Անտի-
գոնա», Սօֆոկլի. «Բօրիս Գոդունով», «Պուշկինի.
«Արշակ Բ.», Խ. Նարբեյի և այլն։

Տրագեդիայի գլխաւոր յատկութիւնները։
Տրագեդիան բնորոշող և դրամայի միւս տեսակ-
ներից նրան տարբերող գլխաւոր յատկութիւններն են։

1) Տրագեդիայի գլխաւոր հերոսի ընաւորու-
թիւնը։ Գլխաւոր հերոսներ հանդիսանում են
միշտ այն անձինք, որոնք օժտված են հոգեկան

ձոլս ոյժերով, խորունկ խելքով, բուռն կրքերով,
հաստատ բնաւորութեամբ, աննկուն կամքով, ան-
ձինք՝ որոնք անընդհատ ձգտում են դէպի առա-
ջադրեալ նպատակը, մղում են յամառ, տոկուն
կոիւ խոչընդուների դէմ, որքան էլ նրանք մեծ
լինեն: Այդպիսի հերոսներ համդիսանում են մեր
առաջ Մակրէտը, Օտելլօն, Արքայ Լիրը՝ Շէկս-
պիրի երկերի մէջ, Բօրիս Գօդունօվը՝ Պուշ-
կինի մէջ, Արշակ Բ.-ը՝ Նարբէյի մէջ, Էդի-
պը, Անտիկօնան՝ Սօֆոկլի մէջ: Այս և առ-
հասարակ տրագեդիայի հերոսների վերաբեր-
մամբ պէտք է նկատել, որ նրանց չէ կարելի
անուանել տիպեր այն մտքով, ինչ որ մենք կո-
չում ենք տիպ, օրինակ՝ Օնեգինի, Տարաս Բուլ-
բայի, Պէլոյի, Քաւոր Պետրոսի և վէպերի տի-
պերը: Տրագեդիայի հերոսները, ի հարկէ, կրում
են իրանց վրա իրանց ժամանակի հասարակու-
թեան դրոշմն ևս, բայց նրանց գլխաւոր յատկու-
թիւնները ոչ թէ տիպիքական, այլ հանրամարդ-
կային գծերն են: Օրինակ, Մակրէտը հետաքր-
քրում է մեզ ոչ իբրև միջնադարեան տիպ, այլ
իբրև մարդ առհասարակ, մարդ բուռն կրքերով.
Նրա մէջ մենք տեսնում ենք, թէ ուր կարող են
հասցնել մարդին անզուսպ կրքերը և որպիսի
հոգեկան տանջանքների կարող է նա ենթարկ-
վել բարոյական օրէնքների խախտման պատճա-
ռով: Նոյնպէս և էդիպը, Արշակ Բ.-ը հետաքրք-
րում են մեզ ոչ իբրև յունական և հայկական
թագաւորներ, ոչ իբրև ներկայացուցիչներ հին

հասարակութեան այս և այն խաւի, այլ իբրև
մարդկային հոգիներ, որոնք ծանրապէս տանջ-
վում են՝ իրանց գործած յանցանքի գիտակցու-
թեան պատճառով: Այդ հանրամարդկայնութեամբ
և բաշատրվում է, թէ ինչու Շէկսպիրի և Սօֆոկ-
լի՝ այս առաջնակարգ արագիկների՝ ստեղծա-
գործութիւնները համաշխարհային հռչակ են ստա-
ցել և կարդացվել են միշտ, կարդացվում են ու
յաւիտեան կը կարդացվեն ամենքի կողմից:
Եւ որովհետև հերոսական բնութիւնները իրա-
կան կեանքի մէջ շատ հազւագիւտ են, ուս-
տի տրագեդիան իր բովանդակութիւնը բաղում
է մեծ մասամբ անցեալ պատմութիւնից:

2) Տրագիքական կուի ընաւորութիւնը եւ
լուծումը: Տրագեդիաների հերոսները, ձգտելով
իրանց նպատակին, հանդիպում են իրանց ճա-
նապարհի վրա խոչընդուների, յամառաբար կը ու-
ռում են նրանց դէմ, բայց խոչընդուները շատ
մեծ են լինում, որոնց յաղթահարելու նրանք
անզօր են լինում, ուստի այդ անհաւասար կուի
մէջ հերոսներն ընկնում են, այն է՝ կամ մեռ-
մարդ են (ինչպէս, օրինակ, Մակրէտը, Լիրը,
Անտիկօնան, Արշակ Բ.-ը) կամ մնում են բարո-
յալէս մահացած (ինչպէս Էդիպը). մի խօսքով,
հերոսների մղած կրիւը անընկծելի խոչընդունե-
ներուների մղած կրիւը անընկծելի կորստեամբ,
ըի հետ վերջանում է հերոսների կորստեամբ,
կամ կատաստրօֆայով (աղէտով), ուստի հերոսի
դրամատիքական դրութիւնը, որ տա-
յապիսի դրամատիքական դրութիւնը, որ տա-

զիքական ղրութիւն, իսկ ինքն կորուստը—կատաստրօֆա (աղէտ): Սակայն հէնց այդ կորուտաբեր կամ աղէտաբեր կռւի մէջ երեան է գալիս հերոսի հոգեոր բնութեան ամբողջ ճոխութիւնը:

3) Տրագեդիայի արծարծած զգացումները եւ նրա ազդեցութիւնը մարդի հոգու վրա: Տրագեդիան յարուցանում է մեր մէջ սքանչացումն, սարսափ և կարեկցութիւն. նա զօրեղ տպաւորութիւն է գործում հանդիսականի հոգու վրա, տալիս է նրան էսթետիքական վեհ հաճոյք և ամենաբարերար ազդեցութիւն է անում մարդի բարոյական բնութեան վրա: Հերոսի կրած գերմարդկային տանջանքները զրգուում են համակրութիւն գէպի նա կամ կարեկցութեան զգացումն: Հանդիսականը սքանչանում է ի տես հերոսի արտասովոր բարոյական ոյժի և հզօր բնաւորութեան: Եւ հէնց այդպիսի զգացումներ զըրգուելու մէջն է կայանում տրագեդիայի նպատակը, որովհետեւ յարուցանելով հանդիսականի մէջ սքանչացումն, սարսափ, կարեկցութիւն՝ նա մաքրում է նրա հոգին, բարձրացնում և աղնաւացնում նրան:

§ 28. ՏՐԱԳԵԴԻԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տրագեդիայի պատմութեան մէջ զարգացման հետեւալ երեք շրջանները կան. ա) կլասի-

քական, այն է՝ նրա ծագումը և զարգացումը հին յոյների մէջ, բ) կեղծ-կլասիքական և գ) նոր ելրուպական:

ա) ԿԼԱՍԻՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

Տրագեդիան իր սկիզբն առել է Յունաստանում կրօնական ծէսերից և նրա առաջին սաղմերը գտնվում են այսպէս կոչված Դիօնիսականների մէջ, այսինքն այն տօնախմբութիւնների մէջ, որոնք կատարվում էին ի պատիւ Դիօնիսի կամ Բաքոսի, այն է՝ պաղաքերութեան աստուծու, որին է պատկանում և խաղողից գինի պատրաստելու գաղտնիքի երեան հանելը: Այդ տօնախմբութիւնները կատարվում էին 1) աշնանը, երբ բնութիւնը մեռնում էր և Դիօնիսը նաև, 2) աշնամիններից և տանջվող, և 2) զարնանը, երբ բնութիւնը վերակենդանանում էր և Դիօնիսը ներկայանում էր իրը փառաւոր յաղթող իր թշնամիններից: Այդ երեակայութեան համաձայն, աշնանային դիօնիսականների ժամանակ յոյները անձնատուր էին լինում թափիծի և վշտի, իսկ զարնանայինի ժամանակ՝ ուրախութեան և հրճուանքի: Աշնանային դիօնիսականներից հետպհետէ և մշակվեց տրագեդիան:

Այդ աշնանային տօնախմբութիւնները այսպէս էին կատարվում. Դիօնիսի կամ Բաքոսի պատկեր կատարվում էին պատարագի երկրպագուները համախմբվում էին պատարագի

սեղանի կամ զոհարանի շուրջը և պար էին
քռնում (եալի էին խաղում): Զոհարանի վրա
ողջակէց էին մատուցանում մի այծ (յուն.
տրագոս), որի միջոցով, ըստ աւանդութեան,
Դիօնիսը գտել էր գինեգործութեան դադոնիքը:
Ողջակէցի ժամանակ պարի առաջնորդը կամ
պարագլուխը (կօրիֆէյ) պատմում էր Դիօնիսի
կրած վտանգների և տառապանքների մասին,
իսկ պարախումը երգերով (յուն. էղի) արտա-
յայտում էր համակրութիւն տանջվող աստուծուն
և, երգելով, նաև պարում էր: Անա այդ կրօնա-
կան ծէսը յոյների մօտ սկզբում և կոչվում էր
տրագեդիա (այծ և երգ բառերից, այսինքն այ-
ծային երգ կամ երգ՝ այծի ողջակէզով): Այդ
կրօնական ծէսի մէջ մենք միացած ենք տես-
նում էպոսը և լիրիկան: Ծէսի էպիքական կող-
մը կազմում է Դիօնիսի տանջանքների մասին
պատմուածը, իսկ լիրիքական կողմը՝ նրան հա-
մակրութիւն յայտնող պարախմբի երգը:

Եւ ուրեմն՝ այն ամենը, ինչ որ կատարվում
էր դիօնիսականների ժամանակ, պարունակում
էր մէջ սաղմային ձեռվ այն տարրերը, ո-
րոնք հարկաւոր են թէ առհասարակ դրամայի և
թէ մասնաւորապէս տրագեդիայի համար, այն է՝
գործողութիւն և մի արտակարգ անձի (Դիօնիս
աստուծու)կուինկարագրութիւնը, նրա տանջանք-
ների նկարագրութեան հետ միասին, որոնք յա-
րուցանում են համակրութիւն (կարեկցութիւն):
Սակայն դրամայի ամենաէտկան տարրը—գործո-

ղութիւնը—այդտեղ դեռ որոշ կերպով տրտայայտ-
ված չէր. այդ տարրը յաջորդաբար զարգացաւ:
Առաջին քայլը այդ ուղղութեամբ արեց VI դ.
ն. Ք. Թէսպիս բանաստեղծը, որ մտցրեց տրա-
գեդիայի մէջ երկու անձանց դիալօգ: Բացի գը-
րանից, նա ընդարձակեց և նրա բովանդակու-
թիւնը, այն է՝ սկսեցին նկարագրել ոչ միայն
Բաքոսի, այլ և ուրիշ աստուծների և կիսա-
աստուծների արարքները: Յետոյ մի այլ բա-
նաստեղծ, նոյն դարում, Ֆրինիիը, մտցրեց և
մի կանացի դեր, որ կատարում էր դերասանը,
որովհետև յոյների մօտ բոլոր կանացի դերերը
տղամարդիկ էին կատարում: Բայց Ֆրինիիը ևս
աւելի ընդարձակեց տրագեդիայի սահմանները.
Նա սկսեց վերցնել իբրև նիւթ և ժամանակակից
դէպքերը, ինչպէս օրինակ Միլէտի առումը պար-
սկով ձեռքով: Նրա «Միլէտի Առումը» տրագե-
դիան լացեցրեց հանդիսականներին: Կարող է
դիման լացեցրեց հանդիսականներին: Կարող է
կութիւն ունեցող մի տրագեդիա բեմի վրա ներ-
կայացվում էր միայն մի կամ երկու դերասա-
նի և երգեցիկ խմբի մասնակցութեամբ, բայց
պէտք է իմանալ, որ յունական բեմի վրա նկա-
րագրվում էր միայն ներքին, հոգեկան կոփուը,
բագրվում էր միայն ներքին, ինչպէս ճակատամար-
իսկ արտաքին դէպքերը, ինչպէս ճակատամար-
իսկ ապանութիւններ և այլն, բեմի վրա չէին
տեր, սպանութիւններ և այլն, բեմի վրա չէին
ներկայացվում, այլ պատմվում էին դիսպանի,
ներկայացվում: Բացի դրանից միևնույն
սուրհանդակի բերանով: Բացի դրանից միևնույն

գերասանը զանազան երևոյթների մէջ զանազան դերեր էր խաղում:

Այնուհետև յունական արագեղիան հետզիետէ սկսեց մշակվել երեք հանձարեղ արագիկների՝ Եսքիլի, Սօֆոկլի և Եւրիպիդի ձեռքով: Այդ երեք քերթողների կեանքը այնպէս հանդիպեց, որ երբ 480 թ. ն. Ք. Եսքիլը պատերազմում էր Սալամին կղզու մօտ, տասնեհինգամեայ գեղեցիկ պատանի Սօֆոկլը պարագուլս էր այն երգեցիկ խմբի, որ փառաբանում էր Սալամինի յաղթութիւնը, իսկ Եւրիպիդը նոյն օրը ծնվեց Սալամին կղզում:

Այդ երեք քերթողների օրով յունական արագեղիան կատարելագործվեց թէ տեխնիքական և թէ գեղարուեստական կողմից և ընդարձակեց իր բովանդակութեան շրջանը. իբրև սիւժէտ սկսեցին վերցնել ժողովրդական աւանդութիւններ ոչ թէ աստուածների, այլ մարդկանց կեանքից, և աստուածները, կիսա-աստուածները հետզիետէ յետ մղվելով՝ հերոսներն են առաջ գալիս, էպոսի մէջ փառաբանված հերոսները:

Գեղարուեստական տեսակէտից, այսինքն հոգեկան տանջանքների նկարագրութեան, արագիրական դրութեան պատկերացման, պատկերների կենդանութեան և ամբողջութեան կողմից, յունական արագեղիան վերին աստիճանի կատարելագործութեան հասաւ Սօֆոկլի ձեռքով: Նրա ողբերգութիւնները՝ «Էդիպ թագաւորը», «Անտիգոն» և այլք դրա ապացոյցներն են:

Սօֆոկլի գլխաւոր արժանիքներից մինն ևս այն է, որ նա առաջինը յայտնի տեղ տուեց կնոջ՝ արագեղիայի մէջ, ինչպէս, օրինակ, Անտիգօնան, մինչ Եսքիլի մօտ կինը դեռ երկրորդական տեղ է բռնում:

Հասնելով իր լիակատար ծաղկման երեք հանձարաւոր արագիկների ձեռքով, որոնց ամենամեծը Սօֆոկլն է համարվում, յունական արագեղիան սկսում է դրանից յետոյ ընկնել և զիջում է իր տեղը կօմեղիային:

Ծանօթութիւն: Հոսմայեցիների մօտ արագեղիան չը զարգացաւ: Նրանք թէ ունեցան մի քանի տրագիկներ, բայց նրանք չէին գրում անկախ, այլ նմանում էին յունական օրինակներին: Լաւագոյն հոսմէտանում էին յունական օրինակներին: Պատառ Պակուլին (ծն. կան արագիկ համարվում է Մարկ Պակուլին (ծն. 160 թ. ն. Ք.): 218 թ. ն. Ք.) և Լուկիոս Ատտին (ծն. 160 թ. ն. Ք.):

Հայոց մօտ ծաղկած էր նոյնպէս յունական արագիրական: Պլուտարքի վկայութեան համաձայն, Մեծն գեղիան: Պլուտարքի որդին՝ Արտաւազդը 54 թ. ն. Ք. Տիգրան թագաւորի որդին՝ Արտաւազդը կրծուս հոյոյն լեզուով մի ողբերգութիւն յօրինեց Կրծոս հոյոյն լեզուով մի ողբերգութիւն առիթով, որ ներկամայեցի զօրավարի սպանութեան առիթով, որ ներկամայեցի Արտաւազդի արքայական թատրօնում:

բ) Կեղծ-կլասիքական տրագեդիան

Կեղծ կլասիքականութեան դարում, երբ Եւրօպացիները սկսեցին նմանել կլասիքական էպոսի և լիրիկի օրինակներին, սկսեցին նմանել նոյնպէս և կլասիքական կամ յունական ներկամայեցի օրինակներին: Կեղծ-կլասիքական տրագեղիայի օրինակներին:

Բուալօն և մի այլ ֆրանսիացի ուսումնական՝ Բատտիէօ (վախճ. 1780թ.): Կեղծ-կլասիքական տրագեդիայի ամենանշանաւոր ներկայացուցիչներ եղան ֆրանսիացի գրողներ Կօրնէյ (1606—84), Բասին (1639—99) և Վոլտէր (1694—1778), որոնց հետևեցին և ուրիշները, օրինակ՝ ոռուաց մէջ Սուլմարօկօվը, որ գրեց Բասինի նմանողութեամբ «Դիմիտրի Ինքնակոչ» տրագեդիան:

Կեղծ-կլասիքական տրագեդիայի թէօրիան նոյն նպատակն ունէր, ինչ որ էպօսի և լիրիկի թէօրիան, այն է՝ տալ նմանողական տրագեդիային քոլոր այն յատկանիշները, որ ունի կլասիքական տրագեդիան:

Ուստի և կեղծ-կլասիքական տրագեդիան աչքի է ընկնում հետևեալ գծերով. 1) երեք միութիւն—ժամանակի, տեղի եւ գործողութեան. 2) էպիքական եւ լիրիքական տարրերի պահպանութիւնը դիտմամբ. 3) լեզուի ճողովագանութիւնը:

Իսկ թերութիւններն այն են, որ, աշխատելով պահպանել հին տրագեդիայի այդ արտաքին յատկանիշները, կեղծ-կլասիքները չը պահպանեցին նրա ներքին արժանաւորութիւնները, նրա գեղարուեստականութիւնը։ Կեղծ-կլասիքական ողբերգութիւնների մէջ չը կան կենդանի ընաւորութիւններ և նրանց հերոսները հանդիսանում են լոկ իբրև մարմնացումն որևէ զգացմունքի կոտ կրքի, որևէ առաքինութեան կամ ախտի:

Բացի դրանից կեղծ-կլասիքները չէին պահպանում պատմական ճշգութիւն, նրանց տրագեդիաները չեն կրում իրանց վրա ոչ գծերը այն դարաշրջանի, որից վերցնում էին նիւթը, ոչ այն ազդի, որին պատկանում էին հերոսները, այնպէս որ այդ տրագեդիաների մէջ չը կար ոչ հանրամարդկային, ոչ պատմական ճշգութիւն, յատկութիւններ, որոնցով աչքի են ընկնում յոյն հանճարաւոր գրողների և Շէկսպիրի տրագեդիաները։

Եւ ուրեմն, կեղծ-կլասիքական տրագեդիան, ինչպէս և պօէման և օդան, կլասիքական օրինակներին կուրօքն նմանողութեան պատճառով, դարձաւ մի արուեստական արտադրութիւն, զուրկ իր օրինակների ներքին արժանաւորութիւններից։ Կեղծ կլասիքական տրագեդիան տիրեց, մինչև որ յայտնվեց Շէկսպիրը։

Դ) Նոր ժամանակի տրագեդիան

Նոր տրագեդիան հիմնագրեց անգլիացի հանճարաւոր դրամատուրգ Վիլիամ Շէկսպիրը, որ տպրում էր XVI դարի երկրորդ կիսում և XVII դարի առաջին քառորդում (1564—1616)։ Նա ուրեմն Բուալօյից շատ առաջ էր, և սակայն կեղծ կլասիքական տրագեդիան զարգացաւ և երկար պահպանվեց։ Դրա պատճառն այն էր, որ եւրօպան ճանաչեց Շէկսպիրին միայն XVIII դարի երկրորդ կիսում, երբ գերմանացի գիտնական

Հէսսինդը (վախճ. 1781 թ.) մատնացոյց արեց նրա վրա, իբրև արժանի օրինակ նմանողութեան և ուսումնասիրութեան:

Շէկսպիրը գէն ձգեց կեղծ կլասիքական թէօրիայի կաշկանդիչ կանօնները և, քաջ ծանօթ լինելով լաւագոյն կլասիքական գրողների քերթուածներին, խորապէս ըմբռնելով նրանց ոգին և իմաստը, տուեց իր տրագեդիաներին յունական ողբերգութեան բոլոր գեղարուեստական կատարելագործութիւնները, գէն ձգելով, միհնոյն ժամանակ, այն ամենը, ինչ որ յունական տրագեդիայի մէջ արդիւնք էր ազգային հաւատալիքների և հին յոյների կեանքի առանձնայատկութիւնների: Բայց նա չը բաւականացաւ դրանով. նա զարգացրեց և կատարելագործեց այն, ինչ որ յունական տրագեդիայի մէջ գեռ անկատար էր, և դրանով հասցրեց տրագեդիան գեղարուեստական կատարելութեան այնպիսի բարձր աստիճանի, որից այլ ևս բարձրանալ անկարելի եղաւ մինչև այսօր: Շէկսպիրի քերթուածները սքանչացնում են մեզ հերոսների բնաւորութեան գեղարուեստական գծագրութեամբ, մարդի հոգեսրբնութեան խորին ըմբռնողութեամբ և կեանքի ճշգրիտ նկարագրութեամբ, այնպէս որ նրա արտադրութիւնների մէջ մարդը ցոլանում է իր բոլոր լաւ և վատ գծերով իբրև հայելու մէջ: Վերջապէս, պէտք է ասել, որ Շէկսպիրը, իր ստեղծագործական հանճարի ոյժի կողմից, հանդիսանում է աշխարհիս ամենամեծ բանաստեղ-

ծը, որի հետ մըցել կարող է գուցէ միայն Հոմերոսը:

Երբ Եւրօպան ծանօթացաւ Շէկսպիրի հետ, դրամատիքական արտադրութիւնները սկսեցին գրվել նրա ոճով և ուղղութեամբ: Լաւագոյն հետեղներ եղան տրագեդիայի շրջանում՝ Գեօտէն, Շիլէրը և Պուշկինը, որ գրեց «Բօրիս Գօտունով» անունով մի մեծ տրագեդիա:

Շէկսպիրի գործերի լաւագոյն թարգմանութիւնը հայերէն տուել է մեզ Յովհաննէս խան Մասեհեանը:

II ԿՕՄԵԴԻԱ.

§ 29. Կոմեդիա կամ՝ կատակերգութիւն կոչվում է դրամատիքական մի արտադրութիւն, որի մէջ հերոսները—մանր, չնչին մարդիկ, ըստ մածի մասին ախտաւոր—կոիւ են մղում աննշան, յաճախ նոյն իսկ երեւակայական խոշոնդուների դէմ եւ իրանց անխելացի կուով զրգում հանդիսականների մէջ ծիծաղ, միացած մերթ զայռոյթի, մերթ արհամարհանքի եւ մերթ ափուանքի հետ:

Կոմեդիայի օրինակներն են՝ «Ռէվիզոր»—Գօգոլի, «Խելքից պատուհաս» — Գրիբօէգովի, «Պէպո»՝ «Ամուսիններ», «Քանդած Օջախ»—Գ. Սունդուկեանի, «Ամպեր» — Արիստօֆանի, «Մըրիկ»—Օստրօվսկով և այլն:

Կօմեդիայի տարբերութիւնը արագեդիայից
այն է, որ

ա) Կօմեդիայի հերոսները չունեն ամենակին այն վեհութիւնը, որ յատուկ է տրագեդիայի հերոսներին, առատօրէն օժտված չեն հոգեկան ոյժերով՝ աննկուն կամքով, բուռն կրքերով, այլ նրա հերոսները մանր ընութիւններ են, յաճախ նոյն իսկ ստոր:

բ) Կատակերգական հերոսների կոիւը բոլորովին այլ բնաւորութիւն ունի. Նրանք, հետամուս լինելով մանր, ըստ մեծի մասին ստոր եւ անբարոյական նպատակների՝ կոիւ են մղում անկարեւոր, երբեմն նոյն իսկ երեւակայական խոչընդոտների դէմ եւ այդ անխելացի կուի մէջ ցոյց են տալիս իրանց բնաւորութեան անհրապոյը կողմերը՝ իրանց թուլութիւնները, մոլորութիւնները, պակասութիւնները եւ ախտերը:

Վերցնենք օրինակ «Պէպօ» կօմեդիայի հերոս Յարութիւն Զիմզիմօվին. Նրա նպատակը ստոր է՝ հաբստանալ ուրիշների հաշտով. միւս հերոսը՝ Պէպօն թէև համակրելի տիպ է, բայց նրա մղած կոիւը դարձեալ մանր կոիւ է, տոգորված անձնական մօտիմներով՝ իր և իր քրոջ նամուսը՝ պատիւը պահպանելու. նա հզօր հոգեկան բնաւորութիւն չէ:

գ) Կօմեդիայի լուծումը. Մանր բնութիւնների կոիւը անկարեւոր խոչընդոտների դէմ չէ արտադրում կօմեդիայի հերոսների համար այն կարեւոր, ծանր հետեանքները, որ արտադրում է

տրագեդիական հերոսների կոիւը, ուստի և կօմեդիան չէ վերջանում կատաստրօֆայով (աղետով):

դ) Կօմեդիայի յարուցած զգացումները, հակառակ տրագեդիական կուի, որ յարուցանում է սարսափի, կարեկցութեան և սքանչացման զգացումներ, այլ են լինում, ուստի և կօմեդիայի նպատակն այլ է: Կօմեդիայի հերոսները ոչ թէ սարսափի, կարեկցութիւն, սքանչացումն, այլ ծիծաղ, զայրոյթ, արհամարհանք են շարժում հանդիսականների մէջ: Յաճախ հերոսը ընկնում է ծիծաղելի կամ կօմիքական դրութեան մէջ, ուստի և անզուսպ ծիծաղ է յարուցանում հանդիսականի մէջ:

ե) Տրագիքական տարրը կօմեդիայի մէջ: Մի քանի կատակերգութիւնների մէջ կօմիքական անձինք ընկնում են այնպիսի դրութեան կամ անձինք ընկնում են ակամայ կարեկցումէջ, որ հանդիսականի մէջ ակամայ կարեկցումէջ, կամ ափսոսանք է շարժում դէպի նրանց: Դրիւն կամ ափսոսանք է շարժում դէպի նրանց: Կուի այսպիսի բովէների նկարագրութիւնը կատակերգութեան մէջ մտցնում է տրագիքական տարրը:

զ) Կօմեդիայի նպատակը նոյն է, ինչպէս տրագեդիայի նպատակը, այն է՝ բարձրացնել հանդիսականի հոգին, արծարծելով նրա մէջ ծգտումն դէպի խելացին, ըարին եւ գեղեցիկը: Տարբերութիւնն այն է, որ կօմեդիան տանում է դէպի այդ նպատակը ոչ թէ դրական ձանապարհով, ինչպէս տրագեդիան, որ ուղղակի ներպարհով,

գործում է մարդկային հոգու ազնիւ յատկութիւնների վրա, այլ քացասական ճանապարհով՝ կեանքի ստոր կողմերի նկարագրութեամբ։ Կօմեդիան, ենթարկելով ծաղրի տգեղ, անձունի երևյթները կեանքի մէջ, մարդի թոյլ, ստոր կողմերը և հակումները, գրգռելով զայրոյթ, արհամարհանք դէպի ամեն ինչ, որ ստոր է և անբարյական, դրանով հէնց զրգում է սէր դէպի հակառակը, դէպի ամեն խելացին, բարին և զեղեցիը։ Եւ ինչպէս ասել է ոռւս զրող Գօդով, դրականը և բացասականը կարող են ծառայել միենոյն նպատակին, կօմեդիան և տրագեդիան կարող են արտայայտել միենոյն վեհ միտքը, ինչպէս, օրինակ, «հմուտ քժշկի ծեռքում» եւ սառն եւ տաք ջուրը քժշկում՝ են հաւասար աջողութեամբ միենոյն հիւանդութիւնները։

ԿՕՄԵԴԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

§ 30. Կօմեդիայի պատմութեան մէջ կարեոր են նոյնպէս նրա զարգացման հետևեալ երեք շրջանները. Ա) կօմեդիայի ծագումը և զարգացումը հին յոյների մէջ, կամ կլասիքական կօմեդիան, Բ) կօմեդիան կեղծ-կլասիքականութեան ազդեցութեան ներքոյ և Գ) նոր ժամանակի կօմեդիան։

Ա) Կլասիքական կօմեդիան

Կօմեդիան ծնունդ առեց տրագեդիայի նման հին յոյների գարնանային դիօնիսական տօներից, երբ նրանք անձնատուր էին լինում ուրախութեան՝ ի պատիւ պատղաբերութեան աստուած Դիօնիսի կամ Բաքոսի։ Այդ ուրախութիւնների ժամանակ կատարվում էր հանդիսաւոր թափօր, որ կոչվում էր «կօմոս», և թափօրին մասնակցողները երգում էին, պարում, ոստոստում, ծաղրաբանութիւններ անում, կատակային երգեր (իդի) երգում և այլն։ Ահա կրօնական այդ ծէսը և կոչվում էր կօմեդիա («կօմոս» և «իդի»), որից հետզհետէ և մշակվեց կօմեդիան, իբրև բանաստեղծական արտադրութիւն, նոյն ձեռվ, որով մշակվեց տրագեդիան աշնանային դիօնիսականների ծէսից։ Մասնակցողների սրախօսութիւնները և կատակները կրօնական թափօրի մէջ ուղղված էին իրական անձանց սխալների և պառզպած էին իրական անձանց սխալների և պառզպած էին իրական անձանց սխալների գէմ։ Ժամանակի ընթացքում կասութիւնների դէմ. ժամանակի ընթացքում բանաստեղծները կօմեդիայի հէնց իրա առարկան (սիւժէտը) կամ ֆարուլան սկսեցին վերցնել ժամանակից իրական կեանքից, ենթարկելով անխայ և համարձակ ծաղրի ժամանակակիցների ախտերը, պակասութիւնները և առնասարակ նըրանց թոյլ և ծիծաղելի կողմերը։ Հետևաբար յոյների մէջ կօմեդիան, հէնց իրա ծագման րօպէից սկսեալ, հանդիսացաւ մի արտադրութիւն,

որ իր բովանդակութեամբ, հերոսների բնաւութեամբ և կուով տրագեդիայի հակապատկերն էր ներկայացնում:

Սակայն կօմեդիան աւելի ուշ ծագեց. նա երեաց, երբ Յունաստանում դրաման արդէն բաւականին մշակված էր տրագիկների ձեռքով. Կօմեդիան մշակողներից առաջինն եղան Եպիքարմոս փիլիսոփան, Սիկիլիացի, ժամանակակից Սալամինեան ճակատամարտի, և կրատինը (440 թ. ն. Ք.): Եպիքարմոսը սկսեց դնել բեմի վրա զուարչալի դէպքեր, վերցրած աստուածների և հերոսների մասին պատմված հէքիաթներից, ինչպէս և ուղղակի կենցաղական դէպքերից. Նա դուրս էր բերում իր պիեսների մէջ կօմեդական դրութեամբ երեխն մի աղախին, մի խոհարար, երեխն մի բժիշկ, մի պորտաբեոյծ և այլն: Այդ եղաւ առաջ Սիկիլիայում. ապա կօմեդիան յայտնվեց Աթէնքում, ուր, տրագեդիայի անկումից յետոյ, հասաւ գեղարուեստական ձեր՝ մեծագոյն կօմիք Արիստօֆանի (Եսքիլի և Սօկրատի ժամանակակից) զըչի տակ (V դարում ն. Ք.): Նրա կօմեդիաները—որոնցից միայն տասնեմէկ հատը ամբողջ կերպով հասել են մեզ և որոնցից լաւագոյններն են «Ամպերը», «Զիաւորները», «Բոռերը»—ծաղրում են հասարակական գանագան ախտերը, օրինակ, զօշաքաղութիւնը, նախկին բարքերի և հաւատի անկումը, սովիետներին և այլն: «Զիաւորներ» կօմեդիայի մէջ նա դուրս է բերել և ծաղրել դեմագոգ կլէօնին,

«Ամպերի» մէջ՝ սովիետներին և Սօկրատին, ուրին նա սխալմամբ համարում է սովիետ, և «Բոռերի» մէջ՝ զօշաքաղներին:

Ծանօթութիւն: 1) Յունական կօմեդիան բաժանում են երեք շրջանի—նին, որ տևեց մինչև 400 թ. ն. Ք., երբ կօմեդիան ծաղրում էր ժամանակակիցներին իրանց անուններով. միջին, որ տևեց մինչև Մենադը կատակերգուն (ծնված 342 թ. ն. Ք.), երբ կատակերգունները իրաւունք ունեին ծաղրել միայն հանգուցեալ քաղաքացիներին. և նորը, որ սկսվեց Մենադը կամ միական սկսեցին նկարագրել հնարովի սիւժէտներ և ծաղրել տիպիքական անձնաւորութիւններ:

2) Արիստօֆան «Ամպեր» կօմեդիայում ծաղրում է իր ժամանակակից սովիետներին (սօվիու—իմաստուն), որոնք, ի թիւս այլոց, ուսուցանում էին, թէ չը կայ ամենքի համար ընդհանուր ձշմարտութիւն, ուստի և առանց քաշվելու, միակերպ համոզեցուցիչ ձեռվ իրում էին միենոյն առարկայի մասին թեր եւ դիմ, նկարագրում էին սպիտակը՝ սև, և սև՝ սպիտակ: Անկարագրում էին սպիտակը՝ սև, և սև՝ սպիտակ: Արիստօֆանը, իր ժամանակակիցներից շատերի նման, սովիետական ուսումը վասակար էր համարում, ուստի սովիետական ուսումը վասակար էր համարում, ուստի սովիետի մի մեծ և ծաղրի ենթարկեց նրան, բայց նա ընկաւ մի մեծ սպալի մէջ, համարելով իր ժամանակակից փիլիսոփայ Սօկրատին—հին Յունաստանի այս միծագոյն իմաստասէրին—նոյնպէս սովիետ, և դուրս հանեց նրան իր կօմեդիայի մէջ իբրև մի դատարկախօս, սովիետ հոետութեան մէջ, նկարագրում է սև՝ սպիտակ և սպի-

3) Սովիետները, Արիստօֆանի կարծիքով վասակար աղղեցութիւն ունեին մատաղ սերնդի բարոյականութեան վրա. կօմեդիայի մէջ Ֆիդիպիդը, Սպրէպահադի որդին, հմտանալով Սօկրատի մօտ «սուտ» գիտութեան մէջ, նկարագրում է սև՝ սպիտակ և սպի-

տակը՝ սկ, ծեծում է իր հօրը և, «առւա» գիտութեան ճարպիկութիւնից օգտվելով, ապացուցանում է, որ իւրաւունք ունի հօրը ծեծել:

4) Հոօմայեցիների մէջ թէկ կօմեդիան աւելլ շատ զարդացաւ, քան տրագեդիան, բայց հոօմէական լաւագոյն կօմիկները՝ Պլավտ (վախճ. 184 թ. ն. Ք.) և Տերենտի (վախճ. 194 թ. ն. Ք.) հետեւմ էին յունական օրինակներին:

Բ) Կեղծ-կլասիֆական կօմեդիան

Հին կլասիկների ձեռքով մշակված կօմեդիան շարունակեց զարդանալ եւրօպական նոր ազգերի մէջ, և Եւրօպան, դեռ Շէկսպիրի հետ ծանօթանալուց առաջ, ունեցաւ Մօլիէրին (1622—1673), Փրանսիացի նշանաւոր կօմիք, որ հոչակվեց իր այնպիսի կօմեդիաներով, ինչպէս «Տարտիւֆը», «Ժլատը», «Սկապէնի խարդախութիւնները», «Երեակայական հիւանդը» և այլն։ Ռուսաց մէջ էլ յայտնի եղաւ Ֆօնվիզինը իր «Նեղօրօսւ» կօմեդիայով (1782 թ.), Սակայն այդ երկու գրողներն ևս, ապրելով այն ժամանակ, երբ տիրում էր գրականութեան մէջ կեղծ-կլասիֆականութիւնը, ընկան նրա ազգեցութեան ներքոյ, և նրանց երկասիրութիւնները աչքի են ընկնում կեղծ-կլասիֆական կօմեդիաների առանձնայատկութիւններով, որոնք են.

ա) Կօմեդիաների մէջ պահպանված է ժամանակի, տեղի եւ գործողութեան միութիւն.

բ) Դործող անձինք կեղծ-կլասիֆական կօ-

մեդիաների մէջ բաժանվում են երկու խմբի— ախտաւոր և առաջինի։ Ֆօնվիզինի «Նեղօրօպի» մէջ ախտաւոր անձանց, —Պրոստակօվօյին և Միտրոֆանին, —որոնք ուղղակի հանված են կեանքից, հակադրվում են հնարովի առաքինի անձինք՝ իդէալական Սօփիան և իդէալական Միլօնը։ Ախտաւորները նկարագրվում էին ամեն տեսակ պակասութիւններով և ախտերով, առաքինիները՝ առանց որևէ ախտի, պակասութեան ստուերի։ Երկու դէպքում ևս կեղծ-կլասիֆիները շեղվում էին կենսական ճշմարտութիւնից։

գ) Այդ կօմեդիաների մէջ գործող անձանց ընաւորութիւնը արտայայտվում է ոչ թէ արարտների, այլ խօսակցութիւնների և երկար, ձանձների, այլ խօսակցութիւնների մէջ, այսինքն կօրացուցիչ դատողութիւնների մէջ գուրս են բերված դատողներ (բեղոնէրներ)։

դ) Շատ անձանց պակասութիւնները գուրս են բերված կարիկատուրային ձևով։

ե) Կեղծ-կլասիֆական կօմեդիաների մէջ հանգոյցը և ինտրիգան միշտ հիմնված են սիրոյ վրա։

զ) Լուծումը այդ կօմեդիաների մէջ միշտ հանդիսանում է առաքինի անձանց վարձատրութիւնը և ախտաւոր անձանց պատիժը։

Պէտք է նկատել սակայն, որ իր այդ բոլոր թերութիւններով հանդերձ՝ կեղծ-կլասիֆականութիւնը չը կարողացաւ այնպէս մեղնել իր կապանքներով կօմեդիան, ինչպէս նա մեռցել

Եր տրագեղիան։ Եթէ այսօր Կօրնէլլը, Բասինը ձանձրալի են թւում մեզ, Մօլիէրի կօմեղիաները դեռ հաճութեամբ են լսվում։ Դրա պատճառն այն է, որ տրագեղիայի առարկան և հերոսները վերցվում էին ոչ թէ ժամանակակից կեանքից, այլ անցեալից, պատմութիւնից, որ տրագիկները գործում էին ոչ թէ ներկայի, այլ անցեալի հետ, մինչ կօմիքները, որքան էլ ընկած կեղծ - կլասիքականութեան ազդեցութեան ներքոյ, բայց այնու ամենայնիւ իրանց սիւժէտները վերցնում էին ժամանակակից, կենդանի կեանքից։

Գ) Նորագոյն կօմեղիա

Ինչպէս տրագեղիան, նոյնպէս և կօմեղիան ազատեց կեղծ - կլասիքականութեան կապերից Շէկսպիրը, որից և սկիզբն է առնում նորագոյն կօմեղիան, որ նկարագրում է ճշմարտորէն և գեղարւեստորէն հասարակական ախտերը և պակասութիւնները՝ բանաստեղծի ստեղծած տիպիքական անձնաւորութիւնների կուի մէջ։ Այդպէս են եւրօպական բոլոր նշանաւոր նորագոյն կօմեղիաները, ուուսաց մէջ՝ Գօդոլի «Վերաքննիչ», Օստրօվսկու, իշխան Բարեասինոկու և այլոց պիէսները, հայերի մէջ Սունդուկեանցի «Պէպօ», «Թանդած Օջախ» և այլ կօմեղիաները։

III ԴՐԱՄԱ

§ 31. Բուն ղըաման (ղըամա նեղ մտքով) թէ ղըամատիքական կուի բնաւորութեամբ և թէ հանդիսականի հոգու վրա գործած իր տպաւորութեամբ՝ միջին տեղն է բոնում տրագեղիայի և կօմեղիայի միջև։

Տրագեղիան և կօմեղիան—այդ երկու հակադրութիւնները—հանդիսանում են ղըամատիքական արտադրութիւնների երկու հիմնական տեսակը, բայց իրանց զուտ, մաքուր տեսակի մէջ այդ երկու ձեւերն այսօր հազւագիւտ են։ Զուտ տրագեղիան մենք տեսնում ենք միայն յոյների և նրանց նմանող կեղծ-կլասիքների մօտ։ Զուտ կօմեղիան գոյութիւն ունէր նոյնպէս յոյների մօտ, որոնք առհասարակ սիրում էին պահպանել զրականական ձեւերի մաքրութիւնը։ Մուսաց մէջ միայն Գօդոլի «Վերաքննիչ» պիէսը կարող է ծառայել օրինակ մաքրուր կօմեղիայի։ Բայց ըստ մէծի մասին եւրօպական նոր զրոդների ղըամատիքական արտադրութիւնները ներկայացնում են տրագիքական և կօմիքական տարրերի միութիւն, հետևալըր։

Դրամա ըուն մտքով կոչվում է ղըամատիքական այնպիսի մի արտադրութիւն, որի մէջ նկարագրվում է սովորական մարդկանց—առաջինի կամ ախտաւոր, ուժեղ կամ տկար քնութիւնների—առօրենայ կոիլը՝ կարեւոր կամ աննշան խոշնդուների դէմ։

Եւ որովհետեւ զրամայի հերոսները գլխաւո-

ըապէս իրանց հաւասար ոյժերի հետ գործ ունեն, ուստի և կոփուր փոփոխական ելք է ունենում—բարեյաջող կամ անբարեյաջող և ոչ միշտ ճակատագրական, ինչպէս արագեղիայի մէջ։ Մի խօսքով դրամայի մէջ ձուլվում է արագեղական տարրը կօմիքականի հետ։ Այդ տեսակ արտադրութիւն ներկայացնում են Օստրօվսկու «Մըրքիկ», «Աղքատութիւնը ախտ չէ», Գրիբօէդօվի՝ «Խելքից պատուհաս» պիէսները և այլն։

Տրագիքական տարրը դրամայի մէջ։ Դրամայի մէջ հերոսը ներկայանում է նոյնպէս խոր, հոգեկան ոյժերով ծոխագար օժտված ընութիւն, որ հետամուտ է իրան համար կարեռը կենսական նշանակութիւն ունեցող նպատակների. օրինակ, նա ձգտում է ազատ, խելացի կեանքի, հետամտում է ձեռք բերել իրաւունքներ՝ որ ամեն մի մարդ պէտք է ունենայ, նա ձգտում է երջանկութեան։ Նրան նոյնպէս հանդիպում են խոչընդուներ, բայց այդ խոչընդուներն են՝ հին, դարերով կուտակված կենցաղական սովորութիւնները, նախապաշարումները, որոնք անյաղթելի չեն։ Դրամայի հերոսը նոյնպէս կրում է ծանր բարոյական կոփուր, երբ երկու հակադիր զգացումներ բաղմում են իրար հետ նրա մէջ, օրինակ՝ սիրոյ եւ պարտականութեան զգացումները. յաճախ այդ կոփուր վերջանում է նրա կորստեամբ, բայց յաճախ և բարեյաջող ելք է ունենում։

Եւ այսպէս, դրամայի զլիաւոր հերոսների ընաւորութիւնը, հերոսների, որոնք հանդիսանում

են խոր և բնական ուժեղ բնութիւններ, կարևոր խոչընդուների դէմ նրանց մղած կոփի ընաւորութիւնը, հերոսների կրած տանջանքները, որոնք կարեկցութեան զգացումն են գրգռում—այդ ամենը մօտեցնում է դրաման արագեղիայի հետ։ Բայց միենոյն ժամանակ մենք տեսնում ենք, որ դրամայի հերոսները ըացառիկ ընութիւններ չեն, ինչպէս արագեղիայի մէջ։ Նրանց կոփուր մեզ չէ ահաբեկում այնպէս, ինչպէս արագեղական հերոսների կոփուր հերոսների կուրուսար առաջ է գալիս ոչ թէ խոչընդուների, այլ հերոսների իրանց եռանդի աստիճանի պատճառով։ Եթէ հերոսը աւելի եռանդուն բնութեան տէր է, նա չէ կորչում, չէ յաղթվում, այլ յաղթական է դուրս գալիս պայքարից։

Կօմիջական տարրը դրամայի մէջ։ Դրամայի մէջ հերոսների կոզին մենք տեսնում ենք և անխելացի կոփուր, որ մղում են բարոյապէս փչացած, բնաւորութիւնից զուրկ և թոյլ անձինք. այդ անխելացի կոփուր առաջ է բերում մեր մէջ ծիծաղ, ծաղր, զայրոյթ, արհամարհանք։ Այդ տեսակ խմբի անձանց բնաւորութիւնը, նըրանց կուրի գործած տպաւորութիւնը մօտեցնում են դրաման կօմեղիայի հետ։

Սակայն արագեղական և կօմիջական տարրերի լծորդութիւնը այնքան բազմատեսակ է նոր ժամանակի դրամատիջական արտադրութիւնների մէջ, որ յաճախ գժուար է լինում որոշել, թէ արտադրութիւնը որ տեսակին է պատ-

կանում. օրինակ, Օստրօվսկու «Աղքատութիւնը ախտ չէ» ոմանք համարում են դրամա, ոմանք՝ կօմեդիա, Լեռմօնտօվի «Մասկարագը» ոմանք համարում են տրագեդիա, ոմանք՝ բուն դրամա:

Այս միայն ակներև է, որ բուն դրամայի բովանդակութիւնը աւելի մօտ է կանգնած իշրական կեանքին, քան տրագեդիաների և կօմեդիաների բովանդակութիւնը, որոնք աւելի իդէ-ալական բնաւորութիւն ունեն: Եւ դա շատ հասկանալի է. տրագիքական տարրի միացումը կօմիքականի հետ (բուն դրամա) աւելի համապատասխանում է մեր կեանքին, որի մէջ մենք մեծի կողքին հանդիպում ենք և չնչինին և որի մէջ ձեռք ձեռքի տուած են ընթանում և ուրախութիւնը, և վիշոը, և ծիծաղը, և տիրութիւնը:

Բուն դրամայի սկիզբն եւ զարգացման պատմութիւնը: Զուտ դրաման, իբրև դրամատիքական բանաստեղծութեան մի առանձին տեսակ, ծագեց 18-րդ դարում գրեթէ միաժամանակ Ֆրանսիայում և Անգլիայում: Սակայն դրաման գեղարուեստական գործ դարձաւ գերմանական գրողների ձեռքով—Լէսսինգի՝ որ ստեղծեց «Էմիլիա Գալոտի» դրաման, Շիլէրի («Նենգութիւն եւ Սէր») և վերջերում իբսէնի ձեռքով, որ տուեց մի շարք դրամաներ, գեղարուեստական կատարելագործութեամբ: Ուուսների մէջ լաւագոյն դրամատուրգ համարվում է Օստրօվսկին, իսկ վերջերս՝ Լ. Անդրէեվը, Գորկին: Հայերի մէջ՝ Սունդուկեանցը և վերջերս Շիրվանդաղէն:

§ 32. Դրամատիքական բանաստեղծութեան երկրորդական տեսակները:

Բացի դրամատիքական բանաստեղծութեան վերոյիշեալ երեք գլխաւոր ճիւղերից, կան և երկրորդական տեսակներ—մելոդրամա, վօդիվիլ, ֆարս եւ ֆեէրիա:

Մելոդրամա. կոչվում է 1) դրամատիքական այն արտադրութիւնը, որի մէջ մտցվում է երաժշտութիւն, հանդիսականների դրացումների վրա աւելի ուժեղ ներդրութիւն անելու համար. 2) այնպիսի մի արտադրութիւն, որի նպատակն է նկարագրել էֆֆէկտային տեսարաններ և հանդիսականների վրա ուժգնորէն ներդրութող ծանր դրամատիքական դրութիւններ: Մելոդրամները, սովորաբար, աղքատ են լինում ներքին բովանդակութեամբ:

Վօդիվիլ. (νοίχ de ville—քաղաքի ձայներ) կոչվում է մի փոքր դրամատիքական արտադրութիւն սրամիտ, ծաղրածու բնաւորութեամբ և կուպլէտների երգեցողութեամբ: Վօդէվիլը ներկայացվում է սովորաբար լուրջ տրագեդիաների, դրամաների և կօմեդիաների ներկայացումից յետոյ այն նպատակով, որ այդ արտադրութիւնների գործած տպաւորութիւնը հանդիսականների հոգու վրա մի փոքր հարթվի:

ՖԱՐԾԸԸԸԸ (farce—ֆարս, խառնուրդ) կոչվում է զուտ ծաղրական դրամատիքական մի արտադրութիւն, որ բացառապէս նպատակ ունի գրգռել հանդիսականների ծիծաղ օտարոտի և կնծուալի

երեւոյթների եւ պատահականութիւնների նկարագրութեամբ:


Ֆելիքի Ակոչվում է թատրօնական ներկայացումն ֆանտաստիքական, հէքեաթային բնաւորութեամբ, առանց ներքին լուրջ բովանդակութեան, բայց սարքված ղեկորատիվային է ջեկաններով:

Ծանօթութիւն: 1) Բացի գրամատիքական բանառեղծութեան ցոյց տուած տեսակներից, մեր ժամանակի թատրօններում զրվում են և երաժշտական առուեստի արտադրութիւններ—օպերաներ, օպերներ մէջ գործող անձանց խօսքը ընկերացած է երգեցողութեան և գործիքային երաժշտութեան հետ:

2) Դրամատիքական բանառեղծութեան անհետացած տեսակներին վերաբերում են և հոգեորդքրիստոնէական դրամաները կամ միստերիաները (խորհուրդներ) և բարոյախօսական դրամաները կամ մօրավիտները: Միտէրիաները ներկայացվում էին միջին դրաբերում և նրանց առարկան վերցվում էր չին և նոր կտակարաններ:

Վ Ե Ր Ջ

Ազր: Հարկաւոր ենք համարում յայտնել, որ բացի գրքիս սկզբում ցոյց տրված աղբիւրներից՝ մենք օգտվել ենք թէ թարգմանարար և թէ քաղուածօրէն և Լիվանօվի գրքից—Սահմանական առաջնային աշխատավայր Տեորի Սловесности С.-П.—бүргъ, 1908.



Ց Ա Ն Կ

Մ Ա Ս Ն Շ Թ Ա Զ Ի Ւ

ՏԱՐԱԿԱՆ

ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ ԽՈԳԵՔՐԱՆՈՒԹԻՒՆ

Էջ

Առաջարան

ՍԿՐԱՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

5.

1. Տրամարանութեան առընթերը;
2. Առարկաների տեսակը ըստ իւրեանց էութեան:
3. Առարկաների զանազանութիւնը կեանը զարգացման աստիճանի համեմատ:
4. Ինչ է առարկան:
5. Համամատութիւն:
6. Զանազան նշաններ—տեսակական, էական և պատահական:
7. Երկոյթ, պատճառ, հետևանք:
8. Տեմպերամենտները.

8—14.

ԼՕԳԻԿԱ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

1. Տպաւորութիւն:
2. Մեր հոգու ըմբռնողական զործողութիւնը:
3. Զգացողութիւն, զոգեկան հետքեր—համարատ և թափառուն, հասարակ հետքեր:
4. Քաղաքար, գաղաքաբների կապակցութիւնը:
5. Մտածողութիւն:
6. Հասկացողութիւն:
7. Անուլիզ և սինթէզ:
8. Քատողութիւն:
9. Մտակըրակացումն:
10. Լոգիքական սանդուխ:
11. Տրամարանութեան օգուածը.

15—65.

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Բ Ր Ո Ռ Ո Ր Ց

ՏԱՐԵԲՐՅ ԲԱՆԱՀԻԱՍՈՒԹԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. Բանահիւսութիւն:
2. Գեղարուեսաների բաժանումը:
3. Բանահիւսութեան գեղակառութիւնը գեղարուեսաների մէջ:
4. Բանահիւսութեան տեսութիւնը և պատմութիւնը:
5. Բանահիւսութեան թէօրիայի բաղադրիչ մասերը.

69—77.

Մասն առաջին

Ո՞սի տեսութիւնը

6. Ոճաբանութիւն կամ ստիլիստիկա: 7. Գրութեան կոմ-
բարբառի պլիաւոր յատկութիւնները: 8. Ոճի ներդաշնակութիւնը:
9. Խօսքի պատկերական կողմը: 10. Կերպարանների նշանակու-
թիւնը և նրանց տեսակները: 11. Տաղաչափութիւն: 12. Ընդհա-
նուր նկատողութիւններ ստանաւորի մասին 28—109.

Մասն երրորդ

Պրօզայի տեսութիւնը

1. Պրօզա կամ արձակ խօսք: 2. Շարագրութիւնը և նրա-
կազմութիւնը: 3. Արձակ բանի տեսակները: 4. Պատմողական եր-
կասիրութիւններ — Տարեգրութիւնք, Յիշատակագրեր, Պատմու-
թիւն, Կենսագրութիւն, Ճանապարհորդութիւններ: 5. Հոետօ-
ռական երկասիրութիւններ: 6. Փիլիսոփայական երկասիրու-
թիւններ 110—137.

Մասն երրորդ

Տեսութիւն բանաստեղծութեան

1. Պիէտիկա: 2. Բանաստեղծութեան տեսակները: 3. Էպի-
քական բանաստեղծութիւն: 4. Ժողովրդական կամ բանաւոր էպոս:
5. Ժողովրդական էպոսի պլիաւոր տեսակները — առասպել կամ
Նէքիաթ: 6. Վիպաշանական երգեր կամ խաղնը: 7. Պատմական
երգեր: 8. Հանելումներ: 9. Առածներ: 10. Գրականական կամ
գրաւոր էպոս: 11—12. Գրականական էպոսի գլխաւոր տեսակնե-
ները — առակ, աօէմն, բալլադ, իդիսիա, րօման կամ վէպ, վէ-
պիկ, պատմուածք: 13. Էպոպէա: 14. Նմանողական կլասիքական
պօէմա, կեղծ կլասիքական պօէմա: 15. Նորագոյն ժամանակի
պօէման, բօմանտիկական պօէման: 16. Բալլադա: 17. Իդիսիո-
ս: 18. Քօման: 19. Լիրիքական բանաստեղծութիւն: 20. Նրա տեսակ-
ները: 21. Երգ: 22. Օդա: 23. Էլէգիա կամ Եղերերգ: 24. Սատիրա-
կամ երգիծաբանութիւն: 25. Դրամատիքական քրանաստեղծութիւն:
26. Նրա տեսակները: 27. Տրագեդիա: 28. Տրագեդիայի ծագումը
և նրա զարգացման պատմութիւնը: 29. Կօմեդիա: 30. Կօմեդիայի
զարգացման պատմութիւնը: 31. Բուն Դրաման: 32. Դրամատիքա-
կան բանաստեղծութեան երկրորդական տեսակները — մելօդրամա,
վօդեվիւ, ֆարս, Փելքիա.

«Ազգային գրադարան



NL0151731

